2452

— 118 [illegible]

[illegible] 1851

[illegible]

[illegible] 118

[illegible] 118 [illegible]

[illegible]

[illegible]

[illegible] 1861

[illegible]

3 ) 1386 ( 462
1386

[illegible]

12004

Ж3/1б ⁵⁄ /115 1284-Կզ

# ՀԱՅԿԱԿԱՆ

## ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հաւաքեալ 'ի քերականական մատենից երևելի հեղինակաց հնոց և արդեաց:

Աշխատասիրութ Պ. Մարուգէ Վարժապետի -մանհանի Պօղոսեան Վանեցւոյ:

1877

ՀՐԱՄԱՆԱՒ ՏԵԱՌՆ ԱՍՏՈՒԱԾԱՏՐՈՅ ԳԵՐԱՓԱՌ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

1311 93/9-5Զ



1843 ՌՄՂԲ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ [illegible]

491.99-5

204 [illegible]

[illegible]

[illegible]

17 [illegible] 1861 [illegible]

[illegible]

Printed in Turkey

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Յառաջաբանութիւն հայելի և գրեանց ցուցակ ըլլալուն համար՝ ամէն գիրքը յառաջաբանութիւն մը պէտք ունենայ. բայց քերականութիւնը՝ այժմեան դարուս ամենուն յայտնի ըլլալով, մեզ աւելորդ թուեցաւ այս մեր քերականութեան յառաջաբանութիւն գրել, միայն առոր տպուելուն վերայօք այս կուզեմ իմացնել: Որովհետև սովորութիւն էր ինծի իմ աշակերտներուս քերականական ուսումը օրագրական գրուածքով աւանդելու, թախանձեցին մեզ որ այս մեր վարժութեան եղանակը տպագրել տանք իրենց յառաջադիմութեան համար, որ առ ձեռն պատրաստ ունենալով մերին ամբողջական գրուածները՝ իրենց կարողութեան չափով դիւրըմբռնելի աւանդեալ կանոններովը վարժուին և օր քան զօր յառաջադէմ ըլլան, ահա այս եղև մեզ շարժառիթ ասիկա տպագրել տալու: Իսկ թէ, որ այս մեր քերականութեան վարժութե եղանակաց գործածութեան կանոնաց համօր գըտնուին մերայնեայ բանասէրներէն, անշուշտ մեզի շնորհ ըրած կըլլան. վասն որոյ ամ խօք ու- նուական վերծանողիդ մնամ շնորհապարտ:

Նուաստ Մարտիկէ
տիրացու վարժապետս:

Printed in Turkey

ՆԱԽԱԿՐԹԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

# ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ

1877

## Հոլովմունք Հասարակ անուանց

Ա

### Օրինակ առաջին

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղղական, | Հայր, պապա ։ | Հայրք, պապալար ։ |
| Սեռական, | Հայրի, պապանըն ։ | Հայրից, պապալարըն ։ |
| Գործիական, | Հայրիւ, պապայիլէն ։ | Հայրիւք, պապալարիլէն ։ |
| Պարառական, | զՀայրիւ ։ պապայըն | զՀայրիւք, պապալարըն |
| | Ընդունողայ ։ | Ընդունողայ ։ |
| Հայցական, | զՀայր, պապայը ։ | զՀայրս, պապալարը ։ |
| Պատմական, | զՀայրէ, պապայէլէն ։ | զՀայրից, պապալարէլէն ։ |
| Բացառական, | ՚ի Հայրէ ։ պապատան, | ՚ի Հայրից, պապալարտան ։ |
| Տրական, | ՚ի Հայր, պապայա ։ | ՚ի Հայրս, պապալարա ։ |
| Ներգոյական, | ՚ի Հայրի, պապատա ։ | ՚ի Հայրս, պապալարտա ։ |
| Կոչական, | ով Հայր, էյ պապա ։ | ով Հայրք, էյ պապալար ։ |

### Ծանօթութիւն

Բաղաձայն գրով սկսած առաջին օրինակ՝ Հայր, ունի նախդիրս 'ի , իսկ ձայնաւորաւ սկսած բայնէ՝ կառնէ զնախդիրս յ. ամենայն բառ որ բաղաձայնով բսկսած է՝ պէտք է 'ի նախդրով հոլովես , և ձայնաւորաւ սկսածին յ նախդիր դը նես ։ Որ բառին վերջին ձայնաւորը՝ ա , է , ի , օ ըլլայ , անփոփոխ և անկորուստ վերոյ գրեալ օրէ

նակաց պէս կը հոլովին, մանաւանդ առանց բաղաձայնի էով վերջաւորեալ բառերը։ Իսկ էով վերջաւորեալ զոյգ ընդ բաղաձայնի՝ այսպէս, կրկէս ծէս, դէն, եա, կամ ով վերջաւորեալքը՝ հարկաւ փոփոխմամբ կը հոլովին, և եա, է, ով, վերջաւորեալքն, կորուսմամբ մէջ իրենց տեղը փոխ բանենք։

### Անփոփոխ և անկորուստ

Սափարայ, ի, իւ։ Սափարայք, ից, իւք, չըչըմպա։
Մարտ, ի, իւ։ Մարտք, ից, իւք, ճէնկ։
Վէհ, ի, իւ։ Վէհք, ից, իւք, պիւյիւք։
Նժդեհ, ի, իւ։ Նժդեհք, ից, իւք, խարիպ։
Տող, ղի, ղիւ։ Տողք, ղից, ղիւք, սըրա։
Գոս, սի, սիւ։ Գոսք, սից, սիւք, գուրու։
Ոսինոթ, թի, թիւ։ Ոսինոթք, թից, թիւք, աշխ։
Տօն, նի, նիւ։ Տօնք, ից, նիւք, պայրամ։
Աշտե, եի, եիւ։ Աշտեք, եից, եիւք, հորօզ։
Էջ, եի, եիւ։ Էջք, եից, եիւք, էշ։

### Փոփոխմամբ

Գմբեթ, եթի, թիւ։ Գմբեթք, թից։ գուպպէ։
Վէճ, վիճի, ճիւ։ Վէճք, վիճից։ մուհաքէմէ։
Տմգոյն, գունի, նիւ։ Տմգոյնք, գունից։ չիրքին։
Անգոյր, գուրի, րիւ։ Անգոյրք, գուրից։ օհլեյէն։

### Կորուսմամբ

Նեարդ, նրդի, դիւ։ Նեարդք, նրդից։ սինիր։
Մատեան, տենի, իւ։ Մատեանք, նից։ տէֆթէր։
Խունկ, խնկի, կիւ։ Խունկք, խնկից։ կիւնլիւկ։
Բիծ, բծի, բծիւ։ Բիծք, բծից։ լէքէ։

Կարկուտ, կրկտի, կտով : Կարկուտք, կտոց : [illegible] :
Խումբ, խմբի , խմբիւ : Խումբք, խմբից : [illegible] :

### Փոփոխմունք և կրճատմունք

Բրձնայ, ձնի, իւ : Բրձնայք, ձնից : [illegible] :
Ընձնայ, նձի, իւ : Ընձնայք, նձից : [illegible] :

### Անեզական

Մարոք, սից : [illegible] :
Խաղայք, լից : [illegible] :

### Անյոգնական

Ագդէ, գէի, գէիւ : [illegible] :
Նաբուս, սի, իւ : [illegible] :

### Օրինակ Ի·

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո· | Գրպան, [illegible] : | Գրպանք, [illegible] : |
| Ս· | գրպանի, | գրպանաց, |
| Գ· | գրպանաւ, | գրպանօք, |
| Պ· | զգրպանաւ, | զգրպանօք, |
| Հ· | զգրպան, | զգրպանս, |
| Պ· | զգրպանէ, | զգրպանաց, |
| Բ· | ՚ի գրպանէ; | ՚ի գրպանաց, |
| Տ· | ՚ի գրպան, գրպանի, | ՚ի գրպանս, գրպանաց. |
| Ն· | ՚ի գրպանի, | ՚ի գրպանս, |
| Կ· | ով գրպան. | ով գրպանք : |

### Անփոփոխ և ա[illegible]

Առակ , կի, կաւ : Առակք , կաց : [illegible] :
[illegible]աղան, նի, նաւ : Ա[illegible]ղանք, նաց : [illegible] :

Ստուեր, րի, րաւ : Ստուերք, րաց : գեօլկէ :
Եթեր, րի, րաւ : Եթերք, րաց : հավա :
Ակնոց, ցի, ցաւ : Ակնոցք, ցաց : գեօզլիւք :
Լուսաւոր, րի, րաւ : Լուսաւորք, աց : ըշըգլը :
Հզօր, րի, րաւ : Հզօրք, րաց : գուվվէթլի :
Թնդիւնօթ, թի, թաւ : Թնդիւնօթք, թաց : բօշ :

Փոփոխմամբ

Բաջաղէն, ղինի, նաւ : Բաջաղէնք, ինաց : էյէր :
Ասպարէզ, րիզի, զաւ : Ասպարէզք, րիզաց : մէյտան :
Մակոյկ, կուկի, կաւ : Մակոյկք, ուկաց : [illegible] :
Թակոյկ, կուկի, կաւ : Թակոյկք, կուկաց : [illegible] :

Կ[illegible]

Դղեակ, ղեկի, կաւ : Դղեակք, ղեկաց : գալէ :
Լուսնեակ, նեկի, կաւ : Լուսնեակք, նեկաց : այ ըշըղը :
Քիւլ, քլի, քլաւ : Քիւլք, քլաց : [illegible] :
Դահիճ, հճի, ճաւ : Դահիճք, հճաց : ճէլլատ :
Աղմուկ, աղմկի, կաւ : Աղմուկք, մկաց : գուլգուլէ :
Բազում, բազմի, մաւ : Բազումք, մաց : չօգ :

Անեզական

Ախոյանք, նաց : [illegible] :
Արհաւիրք, րաց : գօրգու :

Անյոգնական

Շահապլիկան, նի, նաւ : [illegible] :
Տիւրոս, սի, սաւ : [illegible] :

## Օրինակ Գ.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Մատանի, եիւզիւք : | Մատանիք, եիւզիւքլէր : |
| Ս. | մատանւոյ, | մատանեաց, |
| Գ. | մատանեաւ, | մատանեօք, |
| Պ. | զմատանեաւ, | զմատանեօք, |
| Հ. | զմատանի, | զմատանիս, |
| Պ. | զմատանւոյ, | զմատանեաց, |
| Բ. | 'ի մատանւոյ, | 'ի մատանեաց, |
| Տ. | 'ի մատանի, մատանւոյ, | 'ի մատանիս, մատանեաց : |
| Ն. | 'ի մատանի, | 'ի մատանիս : |
| Կ. | ով մատանի. | ով մատանիք : |

### Անփոփոխ և անկանոն

Խածի, ւոյ, եաւ : Խածիք, եաց : ֆառըշա :
Հոմանի, ւոյ, եաւ : Հոմանիք, եաց : ձուլդաշ :
Միրեղէ, ւոյ, եաւ : Միրեղէք, եաց : ռէնձպէրի :
Թզենի, նւոյ, նւով : Թզենիք, եաց : ինճիր աղաճը :
Տարի, ւոյ, բւով : Տարիք, եաց : յըլ :
Տեղի, ւոյ, ւոյն : Տեղիք, եաց : եէր :

### Անեզական

Աղիք, եաց : պաղըրսագ :
Երախտիք, եաց : էյլիք :

### Անյոգնական

Ոսկի, ւոյ, ով : ֆառալա էյալէթի :
Ծիրանի, ւոյ, ով : Բանտէրի չէնքի :

## Ծանօթութիւն

Այս օրինակին վրայ կը հոլովին այն բազմավանկ բառերը որոնք է վերջաւորած են, և յետագայ օրինակին վրայ կերթան շատ է վերջաւորած միավանկ բառեր և քանի մ'ալ բազմավանկներ։ Առաջին բածներուս վերջի է գիրը եզականին հոլովներուն մէջ – և եզական գործիականին և յոգնականի հոլովներուն ամենուն ալ է, կը դառնայ. երբեմն առանց – գրոյս անտանանելի սխալ է։

## Օրինակ Դ.

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ու. | Գործ, | իշ | Գործք, | իշլէր։ |
| Ս. | գործոյ, | | գործոց, | |
| Գ. | գործով, | | գործովք | |
| Պ. | զգործով, | | զգործովք. | |
| Հ. | զգործ, | | զգործս. | |
| Պ. | զգործոյ, | | զգործոց. | |
| Բ. | 'ի գործոյ, | | 'ի գործոց. | |
| Տ. | 'ի գործ, | գործոյ, | 'ի գործս, | գործոց |
| Ն. | 'ի գործ, | | 'ի գործս, | |
| Կ. | ով գործ. | | ով գործք։ | |

### Անփոփոխ և անկանոնք

| | | |
|---|---|---|
| Արմաւ, ւոյ, ով։ | Արմաւք. ւոց։ | խուրմա։ |
| Ցաւ, ւոյ, ով։ | Ցաւք. ւոց։ | աղրը։ |
| Ցեց, ցոյ, ցով։ | Ցեցք, ցոց։ | կիւվէ։ |
| Գետ, տոյ, տով։ | Գետք, տոց։ | սույ։ |
| Մոմ, մոյ, մով։ | Մոմք, մոց։ | մում։ |

Բոց, բոցոյ, ով: Բոցք, ցոց: ալէֆ:
Օդ, օդոյ, ով: Օդք, ոց: հավայ:
Բօթ, բօթոյ, ով: Բօթք, ոց: քարա հապէր:

Փոփոխմամբ

Կէս, կիսոյ, ով: Կէսք, կիսոց: եարը:
Ձէթ, ձիթոյ, ով: Ձէթք, ձիթոց: եաղ:
Բոյն, բունոյ, ով: Բոյնք, բունոց: եուվա:
Լոյս, լուսոյ, ով: Լոյսք, լուսոց: նուր:

Կորուսմամբ

Սեամ, սեմոյ, մով: Սեամք, սեմոց: էշիկ:
Գովեալ, գովելոյ, ով: Գովեալք, վելոց: մէթհօլմաշ:
Վերջին, վերջնոյ, ով: Վերջինք, վերջնոց: սօն:
Արփյին, փայնոյ, ով: Արփյինք, նոց: նուրանի:
Գանգուր, գրոյ, րով: Գանգուրք, գրոց: գըվըրագ:
Շունչ, շնչոյ, չով: Շունչք, չոց: նէֆէս:

Անեզական

Կուրծք, կրծոց: կէօքս:
Տիք, տիոց: չաղ:

Անյոգնական

Թի, թիոյ: ով, դէր գալ աբէր:
Կարին, նոյ: նով, էրզրում:

Ծանօթութիւն

Գիտցիր իւ բառերը հոլովին մէջ իւ գիրը ու կը փոխեն այսպէս, անիւ, անուոյ, կիւ, կուոյ, ևն:
և միավանկ բառերուն առջին տառ է եղած ատենը է գիրը ը կը փոխի օր. էնչ, ընչէ, էղձ, ըղձէ, էնձ, ընձառ, ևն:

## Օրինակ Ե

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ու. | Ծախ, ԽԱՐՃ : | Ծախք, ԽԱՐՃԼԷՐ : |
| Ս. | ծախու, խոյ, | ծախուց, |
| Տր. | ծախու, | ծախու, |
| Հ. | զծախու, | զծախուք, |
| Ա. | զծախ, | զծախս, |
| Զ. | զծախուէ, | զծախուց, |
| Բ. | 'ի ծախուէ, | 'ի ծախուց, |
| Տ. | 'ի ծախ, ծախու. | 'ի ծախս, ծախուց, |
| Ն. | 'ի ծախու, | 'ի ծախս, |
| Կ. | ով ծախ : | ով ծախք : |

### Անփոփոխ և անկանոն

Խորան, տու, տու : Խորանք, տուց : նաճէրէ :
Այգ, գու, գու : Այգք, այգուց : սապահ :
Ծոմ, ծոմու, ու : Ծոմք, ուց : պէրհիզ :
Առաւօտ, ու, ու : Առաւօտք, ուց : սապահ :
Նաւ, ւու, ով : Նաւք, ուց : կէմի :
Գրաստ, ստու, ով : Գրաստք, ուց : տէվէ :

### Փոփոխական

Զէն, զինու, ու : Զէնք, զինուց : սիլահ :
Վրէժ, վրիժու, ու : Վրէժք, վրիժուց : էօճ :
Քէն, քինու, ու : Քէնք, քինուց : գարէզ :

### Կրճատական

Ծաղր, ծաղու, ու : Ծաղրք, ուց : ալայ :
Յոյլ, յլու, ու : Յոյլք ուց : [illegible] :

Անեզական

Խօսք, բանից : [illegible]:
Պարտք, պարտուց : պօրճ :

Անյոգնական

Լիբանան, նու, նու : Լիպնան տաղը :
Թահաղ, ղու, ղու : [illegible] տաղը :

Օրինակ Գ.

Եզակի Յոգնակի
Ո. Երիկամն, պէօպրէկ : Երիկամունք պէօպրէկլէր:
Ս. երիկաման, երիկամանց,
Գ. երիկամամբ, երիկամամբք,
Պ. զերիկամամբ, զերիկամամբք,
Հ. զերիկամն, զերիկամունս,
Պ. զերիկամանէ, զերիկամանց,
Բ. յերիկամանէ, յերիկամանց,
Տ. յերիկամն, երիկաման, յերիկամունս, երիկամանց,
Ն. յերիկաման, յերիկամունս,
Կ. ով երիկամն. ով երիկամունք:

Անփոփոխ և անկանոն

Մահ, հուան, ւամբ : Մահուանք, հուանց : էօլիւմ:
Ձիւն, ձեան, ամբ : Ձիւնունք, անց : տէ–լլէր:
Աղեղն, ղան, ամբ : Աղեղունք, անց : եայ :
Անուն, անուան, ամբ : Անուանք, անց : իսիմ:

Փոփոխմամբ

Փայծաղն, ղան, ամբ : Փայծեղունք, անց : տալագ:
Ճղլամն, ման, ամբ : Ճղլեմունք, տէքիրմէնլէր :
Եղէգն, գան, ամբ : Եղեգունք, անց : գամըշ:

Պուտն, պուտան, ամբ : Պուտունք, անց : չէօմլէկ :
Պաշտօն, տաման, ամբ : Պաշտամունք : հիզմէթ :
Վաղիւ, վաղուեան, 'ի վաղուէ : եարըն :
Տիւ, տուընջեան, 'ի տուէ : կիւնտիւզ :

Կրաւորականք

Այծեամն, ման, ամբ : Այծեմունք, մանց : եապան քէչիսի
Ասեղն, ասղան, ամբ : Ասղունք, ղանց : իյնէ :
Աղջիկ, ջկան, ամբ : Աղջկունք, կանց : քըզ :
Խոստումն, խոստման : Խոստմունք, մանց : վաատ :
Մանուկ, մանկան : Մանկունք, անց : չօճուգ :

Փոփոխմամբ և կրաւորականք

Խնդութի, թեան, ամբ : Խնդութիք, եանց : սէվինճ :
Տրտմութի, եան, ամբ : Տրտմութիք, եանց : քասավէթ :
Արիւն, արեան, ամբ : Արիւնք, եանց : գան :
Անկիւն, անկեան, ամբ : Անկիւնք, եանց : քէօշէ :

Անեզական

Իրաւունք, իրաւանց, հագ :
Լորձունք, լորձանց, ադըզ սույու :

Անյոգնական

Յուսիկ, կան, կամբ : [illegible] :
Սաթենիկ, կան, կամբ : [illegible] :

Օրինակ Ա.

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Ո · Եզն, էօքիւզ : | Եզինք, էօքիւզլէր : |
| Ս · եզին, | եզանց, |
| Գ · եզամբ, | եզամբք, |
| Պ · զեզամբ, | զեզամբք, |

| | |
|---|---|
| Հ· զեղն, | զեղինս, |
| Զ· զեղանէ, | զեղանց, |
| Ի· յեղանէ, | յեղանց, |
| Տ· յեղն, եղին, | յեղինս, եղանց: |
| Ն· յեղին, | յեղինս, |
| Կ· ով եղն. | ով եղինք: |

### Ընկերք և անկանոնք

Գառն, ռին, ռամբ: Գառինք, ռանց: գուզու:
Խաշն, շին, շամբ: Խաշինք, շանց: գօյուն:
Կաթն, թին, ամբ: Կաթինք, անց: սիւտ:
Հարսն, սին, սամբ: Հարսունք, սանց: կէլին:
Ափն, փին, փամբ: Ափունք, անց: քէնար:
Սաշխն, խին, ամբ: Սաշխունք, անց: դուտաք:

### Կոտորածք

Լեառն, լերին, լերամբ: Լերինք, լերանց: տաղ:

### Օրինակ Բ.

| Եզական | Յոգնական |
|---|---|
| Ո· Եղջեւր, պոյնուզ: | Եղջեւրք, ՚ի եղջերք, պոռոյ: |
| Ս· եղջեր, | եղջերաց, եղջերց, |
| Գ· եղջերբ, ՚ի եղջերաւ, | եղջերօք, եղջերբք, |
| Զ· զեղջերբ, ՚ի զեղջերաւ, | զեղջերօք, ՚ի զեղջերբք, |
| Հ· զեղջեւր, | զեղջեւրս, ՚ի զեղջերս, |
| Զ· զեղջերէ, | զեղջերաց, ՚ի զեղջերց, |
| Ի· յեղջերէ, | յեղջերաց, ՚ի յեղջերց, |
| Տ· յեղջեւր, եղջեր, | յեղջեւրս, ՚ի յեղջերս, |
| Ն· յեղջեր, | յեղջեւրս, ՚ի յեղջերս, |
| Կ· ով եղջեւր. | ով եղջեւրք, ով եղջերք: |

### Անփոփոխ և անձնաւորք

Կայսր, սեր, երբ: Կայսերք, բաց: Հէմշիրէյ:
Տագր, տեգր, երբ: Տագերք, բաց: Գայըն:
Համր, մեր, երբ: Համերք, բաց: Տէլ-տէլ:
Կուպղ, պեղ, եղբ: Կուպեղք, ղաց: Ճէլիմ:
Աստղ, աստեղ, եղբ: Աստեղք, ղաց: Եըլտըզ:
Եղղ, եանեղ, եղբ: Եղեղք, ղաց: Էէլ:
Ալիւր, ալեր, երբ: Ալիւրք, բաց: Ուն:

### Կցորդաձայնք

Լեառ, լեռ, բաւ: Լեռք, բաց: Պաղ ման:
Դուստր, դստեր, բաւ: Դստերք, բաց: Գըզ:
Ճինգղ, ճնգեղ, ղաւ: Ճնգեղք, ղաց: Չափդաք:
Սինկղ, սնկեղ, ղաւ: Սնկեղք, ղաց: Մանթար:

### Յաւելուած

Կան բառեր՝ որոնց եզակին այլ օրինակի վրայ, և յոգնակին այլ օրինակի վրայ կը հոլովին, փ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Ազատ, ֆիւրճէթանի, | Ազատք, ֆիւրճէթանի |
| Ս. | ազատի, | ազատաց, |
| Դ. | ազատիւ, | ազատօք, |
| Զ. | զազատիւ, | զազատօք, |
| Հ. | զազատ, | զազատս, |
| Պ. | զազատէ, | զազատաց, |
| Բ. | յազատէ, | յազատաց, |
| Տ. | յազատ, ազատի, | յազատս, ազատաց, |
| Ն. | յազատի, | յազատս, |
| Կ. | ով ազատ. | ով ազատք: |

## Անկանոն անուանք

Կայծառ, ռի, ռիւ : Կայծառք, ռաց : [illegible] :
Գինեբեր, րի, րիւ : Գինեբերք, րաց : [illegible] :
Շնորհ, հի, հիւ : Շնորհք, հաց : [illegible] .
Կան բառեր՝ որք կրկին օրինակաւ կը հոլովին, զի
Նշան, նի, նիւ : Նշանք, նաց, նօք : [illegible] :
Ակօս, սի, սու : Ակօսք, սից, սուք : [illegible] :
Կան բառեր՝ որք այլ և այլ հոլովածներնին մէջ նշանակութիւննին կը փոխուի, զոր օրինակ :
Փող, ղի, ղիւ : [illegible] : Փող, ղոյ : [illegible] :
Օդ, օդի, դիւ : [illegible] : Օդ, դոյ : [illegible] :
Կան բառեր՝ որոնք բնաւ հոլովի մը տակ չեն իյնար, միայն նախդիրիւ կը հոլովին, զի

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Ոչինչ, [illegible] : | Ոչինչք, [illegible] : |
| Հ. | զոչինչ, | զոչինչս, |
| Տ. | յոչինչ, | յոչինչս, |
| Ն. | յոչինչ, | յոչինչս, |
| Կ, | ով ոչինչ, | ով ոչինչք : |

Այսպէս են բառքս

Ոտնափշուր, [illegible] :
Աղաղուն, [illegible] :
Ճաճանչապեղ, [illegible] :

Կան Յատուկ անուններ որք բնաւ հոլովի մը տակ չեն իյնար և անոնցմէ մէկկին չեն պատշաճիր, այլ այս երկու կերպով կը հոլովին, ներքոյ դրված օրինակներուն պէս :

| Օրինակ Ա. | Օրինակ Բ. |
|---|---|
| Ո· Սափրա, դէրքարըրը: | Նաւի, նաւքարէ: |
| Ս· սափրայ, | նաւեայ, |
| Գ· սափրաւ, | նաւեաւ, |
| Պ· զսափրաւ, | զնաւեաւ, |
| Հ· զսափրա, | զնաւի, |
| Բ· 'ի սափրայ, | յնաւեայ, |
| Տ· 'ի սափրա, | յնաւի, |
| Ն· 'ի սափրա, | 'յնաւի, |
| Կ· ով սափրա: | ով նաւի: |

Նոյնպէս կը հոլովին և այլ շատ յատուկ անուն-ներ. բայց ոմանք փոփոխմամբ, ոմանք կորուսմամբ կը հոլովին, որ

Գարդր, րայ, ...: Մանի, եայ, ...:
Մծբին, բնայ: ...: Որմեւս, եայ, ...:

Կան և յատուկ անուններ որ զանազան օրինակաւ կրնան հոլովիլ ինչպէս բառերս,

Աբրահամ, մու, և աբրահամայ, ...:
Նիկիա, կիայ, և նիկիոյ, ...:

Հոլովմունք Առանձնական անուանց

Օրինակ Ա.

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Ո· Տէր, ...: | Տեարք, ...: |
| Ս· Տեառն, | Տերանց, |
| Գ· Տերամբ, | Տերամբք, |
| Պ· զՏերամբ | զՏերամբք, |
| Հ· զՏէր, | զՏեարս, |

Գ · զՏեառնէ, զՏեարց, կ զտէրանց,
Ի · ՚ի Տեառնէ, ՚ի Տեարց, ՚ի տէրանց,
Տ · ՚ի Տէր, տեառն, ցՏեարս, տէրանց,
Ն · ՚ի Տէր, ՚ի Տեարս,
Կ · ով Տէր: ով Տեարք:

Այսպէս հոլովին և բառքս

Այր, առն, արամբ: Արք, արանց: [illegible]:
Քեռայր, առն, ամբ: Քեռարք, րանց: [illegible]:
Պարտատէր, տեառն: Պարտատեարք: [illegible]:

## Օրինակ Բ.

Եզակի — Յոգնակի

Ո · Հայր, [illegible]: Հարք, [illegible]:
Ս · Հօր, Հարց, կ հարանց,
Գ · Հարբ, Հարբք,
Պ · զՀարբ, զՀարբք,
Հ · զՀայր, զՀարս,
Պ · զՀօրէ, զՀարց,
Ի · ՚ի Հօրէ, ՚ի Հարց, ՚ի հարանց,
Տ · առ Հայր, հօր, առ Հարս, հարանց,
Ն · ՚ի Հօր, ՚ի Հարս,
Կ · ով Հայր, ով Հարք,

Այսպէս հոլովին և բառքս

Մայր, մօր, մարբ, Մարք մարց, [illegible]:
Եղբայր, բօր, բարբ: Եղբարք, բարց, [illegible]:

## Օրինակ Գ.

Եզակի — Յոգնակի

Ո · Քոյր, [illegible]: Քորք, [illegible]:
Ս · Քեռ, Քերց,

| | |
|---|---|
| Գ. Քերբ, | Քերբք, |
| Զ. զՔերբ, | զՔերբք, |
| Հ. զՔոյր, | զՔորս, |
| Զ. զՔեռէ, | զՔերց, |
| Բ. 'ի Քեռէ, | 'ի Քերց, |
| Տ. 'ի Քոյր, քեռ, | 'ի Քորս, քերց, |
| Ն. 'ի Քեռ, | 'ի Քորս, |
| Կ. ով Քոյր: | ով Քորք: |

Այսպէս հոլովին և բառքս

Հօրաքոյր, քեռ, քերբ: Հօրաքորք, քերց, հալա:
Մօրաքոյր, քեռ, քերբ: Մօրաքորք, քերց, թեյզէ:

## Օրինակ Դ.

| Եզական | Յոգնական |
|---|---|
| Ո. Կին, գարը: | Կանայք, գարըլար: |
| Ս. Կնոջ | Կանանց, |
| Գ. Կնաւ, կ̄ կանամբ, | Կանամբք, |
| Զ. զԿնաւ, կ̄ զկանամբ, | զԿանամբք, |
| Հ. զԿին, | զԿանայս, |
| Զ. զԿնոջէ, | զԿանանց, |
| Բ. 'ի Կնոջէ, | 'ի Կանանց, |
| Տ. 'ի Կին, կնոջ, | ցԿանայս, կանանց, |
| Ն. 'ի Կնոջ, | 'ի Կանայս, |
| Կ. ով Կին, | ով Կանայք: |

Այսպէս հոլովին և բառքս

Տիկին, նոջ, նաւ: Տիկնայք, նանց, խաթուն:
Առնակին, նոջ, նաւ: Առնակինայք, նանց, գօճալըգարը:

## Օրինակ ն.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Գիւղջ, քէօյ: | Գիւղք, քէօյլէր: |
| Ս. | Գեղ, | Գիւղից, |
| Գ. | Գիւղիւ, | Գիւղօք, |
| Պ. | զԳիւղիւ, | զԳիւղօք, |
| Հ. | զԳիւղ, | զԳիւղս, |
| Պ. | զԳեղջէ, | զԳիւղից, |
| Բ. | 'ի Գեղջէ, | 'ի Գիւղից, |
| Տ. | 'ի Գիւղ, գեղջ, | 'ի Գիւղս, գիւղից, |
| Ն. | 'ի Գեղջ, | 'ի գիւղս, |
| Կ. | ով Գիւղ: | ով գիւղք: |

*Այսպէս հոլովին և բառքս*

Բուղքգիւղ, գեղջ, ղիւ: Բուղքգիւղք, ից, քասապայ:
Զորագիւղ, գեղջ, ղիւ: Զորգիւղք, ից, տէրէ քէօյ:

## Օրինակ օ.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Օր կիւն: | Աւուրք, կիւնլէր: |
| Ս. | Աւուր, | Աւուրց, |
| Գ. | Աւուրբ, | Աւուրբք, |
| Պ. | զԱւուրբ, | զԱւուրբք, |
| Հ. | զՕր | զԱւուրս, |
| Պ. | զՕրէ, | զԱւուրց, |
| Հ. | յՕրէ, | յԱւուրց, |
| Տ. | յՕր, ցօր, աւուր, | յԱւուրս, աւուրց, |
| Ն. | յԱւուր, | յԱւուրս, |
| Կ. | ով Օր: | ով Աւուրք: |

Նոյնպէս հոլովին և բառքս

Կէսօր, ուր, ուրբ : Կէսաւուրք, ուրց, էօյլէն :

Երկյնօր, ուր, ուրբ : Երկյնաւուրք, ուրց, աքշամլէն :

## Հոլովմունք Միջական անուանց

### Մասնական

| | Եզական | Յոգնական |
|---|---|---|
| Ո· | Ոմն, ոք, պիրիսի : | Ոմանք, պազըլարը : |
| Ս· | ուրումն, ուրուք, | ումանց, |
| Գ· | ումամբ, | ումամբք, |
| Պ· | զումամբ, | զումամբք, |
| Հ· | զոմն, զոք, | զոմանս, |
| Պ· | զումեմնէ, զումեքէ, | զոմանց, |
| Ի· | յումեմնէ, յումեքէ, | յոմանց, |
| Տ· | առ ումն, առ ոք, ումեք, ցոմանս, ոմանց, | |
| Ն· | յումեմն, յումեք, | յոմանս : |

| | Եզական | Եզական |
|---|---|---|
| Ո· | Իմն, ինչ, պիրշէյ : | Այլ իմն, այլ ինչ, պաշգա շէյ : |
| Ս· | իրիք, | այլոյ իրիք, այլ իրիք, |
| Գ· | իւիք, | այլով իւիք, այլ իւիք, |
| Պ· | զիւիք, | զայլով իւիք, զայլ իւիք, |
| Հ· | զիմն, զինչ, | զայլ իմն, զայլ ինչ, |
| Պ· | զիմեքէ, զիմեմնէ, | զայլմէ իմեքէ, զայլ իմեքէ, |
| Ի· | յիմեքէ, յիմեմնէ, | յայլմէ իմեքէ, յայլ իմեքէ, |
| Տ· | յիմն, յինչ, իմիք, | յայլ իմն, յայլ ինչ, այլում իմիք, այլ իմիք, |
| Ն· | յիմիք : | յայլում իմիք, յայլ իմիք : |

Եզակի

Ո. Միւս, օպիրի :
Ս. միւսոյ,
Գ. միւսով,
Պ. զմիւսով,
Հ. զմիւս,
Պ. զմիւսոյ, կ զմիւսմէ,
Բ. 'ի միւսոյ, կ 'ի միւսմէ,
Տ. 'ի միւս, ցմիւս, ում,
Ն. 'ի միւսում,

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Այլ, պաշգայ : | Այլք, պաշգալար : |
| Ս. | այլոյ, | այլոց, |
| Գ. | այլով, | այլովք, |
| Պ. | զայլով, | զայլովք, |
| Հ. | զայլ, | զայլս, |
| Պ. | զայլմէ, զայլոյ, | զայլոց, |
| Բ. | յայլմէ, յայլոյ, | յայլոց, |
| Տ. | յայլ, ցայլ, | յայլս, այլոց, |
| Ն. | յայլում : | յայլս : |

Նոյնպէս հոլովին և բառքս

Իւրաքանչիւր, ոյ, ով : Իւրաքանչիւրք, ոց, Հէրպիրի :
Երկաքանչիւր, ոյ, ով : Երկաքանչիւրք, ոց, իքիսիտէ :

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Ամէն, հէր-քէս : | Ամէնք, հէր-քէս ճէմի : |
| Ս. | ամէնի, | ամէնից, |
| Գ. | ամէնիւ | ամէնիւք, |

Պ. զամենիւ, զամենիւք,
Հ. զամէն, զամէնս,
Պ. զամենէ, զամենից,
Բ. յամենէ, յամենից,
Տ. յամէն, ամէնում, յամէնս, ամենից,
Ն. յամենում: յամէնս:

Եզակի — Յոգնակի

Ո. Ամենայն, ճէմիի, Ամենայնք, ճէմիլէրի:
Ս. ամենայնի, ամենայնց, ամենայնից,
Գ. ամենայնիւ, ամենայնիւք,
Պ̈. զամենայնիւ, զամենայնիւք,
Հ. զամենայն, զամենայնս,
Պ. զամենայնէ, զամենայնից,
Բ. յամենայնէ, յամենայնից,
Տ. յմենյն, ամենյնում, յամենայնս, ամենայնից,
Ն. յամենայնում, յամենայնս:

Անեզակի

Ո. Ամենեքեան, Ամենեքին, հէ-մի-մէն:
Ս. ամենեցունց, ամենեցուն,
Գ. ամենեքումբք, ամենեքումբ,
Պ. զամենեքումբք, զամենեքումբ,
Հ. զամենեսեան, զամենեսին,
Պ. զամենեցունց
Բ. յամենեցունց,
Տ. առ ամենեսեան, յամենեսին, ցունց, ցուն,
Ն. յամենեսեան, յամենեսին:

Նոյնպէս հոլովին և բառքս

Բոլորեքեան, երկքին, ցունց, ուն, քումբք: [illegible]

Երկոքեան, քին, ցունց, ուն, քումբք: է+է–է+է:
Եօթնեքեան, քին, ցունց, ուն, քումբք: է+է–է+է:

## Տեղեկութիւն Ը.

Բնաւ բառը՝ եզակին նախդրիւ կը հոլովի, յոգնակին կըլլայ բնաւք, բնաւից, բնաւիւք, եւ Երկոքեանը, եօթնեքեանը, և այլ ասոնց պէս թիւերը թուական են, հանրական անուն չեն, միայն անոնց պէս հոլովելուն համար հոս գրեցան:

### Հարցական

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Ո. Ո՞վ որ, ո՞ որ, ինչ՞: | Ո՛ր իմն, ինչ: |
| Ս. Ո՞յր ուրուք, | որո՞յ իրիք, |
| Գ. Ե՞ւ իւիք, | որո՞վ իւիք, |
| Պ. զե՞ւ իւիք, | զորո՞վ իւիք, |
| Հ. զո՞վ որ, զո՞ որ | զո՞ր իմն, |
| Պ. զումմէ՞ ումեքէ, | զորմէ՞ իմեքէ, |
| Բ. յումմէ՞ ումեքէ, | յորմէ՞ իմեքէ, |
| Տ. յո՞վ որ, ո՞ւմ ումեք. | յո՞ր իմիք, որո՞ւմ իմիք, |
| Ն. յո՞ւմ ումեք. | յորում իմիք: |

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Ո. Ո՞վ, ո՞, հանելուք: | ո՞յք, հանելուք: |
| Ս. ո՞յր, ե՞ր, | ո՞յց ումանց, |
| Գ. որո՞վ, ե՞ւ, | որո՞վք, իւի՞ք, |
| Պ. զորո՞վ, զե՞ւ | զորովք, զիւի՞ք |
| Հ. զո՞վ, զո՞, | զո՞յս զոմանս, |
| Պ. զումմէ՞, զումէ՞, զմէ՞, | զո՞յց ումանց, |
| Բ. յումմէ՞, յումէ՞, յամ՛իմէ, յո՞յց ումանց, | |

Տ. յո՞վ, ցո՞վ, յո՞, ցո՞, ո՞ւմ. յո՞յս, ցո՞յս, ո՞յց,
Ն. յո՞ւմ, յո՞վ, յո՞վ, յո՞, յի՞մ. յո՞յս, ը ո՞յս:

| Եզակի | Յոգնակի |
| --- | --- |
| Ո. Քանի՞, թի՞ւ: | Քանի՞ք, թուոյք: |
| Ս. քանո՞յ, | քանեա՞ց, |
| Գ. քանո՞վ, | քանեօ՞ք, |
| Վ. զքանո՞վ, | զքանեօ՞ք, |
| ∸, զքանի՞, | զքանի՞ս, |
| Վ. զքանո՞յ, | զքանեա՞ց, |
| Բ. 'ի քանո՞յ, | 'ի քանեա՞ց, |
| Տ. 'ի քնի՞, քանւոյ, | 'ի քնիս, ցքնիս, եաց, |
| Ն. 'ի քանի՞, | 'ի քանիս: |

Նոյնպէս հոլովին և բառքս

Զինչ պիսի, ւոյ, եաւ, Զինչ պիսիք, եաց, եօք, Նե-ղէջւ:

Որ պիսի, ւոյ, եաւ: Որ պիսիք, եաց, եօք: Նաորէւ:

Աներբերական

| Եզակի | Յոգնակի |
| --- | --- |
| Ո. Այսքան, ... : | Այսքանիք, այսքանք, |
| Ս. այսքանոյ, | այսքանեաց, |
| Գ. այսքանեաւ, նով, | այսքանեօք, |
| Վ. զայսքանեաւ, նով, | զայսքանեօք, |
| ∸. զայսքան, | զայս քանս, |
| Վ. զայսքանոյ, | զայսքանեաց, |
| Բ. յայսքանոյ, | յայսքանեաց, |

Տ, յայսքան, այսքանոյ, յայսքանս, այսքանեաց,
Ն. յայսքանում, քան, յայսքանիս, յայսքանս,

Այսպէս հոլովին և բառքս

Այսպիսի, ւոյ, Սոյնպիսի, ւոյ, [illegible]:
Այդպիսի, ւոյ, Դոյնպիսի, ւոյ, [illegible]:
Այնպիսի, ւոյ, Նոյնպիսի, ւոյ, [illegible]:
Սոյնքան, [illegible]: Դոյնքն, [illegible]: Նոյնք, [illegible]:

Ասոնք նախդրիւ կը հոլովին

Այսչափ, այդչափ, այնչափ, սոյնչափ, դոյնչափ, նոյնչափ:

### Թուական

### Օրինակ Ա.

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Ո. Վեց, [illegible], | Վեցք, [illegible]: |
| Ս. վեցի, | վեցից, |
| Գ. վեցիւ, | վեցիւք, |
| Պ. զվեցիւ, | զվեցիւք, |
| Հ. զվեց, | զվեցս, |
| Պ. զվեցէ, | զվեցեց, |
| Բ. 'ի վեցէ, | 'ի վեցից, |
| Տ. 'ի վեց, վեցի, | 'ի վեցս, |
| Ն. 'ի վեցի, | 'ի վեցս, |

Այսպէս հոլովին և բառքս,

Ութ, ութի, ութիւ, Ութք, ութից, [illegible]:
մետասան, նի, նիւ, մետասանք, նից, [illegible]:
երկոտասան, նի, նիւ, երկոտասանք, նից, [illegible]:
երեքտասան, նի, նիւ, երեքտասանք, նից, [illegible]:
քսան, նի, նիւ, քսանք, նից, [illegible]:
երեսուն, երեսնի, իւ, երեսունք, երեսնից, [illegible]:
քառասուն, նի, նիւ, քառասունք, քառսնից, [illegible]:

յիսուն, յիսնի, իւ, յիսունք, նից, ԷԼԷ:
վաթսուն, վաթսնի, իւ, վաթսունք, նից, ԱԼԹՄԸՇ:
եօթանասուն, նի, նիւ, եօթ՟նունք, նից, ԵԷԹՄԻՇ:
ութսուն, նի, նիւ: ութսունք, նից, ՍԷՔՍԷՆ:
իննսուն, նի, նիւ: իննսունք, նից, ԴՕՔՍԱՆ:

Բառին եզականը սակաւ կը հոլովի. բայց յոգնականը կըլայ ՈՒՂ՛՛. իննունք ՍԵՌ՛՛ իննունց, իննուց, ըննից: ԳՈՐԾ՛՛, իննուք, իննամբք, ըննիւք:

## Օրինակ Բ.

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Ո. Հինդ, ՀԷՆՏ: | Հինդք, ՀԷՆՏԼԷՐ: |
| Ս. Հնդի, | Հնդից, |
| Գ. Հնդիւ, | Հնդօք, կ՟ Հնդիւք, |
| Պ. զՀնդիւ, | զՀնդօք, զՀնդիւք, |
| Հ. զՀինդ, | զՀինդս, |
| Պ. զՀնդէ, | զՀնդից, |
| Բ. 'ի Հնդէ, | 'ի Հնդից, |
| Տ. 'ի Հինդ, Հնդի, | 'ի Հինդս, Հնդից, |
| Ն. 'ի Հնդի, | 'ի Հինդս, |

## Օրինակ Գ.

Եզակի

Ո. Մի, ՊԻՐ:
Ս. միոյ,
Գ. միով,
Պ. զմիով,
Հ. զմի,
Պ. զմիոյ, կամ զմիոջէ,

Բ. ՚ի միոյ, կամ ՚ի միոջէ,
Տ. ՚ի մի, ցմի, միում, միոջ,
Ն. ՚ի միում:

## Օրինակ Դ.

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Ո. Եօթն, Եէտի: | Եօթանք, Եէտիլէր |
| Ս. եօթան, | եօթանց, |
| Դ. եօթամբ, | եօթամբք, |
| Պ. զեօթամբ, | զեօթամբք, |
| Հ. զեօթն, | զեօթանս, |
| Պ. զեօթնէ, | զեօթանց, |
| Բ. յեօթնէ, | յեօթանց, |
| Տ. յեօթն, եօթան, | ցեօթանս, եօթանց, |
| Ն. յեօթան, | յեօթանս: |

Այսպէս հոլովին և բառքս

Տասն, տասին, ամբ: Տասունք, ինք, անց, օն:
իննևտասն. ին, ամբ: իննևտասունք. անց. ամբք, օնտօքուզ

## Տեղեկութիւն Բ.

Որդ, ակ, եակ, և պատիկ, վերջաւորութի՛ ունեցողները եզակիով և յոգնակիով անուան երկրորդ օրինակին պէս կը հոլովին:

## Հոլովմունք դերանուանց

### Եսական

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Ո. Ես, պէն: | Մեք, պիզլէր: |
| Ս. իմ, | մեր, |
| Դ. ինև, | մեօք, |
| Պ. զինև, | զմեօք, |

Հ· զիս, զմեզ,
Պ· զինէն, եւ զմէնջ,
Բ· յինէն, 'ի մէնջ,
Տ· յիս, ցիս, առ իս, ինձ, 'ի մեզ, առ մեզ, ցմեզ, մեզ,
Ն· յիս, ցիս, 'ի մեզ:

Եզակի Յոգնակի

Ո· Դու, [illegible]: Դուք, [illegible]:
Ս, քո, ձեր,
Գ· քեւ, ձեօք,
Պ· զքեւ, զձեօք,
Հ· զքեզ, զձեզ,
Պ· զքէն, զձէնջ,
Բ· 'ի քէն 'ի ձէնջ,
Տ· 'ի քեզ, ցքեզ, առ քեզ, առ ձեզ, 'ի ձեզ, ձեզ,
Ն· 'ի քեզ, 'ի ձեզ,
Կ· ով դու: ով դուք:

Եզակի Յոգնակի

Ո· Ինքն, [illegible]: Ինքեանք, [illegible]:
Ս· ինքեան, ինքեանց,
Գ· ինքեամբ, ինքեամբք,
Պ· զինքեամբ, զինքեամբք,
Հ· զինքն, զինքեանս,
Պ· զինքենէ, զինքեանց,
Բ· յինքենէ, յինքեանց,
Տ· յինքն, առ ինքն, ինքեան, յինքեանս, ինքեանց,
Ն· յինքեան, 'ի յինքեան: յինքեանս:

| | Եզակի | Յոգնակի | |
|---|---|---|---|
| Ո. | Չունի, | Չունի, | |
| Ս. | իւր, իւրեան, | իւրեանց, | քէնտինին : |
| Գ. | իւրև, իւրեամբ, | իւրեամբք, | |
| Պ. | զիւրև, զիւրեամբ, | զիւրեամբք | |
| Հ. | զիւր, | զիւրեանս, | |
| Պ. | Չունի, | զիւրեանց, | |
| Բ. | Չունի, | յիւրեանց, | |
| Տ. | յիւր, առ իւր, իւրում, | յիւրեանս, իւրեանց, | |
| Ն. | յիւր : | յիւրեանս : | |

Ընկալի

| | | |
|---|---|---|
| Ո. | Չունի, | Չունի, |
| Ս. | Միմեանց, պիրպիրինին : | իրերաց, պիրպիրլէրինին : |
| Գ. | միմեամբք, | իրերօք, |
| Պ. | զմիմեամբք, | զիրերօք, |
| Կ. | զմիմեանս, | զիրեարս, |
| Պ. | զմիմեանց, | զիրերաց, |
| Բ. | 'ի միմեանց, | յիրերաց, |
| Տ. | առ միմեանս, միմեանց, | ցիրեարս, իրերաց, |
| Ն. | 'ի միմեանս, | յիրեարս : |

Ցուցական

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Սա, պու : | Սոքա, պունլար : |
| Ս. | սորա, | սոցա, |
| Գ. | սովաւ, | սոքօք, |
| Պ. | զսովաւ, | զսոքօք, |
| Հ. | զսա, | զսոսա, |

Զ. զսմանէ, զսոցանէ,
Բ. 'ի սմանէ, 'ի սոցանէ,
Տ. 'ի սա, առ սա, սմա, 'ի սոսա, ցսոցա, սոցայ,
Ն. 'ի սա, 'ի սմա, 'ի սոսա:

Այսպէս հոլովին և բառքս

Դա, դորա, դովաւ, Դոքա, դոցա, ըշ—:
Նա, նորա, նովաւ, Նոքա, նոցա, օ:

Եզակի | Յոգնակի

Ո. Այս, դա— | Այսոքիկ, կայսք, դա—ն
Ս. այսր, կայսորիկ, այսոցիկ, այսց,
Գ. այսու, այսուիկ, այսոքիւք, այսոքիմբք,
Զ. զայսու, զայսուիկ, զայսոքիւք, զայսոքիմբք,
Հ. զայս, զայսոսիկ, զայսս,
Զ. զայսմանէ, զայսցանէ, զայսց,
Բ. յայսմանէ, յայսցանէ, յայսց,
Տ. յայս, առ այս, այսմ, այսմիկ, առ այսոսիկ, այսոցի
Ն. յայսմ, յայսմիկ, յայսոսիկ:

Այսպէս հոլովին և բառքս

Այդ, այդր, որիկ, ու, իկ, Այդոքիկ, կայդք, ըշ—:
Այն, այնր, որիկ, ու, իկ, Այնոքիկ, այնքցիկ, այնց,

Եզակի | Յոգնակի

Ո. Սոյն, դա—: | Սոյնք, սոքին, դա—ն
Ս. սորին, կսորուն, սոցին, սոյուն, սոյունց
Գ. սովիմբ սովին, սովիմբք, սոքիմբք, սոքումբք
Զ. զսովիմբ, զսովին, զսովիմբք, զսոքիմբք, զսոքումբ
Հ. զսոյն, զսոյնս, զսոսին,
Զ. Չունի զսոցունց,

Տ. ՚ի սոյն, առ սոյն, սմին, առ սոյնս, առ սոսին, սոցին,
Ն. ՚ի սմին, ՚ի սոյն, ՚ի սոսին, ՚ի սոյնս:

Նոյնպէս ՚հոլովին և բառքս

Դոյն, դորին, դմին, Դոյնք, քին, ցին, ցուն, ցունց, [illegible]
Նոյն, նորին, նմին, Նոյնք, քին, ցին, ցուն, ցունց, [illegible]

Առաջական

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Ո. Իմ, [illegible] | Իմք, |
| Ս. իմոյ, | իմոց, |
| Տ. իմով, | իմովք, |
| Զ. զիմով, | զիմովք, |
| Հ. զիմ, | զիմս, |
| Զ. զիմոյ, զիմմէ, | զիմոց, |
| Բ. յիմմէ, յիմոյ, | յիմոց, |
| Տ. յիմ, առ իմ, իմում, | յիմս, առ իմս, իմոց, |
| Ն. յիմում, յիմ, | յիմս: |

Նոյնպէս հոլովին և բառքս

Քո, քոյ, ով, Քոյք, քոց, քովք, [illegible]
մեր, մերոյ, րով, մերք, մերոց, մերովք, [illegible]
ձեր, ձերոյ, րով, ձերք, ձերոց, ձերովք, [illegible]
իւր, իւրոյ, րով, իւրք, իւրոց, իւրովք, [illegible]
սորայ, սորայոյ, ով, սորայք, սորայոց, ովք, [illegible]
դորայ, դորայոյ, ով, դորայք, դորայոց, ովք, [illegible]
նորայ, նորայոյ, ով, նորայք, նորայոց, ովք, [illegible]

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Ո. Իմային, [illegible] : Իմայինք, կ իմայք, [illegible] | |
| Ս. իմայոյ, իմայնոյ, իմայոց, իմայնոց, | |

Գ· իմայով, իմայնով, իմայովք, իմայնովք,
Պ· զիմայով, զիմայնով, զիմայովք, զիմայնովք,
Հ· զիմային, զիմայն, զիմայինս, զիմայնս,
Պ· զիմայոց, զիմայնոց, զիմայոց, զիմայնոց,
Բ· յիմայոց, յիմայնոց, յիմայոց, յիմայնոց,
Տ· առ իմային, իմյնոյ, իմյում; առ իմյինս, իմյնոց,
Ն· յիմային, յիմայնում: յիմայինս, յիմայնս,

Նոյնպէս հոլովին և բառքս

Մերային, ոյ, նոյ, Մերայինք, այնք, յոց, նոց, [illegible]:
Ձերային, յոյ, նոյ, Ձերայինք, յոց, նոց, [illegible]:
Իւրային, յոյ, նոյ, Իւրայինք, յոց, նոց, [illegible]:

Յարաբերական

| Եզական | Յոգնական |
|---|---|
| Ո· Որ, ո, [illegible]: | Որք, ոյք, [illegible]: |
| Ս· որոյ, ոյր, | որոց, ոյց, |
| Գ· որով, իւ, | որովք, իւիք, |
| Պ· զորով, զիւ, | զորովք, զիւիք, |
| Հ· զոր, զո | զորս, զոյս, |
| Պ· զորմէ, զորոյ, զումմէ, | զորոց, զոյց, |
| Բ· յորմէ, յորոյ, յումմէ, | յորոց, յոյց, |
| Տ· յոր, առ ո; որում, | առ որս, յորս, որոց, |
| Ն· յորում, յոր, յում | , յորս, յոյս: |

Սահմանական եղանակի ներկայ

Եզակի ։ եմ, ես, է,
Յոգնակի ։ եմք, էք, են ։

Անցեալ անկատար

Եզակի ։ էի, էիր, էր,
Յոգնակի ։ էաք, էիք, էին ։

Անցեալ կատարեալ,

Եզակի ։ եղէ, եղեր, եղեւ,
Յոգնակի ։ եղաք, եղէք, եղեն ։

Անցեալ յարակատար

Եզակի ։ եղեալ եմ, եղեալ ես, եղեալ է,
Յոգնակի ։ եղեալք եմք, եղեալ էք, եղեալ են ։

Անցեալ գերակատար

Եզակի ։ եղեալ, էի, եղեալ էիր, եղեալ էր,
Յոգնակի ։ եղեալ էաք, եղեալ էիք, եղեալ էին ։

Ապառնի

Եզակի ։ եղէց, եղիցիս, եղիցի,
Յոգնակի ։ եղիցուք, եղիջիք, եղիցին ։

Հրամայական եղանակի ներկայ

Եզակի ։ եր, Յոգնակի ։ երուք

Հրամայական եղանակի ապառնի

Եզ․ եղիջիր, կ եղիցիս, եղիցի,
Յզ․ եղիցուք, եղիջիք, կ եղանիջիք, եղիցին ։

Ստորադասական եղանակի ապառնի

Եզ․ լիցեմ, լիցես, լիցէ,
Յզ․ լիցեմք, լիցէք, լիցեն ։

Ստորադասական անցեալ

Եզ. եղեալ լիցեմ, եղեալ լիցես, եղեալ լիցէ;

Յգ. եղեալ լիցեմք, եղեալ լիցէք, եղեալ լիցեն.

Աներեւոյթ եղանակ

ել, ելոյ, ելով,

Ընդունելութիւն անցեալ եւ ապառնի

եղեալ, եղանելի, եղանելոց,

---

Սահմանական եղանակի ներկայ

Եզ. լինիմ, լինիս, լինի Յգ. լինիմք, լինիք, լինին

Անցեալ անկատար

Եզ. լինէի, լինէիր, լինէր, Յգ. լինէաք, լինէիք, լինէին

Անցեալ կատարեալ

Եզ. եղէ, եղեր, եղեւ, Յգ. եղաք, եղէք, եղեն.

Անցեալ յարակատար

Եզ. լեալ եմ, լեալ ես, է, Յգ. լեալ եմք, էք, են.

Անցեալ գերակատար

Եզ. լեալ էի, էիր, էր, Յգ. լեալ էաք, էին.

Ապառնի

Եզ. լիցիմ, լիցիս, լիցի, Յգ. լիցուք, լիջիք, լիցին.

Հրամայական եղանակի ներկայ

Եզ. լեր, մի լինիր, Յգ. լերուք, մի լինիք.

Հրամայական եղանակի ապառնի

Եզ. լիջիր, կ լինիջիր, կ լինիցիս, լիցի,

Յգ. լիցուք, լինիջիք, լիցին:

Ստորադասական եղանակի ապառնի

Եզ. լինիցիմ, ցիս, ցի, Յգ. լինիցիմք, ցիք, ցին:

Ստորադասական անցեալ

Եզ. լեալ իցեմ, իցես, իցէ, Յգ. լեալ իցեմք, իցէք, են:

Աներևոյթ. լինել, լինելոյ:

ընդունելութիւն անցեալ, լեալ, ապառնի, լինելոց:

---

Սահմանական եղանակի ներկայ

եղանիմ, եղանիս, նի, եղանիմք, նիք, նին:

Անցեալ անկատար

եղանէի, եղանէիր, նէր, եղանէաք, նէիք, նէին:

Անցեալ կատարեալ

եղէ, եղեր, եղև, եղաք, եղէք, եղեն:

Անցեալ յարակատար

եղեալ եմ, եղեալ ես, եղեալ է, եղեալ եմք, էք, են:

Ապառնի

եղէց, եղիցիս, եղիցի, եղիցուք, եղիջիք, եղիցին,
կ̃, եղիցիմ, եղիցիս, եղիցես, ցէ, եղանիցեմք, ցէք, ցեն:

Հրամայական եղանակի ներկայ

եղիր, մի եղանիր, եղերուք, մի եղանիք:

Հրամայական ապառնի

եղիջիր, կ̃ եղանիջիր, եղիցի, եղիջիք, եղիցին:

Ստորադասական անցեալ

եղեալ իցեմ, եղեալ իցես, եղեալ իցէ, իցեմք, իցէք, իցեն:
աներևոյթ, եղանել, ընդ" անց" եղել, ապառ" եղանելի, լոց:

Սահմանական եղանակի ներկայ,

գոմ, գոս, գոյ, գումք, գոյք, գոն :

Անկատար

գոյիր, գոյր, գոյին :

Ստորադասական անցեալ

գուցէ, գուցեն :

[illegible], գող, գողոյ. [illegible]" [illegible]" գյօղ :

ԽՈՆԱՐՀԱԳՈՅՆԸ ԿԱՆՈՆԱՒՈՐ ԲԱՅԻՑ

Օրինակ Ա. [illegible]

Սահմանական եղանակի ներկայ

Ներգործական

Եզ. սիրեմ, սիրես, սիրէ, [illegible], [illegible], [illegible] :
Յգ. սիրեմք, սիրէք, սիրեն, [illegible], [illegible], [illegible] :

Անցեալ անկատար

Եզ. սիրէի, րէիր, րէր, [illegible], [illegible], [illegible] :
Յգ. սիրէաք, էիք, էին, [illegible], [illegible], [illegible] :

Անցեալ կատարեալ

Եզ. սիրեցի, եցեր, եաց, [illegible], [illegible], [illegible] :
Յգ. սիրեցաք, եցիք, ցին, [illegible], [illegible], [illegible] :

Անցեալ յարակատար

Եզ. սիրել եմ, սիրել ես, է, [illegible], [illegible], [illegible] :
Յգ. սիրել եմք, ել էք, են, [illegible], [illegible], [illegible] :

### Անցեալ գերակատար

Եզ. սիրեալ էի, էիր, էր, [illegible]:
Յգ. սիրեալ էաք, էիք, էին, [illegible]:

### Ապառնի

Եզ. սիրեցից, եսցես, եսցէ, [illegible]:
Յգ. սիրեսցուք, ջիք, ցեն, [illegible]:

### Հրամայական եղանակի ներկայ

Եզ. սիրեա, մի սիրեր, [illegible]:
Յգ. սիրեցէք, մի սիրէք, եսցեն, [illegible]:

### Հրամայական եղանակի ապառնի

Եզ. սիրեսջիր, կ սիրեսցես, եսցէ, [illegible]:
Յգ. սիրեսցուք, եսջիք, եսցեն, [illegible]:

### Ստորադասական եղանակի ապառնի

Եզ. սիրիցեմ, ցես, ցէ, [illegible]:
Յգ. սիրիցեմք, ցէք, ցեն, [illegible]:

### Ստորադասական եղանակի անցեալ

Եզ. սիրեալ իցեմ, իցես, իցէ, [illegible]:
Յգ. սիրեալ իցեմք, իցէք, ցեն, [illegible]:
[illegible], սիրեալ [illegible]: [illegible] "[illegible]" սիրող, [illegible]:
[illegible]" սիրել, [illegible]: [illegible]" սիրելի, սիրելոյ, [illegible]:

---

### Սահմանական եղանակի ներկայ

### Կրաւորական

Եզ. սիրիմ, սիրիս, սիրի, [illegible]:
Յգ. սիրիմք, սիրիք, սիրին, [illegible]:

### Անցեալ անկատար

Եզ. սիրէի, սիրէիր, սիրէր, [illegible]
Յգ. սիրէաք, սիրէիք, էին, [illegible]

### Անցեալ կատարեալ

Եզ. սիրեցայ, ցար, ցաւ, [illegible]
Յգ. սիրեցաք, ցայք, ցան, [illegible]

### Անցեալ յարակատար

Եզ. սիրեցեալ եմ, ես, է, [illegible]
Յգ. սիրեցեալ եմք, էք, են, [illegible]

### Անցեալ գերակատար

Եզ. սիրեցեալ էի, էիր, էր, [illegible]
Յգ. սիրեցեալ էաք, էիք, էին, [illegible]

### Ապառնի

Եզ. սիրեցայց, ցիս, ցի, [illegible]
Յգ. սիրեսցուք, ջիք, ցին, [illegible]

### Հրամայական եղանակի ներկայ

Եզ. սիրեաց, մի սիրիր, սիրեցիր, [illegible]
Յգ. սիրեցրուք, մի սիրիք, եսցեն, [illegible]

### Հրամայական եղանակի ապառնի

Եզ. սիրեսջիր,, ցիս, ցի, [illegible]
Յգ. սիրեսցուք, մի սիրիք, ցին, [illegible]

### Ստորադասական եղանակի ապառնի

Եզ. սիրիցիմ, ցիս, ցի, [illegible]
Յգ. սիրիցիմք, ցիք, ցին, [illegible]

### Սորադասական եղանակի անցեալ

Եզ. սիրեցի լիցեմ, լիցես, լիցէ, [illegible], [illegible], [illegible]։
Յգ. սիրեցի լիցեմք, լիցէք, ցեն, [illegible], [illegible]։
[illegible], սիրել, [illegible], [illegible] "[illegible]" սիրեցել, [illegible]։
[illegible], սիրելոց, սիրելի, [illegible]։

### Այսպէս խոնարհին և բառք

| | | | |
|---|---|---|---|
| Արձակեմ, | կեցի, | կեալ, | [illegible]։ |
| Բաժանեմ, | նեցի, | նեալ, | [illegible]։ |
| Ժողովեմ, | վեցի, | վեալ, | [illegible]։ |
| Խնդրեմ, | րեցի, | րեալ, | [illegible]։ |
| Շնորհեմ, | հեցի, | հեալ, | [illegible]։ |
| Պաշտպանեմ, | եցի, | նեալ, | [illegible]։ |
| Պատեմ, | եցի, | տեալ, | [illegible]։ |
| Փակեմ, | եցի, | կեալ, | [illegible]։ |
| Վ[illegible]նեմ, | եցի, | նեալ, | [illegible]։ |

### Ներգործակերպ չեզոք

| | | | |
|---|---|---|---|
| Գուժարկեմ, | կեցի, | կեալ, | [illegible]։ |
| Դողչեմ, | չեցի, | չեալ, | [illegible]։ |
| Ողջխտեմ, | տեցի | տեալ, | [illegible]։ |
| Թուեմ, | եցի, | եալ, | [illegible]։ |
| Խուսեմ, | սեցի, | սեալ, | [illegible]։ |
| Սպուժեմ, | ժեցի, | ժեալ, | [illegible]։ |

### Կրաւորակերպ չեզոք

| | | | |
|---|---|---|---|
| Բնակիմ, | կեցայ, | կեալ, | [illegible]։ |
| Դադարիմ, | րեցայ, | րեալ, | [illegible]։ |
| Ժպտիմ, | տեցայ, | տեալ, | [illegible]։ |

6

Հաշտիմ, տեցայ, տեայց, պարըշըրըմ:
Հրաժարիմ, րեցայ, րեայց, ֆարղաթլանըրըմ:
Յագիմ, գեցայ, գեայց, տօյարըմ:

Հասարակ

Դատիմ, տեցայ, տեայց, չէքահամըլըրըմ:
Խորհիմ, հեցայ, հեայց, տէ-շէ-նէ-րէ-մ:
Խօսիմ, սեցայ, սեայց, սէօյլէրիմ:
Կամիմ, մեցայ, մեայց, իսթէրիմ:
Համարիմ, րեցայ, րեայց, սայարըմ:
Հաւանիմ, եցայ, եայց, պէյէնիրիմ:

## Անօրինակ

Սահմանական եղանակի ներկայ

Ասեմ, ասես, ասէ, ասեմք, ասէք, ասեն:

Անցեալ անկատար

Ասէի, ասէիր, ասէր, ասէաք, ասէիք, ասէին:

Անցեալ կատարեալ

Ասացի, ասացեր, ասաց, ասացաք, ցիք, ցին:

Անցեալ յարակատար և գերակատար

Ասացեալ եմ, ես, է ևն, ասացեալ էի, էիր, էր ևն:

Ապառնի

Ասացից, ասասցես, ասասցէ, ասասցուք, ջիք, ցեն:

Հրամայական եղանակի ներկայ

Ասա, մի ասեր, ասացէք, մի ասէք:

Հրամայական եղանակի ապառնի

Ասասջիր, ասասցես, ասասցէ, ցուք, ջիք, ցեն։

Ստորադասական եղանակի ապառնի

Ասիցեմ, ասիցես, ցէ, ասիցեմք, ցէք, ցեն։

Ստորադասական անցեալ

Ասացեալ լիցեմ, ցես, ցէ, ասացեալ լիցեմք, ցէք, ցեն

աներեւոյթ, ասել, ընդ"ներ" ասօղ կ ասացօղ։
անցեալ, ասացեալ, ապառնի։ ասելոց։

Սահմանական եղանակի ներկայ

Ազատորական

Ասիմ, ասիս, սի, ասիմք, իք, ին, կ ասացեալ լինիմ եւն

Այսպէս խոնարհին եւ բայքս

Գիտեմ, տացի, տեա՛, պիլիրիմ։
Մոռասիմ, սացի, սեա՛, հէ տէրիմ։

Օրինակ Բ. Էմն

Սահմանական եղանակի ներկայ

Հատանեմ, ես, է, հատանեմք, նէք նեն։

Անցեալ անկատար

Հատանէի, էիր, էր, հատանէաք, էիք, էին։

Անցեալ կատարեալ

Հատի, եր, եհատ, կ հատ, հատաք, տիք, տին։

Անցեալ յարակատար եւ գերակատար

Հատեալ եմ եւն, հատեալ էի եւն,

Ապառնի

Հատից, ցես, ցէ, հատցուք, ջիք, ցեն։

Հրամայական եղանակի ներկայ

Հա՛տ, մի հատաներ, հատէք, մի հատանէք։

Հրամայական եղանակի ապառնի

Հատջիր, կ՛ հատանիջիր, հատցես, հատցէ։
Հատցուք, հատանիջիք, հատջիք, հատցեն։

Ստորադասական եղանակի ապառնի

Հատանիցեմ, ցես, ցէ, հատանիցեմք, ցէք, ցեն։

Ստորադասական անցեալ

Հատեալ իցեմ, ցես, ցէ, իցեմք, իցէք, իցեն։
Աներևոյթ, հատանել, Ընդ՛, Ներ՛, հատանող,
Անց՛, հատեալ, Ապառ՛, հատանելի, լոց։

Սահմանական եղանակի ներկայ

Կրաւորական

Հատանիմ, նիս, նի, հատանիմք, նիք, նին։

Անցեալ անկատար

Հատանէի, էիր, էր, հատանէաք, նէիք, էին։

Անցեալ կատարեալ

Հատայ, տար, տաւ, հատաք, տայք, տան։

Անցեալ յարակատար և գերակատար

Հատեալ եմ, եւն հատեալ էի, եւն

Ապառնի

Հատայց, տցիս, ցի, հատցուք, ջիք, ցին։

Հրամայական եղանակի ներկայ

Հատիր, մի հատանիր . հատարուք, մի հատանիք ։

Հրամայական ապառնի

Հատջիր, կ հատանիջիր, հատցես, հատցի . հատցուք, հատջիք, կ հատանիջիք, հատցին ։

Ստորադասական եղանակի ապառնի

Հատանիցեմ, ցես, ցի, հատանիցեմք, ցէք, ցեն ։

Ստորադասական անցեալ

Հատեալ իցեմ, ևն հատեալ իցեմք, ևն

[illegible], հատանել, [illegible], հատել, [illegible] հատանելոյ ։

Այսպէս խոնարհին և բայքս

| | | | | |
|---|---|---|---|---|
| Արկանեմ, | կի, | էարկ, | արկ, | [illegible] ։ |
| Բեկանեմ, | կի, | եբեկ, | բեկ, | [illegible] ։ |
| Դիզանեմ, | զի, | եդէզ, | դէզ, | [illegible] ։ |
| Եղծանեմ, | ծի, | եղծ, | եղծ, | [illegible] ։ |
| Լուծանեմ, | ծի, | ելոյծ, | լոյծ, | [illegible] ։ |
| Խածանեմ, | ծի, | եխած, | խած, | [illegible] ։ |
| Կլանեմ, | լի, | եկուլ, | կուլ, | [illegible] ։ |
| Մուծանեմ, | ծի, | եմոյծ, | մոյծ, | [illegible] ։ |
| Ցուցանեմ, | ցի, | եցոյց, | ցոյց, | [illegible] ։ |
| Օծանեմ, | ծի, | էօծ, | օծ, | [illegible] ։ |

Ներգործակերպ չէզոք

| | | | | |
|---|---|---|---|---|
| Անցանեմ, | ցի, | էանց, | անց, | [illegible] ։ |
| Ելանեմ, | լի, | ել, | ել, | [illegible] ։ |
| Իջանեմ, | ջի, | էջ, | էջ, | [illegible] ։ |

Համբերեմ, րի, բեր, բեր, [illegible]։

Կրաւորակերպ չէզոք

Ագանիմ, գայ, գիր, [illegible]։
Ընկանիմ, կայ, կիր, [illegible]։
Բուսանիմ, սայ, սիր, [illegible]։
Զղջանիմ, ջայ, ջիր, [illegible]։

Հասարակ

Ագանիմ, գայ, գիր, [illegible]։
Ծնանիմ, այ, նիր, [illegible]։
Ուսանիմ, այ, սիր, [illegible]։
Սկսանիմ, սայ, սիր, [illegible]։
Տանիմ, րայ, տար, [illegible]։

Անօրինակ

Սահմանական եղանակի ներկայ

Փախչիմ, չիս, չի, փախչիմք, չիք, չին։

Անկատար

Փախչէի, էիր, չէր, փախչէաք, էիք, էին։

Կատարեալ

Փախեայ, եար, եաւ, փախեաք, եայք, եան։

Յարակատար և գերակատար

Փախուցեալ եմ ևն    փախուցեալ էի ևն

Ապառնի

Փախեայց, իցես, իցէ, փախիցուք, ջիք, ցեն։

Հրամայական եղանակի ներկայ

Փախիր, մի փախչիր. փախերուք, մի փախչիք։

Ապառնի

փախիջիր, փախիցես, փախիցէ, Կ փախիցի:
փախիցուք, փախիջիք, փախիցեն:

Ստորադասական եղանակի ապառնի

փախիցեմ, ցես, ցէ, ցեմք, ցէք, ցեն:
Կ, փախչիցիմ, չիցիս, չիցի, չիցեմք, չիցիք, ցին:

Ստորադասական անցեալ

փախուցեալ լիցիմ, լիցես, լիցէ, լիցեմք, եւ

աներեւոյթ, փախչել, ընդ. անց., փախուցեալ:
ապառնի, փախչելոց:

Այսպէս խոնարհին եւ բայքս

| | | | |
|---|---|---|---|
| Երկնչել, | կեայ, | կեր, | [illegible]: |
| Թագչել, | գեայ, | գիր, | [illegible]: |
| Թռչել, | եայ, | ռիր, | [illegible]: |
| Կորնչել, | եայ, | րիր, | [illegible]: |
| Հանգչել, | եայ, | գիր, | [illegible]: |
| Սառնչել, | եայ, | ռիր, | [illegible]: |

Օրինակ Դ. [illegible]

Սահմանական եղանակի ներկայ

Անցողական

Հաշտեցուցանեմ, Հաշտեցուցանես, ցուցանէ:
Հաշտեցուցանեմք, Հաշտեցուցանէք, ցուցանեն:

Անկատար

Հաշտեցուցանէի, ցուցանէիր, ցուցանէր:
Հաշտեցուցանէաք, ցուցանէիք, ցուցանէին:

Կատարեալ

Հաշտեցուցի, Հաշտեցուցեր, Հաշտեցոյց:

Հաշտեցուցաք, հաշտեցուցիք, հաշտեցուցին

Յարակատար և գերակատար

Հաշտեցուցեալ եմ ևն հաշտեցուցեալ էի ևն

Ապառնի

Հաշտեցուցից, հաշտեցուսցես, հաշտեցուսցէ։
Հաշտեցուսցուք, հաշտեցուսջիք, հաշտեցուսցեն։

Հրամայական եղանակի ներկայ

Հաշտեցո՛, մի հաշտեցուցաներ։
Հաշտեցուցէք, մի՛ հաշտեցուցանէք։

Ապառնի

Հաշտեցո՛ւսջիր, ՚ի հաշտեցուցանիջիր, ՚ի հաշտե-
ցուսցես, հաշտեցուսցէ։
Հաշտեցուսցո՛ւք, ցուսջիք, ցեն։

Ստորադասական եղանակի ապառնի

Հաշտեցուցանիցեմ, հաշտեցուցանիցես, ցանիցէ։
Հաշտեցուցանիցեմք, հաշտեցուցանիցէք, ցեն։

Ստորադասական անցեալ

Հաշտեցուցեալ իցեմ, իցես, իցէ ևն

Աներևոյթ, ընդ՛՛ ներ՛՛ անց՛՛ և ապառնի։

Հաշտեցուցանել, ցուցանող, ցուցեալ, նելի, լոց։

Սահմանական եղանակի ներկայ

Կրաւորական

Հաշտեցուցանիմ, հաշտեցուցանիս, ցուցանի։
Հաշտեցուցանիմք, հաշտեցուցանիք, ցուցանին։

Անկատար

Հաշտեցուցանէի, հաշտեցուցանէիր, ցուցանէր։
Հաշտեցուցանէաք, հաշտեցուցանէիք, ցանէին։

Կատարեալ

Հաշտեցուցայ, հաշտեցուցեր, հաշտեցոյց:
Հաշտեցուցաք, հաշտեցուցայք, հաշտեցուցին:

Յարակատար և գերակատար

Հաշտեցուցեալ եմ եւն հաշտեցուցեալ էի եւն

Ապառնի

Հաշտեցուցից, հաշտեցուսցես, հաշտեցուսցէ:
Հաշտեցուսցուք, հաշտեցուսջիք կամ ուցանիջիք, ցեն:

Հրամայական

Հաշտեցուցի՛ր, մի՛ հաշտեցուցաներ, ցո՛ւք, մի՛ նէք:
Կամ հաշտեցուցեալ լե՛ր, մի՛ հաշտեցուցեալ լինիր եւն

Ապառնի

Հաշտեցուսջի՛ր, կամ հաշտեցուցեալ լեջի՛ր եւն
Հաշտեցուսցո՛ւք, կամ հաշտեցուցեալ լեցո՛ւք եւն

Ստորադասական եղանակի ապառնի

Հաշտեցուցանիցիմ, հաշտեցուցանիս, ցի:
Հաշտեցուցանիցիմք, հաշտեցուցանիցիք, ցին:

Ստորադասական անցեալ

Հաշտեցուցեալ իցեմ, իցես եւն

աներևոյթ, ըստ՝ անց՝ և ապառնի,

Հաշտեցուցանել, հաշտեցուցեալ, ցուցանելոց:

Այսպէս խոնարհին և բայքս

Ապրեցուցանեմ, ցուցի, րեցո, [illegible]:
Դարձուցանեմ, ձուցի, ձո, [illegible]:
Զօրացուցանեմ, ցուցի, րացո, [illegible]:
Թուլացուցանեմ, ցուցի, լացո, [illegible]:
Լցուցանեմ. ցուցի, լցո, [illegible]:

Կեցուցանեմ, ցուցի, կեցո՛, [illegible]:
Ջեռացուցանեմ, ցուցի, ջեռացո՛, [illegible]:
Մահացուցանեմ, ցուցի, հացո՛, [illegible]:
Մատուցանեմ, տուցի, տո՛, [illegible]:
Յիմրեցուցինեմ, ցուցի րեցո՛, [illegible]:
Շլացուցանեմ, ցուցի, ցո՛, [illegible]:
Փքացուցանեմ, ցուցի, քացո՛, [illegible]:

Օրինակ Ե. ամին

Սահմանական եղանակի ներկայ

Ներգործական

Եզ. Բանամ, բանաս, բանայ:
Յգ. Բանամք, արնաք, բանան:

Անցեալ անկատար

Եզ. Բանայի, բանայիր, բանայր:
Յգ. Բանայաք, բանայիք, բանային:

Անցեալ կատարեալ

Եզ, Բացի, բացեր, եբաց, բաց:
Յգ. Բացաք, բացիք, բացին:

Անցեալ յարակատար

Եզ. Բացեալ եմ, բացեալ ես, բացեալ է:
Յգ. Բացեալ եմք, բացեալ էք, բացեալ են:

Անցեալ գերակատար

Եզ. Բացեալ էի, բացեալ էիր, բացեալ էր:
Յգ. Բացել էաք, բացեալ էիք, բացեալ էին:

Ապառնի

Եզ. Բացից, բացցես, բացցէ,
Յգ. Բացցուք, բացջիք, բացցեն։

Հրամայական եղանակի ներկայ

Եզ. Բաց մի բանար,
Յգ. Բացէք, մի բանայք։

Հրամայական եղանակի ապառնի

Եզ. Բացջիր, կ բացցես, բացցէ,
Յգ. Բացցուք, բացջիք, բացցեն։

Ստորադասական ապառնի

Եզ. Բանայցեմ, բանայցես, բանայցէ,
Յգ. Բանայցեմք, բանայցէք, բանայցեն։

Ստորադասական անցեալ

Եզ. Բացեալ իցեմ, բայեալ իցես, բացեալ իցէ,
Յգ. Բացեալ իցեմք, բայեալ իցէք, բացեալ իցեն։

Աներեւոյթ

Բանալ, բանալոյ։

Ընդ՛ ներ՛ անց՛ և ապառնի

Բացօղ, բացեալ, բանալի։

Սահմանական եղանակի ներկայ

Կրաւորական

Եզ. Բանիմ, բանիս, բանի,
Յգ. Բանիմք, բանիք, բանին։

Անցեալ կատարեալ

Եզ. Բանայի, բանայիր, բանիւր,
Յգ. Բանայաք, բանայիք, բանային։

Անցեալ կատարեալ

Եզ. Բացայ, բացար, բացաւ,

Յգ. Բացաք, բացայք, բացան:

Անցեալ յարակատար

Եզ. Բացեալ եմ, բացեալ ես, բացեալ է,

Յգ. Բացեալ եմք, բացեալ էք, բացեալ են:

Անցեալ գերակատար

Եզ. Բացեալ էի, բացեալ էիր, բացեալ էր,

Յգ. Բացեալ էաք, բացեալ էիք, բացեալ էին:

Ապառնի

Եզ. Բացայց, բացցես, բացցէ,

Յգ. Բացցուք, բացջիք, բացցեն:

Հրամայական եղանակի ներկայ

Եզ. Բացիր, մի բացիր,

Յգ. Բացարուք, մի բացջիք:

Հրամայական եղանակի ապառնի

Եզ. Բացջիր, կ բացցես, բացցէ,

Յգ. Բացցուք, բացցեն:

Ստորադասական եղանակի ապառնի

Եզ. Բանայցեմ, բանայցես, բանայցէ,

Յգ. Բանայցեմք, բանայցէք, բանայցեն:

Ստորադասական եղանակի անցեալ

Եզ. Բացեալ իցեմ, բացեալ իցես, բացեալ իցէ,

Յգ. Բացեալ իցեմք, բացեալ իցէք, բացեալ իցեն

անդ", Բանալ: ընդ "նէր" բացեալ:

Այսպէս խոնարհին և բայքս

Բառնամ, բարձի, բարձ, [illegible]:
Թանամ, թացի, թաց, [illegible]:
Լամ, լացի, լաց, [illegible]:
Կամ, կացի, կաց, [illegible]:

### Այլ Օրինակ

Սահմանական եղանակի ներկայ

Ներգործական

Լուանամ, նաս, նայ, լուանամք, նայք, նան:

Անկատար

Լուանայի, այիր, այր, լուանայաք, յիք, յին:

Կատարեալ

Լուացի, ցեր, աց, լուացաք, ցիք, ցին:

Յարակատար և Գերակատար

Լուացեալ եմ, ևն        լուացեալ էի ևն

Ապառնի

Լուացից, ցես, ցէ, լուասցուք, սջիք, ցեն:

Հրամայական եղանակի ներկայ

Լուա՛, մի լուանար, լուացէք, մի լուանաք:

Հրամայական ապառնի

Լուասջիր կամ լուասցես, ցէ, ցուք, ջիք, ցեն:

Ստորադասական եղանակի ապառնի

Լուայցեմ կամ լուանայցեմ, ցես, ցէ, ևն

Ստորադասական անցեալ

Լուացեալ իցեմ, իցես, ևն աներևոյթ, լուանալ:
ընդունել. Լուացող, անց. ացել, ապառն. լուանալի, լոց:

Սահմանական եղանակի ներկայ

Կրաւորական

Լուանիմ, նիս, նի, լուանիմք, նիք, նին:

Անցեալ անկատար

Լուանայի, այիր, նայր, լուանայաք, այիք ին:

Անցեալ կատարեալ

Լուացայ, ցար, ցաւ, լուացաք, այք, ցան:

Անցեալ յարակատար և գերակատար

Լուացեալ եմ, ևն լուացեալ էի, ևն

Ապառնի

Լուացայց, ւասցիս, ցի, լուասցուք, ջիք, ցին:

Հրամայական եղանակի ներկայ

Լուացիր, լուացարուք:

Հրամայական եղանակի ապառնի

Լուասջիր, սցի, լուասցուք, սջիք, սցին:

Ստորադասական եղանակի ապառնի

Լուանայցիմ, ցիս, ցի, լուանայցիմք, ցիք, ցին

Ստորադասական անցեալ

Լուացեալ իցեմ, իցես, իցէ ևն

աներ" Լուանիլ, ընդ" անց" լուացել, ապ" նալի, լոց:

Այսպէս խոնարհին և բայքս

| | | | |
|---|---|---|---|
| Աղամ | ցի, | աղա՛, | [illegible] |
| Ամամ, | ցի, | ամա՛, | [illegible] |
| Օգամ, | ցի, | գգա՛, | [illegible] |
| Խոկամ, | ցի, | կա՛, | [illegible] |
| Կարդամ, | ցի, | ցա՛, | [illegible] |
| Հաւատամ, | ցի, | տա՛, | [illegible] |
| Հոգամ, | ցի, | գա՛, | [illegible] |
| Ողբամ, | ցի, | բա՛, | [illegible] |

Ներգործակերպ չէզոք

| | | | |
|---|---|---|---|
| Անսամ, | սացի, | անսա, | տինլէրիմ: |
| Գնամ, | նացի, | գնա, | կիտէրիմ: |
| Գոռամ, | ռացի, | գոռա, | կիւ-րիւ-լտէրիմ: |
| Եռամ, | ռացի, | եռա, | գայնարըմ: |
| Տոկամ, | կացի, | տոկա, | տայանըրըմ: |

Օրինակ Բ. լծին

Սահմանական եղանակի ներկայ

Ներգործական

Մոռանամ, նաս, նայ, մոռանամք, նայք, նան:

Անցեալ կատարեալ

Մոռանայի, այիր, նայր, մոռանայաք, այիք, ային:

Անցեալ կատարեալ

Մոռացայ, ցար, ցաւ, մոռացաք, ցայք, ցան:

Անցեալ յարակատար և գերակատար

Մոռացեալ եմ, ևն մոռացեալ էի, ևն

Ապառնի

Մոռացայց, ռասցիս, ցի, մոռասցուք, սջիք, սցին:

Հրամայական եղանակն ներկայ

Մոռացիր, մի մոռանար, մոռացարուք, մի նայք:

Հրամայական եղանակի ապառնի

Մոռասջիր, ՚ի սցիս, ցի, մոռասցուք ևն

Ստորադասական եղանակի ապառնի

Մոռանայցեմ, ցես, ցէ, մոռանայցեմք, ցէք, ցեն:

Ստորադասական անցեալ

Մոռացեալ լիցեմ, լիցես, լիցէ ևն.

աներևոյթ, Մոռանալ, ընդ" ներ", մոռացօղ,
անցեալ, Մոռացեալ, ապառ" մոռանալոց:

Սահմանական եղանակի Ներկայ

Կրաւորական

Մոռանիմ, նիս, նի, մոռանիմք, նիք, նին:

Անցեալ անկատար

Մոռանայի, այիր, նայր, մոռանայաք, այիք, ային:

Անցեալ կատարեալ

Մոռացայ, ցայ, ցաւ, մոռացաք, ցայք, ցան:

Անցեալ յարակատար և գերակատար

Մոռացեալ եմ ևն մոռացեալ էի ևն

Ապառնի

Մոռացայց, ռասցիս, ցի, մոռասցուք, ջիք, ցին:

Հրամայական եղանակի ներկայ

Մոռացիր, մի մոռանար, մոռացրուք, մի մոռնայք:

Հրամայական եղանակի ապառնի

Մոռասջիր, սցիս, ցի, մոռասցուք, սջիք, ցին:

Ստորադասական եղանակի ապառնի

Մոռանայցիմ, ցիս, ցի, մոռանայցիմք, ցիք, ցին:

Ստորադասական անցեալ

Մոռացեալ իցեմ, իցես, իցէ ևն
աներևոյթ, Մոռանալ, կ մոռացել լինիլ, անալոյ:
ընդ" անց", Մոռացել, ապառ", մոռանալի, անալոյ:

Այսպէս խոնարհին և բայքս

Ընդլռանամ, ցայ, ցիր, Տանիմ, [illegible]:
Գողանամ, ցայ, ցիր, Խել լինիմ, [illegible]:
Զլանամ, ցայ, ցիր, Զլանամ,

Իմանամ, ցայ, ցիր, իմանիլ, տույարըմ։
Խոստանամ, ցայ, ցիր, խոստացեալ լինիլ, վաատ էդէրիմ։
Հոգամ, ցայ, ցիր, հոգալ, գայըրըրըմ։
Մերկանամ, ցայ, ցիր, մերկանիլ, սօյունուրըմ։
Յղանամ, ցայ, ցիր, յղանալ, համիլէ գալըրըմ։
Որսամ, ցայ, ցիր, որսացեալ լինիլ, աւլարըմ։

Ընդմիջակրական

Զգանամ, գացայ, գացիր, կէյինիրիմ։
Իմաստնանամ, նացայ, նացիր, աքըլլընիրիմ։
Մարգարէանամ, ցայ, ցիր, օլաճագլարը սէօյլէրիմ։
Յարանամ, ցայ, ցիր, դայմալանըրըմ։
Սերանամ, ցայ, ցիր, չէպրէնդէն օլուրում։

Օրինակ Ը. ա-մին

Սահմանական եղանակի ներկայ

Ներգործական

Եզ. Լնում, լնուս, լնու,
Յգ. Լնումք, լնուք, լնուն։

Անցեալ անկատար

Եզ. Լնուի, լնուիր, լնոյր,
Յգ. Լնուաք, լնուիք, լնուին։

Անցեալ կատարեալ

Եզ. Լցի, լցեր, ելից, կ լից,
Յգ. Լցաք, լցիք, լցին։

Անցեալ յարակատար

Եզ. Լցեալ եմ, լցեալ ես, լցեալ է,

Յգ. Լցեալ եմք, լցեալ էք, լցեալ են :

Անցեալ գերակատար

Եզ. Լցեալ էի, լցեալ էիր, լցեալ էր,
Յգ. Լցեալ էաք, լցեալ էիք, լցեալ էին:

Ապառնի

Եզ. Լցից, լցցես, լցցէ,
Յգ. Լցցուք, լցջիք, լցցեն:

Հրամայական եղանակի ներկայ

Եզ. Լից, մի՛ լնուր,
Յգ. Լցէք, մի՛ լնուք:

Հրամայական եղանակի ապառնի

Եզ. Լցջիր, լցցես, լցցէ,
Յգ. Լցցուք, լցջիք, լցցեն:

Ստորադասական եղանակի ապառնի

Եզ. Լնուցում, լնուցուս, լնուցու,
Յգ. Լնուցումք, լնուցուք, լնուցուն:

Ստորադասական եղանակի անցեալ

Եզ. Լցեալ իցեմ, լցեալ իցես, լցեալ իցէ,
Յգ. Լցեալ իցեմք, լցեալ իցէք, լցեալ իցեն:
ԱՆԵՐԵՒՈՅԹ, լնուլ, լնլոյ,
ԸՆԴ. ՆԵՐԿԱՅ, լցող, ԱՆՑԵԱԼ, լցեալ:

Սահմանական եղանակի ներկայ

Կրաւորական

Եզ. Լնանիմ, լնանիս, լնանի,
Յգ. Լնանիմք, լնանիք, լնանին,

Ընդհանուր անկատար

Եզ· Լնանէի, լնանէիր, լնանէր,
Յգ· Լնանէաք, լնանէիք, լնանէին:

Ընդհանուր կատարեալ

Եզ· Լցայ, լցար, լցաւ,
Յգ· Լցաք, լցայք, լցան:

Ընդհանուր յարակատար

Եզ· Լցեալ եմ, լցեալ ես, լցեալ է,
Յգ· Լցեալ եմք, լցեալ էք, լցեալ են:

Ընդհանուր գերակատար

Եզ· Լցեալ էի, լցեալ էիր, լցեալ էր,
Յգ· Լցեալ էաք, լցեալ էիք, լցեալ էին:

Ապառնի

Եզ· Լցայց, լցցիս, լցցի,
Յգ· Լցցուք, լցջիք, լցցին:

Հրամայական եղանակի ներկայ

Եզ· Լցիր, մի լնանիր,
Յգ· Լցարուք, մի լնանիք:

Հրամայական եղանակի ապառնի

Եզ· Լցիր կ լցցիս, լցցի,
Յգ· Լցցուք, լցջիք, լցցին:

Ստորադասական եղանակի ապառնի

Եզ· Լնանիցիմ, լնանիցիս, լնանիցի,
Յգ· Լնանիցիմք, լնանիցիք, լնանիցին,:

Ստորադասական անցեալ՝

Եզ. Լցեալ իցեմ, լցեալ իցես, լցեալ իցէ,
Յգ. Լցեալ իցեմք, լցեալ իցէք, լցեալ իցեն.

Աներևոյթ

Լնանիլ, լնանելոյ, ևն

Ընդունելութիւն անցեալ և ապառնի

Լցեալ, լնանելոց։

Այսպէս խոնարհին և բայքս

Առնում, առի, առ, առեալ լինիմ, [illegible]։
Գելում, գելի, գել, գելանիմ, [illegible]։
Դիզում, դիզի, դէզ, դիզանիմ, [illegible]։
Զենում, զենի, զեն, զենանիմ, [illegible]։
Ընկենում, ընկեցի, կեա, ընկեցեալ լինիմ, [illegible]։
Թողում, թողի, թող, թողանիմ, [illegible]։
Խնում, խցի, խից, խցանիմ, [illegible]։
Կիզում, կիզի, կէզ, կիզեալ լինիմ, [illegible]։
Հեղում, հեղի, հեղ, հեղանիմ, [illegible]։
Հերձում, հերձի, հերձ, հերձանիմ, [illegible]։
Յաւելում, յաւելի, յաւել, յաւելեալ լինիմ, [illegible]։
Ստեղծում, ծի, ստեղծ, ստեղծում, [illegible]։

Օրինակ Բ [illegible]

Սահմանական եղանակի ներկայ

Ներգործական

Զգենում, նուս, նու, զգենումք, նուք, նուն։

Անցեալ անկատար

Զգենուի, ուիր, ույր։ զգենուաք, ուիք, ուին։

Անցեալ կատարեալ

Օգնեցայ, ցար, ցաւ, օգնեցաք, ցայք, ցան:

Անցեալ յարակատար և գերակատար

Օգնեցեալ եմ, ևն օգնեցեալ էի, ևն

Ապառնի

Օգնեցայց, եսցիս, եսցի, օգնեսցուք, ջիք, ցին:

Հրամայական եղանակի ներկայ

Օգնեցիր, մի օգներ, օգնեցարուք, մի օգնէք:

Հրամայական եղանակի ապառնի

Օգնեսջիր, ցիս, ցի, օգնեսցուք, ջիք, ցին:

Ստորադասական եղանակի ապառնի

Օգնիցիմ, ցիս, ցի, օգնիցիմք, ցիք, ցին:

Ստորադասական անցեալ

Օգնեցեալ իցեմ, իցես, իցէ: ևն

աներ՛ Օգնել, օգնելոյ, լով, ըստ՛ ներ՛ օգնեցող:

ըստ՛. անց՛ Օգնեցեալ, ըստ՛. ապառ՛ օգնելոց:

Սահմանական եղանակի ներկայ

Արաւորական

Օգնեալ լինիմ, օգնեալ եղէ, օգնեալ լեր, ևն

Այսպէս խոնարհին և բայքս

Ընթեռնում, ցայ, ցիր, [illegible]:

Կլանում, կլայ, կուլ, [illegible]:

Սկանում, սկսայ, սկսիր, [illegible]:

Երկտեսակ չէզոք

Առնում, առեայ, առիր, [illegible]:

Երդնում, երդուայ, ուիր, [illegible]:

| | | | |
|---|---|---|---|
| Զարթնում, | թեայ, | թիր, | ույանմագ : |
| Թաքնում, | քեայ, | քիր, | սագլանմագ : |
| Հարթնում, | թեայ, | թիր, | [illegible] : |
| Մածնում, | ծեայ, | ծիր, | [illegible] : |
| Յենում, | ցայ, | ցիր, | [illegible] : |
| Ստանում, | տեայ, | տիր, | [illegible] : |
| Պակնում, | կեայ, | կիր, | գորգմագ : |
| Ցասնում, | սեայ, | սիր, | [illegible] : |

ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆՔ ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԻՑ

Ներգ., Առնեմ, էթմէք

սահ. ներ., Առնեմ, նես, նէ, նեմք, նէք, նեն:
անց. անկ., Առնէի, էիր, նէր, էաք, էիք, էին:
անց. կա., Արարի, րեր, րար, րաք, րիք, րին:
անց. յար., Արարեալ եմ, ես, է, եմք, էք, են:
անց. գեր., Արարեալ էի, էիր, էր, էաք, էիք, էին:
ապառնի, Արարից, ցես, ցէ, ցուք, ջիք, ցեն:
հրա. ներ., | Արա՛, մի առներ, արարէք, մի առնէք:
հրա. ապ., | Արասջիր, առիջիր, ցէ, ցուք, ջիք, ցեն:
ստոր. ապ., | Առնիցեմ, ցես, ցէ, ցեմք, ցէք, ցեն:
ստոր. անց., | Արարեալ իցեմ, ցես, ցէ, ցեմք, ցէք, ցեն:
աներեւոյթ, Առնել, առնելոյ, առնելով [illegible]

ընդ. ներ., Արարող, }
ընդ. անց. ապ., Արարեալ, } Առնելի, Առնելոց :

Կրաւորական, Առնիմ, էտիլիրիմ:

սահ. ներ., Առնիմ, նիս, նի, նիմք, նիք, նին:
անց. անկ., Առնէի, էիր էր, էաք, էիք, էին:
անց. կա., Արարայ րար, րաւ, րաք, րայք, րան:
անց. յա. ևգե., Արարեալ եմ ևն արարեալ էի ևն
ապառնի, Արարայց, ցիս, ցի, ցուք ջիք, ցին:
հրա. ներ., մի Առնիր, արասցիս, մի առնիք:
հրա. ապ., մի Առնիջիր, առնիջիք, արասցին:
ստր. ապ., Առնիցիմ, ցիս, ցի, ցիմք, ցիք, ցին:
ստր. անց., Արարեալ լիցիմ, լիցիս, լիցի ևն
աներևոյթ, Առնիլ, առնելոյ, առնելով, ևն
ընդ. ան. ևապ., Արարեալ, առնելի. առնելոց:

Ներգործական Դնեմ, գօյարըմ:

սահ. ներ., Դնեմ, նես, նէ, եմք, էք, նեն:
անց. կատ., Եդի, եդեր, եդ, դաք, դիք, դին:
ան. յա. ևգե., Եդեալ եմ, ևն եդեալ էի, ևն
ապառնի, Եդից, դիցես, ցէ, ցուք, ջիք, ցեն:
հրա. ներ., Դիր, մի դներ, դիք, մի դնէք:
հրա. ապ., Դիջիր, ցես, ցէ, ցուք, ջիք, ցեն:
ստր. ապ., Դնիցեմ, ցես, կ դիցեմ, դիցես ևն
ստր. անց., Եդեալ լիցիմ, լիցիս, ևն
աներևոյթ, Դնել, դնելոյ, դնելով, ևն
ընդ. ներ. անց. և ապ., դնող, եդեալ, դնելի, լոց:

Կրաւորական, Դնիմ, գօնուլուրում:

սահ. ներ., Դնիմ, նիս, նի, նիմք, նիք, նին:
անց. անկ. Դնէի, էիր, էր, էաք, էիք, նէին:

անց. կա  Եղայ, ղար, աւ, ղաք, այք, ան
անց. յա. եւ գէ Եղեալ եմ եւ  եղեալ էի եւ
ապառնի, Եղայց, ղիցիս, ցի, ցուք, ջիք, ցի՛ն
հրա. ներ, | Եղեա՛լ լեր, մի՛ ղնիր, եղերո՛ւք, մի՛ ղնիք
հրա. ապ, | Ղիջի՛ր, ցի,  ցուք, ջի՛ք, ցի՛ն
ստր. ապ, | Ղնիցիմ, ցիս, ցի, ցիմք, ցիք, ցին:
ստր. անց, | Եղեալ իցեմ,  իցես եւ
աներեւոյթ, Ղնիլ, ղնելոյ, ղնելով եւ
ընդ. ան. եւ ապ, Եղեալ, ղնելի, ղնելոց:

Չեզոք, Յառնեմ, [illegible]:

սահ. ներ, Յառնեմ, ես, նէ, նեմք, էք, նեն:
անց. անկ, Յառնէի, իր, էր, նէաք, իք, էին:
անց. կատ, Յարեայ, եար, եաւ, եաք, եայք, եան:
անց. յար. եւ գէ Յարուցեալ եմ եւ յարուցեալ էի եւ
ապառնի, Յարեայց, րիցես, ցէ, ցուք, ջիք, ցեն:
հրա. ներ, | Արի՛, մի՛ յառներ, արի՛ք, մի՛ յառնէք:
հրա. ապ, | Յարիջի՛ր, րիցես, րիցէ, ուք, ջի՛ք, ցե՛ն:
ստր. ապ, | Յառնիցեմ, կ յարիցեմ, ցես, յառնիցեմք եւ
ստր. անց, | Յարուցեալ իցեմ, իցես եւ
աներեւոյթ, Յառնել, յառնելոյ, յառնելով եւ
ընդ. ան. եւ ապ Յարուցեալ, յառնելի, յառնելոց:

Ներգործական, Տամ, [illegible]:

սահմ. ներ, Տամ, տաս, տայ, տամք, տայք, տան:
անց. անկ, Տայի, իր, տայր, տայաք, տայիք, ին:
անց. կատ, Ետու, ուր, ետ, տուաք, ետուք, ուն:
անց. յա. եւ գէ, Տուեալ եմ եւ  տուեալ էի եւ

ապառնի, Տաջիր, ցես, ցէ, ցուք, ջիք, ցեն։

ստր. ապ., | Տայցեմ, ցես, ցէ, ցեմք, ցէք, ցեն։

ստր. անց., | Տուեալ իցեմ, իցես, իցէ եւ

աներեւոյթ, Տալ, տալոյ, տալով եւ

ընդ. ներ. անց. եւ ապ., Տուօղ, տուեալ, տալի, տալոց։

Կրաւորական, Տուեալ լինիմ, [illegible]։

սահ. ներ., Տուեալ լինիմ, լինիս, լինի եւ

կատարեալ, Տուայ, ար, աւ, աք, այք, ուան։

ապառնի, Տուայց, տացիս, ցի, տացուք, ջիք, ցին։

հրմ. ապ., Տուեալ լիջիր, տացիս, տացի։

ստր. ապ., Տայցիմ, ցիս, ցի, ցիմք, ցիք, ցին։

անբ. ընդ. անց. եւ ապ. Տուեալ լինել, տուեցեալ, տալի։

Չեզոք, Գամ, [illegible]

սահ. ներ., Գամ, գաս, գայ, գամք, գայք, գան։

անց. անկ., Գայի, յիր, գայր, գայաք, յիք, յին։

անց. կատ., Եկի, եկիր, եկն, եկաք, եկիք, եկին։

անց. յառ. եւ գեր., Եկեալ եմ եւ   եկեալ էի եւ

ապառնի, Եկից, կեսցես, ցէ, ցուք, ջիք, ցեն։

հրամ. ներ., | Եկ, մի գար, եկայք, մի գայք։

հրամ. ապ., | Եկեսջիր, ցէ, ցուք, ջիք, ցեն։

ստր. ապ., | Գայցեմ, ցես, ցէ, եմք, ցէք, ցեն։

ստր. անց., | Եկեալ իցեմ, իցես եւ

աներեւոյթ, Գալ, գալոյ, գալով։

ընդ. անց. եւ ապ., Եկեալ, գալոց։

Չեզոք, Կեամ, [illegible]։

սահ. ներ., Կեամ, աս, այ, ամք, այք, եան։

անց. անկ., Կէի, կէիր, այր, էաք, կէիք, կէին։

անց. կատ., Կեցի, ցեր, եկեաց, կեցաք, ցէք, ցին:
անց. յար. և գեր., Կեցեալ եմ ևն կեցեալ էի ևն
ապառնի, Կեցից, ցցես, ցցէ, ցցուք, ջիք, ցեն:
հրամ. ներ., Կեաց, մի կեար, կեցէք:
հրամ. արգ., Կեցջիր, կեցջիք, կեցցեն:
ստոր. ապ., Կեցցեմ, կ̄ կեայցեմ, ցես, ևն
ստոր. անց., Կեցեալ իցեմ ևն
աներ. ընդ. ներ. անց. և ապառ., Կեալ, ցող, ցեալ, կելոց:

Ներգործական, Բառնամ, [illegible]:

սահ. ներ., Բառնամ, նաս, այ, ամք, այք, ան:
անց. անկ., Բառնայի, իր, նայր, յաք, իք, յին:
անց. կատ., Բարձի, ձեր, եբարձ, ձաք, ձիք, ձին:
անց. յար. և գեր., Բարձեալ եմ, ևն բարձեալ էի:
ապառնի, Բարձից, ձցես, ցէ, ցուք, ջիք, ցեն:
հրամ. ներ., Բարձ, մի բառնար, բարձէք, մի նայք:
հրամ. արգ., Բարձջիր, ցես, ցէ, ցուք, ջիք, ցին:
ստոր. ապ., Բառնայցեմ, ցես, ցէ, եմք, էք, ցեն:
ստոր. անց., Բարձեալ իցեմ, իցես ևն
աներևոյթ, Բառնալ, լոյ, լով ևն
ընդ. ներ. անց. և ապ., Բարձող, եալ, բառնալոց:

Կրաւորական, Բառնիմ, [illegible]:

սահ. ներ., Բառնիմ, իս, նի, իմք, նիք, նին:
անց. անկ., Բառնայի, իր, այր յաք, յիք, յին:
անց. կատ., Բարձայ, ար, աւ, աք, այք, ձան:
անց. յար. և գեր., Բարձեալ եմ ևն բարձեալ էի ևն
ապառնի, Բարձայց, ցիս, ցի, ուք, ջիք, ցին:

հրա. ներ., } Բարձիր, մի բարձնիր, բարձէք, բարձցին:
հրա. ապ., } Բարձջիր, ձցի, ձուք, ձջիք, ցին:

### Պակասաւորք

Ներգործական, Ըմպեմ, ԽՄԵԼ:

սահ. ներ., Ըմպեմ, պես, պէ, եմք, էք, պեն:
անց. անկ., Ըմպէի, իր, էր, էաք, էիք, էին:
անց. կատ., Արբի, բեր, էարբ, արբ, բաք, իք, ին:
անց. յար. և գեր., Արբեալ եմ եւն  արբեալ էի եւն
ապառնի, Արբից, բցես, ցէ, ցուք, ջիք, ցեն:
հրա. ներ., } Արբ, մի ըմպեր. արբէք, մի ըմպէք:
հրա. ապ., } Արբջիր, ցես, ցէ, ցուք, ջիք, ցեն
ստոր. ապ., } Ըմպիցեմ, ցես, ցէ, եմք, ցէք, ցեն:
ստոր. ան., } Արբեալ իցեմ եւն
աներևոյթ, Ըմպել, ըմպելոյ, լով եւն
ընդ. ներ. անց. և ապ., Ըմպօղ, արբեալ, ըմպելոց:

Կրաւորական, Արբեալ լինիմ, ԽՄՈՒԻԼ:

սահ. ներ., Արբեալ լինիմ, լինիս, եւն
անց. անկ., Արբեալ լինէի, լինէիր եւն
անց. կատ., Արբեալ եղէ եւն
անց. յար. և գեր., Արբեալ եմ եւն  արբեալ էի եւն
ապառնի, Արբեալ եղէց եւն
հրա. ներ., } Արբեալ լեր եւն
հրա. ապ., } Արբեալ լիջիր եւն
ստոր. ապ., } Արբեալ լինիցիմ եւն
ստոր. ան., } Արբեալ իցեմ, իցես եւն
ընդ. ան. և ապ., Արբեալ, արբեալ լինելոց:

Ներգործական, Լսեմ, [illegible]:

| | |
|---|---|
| սահ. ներ., | Լսեմ, սես, սէ, սեմք, սէք, սեն |
| անց. անկ., | Լսէի, էիր, էր, էաք, էիք, ին: |
| անց. կա., | Լուայ, ար, աւ, աք, այք, ան: |
| ան. յա. եւ գե., | Լուեալ եմ եւն   լուեալ էի եւն |
| ստորադասական, | Լուայց, ւիցես, իցէ, ցուք, ջիք, ցեն |
| հրա. ներ., | Լո՛ւր, մի՛ լսեր, լուարուք, մի՛ լսէք |
| հրա. ապ., | Լուիջի՛ր, ցես, ցէ, ցո՛ւք, ջի՛ք, ին: |
| ստր. ապ., | Լուիցեմ, լսիցեմ; ես, ցէ, եմք, էք, են: |
| ստր. ան., | Լուեալ իցեմ, իցես եւն |
| աներեւոյթ, | Լսել, լսելոյ, լսելով: |
| ընդ. ներ. անց. եւ ապ., | Լսող, լուեալ, լսելի, լսելոց: |

Կրաւորական, Լսիմ, [illegible]:

| | |
|---|---|
| սահ. ներ., | Լսիմ, սիս, սի, իմք, սիք, սին: |
| անց. անկ., | Լսելի լինէի, լինէիր եւն |
| անց. կա., | Լսեալ եղէ եւն |
| անց. յարակ. եւ գեր., | Լուեալ եմ, լուեալ էի եւն |
| ստորադասական, | Լսելի եղէց եւն |
| հրա. ներ., | Լուեալ լեր, եւն |
| հրա. ապ., | Լուեալ լիջի՛ր եւն |
| ստր. ապ., | Լսելի լինիցիմ, ցիս եւն |
| ստր. անց., | Լուեալ իցեմ եւն |
| աներեւոյթ, | Լուեալ լինել, լսելի լինել: |
| ընդ. ան. եւ ապ., | Լսցեալ, կ լսելի եղեալ, լսելոց, կ- լսելի լինելոց: |

## Ներգործական, Ճանաչեմ, Բանբեր.

սահ. ներ, Ճանաչեմ, ես, չէ, եմք, էք, չեն:
անց. անկ, Ճանաչէի, իր, էր, էաք, էիք, էին:
անց. կատ, Ծանեայ, եար, աւ, աք, այք, եան:
անց. յառ. կատար, Ծանուցեալ եմ եւն
ստորադ, Ծանեայց, նիցես, ցէ, ծանիցուք, են:
հրամ. ներ, Ծանիր, մի ճանաչեր, ծաներուք:
հրամ. ապ, Ծանիջիր, ցես, ցէ, ցուք, ջիք, ցեն:
ապառ. ապ, Ճանաչիցեմ, ես, ցէ, եմք, էք, են:
ապառ. անց, Ծանուցեալ լիցիմ, լիցիս եւն
աներեւոյթ, Ճանաչել, ճանաչելոյ, լով եւն
ընդ. ներ, Ճանաչօղ,
անց եւ ապ Ծանուցեալ, ճանաչելոց:

## Կրաւորական, Ճանաչիմ, Բանբեր:

սահ. ներ, Ճանաչիմ, չիս, չի, չիմք, չիք, չին:
անց. անկ, Ճանաչէի, էիր, էր, աք, իք, էին:
անց. կատ, Ծանուցայ, ար, աւ, աք, այք, ան:
անց. յառ. կատ, Ծանուցեալ եմ եւն ծանուցեալ էի եւն
ստորադ, Ծանուցայց, ւցիս, ի, նիցուք, ջիք, ին:
հրամ. ներ, Ծանուցեալ լեր, մի եւն
ապառ. ապ, Ծանիցիմ, կ ճանաչիցիմ, ցիս, ցի եւն
ապառ. անց, Ծանուցեալ լիցիմ եւն
աներեւոյթ, Ճանաչել, լոյ, լով եւն
ընդ. անց. եւ ապ, Ճանաչեալ, ճանաչելոց եւն

Ներգործական, Ուտեմ, ԵԷԸԷՄ,

սահ. ներ, Ուտեմ, ես, է, եմք, էք, ուտեն:
անց. անկ, Ուտէի, իր, էր, էաք, էին, էին:
անց. կատ, Կերի, րեր, եկեր, կերաք, իք, ին:
ան. յառ. եւ գեր, Կերեալ եմ եւն    կերեալ էի եւն
ապառնի, Կերայց, րիցես, ցէ, ուք, ջիք, են:
հրա. ներ, Կեր, մի՛ ուտեր, րայք, մի ուտէք:
հրա. ապ, Կերիջի՛ր, րիցես, ցէ, ուք, ջի՛ք, են:
ստր. ապառ, Ուտիցեմ, կերիցեմ, ես, ցէ, եմք, էք, են:
ստր. անց, Կերեալ իցեմ եւն
աներեւոյթ, Ուտել, լոյ, լով եւն
ընդ. ներ. անց. եւ ապ, Կերող, կերեալ, ուտելոց:

Կրաւորական, Ուտիմ, ԵԷՆԷԸԷՄ: !

սահ. ներ, Ուտիմ, իս, տի, իմք, իք, տին:
անց. անկ, Ուտէի, իր, տէր, տէաք եւն
անց. կատ, Կերայ, ար, կերաւ եւն
ան. յառ. եւ գեր, Կերեալ եմ եւն    կերեալ էի եւն
ապառնի, Կերայց, ցիս, ցի, ցուք, ջիք. ցին:
հրա. ներ, Կերեալ լեր, եւն
հրա. ապ, Կերիջի՛ր, կերիջի՛ք:
ստր. ապ, Կերիցիմ, իս, ցի, իմք, ցիք, ցին:
ստր. անց, Կերեալ իցեմ եւն
աներեւոյթ, Ուտիլ, ուտելոյ, լով եւն
ընդ. ան. եւ ապ, Կերեալ, ուտելի, ի կերլի:

Ներգործական, Ունիմ, Անկանոն:

սահ. ներ, Ունիմ, նիս, նի, նիմք, նիք, նին:
անց. անկ, Ունէի, էիր, էր, էաք, էիք, էին:
անց. կատ, Կալայ, լար, լաւ, լաք, լայք, լան:
անց. յա. ներկ, Կալեալ եմ եւն   կալեալ էի եւն
ապառնի, Կալայց, ցես, ցէ, ցուք, ջիք, ցեն:
հրա. ներկ, Կալ, կա՛, մի ունիր, կալէք, ունք, մի ունիք:
հրա. ապ, Կալջիր, ցես, ցէ, ցուք, ջիք, ցեն:
ստոր. ապ, Ունիցիմ, ցիս, ցի, ցիմք, ցիք, ցին:
ստոր. անց, Կալեալ իցեմ եւն
աներևոյթ, Ունել, ունելոյ, ունելով եւն
ընդ. ներ. անց. ապառ, Ունող, կալեալ, ունելի, ունելոց:

Ծանօթութիւն

Ընդունիմ բայը և անկէց ելածներն ալ ասոր-պէս կը խոնարհին . բայց կատարեալը կըլլայ ընկալայ . վերընկալայ . եւն

Չեզոք, Երթամ, Անկանոն:

սահ. ներ, Երթամ, թաս, այ, ամք, այք, ան:
անց. անկ, Երթայի, այիր, այր, այաք, իք, ին:
անց. կատ, Չոքայ, քար, քաւ, քաք, այք, քան:
անց. յա. ներկ, Երթեալ եմ եւն   երթեալ էի եւն
աներևոյթ, Երթայց, ցես, ցէ, ցուք, ջիք, ցեն:
հրա. ներ, Երթ, մի երթար, երթայք, մի երթայք:

հրա. ապ., Երթիջիր, ցես, ցէ, ցուք, ջիք, ցեն:
ստր. ապ. եւ ան., Երթիցեմ, ցես: երթեալ լիցիմ եւն
աներեւոյթ, Երթալ, երթալոյ եւն
ընդ. ներ. անց. եւ ապ., Երթօղ, երթեալ, երթալոց:

### Չեզոք, Մեղանչեմ, կրաւորաձեւ:

սահ. ներ., Մեղանչեմ, չես, չէ, չեմք, չէք, չեն:
անց. անկ., Մեղանչէի, էիր, չէր, աք, էիք, էին:
անց. կատ., Մեղայ, ղար, ղաւ, ղաք, ղայք, ղան:
ան. յա. եղծ., Մեղուցեալ եմ եւն մեղուցեալ էի եւն
ապառնի, Մեղայց, մեղիցես, ղիցէ, ցուք, ջիք, ցեն:
հրա. ներ., Մեղիր, միմեղանչեր, մեղրուք, միչէք:
հրա. ապ., Մեղիջիր, ցիս, ցէ, ցուք, ջիք, ցեն:
ստր. ապ., Մեղանչիցեմ, կամ մեղիցեմ, ես, է, եմք, էք, են
ստր. անց., Մեղուցեալ իցեմ եւն
աներեւոյթ, Մեղանչել. լոյ, լով եւն
ընդ. ներ. ան. եւ ապ., Մեղանչօղ, մեղուցեալ, մեղանչելոց:

### Չեզոք, Պարտիմ, ներգործաձեւ:

Սահմանական եղանակի ներկայ

Եզ. Պարտիմ, պարտիս, պարտի:
Յգ. Պարտիմք, պարտիք, պարտին:

Անցեալ անկատար

Եզ. Պարտէի, պարտէիր, պարտէր:
Յգ. Պարտէաք, պարտէիք, պարտէին:

Ստորադասական ապառնի

Եզ. Պարտիցիմ, պարտիցիս, պարտիցի:
Յգ. Պարտիցիմք, պարտիցիք, պարտիցին:

Աներևոյթ

Պարտիլ, պարտելոյ, պարտելով։

Ձևք, Մարթիմ, [illegible]։

Սահմանական եղանակի ներկայ

Եզ. Մարթիմ, մարթիս, մարթի։
Յգ. Մարթիմք, մարթիք, մարթին։

Ապառնի

Եզ. Մարթացից, մարթասցիս, մարթասցէ։
Յգ. Մարթասցուք, մարթասջիք, մրթասցեն։

Ստորադասական

Եզ. Մարթիցիմ, մարթիցիս, մարթիցի։
Յգ. Մարթիցիմք, մարթիցիք, միրթիցին։

Ներգործական, Գո՛ղ, [illegible]։

Հրամայական եղանակի ներկայ

Եզ. Գո՛ղ, Յգ. Գողեք։

Ապառնի

Եզ. Գողջիր, գողցես, գողցէ։
Յգ. Գողցուք, գողջիք, գողցեն։

Ծանօթութիւն

Ասոնցմէ զատ ոչ արտաւղի և ոչ պակասաւոր անկանոն բայեր կան, միայն մէկ պակասաւոր կ+ բայմը կայ, որ սովորական չէ, և մասնական կը բառին նշանակութիւնովն ալ կը բանի. բայց ըսէս բանած խիստ քիչ անդ կայ. անոր բացատրիւնը [illegible] բանելու անդ շատ կը գործածվի։

## Խոնարհմունք Դիմառութեան բայից

### Օրինակ Ա.

| | | |
|---|---|---|
| սահ. ներկ, | Հարկ է, | իհթիյաճ տըր: |
| անց. անկ, | Հարկ էր, | իհթիյաճ իտի: |
| անց. կատ, | Հարկ եղև, | իհթիյաճ օլտու: |
| ապառնի, | Հարկ լիցի, կ եղիցի, | իհթիյաճ օլաճագ: |
| հր. ապ, | Հարկ լիցի, կամ եղիցի, | իհթիյաճ օլսուն: |
| ստոր. ապառ, | Հարկ իցէ, կլինիցի, | իհթիյաճ օլա: |

### Այսպէս խոնարհին և սոքա

| | | | |
|---|---|---|---|
| Արժան է, Իմրոն, | լայըգ տըր: | Անկ է, | ճայիզ տիր: |
| Բարի է, Բարւոք է, Լաւ է, | էյի տիր: | Չար է, | ֆենա տըր: |
| Հնար է, Մարթ է, | գաբիլ տիր: | Սովոր է, | ատէթ տիր: |
| Պարտ է, Պիտոյ է, | լազըմ տըր: | Օգուտ է, | ֆայտա տիր: |

### Օրինակ Բ.

| | | |
|---|---|---|
| սահ. ներկ, | Օրէնք են, | ատէթ տիր: |
| անց. անկ, | Օրէնք էին, | ատէթ իտի: |
| անց. կատ, | Օրէնք եղեն, | ատէթ օլտու: |
| ապառնի, | Օրէնք եղիցին, | ատէթ օլաճագ: |
| հր. ապ, | Օրէնք եղիցին, | ատէթ օլսուն: |
| ստոր. ապ, | Օրէնք իցեն, | ատէթ օլա: |

Այսպէս խոնարհին և սոքա

| | | | |
|---|---|---|---|
| Կամք են, | [illegible] : | Պէտք են, | [illegible] : |
| Կարծիք են, | [illegible] : | Աղէտք են, | [illegible] : |
| Մեղք են, | [illegible] : | Օրէնք են, | [illegible] : |

Օրինակ Գ.

| | | |
|---|---|---|
| [illegible], | Սառուտանամ, | [illegible] : |
| [illegible], | Սառուտանայր, | [illegible] : |
| [illegible], | Սառուտացաւ, | [illegible] : |
| [illegible], | Սառուտացէ, | [illegible] : |
| [illegible], | Սառուտացի, | [illegible] : |
| [illegible], | Սառուտանայցէ, | [illegible] : |

Այսպէս խոնարհին և սոքա

| | | |
|---|---|---|
| Գիշերանամ, | գիշեր կըլլայ, | [illegible] : |
| Խրինկոյանամ, | խրինկուն կըլլայ, | [illegible] : |
| Ծանչայ, | կը ղայ, | [illegible] : |
| Լուսանամ, | կը լուսնայ, | [illegible] : |
| Մթանամ, | կը մթնի, | [illegible] : |
| Գոռամ, | կը գոռայ, | [illegible] : |

Օրինակ Դ.

| | | |
|---|---|---|
| [illegible], | Ճառագայթէ, | [illegible] : |
| [illegible], | Ճառագայթէր, | [illegible] : |
| [illegible], | Ճառագայթեաց, | [illegible] : |
| [illegible], | Ճառագայթեացի, | [illegible] : |
| [illegible], | Ճառագայթեացէ, | [illegible] : |
| [illegible], | Ճառագայթիցէ, | [illegible] : |

Այսպէս խոնարհին և սոքա

| | | | |
|---|---|---|---|
| Խրխնջէ, | [illegible] : | Բառանչէ, | [illegible] : |
| Խոխոջէ, | [illegible] : | Կաղկանձէ, | [illegible] : |
| Կայծակէ, | [illegible] : | Հաչէ, | [illegible] : |
| Ցօղէ, | [illegible] : | Մլաւէ, | [illegible] : |
| Փայլատակէ, | [illegible] : | Մռնչէ, | [illegible] : |

Օրինակ Ն:

| | | | |
|---|---|---|---|
| [illegible], | Թնդի, | կը սասպի, | [illegible] : |
| [illegible], | Թնդէր, | կը սասպէր, | [illegible] : |
| [illegible], | Թնդեցաւ, | սասպեցաւ, | [illegible] : |
| [illegible], | Թնդեսցի, | սասպի պիտի, | [illegible] : |
| [illegible], | Թնդեսցի, | սասպի, | [illegible] : |
| [illegible], | Թնդիցի, | սասպելու ըլլայ, | [illegible] : |

Այսպէս խոնարհին և սոքա

| | | | |
|---|---|---|---|
| Սուլի, | [illegible] : | Լալի, | [illegible] |
| Դիպի | [illegible] : | Կարծի, | [illegible] : |
| Նրեի, | [illegible] : | Համարի, | [illegible] : |
| Պիտի, | [illegible] : | Հանդիպի, | [illegible] : |

---

[illegible]



# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ԱՐՀԵՍՏ

### ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

---

Քերականութիւնը ազատական արհեստ ըլլալով՝ շատ ցանկալի գիտութիւն մըն է, որով հետեւ կը սորվեցընէ մարդուս իրեն լեզուին յատկութիւնովը խօսիլ ու գրել: Բայց գիտնալու է՝ որ խօսելը ու գրելը չորս բանէն կը ձեւանայ, Գիրէն, Վանկէն, Բառէն, և Բանէն. և ահա ասոնք են սկզբունք Քերականութեան: Անոր համար այս չորս սկզբանց վրայ առանձին յօդուածներով հա քիչ մը խօսիլ հարկաւորելով սկիզբն պիտի ընենք նախ գիրերուն վըրայ և անոնց գիտնալու հարկաւոր պաշտօններուն համար կարեւոր տեղեկութիւններ տալ, և յետոյ գիրերով շինուած վանկերուն. և ասոնց յարադրութիւնը նշանակեալ եղած բառերուն. այսպէս ամենեւին մէկ պակաս բանմը դուրս չի մնայ, որ դաս չտուած ըլլամ քեզի, և խօսքը երկարէ նէ՝ քու փափաքած աղէկմը լեցընելու համար ըլլալով՝ մտադրութեամբ կարդալու ես:

Քերականութեան առաջին սկզբունքին վրայ

## ԳԻՐ

Գիրը կամայական քաշուած նշան մի է տառի մը, իսկ տառը այն կամայական քաշուած նշանին ձայնն է, և հնչմունքը:

Ըսինք՝ կամայական նշան, որովհետև ամէն ազգը ուզածին կերպէ նշան մը քաշելով այլ և այլ գիրեր են եղեր. բայց կը տեսնամք որ թէպէտ գիրերը՝ ամէն լեզուին այլ և այլ է, և թիւերնին ալ որը քիչ որը շատ, այլ ամէն լեզու մի և նոյն հնչման կը ծառայ են, բայց չենք ըսեր որ ամէն լեզուին գիրերուն անունը մի և նոյն է մէկ զմէկ նըման, այլ ուրիշ կերպ առութեամբ նոյն ձայնը կը հնչէ, ինչպէս՝ այբ, ալֆա, ա, եւն:

Բայց մենք հիմայ առնենք մէկ դի ձգելով մեր լեզուին գիրերուն հնչմունքը, և անոնց հարկաւոր պաշտօնը քննենք նայինք:

Մեր լեզուին յատկութիւնը պահանջէրէ որ երեսուն և վեց գիր ըլլայ, ոչ պակաս և ոչ աւելի, թէպէտ օ և ֆ գիրերը եվելցուցեր են, բայց յաւէտ օտար լեզուաց համար հարկաւոր ըլլալովն է և ս...

## Տեղեկութիւն
### Նշերուն և ութը գրերուն վրայ

ա ա Ա

Մեր լեզուին գիրերուն ձեւերը ասոնք են, որ երեք տեսակ է. առաջի ձեւին նօտր գիր կըսուի, երկրորդ ձեւին բոլորագիր, երրորդ ձեւին՝ գլխագիր կ̄ տան-գլուխ: Չորրորդ ձեւ մըն ալ կայ որ ծիֆրայ կըսուի. առաջինը ձեռագիրներուն մէջ կը գործածուի, երկրորդը գիրքերուն մէջ, և բոլոր տպեալ գիրքերը այս տեսակ գիրերով կը գրուին, և ասոնց պզտիկ և մեծ տեսակն ալ կայ: Թէպէտ առաջին տեսակն ալ գիրքերուն մէջ կը գրուի, բայց ամբողջ գիրք այս գրով չըլլար. երրորդ տեսակը՝ ինչպէս իր անունն ալ կը յայտնէ՝ տան-գլուխները կը գրուի, և երբեմն տունին մէջ յատուկ անուանց սկիզբներն կը գործածուի. չորրորդ տեսակը տպագրութեան մէջ խիստ քիչ կը գործածուի, և այնալ այժմուս սովորութեան նայելով պատկերներուն տակը:

Կան քանիմը տեսակ գիրեր ալ, ծննդագիր և կամ ձաղագիր են. որք այժմ խափանուած են, այժմ զանազան կերպ հնարեալ գիրեր ալ կան, ասոնք կրնաս տեսնալ ա . Ա . վայելչագրութեան մէջ:

Ա

Սկզբնատառս գրերուն մէջ ձայնաւոր գիրմընէ, և զանազան պաշտօններ ունի:

Նախ՝ երբոր երկարաւանկ բառի մը մէջ մէկ երկու հեգ կրկնելու ըլլայ հարկաւ որինէ, ինչպէս որ շատ անգամ կը պատահի, այն ատենը կրնայ բոլորովին

այն բառին մէջէն վերցըվիլ , և բառը առանց այբի գրիլ , վրան պատիւ մը դնելով . ինչպէս՝ Հւ՜րին . բայց պատուանշան չի դրվինէ՝ չի կրնար առանց այբի ընաւ բառ մը գրվիլ , գոնէ մէյմէկ սիւն պիտի գրվի այսպէս , Հւարին . բայց թէ որ առաջին կ վերջին գիրը ա ըլլայ նէ՝ յայտնի ընելու է . պատիւ կ սիւն չըլլար , ինչպէս՝ աղա բառին տեղը , ՚ղ կամ ՚ղ՚ գրել չըլլար :

Երկրորդ՝ այբ մը մինակ առանց ուրիշ տառի գըրված , տառի նշան չէ , այլ միավանկ նշանական բառ է , ինչպէ՛՝ „Ա , ա՛ , ա՛ր ա՛ր . զի տեսի զՀրեշտակն տեառն դէմ յանդիման “ դատ : Բայց ինչպէս անսոր շեշտած պիտի ըլլայ . և վրան պատիւ ըլլայ նէ՝ ա՛ , մէկ կամ առաջին ըսել է :

Երրորդ՝ սկիզը կը նշանակէ , փ “ Ես եմ այբ .“ Յայտ . այսինքն՝ ես եմ սկիզըն :

Չորրորդ՝ շատ անգամ բառերուն սկիզըը փակչելով անոնց նշանակութիւնը կը փոխէ , ինչպէս կամայ , ուզելով , ակամայ , չուզելով ըսել է , որուն բաղադրեալ կըսեն քերականք :

Հինգերորդ՝ երկու բառին օրթան մնալով երկու այլանըշանակ բառը մէկ զմէկ կը կապէ , ինչպէս՝ ածաւէր . սոր յօդ կըսեն քերականք :

Վեցերորդ՝ բառի մը վերջին ձայնաւորը ըլլալով Հոլված առնը այն բառը անփոփոխ և անկորուստ կը պահէ . բայց երբոր ինքիրմէ առաջ է դանվի , այն առնը ինքը մէջէն ելլայ . Ցես քաղուածոյ

երեք (3) . մինակ և պատուով գրուելէ նէ՝ ա՛, Ա՛կ
կամ առաջին ըսել է, ինչպէս ըսինք :

Բ.

Գ-իրս բաղաձայն է, և ընդդ է ղին և ֆին . բայց
խիստ զգուշանալու է մէկ զմէկու տեղ չի դրել . ինչու
որ երբեմն նշանակութիւնը կը փոխէ, ինչպէս՝ խա
փան . [illegible] . խարան . [illegible] ըսել է .
Երբեմն բոլորովին աննշան կըլնէ, ինչպէս՝ բաՀ ղէլ,
փաՀ՝ աննշան է : Երբեմն իրարու տեղ դրելով
կըլլայ, ինչպէս՝ ամբ՝ [illegible], ամպ, նոյն է .
բայց հասարակօրէն նշանակութիւնին կը փոխվի .
ինչ պէս՝ բարունակ՝ [illegible] . պարունակ՝ [illegible] . փա -
ռունակ՝ [illegible], ըսել է :
Նշանները սորվելու վեհագոյն վարժապէտ քեզի
բառարանը ըլլայ . և այս ծանօթութիւնս մինակ Բ-
ին ղին և ֆին համար չէ, ամէն ընդդատաներուն
համար է :
Երբեմն գիրս բառերուն առաջը փակչելով եղծա-
կան նշանակութիւնը կըփոխէ, ինչպէս՝ ողջախոհ՝
բողջախոհ . ողոք՝ բողոք [illegible] :
Եւ երբեմնալ անպէտ իբրև թարմատար կը դրվի
բառին մէջ, ինչպէս թմրութիւն՝ թմբրութիւն .
մինակ գրուի և վրան պատիւ ըլլանէ՝ Բ, երկու կ
երկրորդ՝ ըսել է :

Գ.

Գ-իրս բաղաձայն է, և ընդդ է կին և քին . բայց
Բ ին համար տրված ծանօթութիւններս լաւ մը
միտքդ պահէ, ամենեքին չըլլայ քեզի իրարու տեղ

գրել, ինչու որ նշանակութիւնին կը կորսընցու-
նեն, և կը լայ որ կը փոխեն. ինչպէս՝ գամ՝ [illegible]
կամ՝ [illegible]. քամ՝ [illegible]. բայց ուր
կը լայ առանց նշանակութեան վնասելու իրարու
փոխանակել վեհագոյն վարժապետէն սորվէ: մինակ
և վրան պատուով՝ գ, երեք կամ երրորդ՝ ըսել է:

## Դ.

Գիրս բաղաձայն է, և ձորդ է Ռ ին և Փ ին, ինչպէս՝
դող՝ [illegible], թող՝ [illegible], տող՝ [illegible]. բայց
՚ի ձորդատառէս երկու հարկաւոր գործ կը տեսնայ:
Մէկմը այն է՝ որ գիմորոշական տառ կը լայ, հո-
լովական մասունք բաներներուն ծայրը փակչելով ա-
նոնց դէմը կամ կարգը կը որոշէ, ինչպէս առնդ.
որ այդ տուն ըսել է, խօսիդ, դու որ խօսիս ըսել է,
զ վշտադնեալըն, զայնոսին՝ որ վշտանեալ իւյեն ըսել է,
առոր պէս իմա ուրիշներուն վրա:
Մէկմալ՝ երբեմն առոր նշանով գրելով կրճատ-
եալը կը լայ նախադրութեան, ինչպէս՝ ՚դ. առոր
ուր որ առանկ առոր նշանաւ գրեալք կան գիտցիր
որ կրճատեալն է ընդ նախադրութեան, զայս բա-
նատեղծք շատ կը բանեցընեն ոտանաւորէն վանկ
մը պակսեցնելու համար. մինակ և պատուով՝ դ
չորս կամ չորրորդ ըսել է:

## Ե.

Գիրս ձայնաւոր է, և ձորդ է Է ին. Բայց զգու-
շանալու է իրարու տեղ գործածել նշանակութիւնք
չի շփոթելու համար, ինչու որ գործէն՝ [illegible],
գործեն՝ [illegible], ըսել է:

Իսկ առաջի գործը . բառին վերջին ձայնաւորը ըլլայ , անփոփոխ և անկորուստ կը պահէ . նայէ քաղուածոյ երես ( 5 )

Երկրորդ՝ ի օրինակին վրայ խոնարհող բայերը բաղաձայնով սկսինէ , կատարեալ ժամանակին Ե դէմին մէջ է ով պիտի ըլլայ , ինչ պէս՝ խածի , եխած . մինակ և պատուով , Ե , հինգ և հինգերորդ թուոյ է :

## Զ

Գիրս բաղաձայն է , և ընթերց է « զն՝ ; զուր . զօֆլէ սուր , զէյթին , զանկ :

Գիրս նախ հոլովակներու նախադրութիւն է , « զ » , հայց » , և « զոր » հոլովները կը շինէ , ինչպէս՝ զարեգակն , զլուսին . զերկինս . առանց լեզուին նախադրութեան մէջ կը սորվիս :

Երկրորդ՝ տառս բառին կը փակչի երբեմն առ ՛ի զարդ , ոչ նշանակութիւնը կը փոխէ , և ոչ առաւ նշանակութիւն մը կուտայ . ինչպէս աշացու , զաշացու :

Երրորդ՝ հայցական հոլովներուն վրայ երբեմն կը գրուի , երբեմն չի գրուիր , ինչպէս՝ « Զանգէն ՛ի սե ղանք ղուարակս » ՛ի ղզուարակս „ ( Լինեաց սեղան առաւ « այսինքն՝ զսեղան . Ձ չի գրուած հայցական ներուն առ որոշ հայցական կրսեն քերականք ։ մինակ և պատուով Զ , վեց և վեցերորդ թուոյ է :

## Է

Գիրս ձայնաւոր է , ընթեռ է է ըն , ինչպէս բախտ . քերականութեան վերբերեալ պաշտօնը առանց են :

Նախ՝ երբոր միայն՝ է շեշտով և կամ առանց շեշտանշանի ըլլայնէ խօսքիմը մէջ, է՛ բային եզակի երրորդ դէմն է. ինչպէս՝ „Տէս, սա այն է՝ որուն գլխուն մեքենայեցեր„ լուծէ։

Երկրորդ՝ էութի՛ նշանակելով և հոլովելով անուն կըլլայ, ինչպէ՞ս՝ „Ծնօղ էիցս համայնից“. շնորհ։
Երրորդ՝ բառի մը վերջին ձայնաւորը ըլլալով՝ փոփոխմամբ կը հոլովցնէ, ինչպէս՝ գէտ, գետէ. բայց երբոր յետին ծայրը ըլլայ նէ բառին, ոչ կը կորսնցունէ և ոչ կը փոխէ, տես քաղուածոյ երես ( 6 )։
Չորրորդ՝, է օրինակի վըրայ խոնարհօղ բայերը թէ ձայնաւորաւ սկսիննէ, առանց կատարելին մէջ է պիտի ըլլայ, ինչպէս՝ օծէ, էօծ: մինակ և պատուով է, կըլլայ եօթն կամ եօթներրորդ։

## Ը.

Գիրս ձայնաւոր է, գլխաւոր պաշտօնը սոնք են։
Նախ՝ սովորական բառերուն մէջ գործութեամբ կիմացվի, ինչպէս ստտու որ կը կարդացվի՝ ըստընտու։
Երկրորդ՝ ընդ նախադրութենէն կը կրճատվի, և անոր տեղ ստորանշան մը կը դրվի, ինչպէս՝ „գենդ փետայիդ 'ի յառաջաստ“ շնորհ. այս տառաչափութեան գրուածներուն մէջ ունի տեղը։
Երրորդ՝ երբեմն է ով սկսուած բառերը սեռականի մէջ կը փոխվին ըյծ, ինչպէս էղծ, ըղծէ, էնծ, ընծէ— ևն բայց կըլլայ որ անփոփոխ կըմնան առենուն համար չէ ծանօթութիւնս, սանկները վար

ժութեամբ կը տրվըվին . մինակ և պատուով՝ Ը, ութ կամ ութերրորդ ըսել է ։

## Թ.

Գիրս բաղաձայն է և ըծորդ է տին և թին մինակ ։ և պատուով՝ Թ, ինն կամ իններրորդ ըսել է ։

## Ժ.

Գիրս բաղաձայն է և ըծորդ է շին . կերևայ երբեն կըճատեալ գիրս ժ ինչպէս ամանակ, որ է ժամանակ ։ մինակ և պատուով, Ժ տասն կամ տասներրորդ ըսել է ։

## Ի.

Գիրս ձայնաւոր է, և շատ պաշտօն ունի քերականութեան վերաբերեալ ամէն ձայնաւոր գիրերէն աւելի. նախ իւր գործը՝ հոլով շինել է, ինչպէս՝ 'ի քաղաք 'ի քաղաքէ ։

Երկրորդ՝ այլանշան երկու բառից մէջը մնալով զանոնք իրարու կը կապէ յօդ ըլլալով, ինչպէս՝ [illegible] ։

Երրորդ՝ բառերուն վերջին ձայնաւորը ըլլալով, հոլոված ատենը ինքը մէջէն կելլայ, ինչպէս, սիրտ, սրտի ևն ։

Չորրորդ՝ բառի մը վերջ լինալով, հոլոված ատենը ինքը եղակին ւ-ն կը փոխուի և յոգնակին եա, ինչպէս՝ սիրելի, սիրելւոյ, սիրելեաց ։

Հինգերրորդ՝ ձայնաւորաւ սկսած բառերուն նախդիր չի կրնար ըլլալ, եթէ ոչ յաջորդ ըլլայ յին, ինչպէս, 'ի յ[illegible] ։

Վեցերորդ՝ շատ բառերուն է բնական կրկնայ ․ չի-մխալիս ամէն է վերջաւորվածներուն սեռական ըսել, ինչպէս, տղէ, ճիւղէ, եւ։

Նաւ շատերուն վերջնալ ածանցական մասնիկ է, ինչ-պէս գործէ ։

Եօթներորդ՝ անցողական չենվելու բայերուն կատարեալէն է տառն սկիզբ յապաւել, և այնպէս պիտի ածանցել, ինչպէս յամեցի, յամեցուցանեմ ։

Ութերորդ՝ երբեմն գլխու կոճանով հնչեալ ․ բայց հոս պիտի կոճառել, ասի որ երկու է ձայնով կմնան, ինչպէս՝ „ գ՚ի բարեւ ... հնոց "։ մինակ և պատուով՝ Ի, ... ձայն Ի ... երբորդ ըսել է։

Լ

Գիր բաղաձայն է, մէջ հիմայ գիտնալու այս գրին վրայօք հարկաւոր ... ուրիշ լեզուներուն մէջ եղած յատուկ անուններ, որոնք որ Լ ով են կրկնաւորված են, մէկ ... թարգմանված ... դրվեր, ... ինչպէս Երուսաղէմ, ... եւն մինակ և պատուով՝ Լ երեսուն ըսել է ։

Խ

Գիր բաղաձայն է, և կծորուն է հ ին և ղ ին, անոր համար շատ ... ազգերը սովորութիւն եղած է լեզունին Խ ին՝ հ, կամ ղ, հ՚ին կէս, կ ղ բան-եցնել, Խ ին՝ հ ինչպէս՝ ... մարդերը, հ ին՝ Խ, ինչպէս ... ։ մինակ և պատուով Խ, քառասուն կ քառասներորդ ըսել է ։

## Ծ

Գիր բաղաձայն է, և լծորդ է ձ ին և ց ին: ինչպէս, ծեր, էխթիյար. ձեր, սիզին. ծախ, ծախեմ բային արմատն է. ցախ, չալը. եւն:
Տառս երբեմն բառերուն վերջը առ իշարդ դրուած կերևայ, ինչպէս՝ տգեղծ. մինակ և պատուով՝ Ծ յիսուն կամ յիսներրորդ ըսել է:

## Կ

Գիր բաղաձայն է, և լծորդ է գ ին և ք ին, ինչպէս ըսվեցաւ, կերևայ երբեմն սորա անխտրութիւնը ք ին հետ, ինչպէս՝ ծամք՝ ծամկ. երբեմն վրան պատիւ մը դնելով կատարեալ բառ կըլլայ, և ըսել է՝ կամ. երբեմն ալ՝ վաթսուներրորդ ըսել կըլլայ:

## Հ

Գիր բաղաձայն է, և լծորդ է խ ին և ղ ին, ինչպէս ըսինք, գլխաւոր գործը հ ին այս է:
Երկու բառ իրարու հետ բարդըլած ատենը ինքը մէջէն կելլայ, ու կըկրճատուի, ինչպէս են բառքս. արտալած, որ է արտահալած, փողար, փողահար, եւն:
Բայց ոչ միայն բարդըլած բառերուն մէջ կը կրճատուի, շատ անգամ ալ պարզ բառերուն մէջնալ կերևնայ կրճատումնը հ ին, ինչպէս աւատ՝ որ է հաւատ, ամբար, որ է համբար, եւն:

Աս ալ գիտնալ պէտք է, ո՞ր բառին որ սկզբնատառ ըլլայ գիր, այն բառը կրնայ գործածուիլ առանց

Նախդիրի փոխանակ Նայ, ՚առ, և Ներգոյականէ: „Այս հարաւոյ կողմանէ". Խոր. մ՚ի հարաւոյ: մինակ և պատուով, Հ, եօթանասուն կամ եօթանասներորդ ըսել է:

Ձ

Գիրս բաղաձայն է, և լծորդ է ծ ին և ց ին, ինչպէս ըսինք, բայց երբեմն իւր լծորդատառներուն հետ անխտիր կը վարուի, ինչպէս՝ սիրայեղձ, սիրայեղծ, սիրայեղց, որ երեքնալ մի և նոյն կը նշանակեն. մինակ և պատուով՝ Ձ, ութսուն կամ ութսուն երրորդ ըսել է:

Ղ

Գիրս բաղաձայն է, և լծորդ է խ ին. տառանձին գործ մը չունի, միայն վրայի եղած ստորանշանին համար գիտնալ պէտք է:

Որովհետև ւ ին մէջ ըսինք որ ւ ին տեղ ետքը ղ դրվեցաւ մեր լեզուին մէջ, և այս տառադարձութէնէ պատճառ եղաւ այս ստորանշանը, բայց ինչպէս եղաւ թուի ինձ թէ ստորանշանս ( , ) ուրիշ բան չէ, բայց նշանախեց մի է ւ էն տառադարձածներուն համար. բայց ուսկից եղև այս նշանը գնել, հաւաստի կը հաստատեմք թէ՝ ուրիշ լեզու է անցած բառերը որոշել պէտք ըլլալէն է: բուն հայերէն բառերուն վրայ գործածելը՝ անհըմուտ գրիչներէն մնացած է. մինակ և պատուով՝ Ղ իննսուն կամ իննսուներրորդ ըսել է:

## Ճ

Գիր բաղաձայն է, և լծորդ է Շին և Ջին, կրնան երբեմն իրարու տեղ գրուիլ առանց այլայլելու իր նշանակութիւնը, ինչպէս. բճիճ, բջիջ ևն. մինակ և պատուով՝ ճ. հարիւր կամ հարիւրերորդ ըսել է։

## Մ

Գիր բաղաձայն է. և լծորդ է Նին. երբեմն իրարու տեղ անխտիր կը գործածուին առանց այլայլելու նշանակութիւնը ինչպէս, անբիծ, ամբիծ ևն. մինակ և պատուով՝ մ, երկու հարիւր և երկերիւրերորդ ըսել է։

## Յ

Գիր բաղաձայն է, և լծորդ է Հին, իրեն գըլխաւոր գործը ասոնք են։

Մէկն է որ նախդիր կըլլայ այն բառերուն՝ որ ձայնաւորով սկսուած են, ինչպէս յանձ. երբեմն ալ բաղաձայններուն, բայց այնպիսեաց՝ որք ունին զօրութիւն ձայնաւորս ը. յստեանց. յշտեմարան, ևն. Անոր համար առաջի գրչանները և շատ տպելները կը տեսնանք որ ստորանշանը դրերեն այն յերուն վրայ որ նախդրի համար գրուած են, այսպէս՝ յ'անցանել, յ'առնել, ևն. իբր թէ զատելու ճանաչելու համար անոր նախդիր ըլլալը, բայց հիմայ խափանուած է։

Երկրորդ՝ յ ով սկսված ՚բառերը երբեմն առանց նախդրի կը բանեցուի ընտիր շարադրութեանց մէջ, ինչպէս՝ „հանցէ զնա յարկաց իւրոց". սաղմ. ճը ՚ի յարկաց.

Երրորդ՝ գիրս բառին մը վերջ լինայ, ամենեւին ձայն չի հաներ, ինչպէս՝ արքայ. բայց մէջ տեղ լինայ, իւր ձայնէն զատ, եչի ձայնալ կուտայ, ինչպէս արքայութիւն. մինակ և պատուով՝ յ. երեք հարիւր ՚կ երեք հարիւր երրորդ ըսել է:

## ՚Ն

Գիրս բաղաձայն է, քերականութեան մէջ բանի մը պաշտօն կը վարէ, որ ահա ասոնք են.

՚Նախ՝ բայերը յոգնակի կը շինէ վերջին ծայրերնին փակչելով, ինչպէս՝ առէն. բայց երբեմն գիմորշական տառ է, գիտնալ պէտք է:

Երկրորդ՝ ուրիշ մասունք բանիններուն փակչելով անոնց դեմը կը որոշէ, ինչպէս՝ տունն այն տունը ըսել է. „զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս.

Երրորդ՝ երբեմն աւելադրութեամբ կը դրուի առ ՚ի զարդ. ինչպէս՝ մարմոյ. մարմնոյ, թառայ, թառանց ևն:

Չորրորդ՝ նախդիր կըլլայ, ինչպէս կը տեսնուի հին գրչաններըն և հին տպագրութեանց մէջ, այժմ խափանված է: մինակ և պատուով՝ ն, չորս հարիւր կամ չորս հարիւրերորդ ըսել է:

## Շ

Գիրս բաղաձայն է և լծորդ է ժ ին. չունի ուրիշ գործ, միայն երբեմն բարդութեան մէջ կրճատուած է ինք. ինչպէս՝ շաղփ շաղփ ընելու տեղ. շաղփաղփ կըսուի նա:
մինակ և պատուով՝ շ, հինգ հարիւր կամ հինգ հարիւրերորդ ընել է:

## Ո

Գիրս ձայնաւոր է, լծորդ է օ ին. և երբեմն ան խառն կը վարուին իրարու տեղ, ինչպէս՝ ոձիր, օձիր:
Նախ՝ յարաբերական դերանուններն կրճատուածն է, և այսպէս խօսք մը կամ բառ մը առաջ կը բերէ, ինչպէս՝ „Տէր՝ ո եհար զազգս բազումս". սաղմոս.
բայց առանց շեշտանշանի պիտի ըլլայ:
Երկրորդ՝ միջական անուն հարցական է. ինչպէս՝
„ո՞ այնոքիկ իցեն" Ես:
բայց վրան ոլորակի նշան պիտի ըլլայ:
Երրորդ՝ կոչականական է՝ բառէ մը առաջ դրուելով՝ ինչպէս „Ո՛ տէր՝ ես ծառայ քո եմ" սաղմ:
բայց վրան շեշտ պիտի ըլլայ:
Չորրորդ՝ բառերուն սկիզբը ըլլալն է, հոլովուած ատենը ըն կը փոխուի ինչպէս՝ ունչք, ընչաց, ունդ, ընդոյ:
Հինգերրորդ՝ վերջին ձայնաւորը ըլլալն է բառի մը, անփոփոխ և անկորուստ կը պահէ, ինչպէս՝ փող, փողոյ: մինակ և պատուով՝ ո. վեց հարիւր կամ վեցհարիւրերորդ ընել է:

## Չ

Գիրս բաղաձայն է . և ըծորդ ունի ճ և ջ :
Իրեն գլխաւոր գործը բայի փակչելով չընելը կը ցցնէ,
ինչպէս՝ չգնաց , չմնաց ևն .
Երբեմն անունին վրայ ալ փակչի անոր նշանակութիւն
ներհական նշանակութեան կը փոխէ , ինչպէս՝ չար
ժանութիւն , չհաճ , ևն    մինակ և պատուով Չ̄,
եօթն հարիւր և եօթն հարիւրերրորդ ըսել է :

## Պ

Գիրս բաղաձայն է , երբեմն անխտիր կը վարի ըծորդ տառերուն հետ , ինչպէս՝ պայքար , փայքար ևն
մինակ և պատուով պ̄ , ութհարիւր և ութհարիւրեր
րորդ ըսել է :

## Ջ

Գիրս բաղաձայն է , ըծորդ է ճ ին և չ ին :
մինակ և պատուով Ջ̄ , իննհարիւր և իննհարիւր
երրորդ ըսել է :

## Ռ

Գիրս բաղաձայն է , ըծորդ է ր ին , տես արտուղի
բայերուն մէջ , որ կը փոխուի , յառնել , յարեայ ,
առնել , արարի ևն :    մինակ կամ պատուով ռ ,
հազար և հազարերրորդ ըսել է :

## Ս

Գիրս բաղաձայն է , և ըծորդ է շ ին . գլխաւոր գոր
ծը քանի մը կերպ է :

Առաջինը՝ բառին վերջ փակելով. անոր առաջին դէմի մօտ կամ առաջին դէմ ըլլալը կը ցնէ, ինչպէս՝ մարդս, այս մարդս ըսել է նուաստս ես նուաստս ըսել է :
Երկրորդ՝ բառերուն սկիզբը բնական ըլլալով՝ երբեմն առանց ը նախդրի ալ կը վարուի :
Երրորդ՝ շատ անգամ բառերուն վերջը դիմորոշ չէ, կամ բնական է, և կամ յոգնականացուցիչն է : մինակ և պատուով՝ ս̃, երկու հազար կամ երկու հազարերրորդ ըսել է :

## Վ.

Գիրս բաղաձայն է, և լծորդէ – ին. երբեմն կրճատուի գիրս բառին գեղեցկութեան համար, և 'ի տաղտուկ կրկնութէ խորշելու, ինչպէս թօթով, որ է թով թով եւն : մինակ և պատուով՝ վ̃, երեք հազար և երեքհազարերրորդ ըսել է :

## Տ

Գիրս բաղաձայն է, և լծորդէ դ ին և թ ին, երբեմն բառի մը առաջ փակելով՝ անոր վրան ներհական նշանակութիւն մը կը ցնէ, ինչպէս տգէտ, տկար, եւն :
Երբեմն առ 'ի զարդ յանպէտս՝ բառերուն վերջը ինկած կերեւայ, ինչպէս՝ պարարտ՝ որ է պարար եւն : մինակ և պատուով՝ տ̃, չորսհազար և չորսհազարերրորդ ըսել է :

## Ր

Գիրս բաղաձայն է, երբեմն բառերուն վերջին բաղաձայնը ըլլալով՝ հոլոված ատենը ինքը մէջէն կելլայ, ինչպէս՝ Թանձր, մանր, եւն: տես քաղուածոյ երես (12):
Երբեմն ալ բառի մը մէջ աւելորդութի կը գրուի, ինչպէս՝ բաժին, բարժին եւն: միայն և պատուով՝ ր, հինգ հազար և հինգհազարերորդ ըսել է:

## Ց

Գիրս բաղաձայն է, և ընկերն է ծ ին և ձ ին, և ահա ասոնք ասոր սխալած գործքերն են:
Առաջինը՝ բառի մը վերջ փակելով յոգնական ցուցիչ է անոր, ինչպէս մարգարէից եւն: բայց շատ անգամ բնական ալ կըլլայ, ինչպէս՝ ցեց, եւն:
Երկրորդ՝ բառին առաջ փակելով անոր տրական ցուցիչն է, ինչպէս՝ ցնա, ցտէր եւն.
Բայց երբեմն այս գիրով տրականացեալ բառերը ուղղականի պէս նորէն կը հոլովին, ինչպէս՝ ցերեկ, ցանկ եւն: միայն և պատուով՝ ց, վեց հազար կամ վեցհազարերորդ ըսել է:

## Ւ

Գիրս բաղաձայն է, ւ ին ձայնը ունի, անոր համար նախնիքները Թաւ նշանաւ կը գրէին, այսպէս՝ լեզուի, որ այժմ խափանուած է. բայց շատ գրչաները սխալած կը տեսնամ՝ որ փոխանակ գրոյս վեւ

գրած են . բայց երբեմն ձայնաւոր է, մանաւանդ ‑ և է գրերուն քովը ։

Այս գիրս միշտ հոլովուած բառերուն վերջը ոյ ըլլայ յին տեղը կը բանի, գոյն, գունի, տոյժ, տուժի, ևն ։ մինակ և պատուով՝ ւ եօթն հազար և եօթն հազարերորդ ըսել է ։

## Փ

Գիրս բաղաձայն է, և ծնորդ է ք ին և պ ին ։ ուրիշ լեզուներու բառ հայերէն գրելին նէ՝ ասիկայ միշտ ֆ ին տեղ կը բանեցվի ինչպէս՝ փարախ, ՚ի տեղի Փարախին, սոփիա, ՚ի տեղի սոֆիային ևն ։ մինակ և պատուով՝ փ, ութ հազար կամ ութհազարերորդ ըսել է ։

## Ք

Գիրս բաղաձայն է, և ծնորդ է գ ին և կ ին, հասարակօրէն յոգնականացուցիչ է բառից, ինչպէս՝ ծառք, գնացք ևն . բայց շատ անգամ բառից ընական է . ինչպէս՝ քաղաք, ալք, ևն ։

Երբեմն բայից արմատին փակչելով անեզական կը հոլովին, ինչպէս՝ անցք, ընթացք ևն ։ մինակ և պատուով՝ ք, ինն հազար և իննհազարերորդ ըսել է ։

## Օ

Գիրս ձայնաւոր է . առաջին գործը բառին վերջին ձայնաւորը ըլլալով՝ ուղղակէս հոլովյունելն է, երբեմն անձնախողիր կը վարի իր ծնորդին հետ, ինչպէս՝ յաւօր, յաւուր, կամ յաւուրը, երբեմն աւր տեղ

աւ գրուած կերևայ այսպէս , յաւր , աւրէնք , ևն որ այժմ խափանուած է :

## Ֆ

Ֆէս բաղաձայն է , անպէտ ընդ հայկական բառից , թէև կան բառք ֆ ով՝ բայց այն բառերն ուրիշ ազգաց բառեր են , ինչպէս են բառքս , ֆար , Ֆիլիպոս , ֆառ ևն :

## Տեղեկութիւն

Ոմանք սովորութիւն ունին երկու երեք գիր իրար կցելով . բայց ատոնց ամէնէն աւելի սովորականն է՝ և . որ է ե , ւ իրար կցած : Նաև + գրէն ետքը գրվելը՝ օտար լեզուէ առնուած ․ ֆ գրերը մեր գրերու հետ կապելու համար է :

## Յօդուած Բ.

## Վանկ

Վանկն , կամ փաղառութիւն երկու գիրէն ինչվան վեց գիրերուն յօդաւորութեամբը հնչումն է : Ըսենք որ երկու գիրէն ինչվան վեց գիրերուն յօդաւորութեամբը հնչումն մը նէ , որով հետև վանկը , կամ փաղառութիւնը ուրիշ բան չէ , միայն մէկ հնչմամբ արտաբերեալ ձայն մը նէ , և այս մէկ հնչմամբ արտաբերեալ ձայնը ինչվին վեց գիրով կրնայ ըլլալ , անկէ աւելի ըլլայ նէ , ձայնը ոչ միայն կը թանձրանայ , այլ և հնչումը դժուարաւ արտաբերելով հարկաւ միութիւնը կը կորսնցունէ . ինչպէս սուրբքս , ու միով ձայնիւ դժուարահնչելի է , և չար

տարբերիր , և այնպէս կրկնվի հնչումը , բայց թէ որ սուրբք ըսես , հնչումը պարզ կը մնայ , և ահա այս է վանկ , որ մարդուս բերնէն մէկ անգամ պի-տի ելլայ միով հնչմամբ ։

Ասկէց գիտնաս կհասկընաս որ վանկերը բառերուն անդամներն են , ինչու որ բառերը բաժնվելու ըլլան յանդամս , կըմնան վանկ , և թէ՛ի տառս բաժնվին , կըմնան գիր , ուրեմն գիրէն վանկ՝ վանկէն բառ ըլլալը յայտնի է. ինչու որ բառերը վանկէ կը շինվին , ինչպէս . թա , գա , ւոր , որ երեք վանկս միանալու ըլլայ , կատարեալ բառ մը կը գոյանայ այսպէս . թագաւոր ։

Բայց կան բառեր որ միավանկ են , և կան որ բազմավանկ , միավանկ բառերուն վանկ ըսելով շփոթութիւն կըլլայ համբակաց վանկին և բառին համար, պէտք է որ համբակը նշանակութեանը միտ դնէ . Թէ որ միահնչիւն յօդաւորեալ ձայն մը բան մը նշանակէ՝ զայնպիսին՝ բառ գիտնայ , և ոչ թէ վանկ , բայց թէ որ նոյն միահնչելի յօդաւորեալ ձայնը բան մը չի նշանակէ , զայնպիսին՝ վանկ ըսէ , և ոչ թէ բառ . ասանկ , գու , վանկ է , զուր , բառ է ։

### Յօդուած գ.

### Բառ.

Բառը իրեն սահմանեալ կանոն չունի հնչման կողմանէ , շատ կամ քիչ հնչումն կրնայ ունենալ , միայն իրեն սահմանած կանոնը նշանական պիտի ըլլայ , ինչպէս՝ հաց , առիւծ , առաւօտ , ևն ։

Տեսար որ հնչումը այսինքն ձայնը բառի մը՝ մէկ հատ ալ կըլլայ շատ ալ կըլլայ , անոր համար հասարակօրէն կազմութեան կողմանէ երկու կը բաժնուի , միավանկ և բազմավանկ , ինչպէս ըսինք :

Այս բաժանումը բառին կազմութեան կողմանէ : Նայինք նշանակութեան կողմանէ քանի բաժանում ունի : որովհետև ամէն բառը այլ և այլ բան կը նշանակեն , և այլ և այլ նշանակութեան կը վերաբերին . անոր համար բառ մը՝ թէ որ նշանակէ իր մը կամ իրին որպիսութիւնը , ինչպէս՝ փայտ , չոր , ևն կըսուի անուն . իսկ թէ որ այն իրին անունովը իրը չի ցցնէ , միայն խօսքով զանի ցցնէ , ինչպէս՝ սա , նա , ևն կըսուի դերանուն :

Իսկ թէ որ ոչ իրը նշանակէ և ոչ անիկայ ցցնէ , այլ գործ մը իմացնէ , ինչպես՝ եհար , ած , ևն կըսուի բայ : ոչ գործ և ոչ գործող՝ այլ գործելու վերաբերեալ նշանակէ , ինչպէս՝ գործելի , համբուրելոց , ևն կըսուի ընդունելութիւն : իսկ թէ որ այս ամէնը չի ցցնէ , միայն իրեն բառ մը պահանջող ցցնէ , ինչպէս՝ վասն , կըսուի նախադրութիւն : Բայց թէ որ գործին մը կամ գործողին մը վրայօք խօսիլը ցցնէ , ինչպէս՝ բարւոք , այժմ , ևն , կըսուի մակբայ : Ու թէ բառերը կամ խօսքը իրար կապելու կարօղական նշանակութիւնը ունենայ , ինչպէս՝ եթէ , սակայն , ևն , կըսուի շաղկապ . իսկ որք սրտին երկիւղը և կամ նեղութիւնը և կրից կերպը յայտնէ , ինչպէս՝ վա՜շ , աւա՜ղ , ևն կըսուի միջարկութիւն :

Ըսկէց հասկցար որ ութը տեսակ բառեր կան,
որոնք կոչէին մասունք բանի, իբրև թէ բանին կտորտինք
ները, որովհետև առանց այս ութը տեսակ բառից
ոչ բան և ոչ խօսք կրնայ մարդս բաղդօղել։

## Յօդուած Դ.

### Բան

Բանը ութը տեսակ բառերուն կարգաւ յօդաւո-
րութեամբ է մարդուս միտքին մէջ տրամադրած խոր-
հուրդները արտայայտելու համար։ Ըսինք միտքին
մէջ տրամադրած խորհուրդները, որովհետև
մէկումը բանիմը ըսելու ըլլանք, առաջ միտքեր-
նուս մէջ այս և այն իրը կարգել կը դնենք, ապա
մտածածնիս կարտայայտենք երբեմն կենդանի
խօսակցութեամբ, երբեմն գրաւորական խօսակցու-
թեամբ. բայց կը տեսնանք եթէ բանիւք և եթէ
գրութեամբ խօսօղները ամենևին մէկ զմէկու անոր
ման կը խօսին մի և նոյն խօսքը, ոմանք անանկ գե
ղեցիկ և ոմանք գեղջուկ՝ մինչև կը զարմանանք։
Արդ գեղեցկութիւնը կամ աղեկութիւնը բանին՝
ոչ թէ բառերուն գեղեցկութենէն է, այլ մանաւ-
անդ անոնց գեղեցիկ կամ անկարգ դասաւորութէն,
որն որ քեզի համաձայնութիւնը ոլիտի սորվցնէ։
Հիմայ կըմնայ քեզի առաջէն աղէկ հասկնալ բանին
ութը տեսակ բառերը, և անոնց ուժը, որոնք որ
հիմն են բանին։

Մինչև հիմայ սորվածներդ քեզի ներածութիւն
նախապատրաստութիւն մը եղան, և անկէց ետև
սորվելու ութը մասունք բանին ձեռքէդ իբրև գոր

ծի մը պիտի ըլլան, որ երկրորդ մասին մէջ ըսվելու կանոններովը աղէկ դասաւորութիւնը գիտնաս, ըն իր շարադրութիւն գրես, և այնպէս ընտիր գըրող աշակերտ մը ըլլաս :

## Գլուխ առաջին

### Անուն

Անունը՝ որ բանին՝ առաջի մասն է, երկու կերպ կը մտածվի, մէյ մը՝ անանկ նշանական բառ մ'է, որ անով իրը կիմացվի մտօք, կը տեսնվի աչօք, կը շօշափվի ձեռօք, և կամ միանգամայն կը տեսնվի աչօք և կը շօշափվի ձեռօք, ինչպէս՝ հոգի, զոր կիմանանք մտօք, բայց չենք կրնար տեսնալ աչօք. արեգակն, զոր կտեսնանք աչօք, բայց չենք կրնար շօշափել ձեռօք. հաց, զոր կը տեսնանք աչօք մի անգամայն և կը շօշափենք ձեռօք :

Մէյմալ՝ անանկ նշանական բառ մ'է, որ անով ոչ իրը և ոչ իրին ինչ ըլլալը, այլ իրին որպիսութիւնը և անոր ինչպէս ըլլալը կիմանանք, կամ կը տեսնանք, ինչպէս՝ կարմիր, սպիտակ ևն : Առաջի կերպ նշանակօղին կըսվի անուն գոյական, և կամ ենթակայ. և երկրորդին ածական կամ մակադիր : Բայց անուն գոյականն ալ երկու կերպ կը մտածվի, մէյմը՝ այն գոյականը՝ որն որ կիմանանք մտօք, կամ կը տեսնանք աչօք, կամ կը շօշափենք ձեռօք, մեզի յայտնի է, բայց ոչ յայտնագոյն. ինչպէս՝ ծառ. որ յայտնի է ինչ ըլլալը, բայց յայտնագոյն չէ ինչ ծառ ըլլալը, այսպիսիք կոչին անորոշ :

Երկրորդ տեսակը՝ որ յայտնագոյն է մեզի, և գիտ-նեք ինչ և ինչի ըլլալը, և ով կամ որ և ինչ ըլլալը, ինչպէս՝ փարդենի, որն որ գիտենք ինչ ծառ ըլլա-լը · քրիստոս. որուն որ գիտենք ով ըլլալը, մասիս, որն որ գիտենք, ո՞ր լեռը ըլլալը, այսպիսիք կոչին որոշեալ :

Ասոր պէս ածականնին վրայ ալ կը մտածվի, մէյմը՝ ան ածականը, որ գոյականին որպիսութիւնը կը ցըցնէ, և անոր ինչպէս ըլլալը պարզապէս առանց չափելու, ինչպէս՝ սպիտակ, որ բանին ինչպէս ըլ-լալը կը ցցնէ, ասոր պէս բարի, կարմրագոյն ևն, այսպիսիքս կըսվին որակական :

Նաև այն ածականը՝ որ իրին որպիսութեան չափով, և անոր որչափ ըլլալը կը ցըցընէ, ինչպէս՝ սակաւ, որ բանի մը որքան ըլլալը ցցուց, հինգ, բազում ևն, այսպիսիքս կըսվին քանակական :

Արդ անորոշ և որոշեալ գոյականք, կը բաժնվին երեք. հասարակ, յատուկ, հաւաքական :

Առաջինը՝ միայն և բազմաց միօրինակ կըսվի, ինչ-պէս՝, քաղաք, մարդ, լեառն, կղզի, ևն :

Երկրորդը՝ մի միայն իրի և միայնոյ կըսվի, բազ-մաց չըսվիր, ինչպէս՝ փառնա, պանոր, արշակ, ևն :

Երրորդը՝ ոչ միայն և միանգամայն և բազմաց, ինչ-պէս հասարակն, և ոչ միոյ միայնոյ, ինչպէս յատու-կն, այլ բազմաց հաւաքապէս, ինչպէս՝ բանակ, հօտ, ևն:

Բայց գիտնալու է որ հաւաքումը տարորոշ քանա-կութեան մէջ պէտք է ըլլայ · շարունակ քանա-կութեամբ հաւաքածներուն չըսվիր հաւաքական,

ծովը՝ չէ հաւաքական, ինչու որ տարորոշ քանա-կութեան հաւաքումն չէ այլ շարունակ քանակու-թեան:

Տարորոշ քանակութեամբ հաւաքեալ կըսվի, երբ որ այլ և այլ անձինք, կամ իրք զատ իրարմէ 'ի մի հաւաքվին, ինչպէս՝ բանակ, հօտ, ևն:

Շարունակ քանակութեամբ հաւաքեալ կըսվի, երբոր մի և նոյն իր առանց բաժանման մասին ինչ յինքենէ իրին բոլոր մասամբը հաւաքվի, ինչ-պէս՝ գետ, ծով, որք ջրոց բազմութիւն նշա-նակեն. բայց մի և նոյն ջուրն է, այսպիսի բառը չըսվիր հաւաքական:

Ինչպէս քանակականքն, սոյնպէս և որակական ա-ծականքն բաժանին երեք, դրական, բաղդատական, գերադրական:

Առաջինը՝ իրին որպիսութիւնը պարզապէս, և կ անոր ինչպէս ըլլալ և որչափ ըլլալը առանց սաստ-կացնելու կը ցցնէ, ինչպէս՝ բարի, բազում, ևն:

Երկրորդը՝ երկու պարզ ածականը իրարու բաղ-դատելով, քիչմը որպիսութիւնը տարբեր եղօղը կընարէ, և այնպէս մէկը մէկալէն էվէլ կամ պա-կաս կը ցցնէ, ինչպէս բարեգոյն, կարմրագոյն, ևն:

Երրորդը՝ որպիսութիւնը ամէնէն աւելի ունեցողը կըզատէ ինչպէս՝ ամենասուրբ, ամենաբարի, ևն

Ծանօթութիւն Գ.

Բաղդատական ածականը դրական ածականէն կըլ-լայ այս մասնկամբքս. գոյն, յոյժ, ես, առաւել,

պէս, ինչպէս՝ իմաստնագոյն, յոյժ բարի, կամ բարի յոյժ, եւ չար, կամ չար եւ, առաւել իմաստուն, մեծապէս, ևն:

## Ծանօթութիւն Բ.

Գերադրականը զանազան կերպ կըլլայ, և զանազան իրաց կը շինուի, նախ իւր իրին սեպհական բառովը՝ ամէն, ինչպէս՝ ամէնաչար, ամէնալաւ, ևն:
Երկրորդ՝ դրականը բաղդատական շինօղ մասնիկները՝ նորէն բաղդատականներուն վրան կրկնելով, ինչպէս՝ եւ իմաստնագոյն, կամ իմաստնագոյն եւ, գեղեցկագոյն յոյժ, առաւել անմտագոյն, ևն:
Երրորդ՝ բառքս՝ գեր, երեք, եռ, մեծ, բարդելով դրականին և բաղդատականին հետը. ինչպէս՝ գերապայծառ, երեքերանեան, եռամեծ, մեծափառագոյն, ևն:
Չորրորդ՝ բաղդատականին վրայ սաստկացուցիչ բառեր էվէլցնելով, ինչպէս՝ ամենեւին գեղեցիկ, կարի գժնդակ, անհնարին չար, կարի զգօնագոյն, ևն:
Հինգերորդ՝ բարդութեամբ և կամ կրկնութեամբ և կամ յարադրելով, ինչպէս՝ չարաչար, ծանր ծանր, ստոյ սուտ, ևն:
Վեցերորդ՝ քանակական ածականներուն մէջէն անորոշ բազմութի ցըցընօղները միայն բաղդատական և գերադրական կըլլան ինչպէս, բազմագոյն, բազում յոյժ, ևն: ուրիշ քանակականները, ինչպէս են մի, ոմն, երեք ևն. որակականներուն մէջէն որոշել ձև և չափ ցցնողները, ինչպէս են քառակուսի, վեց

կանոններն , այսքան , ևն . բաղդատական և գերադրական չեն ունենար :

Ենթակային , և մակբային վրայ կան և ուրիշ բաժանումներ , ինչպէս որ պիտի բաժանենք , ձև , տեսակ , թիւ , հոլով և հոլովմունք , բայց այս բաժանումներուն ամէնը արտաքին ձևոյ փոփոխութիւններէն կառնուի , վերոյ գրեալ բաժանումներուն պէս չեն . ասոր համար քերականք պարագայք անուանց կոչեցին , իբր թէ շուրջ զանուամբք պարեն , և ոչ գերօք , որով հետև ձևը , տեսակը ևն ուրիշ բան չեն քններ , միայն նիւթական կազմութիւնը , ինչպէս պիտի գրենք :

### Յօդուած Ը.

### Ձև

Գոյականին և ածականին ինչ ըլլար և անոնց բաժանումները գիտնալէդ ետքը , անոց իրար փակչելնալ պէտք է գիտնալ , որուն որ բարդութիւն կըսուի . անոր համար թէ ճանչնալու և թէ բարդելու իրարու հետ երկու պարզ բառը՝ յետագայ կանոնները միտքդ պահէ :

Նախ պէտք է գիտնալ չի բարդուած բառը՝ որն որ մէկ բան կը նշանակէ , և մի իր կըցըցընէ , ինչպէս՝ , լոյս , բարի , ևն , կըսուի՝ պարզ :

Բայց այն բառը՝ որ երկու իր կը նըշանակէ , ինչպէս գեղալոյս . բարեխիղտ , ևն կըսուի բարդ :

Իսկ այն բառերը՝ որ երեք իր կը նշանակեն , ինչպէս՝ պարտախաթափ , հնդեստաննամեայ , ևն կըսուի կրկնաբարդ :

Գիտնալ պէտք է․ այլ է քերականական բարդութիւնը, եւ այլ է ստուգաբանական բարդութիւնը, որ ճարտասանները գործ կ'ածեն․ զի ճարտասանն ամէն բառը՝ մէջն՝ նշանական ձայն թէ գտնէ թէ չգտնէ, ինքնին կը հնարէ ձայնին յարմարութեն լաւ դարձնելով, ինչպէս զբառս որկրամոլ՝ որ բարդ է ըստ քերականաց՝ կրկնաբարդութիւն մը կը գտնայ այսպէս ըսելով՝ որ ՚ի կրկից մոլեալ, եւն: վասնորոյ քերականք մի միայն կը քննեն հնոյին նշանակութիւնը եւ պարզ բառից յարադրութիւնը :

Կան բառեր ալ՝ որոնց վրայ մասնիկքս, ա, ամ, ան, դ, դժ, չ, եւն, փակցնելով ներհական նշանակութիւն մը կուտան, ինչպէս՝ ածուխ, ամբիծ, անարդար, դժ-ած, դժգոհ, չըպէտ, եւն: այսպիսի բառքս կը կոչուին բաղադրեալ :

Կանոն Ը.

Երբոր երկու պարզ բառք բարդել ուզես, կրնայ որ բարդութիւնը յօդով կը կապուի, կրնայ որ առանց յօդի. եւ յօդք բարդութեան են, ա, է, եւ շաղկապքս ու, եւ, բայց յօդով ինչպէ՞ս կրկնապէսին, եւ առանց յօդի ինչպէս կյարագլին, յետադայ կանոնները աղէկ ուշադրութ կարդա :

Կանոն Թ.

Առանց յօդի այն բառերը կը բարդուին՝ որոնց կամ յառաջեւի բառին վերջը, եւ կամ ետեւի բառին սկիզբը ձայնաւորով են ըսկսած. ինչպէս՝ բարեխնամ ամանակ Բայց գիտնալ պէտք է՝ երբոր նախադաս բառին

վերջի ձայնաւորովը բարդվինէ, է ին, ե ին, և էին փոփոխելով պիտի ըլլայ, ինչպէս գոտէպինդ. բար եպարիշտ եւն: Այս խոտորումն այս կանոնէն, կա շատ բառեր որ առանց ձայնաւոր գիր ունենալո և առանց յօդի յարադրելով կը բարդվին. ինչպէ Հացկատակ, ջախջախ եւն:

## Կանոն գ.

Յօդիւ և թէ առանց յօդի բարդված բառերուն կէսը չի փոփոխված կը բարդվին, կէսը փոփոխելով. անփոփոխ բարդվելու բառերուն միայն յօդ մը կը բաւականանայ, ինչպէս՝ մեծարան, ածասէր, գեղապայծառ, եւն: Իսկ փոփոխմամբ բարդվելու բառերուն միայն յօդ մը չի բաւականանար. հապա առջի կամ երկու բառը բարդութեան կանոնին պահանջման կեօրէ կամ այս և կամ այն փոխել պէտքէ և այս փոփոխութիւնը երեք կերպ կըլլայ:

Նախ՝ բարդելու դ յետադաս բառը կամ կրճատելով և կամ հոլովը փոխելով պիտի բարդել նախադաս բառին հետ, ինչպէս՝ շաղփաղփ. որ է կրճատեալն շաղփշաղփին, փեսաւէր՝ փեսաւհրաւէր, եւն միամօր՝ սեռականէն մայր բառին եւն:

Երկրորդ՝ երկուքն ալ, այսինքն նախադաս և յետադասնալ կրճատված և հոլոված, և կամ խառն կրճատեալ և հոլովեալն, ինչպէս՝ երկդիմի, բազմադունի եւն:

Երրորդ՝ նախադասը կրճատված և առջինը հոլոված, յետադասը ամբողջ, ինչպէս՝ կախաղ

որ է կրճատեալն կաղկաղին . տնտեռ , որ է սեռականն տունին ևն :

## Կանոն Գ.

Սուրբ , մաքուր , սէր , զէն , տուն , ձուկն , և այլ շատ բառեր ասոնց նման՝ բարդութեան մէջ նախադաս ըլլանին , անհնար է առանց փոփոխութեան բարդել , ինչպէս՝ սրբազան , մաքրասնունդ , սիրահաղորդ , զինադադար , տնանկ , ձկնորս , ևն :

Իսկ թէ յետադաս ըլլան բարդութեան . անփոփոխ պէտք են ըլլալ , ինչպէս՝ ամենասուրբ , ամենամաքուր , մարդասէր , քաջազէն , մեծատուն , վահանաձուկն , ևն

Իսկ թէ բարդվելու բառերը անեղական ըլլան , պէտք է բարդութեան ատենը + տառը մէկ դի նետել , և այնպէս բարդել եթէ նախադաս և եթէ յետադաս , ինչպէս՝ մաավարժ , բարեմիտ , ևն :

Բայց դուն ուրեք կերևայ վերջադասներուն մէջ քէն պահել , ինչպէս՝ չէչամուտք , շաբաթապահք , ևն :

Բայց կանոննիս կը պահանջէ , ու , + , է . ա , փոխարկել և այնպէս բարդել երբեմն , ինչպէս՝ կենատու , օրէնսդէտ , ևն :

## Ծանօթութիւն :

Բարդութիւն միայն անունը անունին հետ չըլլար այլ ամէնուն հետ կրնայ բարդվիլ , դերանունին հետ բային հետ , ընդունելութեան հետ , ևն , ինչպէս՝ մարդելոյզ , սքանչելահրաշ , դեռախօս , ևն :

## Յօդուած Բ.

### Տեսակ

Բառերուն մէջ բարդութենէն զատ աւելորդ մանիկներ կը գտնուին, որով այլ իմն կը նշանակեն, անոր համար հարկաւոր գիտելիքներ կան ասոնց վրան որ հոս պիտի խօսինք :

Բառ մը մանիկ ունենալը չունենալը համրակը նշանակութենէն ճանչնալու է, որովհետեւ շատ բառեր կան որ վրան մանիկ մը փակածին պէս նշանակութիւննին կը փոխեն, ինչպէս՝ հոգի, հոգեւոր, արդար, արդարութիւն, եւն :

Բայց շատերը կան որ մանիկ ալ ունենան նշանակութիւննին չեն փոխեր, միեւնոյն կը նշանակեն, ինչպէս՝ պզօն, լուսին, եւն. որք ածանցեալ ըլլալնին ճանչնալը հանճարեղ մտաց է :

Ասոր համար հարկ է մեզի՝ ամենեւին աւելորդ չսեպելով՝ ինչպէս որ ոմանք կը սեպեն, այս մանիկներուն փակչելուն եւ բուն գործերուն վրայ խօսիլ որչափ որ կը ներէ համառօտութիւնս :

### Կանոն Ա.

Բառ մը՝ որ իւր առջի նշանակութիւնը ունենայ եւ փոխած չըլլայ ոչ նշանակութեամբ եւ ոչ ձեւով, այնպիսին կըսուի նախատիպ. որպէս բառքս, հաւ, լոյս, եւն :

Բայց թէ իրեն առջի նշանակութեան մէջ չըլլայ, ծայրը աննշան գիր կամ վանկ առնելով փոխուած ըլլայ յայլ իմն նշանակութիւն, այնպիսին կըսուի ածանցեալ, որպէս, համեմ, լուսաւոր, եւն :

Գիւրին ճամբայ ածանցեալը նախատիպը ճանչնալու այսէ, երբոր բառ մը կրնայ նշանակել այլ կամ ինչ որ կը նշանակէ, այնպիսին է ածանցեալ, ինչպէս՝ համեմ, չէշնիլի — չէշնի ալ կը նշանակէ: Բայց թէ չի կրնար նշանակել՝ այնպիսին է նախատիպ. ինչպէս՝ համ, չէշնի, որ այլ ինչ բայց ի-համէ չկրնար նշանակել:

Կանոն Բ.

Նախատիպը եւ ածանցեալը աղէկ ճանչնալէդ ետքը ածանցեալին վրայօք երկու հարկաւոր դիտելիք կան. նոյնութիւն եւ այլայլութիւն:

Նոյնութիւնը այն է որ նախատիպը ինչ կը նշանակէ, զնոյն եւ ածանցեալը առանց այլայլելոյ նշանակութեան. ինչպէս՝ տիղ՝ չամուր, տիղայ՝ զնոյն նշանակէ. այսպիսիներն են այլ բազում բառք, որպէս նորոգ, անտէրունչ, եւն:

Այլայլութեան ածանցեալ ըլլալը ճանչնալու դիւրին ճամբայ այս ըլլայ քեզի, մէկ գիր կամ երկու գիր մէկ դի կը նետես այն բառին վերջէն՝ թէ որ նախատիպ է նէ, իսկոյն նշանակութիւնը կամ կը փոխէ, կամ կը կորսնցնէ, ինչպէս այս նախատիպ բառէս բոց վերցնես ցօն, նշանակութիւնը կը կորսնցնէ, եւ ի նախատիպ բառէս բուք վերցնես քէն նշանակութիւնը կը փոխէ, իսկ թէ ածանցեալ էնէ ամենեւին նշանակութիւնը ոչ կը փոխէ եւ ոչ կկորսնցնէ, ինչպէս վերցնես յածանցեալ բառէս նորոգ՝ ոգը, կը մնայ ի նոյն նշանակութեան:

Կանոն գ.

Նոյնութիւնը հասկնալէդ ետքը՝ այլայլութիւն պիտի հասկնաս. որ նախատիպին նշանակածէն զատ այլ իմն կը նշանակէ, այսպիսի այլազան մասնիկով այլազան նշանակող ածանցականները այս չափ տեսակին մէջ կը պարունակին :

ա : Նախնական. որուն նախատիպը՝ նախնեաց մը է ազգաց, վարժապետաց, աղանդաւորաց անունները ըլլալով. այս անոնցմէ եղածը կը նշանակէ ինչպէս, Հայկազեան, պղատոնական, արիանոս, եւն.

բ : Տեղական. որուն նախատիպը տեղեաց գաւառաց եւ քաղաքաց անունները ըլլալով. այս անոնցմէ եղածը նշանակէ, ինչպէս, եւրոպացի, գեղջուկ. եւն:

գ : Ստացական եւ ունակական : որ նախատիպը, ստացողը եւ ունեցողը կը ցցնէ, ինչպէս՝ զինաւոր, հողեւոր, եւն :

դ : Պարունական. որ նախատիպին պարունակւած տեղը կը ցցնէ. ինչպէս՝ ծաղկոց, պարտիզպան:

ե : Աւելական եւ նուազական. որք նախատիպին աւելութիւնը կամ նուազութիւնը կը նշանակեն, մինն կը մեծցնէ, միւսն կը փոքրկացնէ, ինչպէս՝ տատաստաղին, ձեռնատ, եւն :

զ : Ընթակայական. որ նախատիպն ուրիշ բանի մը յարմար կամ մինաւոր ըլլալը կը ցցնէ, ինչպէս տիրացու, քահանայացու, եւն :

է : Գոյացական. որուն նախատիպը՝ նիւթական ըլլալով, անոնցմէ գոյացած կամ շինուածը կը ցը

ցնէ․ ինչպէս՝ արծաթեղէն, երկաթեղէն, եւն։

ը։ Վերացական․ որուն նախատիպը՝ թանձրացեալ ըլլալով, ինքը մտօք իմանալիքն կը ցցնէ, ինչպէս՝ արդարութիւն, գոյութիւն, եւն։

Թանձրացեալն այն է որ աչօք կը տեսնանք եւ կը շօշափենք, իսկ վերացեալը մտօք միայն կիմանանք։ Կան ուրիշ կերպ տեսակներ ալ, բայց գլխաւորը ասոնք են, բաւական է այսչափը համբակաց վարժութեան համար։

## Յօդուած Գ.

### Թիւ

Նախնի գրական եւ ածական, բաղադրեալ եւ ածանցեալ ըլլալը ճանչնալէն ետքը պէտք է գիտնալ որ մէկ խումբ, թէ շատ մի կը ցցնէ․ բայց այն շատ ցըցնողներուն պէս չէ․ որուն որ հաւաքական կըսենք որ ամէնը թօփ կը ցցնէ, այլ այս մէկ իրը շատցընելու համար այս երեք տառերը․ ք, ս, ց, կը դրուին, ինչպէս՝ հոգի, հոգիք, հոգւոյ, հոգւոց, զհոգի զհոգիս եւն, անոր համար ամէն հոլովական բառը երկու կերպ է՝ կամ եզակի եւ կամ յոգնակի։

Բայց շատ բառեր կան, որ եզակի ձայնով յոգնակի են՝ եւ ոմանք ալ յոգնակի են, եզակի չունին, եւ այլք եզակի են յոգնակի չունին, այս ամէնը յետագայ ծանօթութիւններուն մէջ աղէկ միտքդ առ։

ա․ Այն բառերը՝ որ եզակի ձայնիւ յոգնակի կը նշանակեն, են վերջաւորեալք մասնիկամբքս, անք, դք, ոդք, եան, ան, էք, կան, նեար, եր, եւն։ ինչպէս

ուսուցանի , մանկանի , ոսկերատի , խողեան , խումա
մարդակ , բազմական , կօշկակար , եւն :

Բայց սոնց յոգնակի թւոյն համար հարկ է որ այս մասնիկները վերցընես 'նէ՝ եզակի մնայ , և իւ-քը այն եզակիին շատը ցուցընէ , ուստի մարդիկ բա-ռին նայելով՝ որ յոգնական է , հայցիկ բառն ալ հայլին յոգնականը չի կարծես . նշանակութիւնը կանոն չէ . մարդիկ՝ ——— ընկ է . հայցիկ՝ +է--չէ—+ է+·է+ :

բ : Նոյն այն բառերը՝ եզակի ձայնիւ յոգնակի կը-նշանակեն , որք կրկնուելին մի և նոյն հոլովով , ինչպէս այր այր , գրօշու գրօշու՝ քաղաքի , քաղաքի , եւն : այս կրկնումը իւրաքանչիւր բառի ուժը ունի , և գեղեցիկ վաեմ կը գործէ շարագրութեանը :

Այս կրկնութիւն բառից թէպէտ յոգնակի գոր-ծէ բառին նշանակութիւնը , բայց նորէն յոգնա-կի ալ կը հոլովին , ինչպէս՝ 'ի տունս տունս , քաղա-քաց քաղաքաց , եւն :

գ : Այն բառերը՝ որոնք որ անեզական կըսուին , միշտ յոգնակի կը հոլովին՝ եզակի բնաւ չեն հոլո-վիր . որովհետև կազմութեամբ յոգնակի են և ոչ թէ ըստ նշանակութեան . այսպիսի են բառքս վեր ջաւորեալք մասնիկամբքս , օրէք , էք , եայք , ըյք և այլն , ինչպէս՝ դիւզօրէք , անդէք , մանկանայք տարողայք , եւն :

Նոյն արմատք բայից , ինչպէս՝ գնացք , տուրք , վարք կեանք , վազք , եւն : Նոյն ուրիշ քանիմի անուանք սովորականք՝ ինչպէս գժոխք , եւն :

դ ։ Ընդ հակառակն կան բառք բնաւ՝ յոգնակի չի հոլովօղք, այսպիսի են յատուկ անուանք մարդոց, քաղաքաց, լերանց, գետոց, եւն ինչպէս՝ տիգրան, սիլիստրէ, ողիմպ, նեստր, եւն ։
Կան և ուրիշ բառք՝ որք բնաւ յոգնակի չեն հոլովիր, ասոնք չեն յատուկ անուն, բայց ըստ սովորութեան լեզուին և իրին նշանակութեան որ առ բազումս չի տարածիր, նշանակօղք մարդկային կիրից ներգործութեանց, ինչպէս՝ սէր, յոյս, ահ, եւն այսպէս և անուանք ժամուց տուընջենային պայծառութեան, եղիշերային մթութեան, ինչպէս՝ արշալոյս, ճաճանչեղ, եւն. շաղաւօտ, գիղակ. եւն ։

### Յօդուած Դ.

### Հոլով

Հոլովը բառի մը փոփոխութիւն է 'ի սկիզբն և 'ի վերջն, և այս փոփոխութիւնս տասը կերպ՝ կըլայ։
Առաջին՝ բառ մը առանց այլայլութեան գրեալ նշանակութեամբ և ձևով, կոչի ուղղական, երբ թէ ուղղակի ցցնող իրը, ինչպէս՝ մարդ, տուն, եւն ։
Երկրորդը՝ մանաւոր կերպով փոփոխեալ նշանակութեամբ և այլայլեալ 'ի վերջն, կոչի սեռական երբ թէ ոչ իրը, այլ իրին մէկ բանը, ինչպէս՝ մարդոյ, տան, եւն ։
Երրորդը՝ բառ մը ուրիշ կերպ փոփոխեալ նշանակութեամբ և այլայլեալ 'ի վերջն, կոչի գործիական երբ թէ գործօղ նոյն իրովը գայլ իր, և իրրև գործի ցցնող, ինչպէս՝ մարդով, եւն ։

Չորրորդը՝ բառ մի մէկ ուրիշ կերպով մի փոփոխեալ նշանակութեամբ և այլայլեալ 'ի սկիզբն և 'ի վերջն, կոչի պարառական, զայլ իմն շուրջ գերօք ցնող ինչպէս՝ զմարդով, ևն:

Հինգերորդը՝ մեկաւներէն քիչ փոփոխեալ նշանակութեամբ, անանկ որ չի փոխված ալ կրկարծրելե բայց այլայլեալ 'ի սկիզբն, կոչի հայցական, իբր թէ խնդրելի կամ հայցելի է իրն, ինչպէս՝ զմարդ, ևն:

Վեցերորդը՝ այլ կերպով մի փոփոխեալ նշանակութեամբ և այլայլեալ 'ի սկիզբն և 'ի վերջն, կոչի պատմական, իբր թէ պատմող իրին համար. ինչպէս զմարդոյ, ևն:

Եօթներորդը՝ փոփոխեալ 'ի նշանակութեան և այլայլութեան 'ի սկիզբն և 'ի վերջն, կոչի բացառական իբր թէ բաց առնված իրէն, ինչպէս՝ 'ի մարդոյ, ևն:

Ութերորդը՝ փոփոխեալն 'ի նշանակութիւն, և այլայլութիւն 'ի սկիզբն կոչի տրական, իբր թէ տրված կամ տալու կամ խրկած իր մը դէպ այն իրին, և այս է կրկին կերպ, մինն 'ի սկիզբն այլայլեալ, և միւն 'ի վերջն, որ 'ի սկիզբն է այլայլեալն նախադրիւ տրական, իսկ որ 'ի վերջն՝ կոչի վերջահոլով տրական այլ նշանակութիւննին այնքան քիչ տարբերութիւն ունի, որպէս թէ փոխված չէ, մի և նոյն է ինչպէս՝ 'ի մարդ, մարդոյ, ևն:

Իններորդը՝ փոփոխեալն 'ի նշանակութիւնն և այլայլութիւնն 'ի սկիզբն և 'ի վերջն, բայց կան որ չեն այլայլեր 'ի վերջն, կոչի ներգոյական, իբր թէ 'ի ներքոյ կամ 'ի վերայ կամ 'ի մէջ իրին կը նշանակէ, ինչ-

պէս՝ 'ի մարդ, 'ի մարդում. ևն :

Տասներորդը՝ անփոփոխ 'ի նշանակութեան և չէ այլայլի ոչ 'ի սկիզբն և ոչ 'ի վերջն, ինչպէս՝ ուղղական է, կոչի կոչական, երբ թէ կոչօղ ըլլին, ինչպէս ո՛վ մարդ, այս երբեմն առանց ովի ալ գործածուի ինչպէս՝ մա՛րդ, բայց վրան շեշտ ըլլալու է :

Կերևայ երբեմն կոչականը կրճատեալ 'ի վերջէն վերջաւորեալն 'ի է, ինչպէս՝ պօղէ՛ պետրէ՛, ևն :

## Ծանօթութիւն

Աշխարհաբարին մէջ այս հոլովներէն՝ ուղղականը հայցականը, նախդրիւ և վերջահոլով տրականը, և ներգոյականը մի և նոյն այլայլութեան մէջ կը գտնուին, և մի և նոյն ձայնով կըսուին, ինչպէս՝ տունը փլաւ, տունը փլցուց, տունը գնաց, տունը մնաց. ասոր համար համբակ աշակերտը շատ անգամ կը-սխալի ուղղականը՝ հայցական, կամ հայցականը ուղղական կարծելով, դիւրին ճամբայ համբակներուն իրար մէ ասոնք զատելու այս է. պէտք է տաճկերէնի դարձնել վերոյ գրուածները, իսկոյն կը հասկցուին ինչ հոլով ըլլալնին, բայց մտաւոր աշակերտը առանց տաճկերէնի դարձնելու կրնայ գիտնալ նշանակութիւնը նայելով, այս ամէնը դերանուններուն մէջ դիմորոշականներուն կարգը կը հասկցնենք մանաւանդ համաձայնութեան մէջ :

## Յօդուած Ե

### Հոլովմունք

Անունները՝ որ զանազան կերպ կայլայլին 'ի սկիզբն և 'ի վերջն, զանազան հոլովմանց տակը կը գտնվին և որովհետև ամէն բառը մի և նոյն հոլովով չեն հոլովիր, ոմն այսպէս և ոմն այնպէս, անոր համար այս զանազան հոլովվելուն կըսվի հոլովմունք, բայց այս կերպ կերպ հոլովմունքներուն վրայ հոլովող բառերը միակերպ չեն ըլլար, ոմանք գիր կը կորսնցնեն, և ոմանք գիր կը փոխեն, ինչպէս՝ մինչև հիմա գրված օրինակներուն մէջ տեսար, և գրերուն ծանօթութեան մէջալ երբեմն խօսվեցաւ, հիմայ դիւրաւ միտք առնելու համար այս կանոնները գրեցինք ։

### Կանոն Ա.

Այն բառերը՝ որոնց ետքի գիրերը այս ձայնաւորներէն, ա, է, ո, օ. մէկը ըլլայ, և կամ վերջի գիրը ձայնաւոր է ըլլայ, հոլովվելու ատենը ոչ գիր կը փոխեն և ոչ գիր կը կորսնցնեն ։

### Կանոն Բ.

Այն բառերը՝ որոնց ետքի գիրերը այս ձայնաւորէն՝ է, և կամ այս վանկերէն՝ ոյ, էա. մէկը ըլլայ, հոլովվելու ատենը՝ էն, է ի, ոյ և էան, ուի կը փոխեն ։

### Կանոն Գ.

Եւ այն բառերը՝ որոնց ետքի գիրերը այս ձայնաւորէն՝ է, և կամ այս վանկեն՝ ու, ըլլայ, հոլովվելու ատենը յիշված գիրը և վանկը պիտի կորսնցնէն, և այն ամէն բառը՝ որուն վերջի ձայնա-

ւորը՝ եւ՛ ըլլայ, կորուսմամբ կը հոլովի, այս ամէնը նայէ քաղուածոյին մէջ ։

### Ծանօթութիւն Ա.

Այս ամէնը դիւրաւ հոլովելու համար և թէ ո՞ր բառը ո՞ր հոլովման տակ կը գտնուի, և որու վրայ կը պատշաճի, քիչ մը վարժութեամբ և քիչ մ՚ընալ այս ծանօթութիւններովս կրնաս տեղեկանալ ։

ա ։ Առջի օրինակին վրայ՝ որուն եզակի սեռական և գործիականը՝ ի, իւ, և յոգնակի սեռականը և գործիականը՝ ից, իւք, կը լլայ, շատ բառեր կը հոլովին որոնք վերջաւորին մասնկամբքս այ, եայ, ի, աւայ, եւն

բ ։ Երկրորդ օրինակին վրայ՝ որուն եզակի սեռականը և գործիականը՝ ի, աւ, և յոգնակի գործիականը՝ աց, օք, կը լլայ, շատ բառեր կը հոլովին վերջաւորեալք մասնկամբքս՝ աւ, այ, ւար, արդ, աղ, չան, ղէն, ակ, րան, եւն ։

գ ։ Երրորդ օրինակին վրայ՝ որուն եզականը՝ ւոյ, ւով, և յոգնականը՝ եայ, եօք, կը հոլովին բազմավանկ բառք յանգեալք գրովն է, ։

դ ։ Չորրորդ օրինակին վրայ՝ որուն եզականի սեռականը և գործիականը՝ ու, ով, և յոգնականը՝ ուց ուք, կը հոլովին վերջաւորեալք մասնկամբքս՝ ուծ, ուուծ, եալ, ըլ, իւ, եւն ։

ե ։ Հինգերորդ օրինակին վրայ՝ որուն եզական ու, ու, և յոգնականը ուց, ուք՝ կը հոլովին վերջաւորեալք այս գրերովս. ու, ուղ, ցր, յր, նր. եւն

զ ։ Վեցերորդ օրինակին վրայ, որուն եզականը ան, ամբ, և յոգնականը, անց, ամբք, կը հոլովին յանգ

եալք մասնկամբքս՝ ծն, գն, րէ—ն, է—ն, ա—ծն, ա—նք են : Եօթներորդ օրինակին վրայ՝ որուն եզականը ան, ամբ, և յոգնականը անց, ամբք, կը հոլովին քանի մի բառք վերջաւորեալք մէկ բաղաձայնով և տառիւս, ն :

Ը : Ութներորդ օրինակին վրայ՝ որուն եզականը եղ, եղբ, և յոգնականը, եղց, եղբք, կը հոլովին վերջաւորեալք տառիւքս, ը, և ղ, :

Ամէն անուն բառը այս ութը տեսակ հոլովմանց վրայ կը հոլովին, բայց կան այնպիսի բառեր, ինչպիսին յատուկ, առանձնական, և միջական անունք, որ այս ութը տեսակ հոլովմանց տակ չէն իյնար, ուրիշ կերպ կը հոլովին, ինչպէս քաղուածոյին մէջ առանձին օրինակներով գրված են, թէպէտ կան յատուկ անուններ որ շատերը ութը օրինակին մէկին վրայ կը հոլովին, բայց ունին հիչ մէկ հոլովի տակ չի հոլովօղներ ալ, իսկ առանձնականները իրենց յատուկ հոլովելու կերպ ունենալէն զատ վրանին հոլովալ կանոնէն բաց իրենց բարդածներէն. այսպէս միջական անուններուն կէսը ութը օրինակի մէկին վրան կենալ իրենց յատկացեալ հոլովով կը հոլովին :

## Ծանօթութիւն Բ.

### Ածական անուններուն վրայ

Ածականք քանակական և որակական և միջական անուն ածականք տը. հասարակ դրականէ մը նախադաս ալ կըլլան, յետադաս ալ, այլ աշխարհաբառին և տաճկերէնին մէջ ընաւ ոչ. վասն զի չըա-

մեր թուղթ ձերմակ, աչք գեղեցիկ, քեաղըտ պէյ-ազ, կէօզ կիւզէլ, այլ ձերմակ թուղթ, գեղեցիկ աչք, պէյազ քեաղըտ, կիւզէլ կէօզ եւն:

Բայց գրաբարին մէջ ինչպէս ըլլանէ կրնայ, նախադաս, յետադաս. ինչպէս՝ գեղեցիկ կին, պայծառ լոյս, եւ կամ կին գեղեցիկ, լոյս պայծառ. ոչ միայն նախադաս և յետադաս, այլ որ հոլովը մինայ իր գոյականը՝ ինքն ալ հետը կը հոլովի նախադաս և յետադաս, ինչպէս՝ բարի հոգի, բարւոյ հոգւոյ, բարի հոգիք, բարեաց հոգւոց, եւն:

Նաև այս կանոններուս վրայօք երկան բարակ համաձայնութեան մէջ պիտի խօսինք. ինչպէս ածականը իր գոյականին թիւը հոլովը պիտի ունենայ, և ինչպէս չի պիտի ունենայ:

### Միջական անուններուն վրայ

Կան և անանկ բառեր որ անուանց պէս իրենք կամ իրենց որպիսութիւնը որոշակի չեն ցուցներ, և՛ գեաանուան պէտալ ցուցական բառով դէմը յայտնելով բայորոշակի այս և այն չի ցցնելով զատ անուն մը բառացան, որ է միջական անուն, իրր թէ անուններ և դերանուան մէջը անկեալ անուն մը. որ հինգ տեսակ կը բաժնուի, մանուական, հանրական, հարցական, վերբերական, և թուական:

### Ծանօթութիւն Ա.

Միջական անուն մանուական, որ և լոյէ երերուն մէջէն զատվածը, և զատ կեցածը կրցնէ. և են այս բառերը, [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], եւն. ասոնց յարադրեալները, [illegible] [illegible], [illegible] [illegible], [illegible] [illegible], եւն.

սոնք ինչպէս հոլովներնին քաղուածոյին մէջ տես-
ար . Մնաց որ սոնք գոյականի և ածականի ուժ ու-
նին , տեղ կըլլայ որ գոյական են , և տեղ կըլլայ
որ ածական են . բայց որոնք են կամ չեն , համա-
ձայնութեան մէջ կըզրուցենք : Թէ որ ածական են
իրենց գոյական ին հետ խմբովին կը հոլովին , ինչ-
պէս՝ կնոջ ուրուք , կանանց ոմանց , այլում քահա-
նայի , քաղաքաց , ևն . բայց ո՞ր հոլովին մէջ նախադա-
սելոց կամ յետադաս՝ համաձայնութեան մէջ :

Ծանօթութիւն Բ.

Ածական անուն հանրական ամենեւին հակառա-
կ է մասնականին , որովհետև մասնականը զատ . իս-
սա ամէնը թօփման բաղմութիւն կը նշանակէ . և
ահա՛ այս բառերս են . ամէն , ամենայն , ամենեքեն
բոլոր , բոլորեքեան , համայն , համօրէն , ողջոյն , ամե-
նայն ոք , ամենայն ինչ , ևն . այսպիսիքս կը կոչվին բո-
վանդակական հանրական , որովհետև կը բովանդակեն
գլխոց . իսկ բառքս՝ ոչ ոք , ոչ մի ոք , ոչինչ , ոչ մի
ինչ , ևն . կոչին բաշխական հանրական , որովհետև
կը բաշխեն գլխոց . ասոր համար երբեմն ոք ի
և ինչ իվերայ մի ալ կը առնէ , ինչպէս՝ մի ոք , մի ին-

Ծանօթութիւն Գ.

Ածական անուն հարցական , իրեն որպիսութիւնը
հարցմամբ կը քննէ , և կամ իրը կը հարցընէ , ա-
նոր համար երկու կը բաժանի՝ հարցումն իսկու-
թեան , հարցումն որպիսութեան , և ահա՛ այս բա-
ռերս են . ո՞ , ո՞վ , ի՞նչ , զի՞նչ , ո՞ ոք , ո՞վ ոք :

[illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] :

## Ծանօթութիւն Դ.

Ածական անուն վերաբերական իրեն միայն՝ այսպիսութիւնը և այսչափութիւնը կը ցցնէ . և այս բառերս են , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] :

## Ծանօթութիւն Ե

Ածական անուն թուական՝ իրեն համրանքը կը ցցնէ , և կըբաժանի հինգ տեսակ , բացարձակ , դասական , զատական , կրկնական , անձներական և ահա՛ սոնք թիւերուն կըսուին :

ա : Թուականք՝ որք առանց կարգի և առանց չատելոյ զմին՝ ի միւսմէն ուղղապէս կը համրեն , կըսուին բացարձակ , իբր թէ լայն լայն մէկէն ինչվան բիւր համարը համրէ , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , ևն :

բ : Թուականն՝ որ համրված իրաց կարգը կամ դասը կը ցցնէ , կըսուի դասական , իբր թէ կարգած իրաց , որպիսի են բառքս՝ [illegible] , [illegible] ևն , կը շինուին բացարձակ թուականէն , մասնկամբքս , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] :

գ : Թուականք՝ որք իրերը զատած թուին իրաց կարգէն կը ցցնեն , կըսուին՝ զատական , իբր թէ զատեալ յամենայն իրաց , և ուրիշ բաղումթիւերէն . ինչպիսի են բառքս՝ [illegible] , [illegible] ևն կը շինուին բացարձակ թուականէն մասնկամբքս , [illegible] , [illegible] :

դ : Թուականք՝ որք թուեալ իրերը կը կրկնեն, և բազմապատկութիւն կը ցցնեն, կրավին կրկնական՝ իբրթէ կրկնօղք և կրկնակի ցցնօղք զերս, ինչպէս են բառքս, երեքկին, տասնապատիկ ևն. կը շինվին բացարձակ թուականէն մասնկամբքս, կի և կին, և պատիկ :

ե : Թուականք՝ որք շատ թիւը միացեալ կը ցցընեն կրավին անձնորական, իբր թէ երեք կամ չորս անձինք մէկ տեղ, ինչպէս են բառքս երկոքեան, երկոքին, կը շինվին բացարձակ թուականէն մասնկամբքս՝ քեան և քին :

## Գլուխ երկրորդ :

### Դերանուն

Դերանունը՝ որ բանին երկրորդ մասն է, անունկ բառ մի է՝ որ իր մը անուանը յայտնապէս բան մը չի ցցըներ, և անուանը իր մը չի կանչեր, ինչպէս անունը կը կանչէ, այլ իրին նշանակ ինքը կը բանեցվի խօսքին մէջ. և ահա՝ ամէնքը սոոնք են. ես, դու, ինքն, իւր, [redacted], դա, նա, սոյն, դոյն, նոյն, այս, այդ՝ այն. և սոցին սեռականները՝ որք նորէն կը հոլովին, իմ, մեր, քո, ձեր, իւր, սորա, դորա, նորա. այլն, այլին մասնկամբք ածանցեալները, [redacted], մերայ-[redacted]ն, ևն. և բառս՝ որ. և տառքս՝ ս, դ, ն : Սոցա մէջէն վեցը էական կրավին, իբր թէ անձին բուն էութիւնը նշանակօղ. և ինը հատը՝ ցուցական, իբր թէ անձը կարգը մատամբ ցցնօղ. և սոցին սեռականին և ածանցեալին՝ ստացական

կամ ունակական . իբր թէ ստացող կամ ունեցո-
ղը ցնող :

Ու, մինակ բառ մի է, որուն յարաբերական կը-
վի, իբր թէ յառաջ բերող, որովհետեւ խօսքին մէջ
մէկ բառը կրկնել հարկ ըլլայ, եւ այսպէս նոյն բա
ռը բազում տեղ կրկնելով ձանձրութիւն լսողաց
ըլլալուն համար միշտ այս բառը կդրվի այն նա-
խընթաց բառերուն տեղ . ինչպէս՝ „ յորմէ ծնաւ
յիսուս՝ որ անուանեցաւ քրիստոս " հմմ . աչա
՚ի մարիամայ ըսելու տեղ՝ յորմէ ըսվեցաւ . եւ յի-
սուսը նորէն չի կրկնելու համար՝ յարաբերական
որ դրվեցաւ :

Նու երեք տառքս՝ ս, դ, ն, կըսվին դիմորոշական.
իբր թէ դէմք որոշող, ինչպէս եւ բոլոր դերանունք
երեք դէմք ունին, ս, դ, ն, առաջին դէմ խօս-
օղն է, երկրորդ դէմ առ որ կը խօսի, երրորդ դէմ
անոր համար որ կը խօսի, ինչպէս ես, դու, նա :

## Ծանօթութիւն

Դիմորոշական տառերը անուններուն վրայ փակչե-
լով անոնք կը դիմաւորցնէն, ինչպէս՝ տունս, տունդ,
տունն, որ ըսել է այս տունս, այդ տունը, այն տունը
կամ իմ տունս, քու տունդ, անոր տունը, այս
դիմորոշական տառերը աշխարհաբառին մէջ շատ կը
բանեցվի, բայց ն ոչ, անոր տեղ ը, կը բանեցնեն,
ինչպէս՝ մարդը, կնիկը, եւ եւ աչա այս դիմորոշն է
համբակները սխալընող՝ հայցականը կոչական ,

տրականը՝ ուղղական ընել. ինչպէս առաջ բանիք բայց հոն դիւրին, ճամբայ համբակներուն տաճկերէնի դարձնել բանիք, այլ գիտնալ պէտք է տաճկերէնին, մէջն ալ դիմորոշս ը շատ կը բանեցվի, ինչպէս՝ բերը, չայը, եւն. ուր այլ և այլ հոլովի տեղ կը բանեցվին, ինչպէս՝ բերը եօլու՝ ահա հոս ուղղական է, բերը եօլուրտու, ահա հոս հայցական է. չայը եօլչու, հայցական. չայը կէչտի, բացառական. եւն. պէտք է համբակը դիմորոշները աղէկ ճանչնայ, և տաւել իմաստին ուշ դնէ և այնպէս ինչ հոլով ըլլալը իմանալով ձեռնամուխ ըլլայ:

## Գլուխ երրորդ:

### Բայ

Բայը՝ անուան պէս բանին գլխաւոր մէկ մասն է ներգործութիւն ցցնող. բառ մը՝ գործողութիւն չի ցցնէ և գործ մը չի նշանակէ, բայ չէ, ուրեմն որ չափ գործողութիւն ցցնող բառք կան, բայ են:

Բայց երեք կերպ գործողութիւն կայ, գործել մը կայ որ ուրիշին կանցնէ իր գործը, գործել մըն ալ կայ որ ուրիշէն ինքը կընդունի գործը. գործել մնալ կայ որ ոչ ուրիշին իւր գործը կանցնէ, և ոչ ուրիշէն ինքը գործ մը կընդունի, այլ իւր գործը՝ իր քովը կը մնայ, ասոր համար երեք բաժանի բայը, ներգործական, կրաւորական, չէզոքական:

Այն բայը որ իւր գործը ուրիշին կանցնէ, ներգործական է, ինչպէս բայքս՝ սիրեմ, հարկանեմ եւն:

Նաև որ բայը՝ որ իւր գործը ուրիշէն կընդունի՝

կրաւորական է . ինչպէս բայքս՝ օրհնիմ, գանիմ ։ Իսկ այն բայ՝ որուն իր գործը իրեն մէջ կը մնայ չէզոքական . ինչպէս բայքս՝ աղօթեմ, թաքչիմ ևն ։ Կայ մէկ տեսակ բայ մըն ալ՝ որուն հասարակ կըսեն . երկու ներգործութիւն միով ձայնիւ կը ցցնէ այսինքն՝ իր գործը ուրիշի անցնիլ, և ինքը ուրիշէն գործը ընդունիլը մէկ ձայնով կիմացընէ . ինչպէս բայքս՝ ծնանիմ , խօսիմ , ևն ։

## Ծանօթութիւն Ը.

Ամէն բայ՝ այս չորս վերջաւորութեան մէջ պիտի գտնուին , որ է եմ , ամ , ում , իմ .

Բայց՝ սեպհականաբար չեն բայի մը , եմը երբեմն ներգործականին , երբեմն չէզոքականին է , նոյնպէս ամը և ումը . անոր համար բերականք չէզոքն որ եմ կունենայ , ներգործականաց չէզոք կըսէին , իբր թէ ներգործականի նմանեալ չէզոք . և այն որ իմ վերջանար , կըսէին կրաւորականաց չէզոքական , իբր թէ կրաւորականի նման չէզոք . ասոր պէս ամ և ում վերջաւորեալ չէզոքներուն ընդմիջական , կամ երկատեսակ , ևն ։

Բայց այսպիսի բաժանումներ ընելէն աղէկ է համբակին որ երկու բանի ուշ դնէ , մէյմը ձայնին՝ մէյ մը նշանակութեանը . ինչու որ շատ բայեր ըստ ձայնին նման են իրարու , բայց ոչ ըստ նշանակութեան , ինչպիսի են բայքս՝ առնեմ , աղօթեմ . ասիմ , փախչիմ . լուանամ , դառնամ . թաղում , թաղնում . ահա՛ ասոնք երկերկու դրուած բայերս նը

ժան են միմիանց ըստ ձայնին , բայց ոչ ըստ նշանակութեան . որովհետեւ մէկն իր գործը ուրիշին կանցնէ , միւսն ինքը իրեն մէջ կը գործէ :

Եմ , Գամ , Նշանիմ , Լինիմ :

Այս չորս բայը էական կըսուին , իբր թէ բուն բայք և շատ բայեր ասոնց կը շինուին , անոր համար օժանդակ ալ կըսեն ասոնց ուրիշ ազգերը :
Բայերս սոսկ ըլլալ մը կը նշանակեն զինչ եղանակաւ . որ փիլիսոփայութիւնը կը սորվեցնէ :

Ծանօթութիւն Բ.

Ինչպէս մի և նոյն անունը զանազան կերպ կը դառնայ , ասոր պէս մի և նոյն բայը կերպ կերպ կը փոփոխուի , բային այս փոփոխութեան՝ խոնարհմունք կըսեն . բայց կան բայք՝ որ առանց խոտորելոյ կը խոնարհին . որուն կանոնաւոր կըսուի , և կան՝ որ խոտորնակ կը խոնարհին , որուն անկանոն կըսուի . բայց անկանոններէն ոմանք խոտորին , և ոմանք կը պակսին . խոտորնակին՝ անկանոն արտուղի . պակասաւոր՝ անկանոն պակասաւորին կըսուի :
Կան և քանի մի բայք որք առաջին և երկրորդ դէմ չունենալով՝ միայն երրորդ դիմաւ կը վարուին . այսպիսի բայք կը կոչուին դիմազուրկ . իբր թէ զրկեալք ի դիմաց :
Բայց այս դիմազուրկ բայը բնական և սովորական կը բաժանի . բնական է որ ըստ ինքեան դիմազուրկ է , ինչպիսի են բայքս՝ անկ է , օրէն է , հարկ է ևն :
Սովորականն է որ ոչ է ըստ ինքեան դիմազուրկ

կազմեալ յանուանէ և յէական բայէ . այլ հասարակօրէն երրորդ դիմաւ կը վարվի , ինչպէս կարծի , թուի , եւն :

## Յօդուած Ը.

### Ժամանակ , դէմ , թիւ , և եղանակ :

Ասոնք ամէն բային՝ վրան կը մտածվին , որովհետև գործողութեան հետ զուգնթաց են , ինչպէս ըսենք թէ սիրեաց , կը հարցնեմք՝ երբ , հիմայ սիրեց ահա քեզ ժամանակ , ո՞վ սիրեց՝ պետրոս , ահա քեզ դէմ . միայն պետրոսը սիրեց՝ չէ ուրիշներ նալ սիրեցին , ահա քեզ՝ թիւ և գործը պատմելու կերպով հասկցընելը ալ եղանակ է :

### Ժամանակ

Գործողութեան մէջ ժամանակը երեք կերպ կը մտածվի , ներկայ , անցեալ , և ապառնի :

Ներկայ այն ժամանակին կըսվի որ նոր կը լլայ , և այն գործողութեան որ նոր սկսուած է . ինչպէս՝ լըսէ , գնամ , եւն :

Ապառնի այն ժամանակին կըսվի որ չէ եղեր , պիտի ըլլայ , և այն գործողութեան որ՝ չէ սկսեր , պիտի սկսվի , ինչպէս՝ գործեցից , սիրեսցէ , եւն :

Անցեալ այն ժամանակին կըսվի որ եղեր է , և այն գործողութեան որ սկսեր լմնցեր գացեր է , ինչպէս առաքեալ է , եւն :

Բայց գիտնալու է , որ անցեալ ժամանակը բայերուն վրայ չորս կը բաժանի , անկատար , կատարեալ յարակատար , և գերակատար :

Անկատար անցեալ ժամանակը կիսակատար անցած կը ցուցնէ ; ինչպէս սիրէի , հարկանէի , եւն :
Կատարեալը՝ անցեալ ժամանակը լման եղեր անցեր կը ցուցնէ . ինչպէս համբուրեաց , օծին , եւն :
Յարակատարը անցեալ ժամանակը քիչ մը առաջ եղեր գացեր է ինչպէս՝ ժողվեալ են , սրբեալ եմ եւն :
Գերակատարը անցեալ ժամանակը շատ առաջ եղեր գացեր է , ինչպէս՝ մատնեալ էին , ընկճեալ էի , եւն :
Անցեալ ժամանակ մըն ալ կայ՝ որուն ստորադասական անցեալ կըսուի , անցած եղած բանին խաւսիլ կընէ , ինչպէս՝ մատնեալ իցէ , պարտեալ իցեն , եւն :

## Դէմք

Որովհետեւ ամէն գործողութիւն գործօղի մը կը կարօտանայ , եւ գործօղն ալ կամ խօսողը կամ լսողը կամ ուրիշ մը պիտի ըլլայ , ահա այս է դէմքն որ երեք կերպ է . առաջին , երկրորդ , երրորդ :
Առաջինը այն է , որ գործը իրեն կը սեպհականացնէ , եւ գործօղը ինքն է , ինչպէս՝ ընթեռնում , կատում , եւն :
Երկրորդը այն է , որ գործը ուրիշին կը սեպհականցնէ , եւ դիմացինին գործերը կը ցուցնէ , ինչպէս պահեար , ծեծեր , եւն : Երրորդը այն է , որ գործը ոչ իրեն եւ ոչ դիմացինին կընծայէ , ուրիշ մէկու մը գործերը կը ցուցնէ , ինչպէս գնաց , եւն :

## Թիւ

Դէմքը աղէկ հասկնալէդ ետքը կրնաս թիւն ալ հասկնալ , վասն զի թիւը գործողութիւնը մէկ կամ

շատ կը ցցնէ , այսինքն գործողները , անոր համ-
ար անուան պէս երկու է , եզակի , յոգնակի .

Եզակի այն գործողութեան պատշաճի բայը որուն մէջ մէկ գործօղ մը կը գտնուի , ինչպէս՝ ձնպէր , ձգեաց , ևն :

Յոգնակի այն գործողութեան պատշաճի բայը որուն մէջ շատ գործօղք կը գտնուին ինչպէս՝ օծին , մեռայք , ևն :

Քաղաքավարութեան վերաբերեալ անոյշ խօսակցութեան մէջ թէպէտ գործօղն մէկ հոգի ըլլայ պետք եղած է յոգնականապէս վարել բանը , օրինակի աղաղաւ , իշխանութիւն ունեցողի մը ըսելու ըլլամնէ դու գիտես՝ դուրս է քաղաքավարութենէ , այլ բանն պահանջէ՛ , ըսել , տուք գիտէք , կամ վեհափառութիւն , ևն . Էֆէնտիմիզ ղը-ֆէրմէնիզ , ևն :

Նայց. գլուպարլին չըլլար ՛յարգելու համար՝ դուք էք բըխատու փրկիչ իմ , և ուրիշ ասոր պէս շատեր :

Եղանակ

Գործելը պատմածի պէս , կամ հրամանաւ կըլլայ կամ գործելուն վրայօք պայման մը կըլլայ ինչպէս՝ սիրեցից , իբր թէ կը պատմէ թէ պիտի սիրէ մի սիրեսջիր , իբր թէ կը հրամայէ չի սիրել , սիրեցէ , իբր թէ պայման կընէ , սիրէ նէ բան մը ընելու , ասոր համար չորս կերպ է գործողութեան որուն եղանակ կըսվի , սահմանական , հրամայական , ստորադասական , աներևոյթ :

ա ։ Սահմանական եղանակը՝ ներգործութիւնը պատմելով պարզապէս առանց հրամայելոյ և պայման դնելոյ կը ցցնէ, ինչպէս՝ սիրեմ, առեցի, գործեցից, եւն ։

Այս եղանակին մէջ ամբողջ են ժամանակ, դէմք, և թիւք, իսկ ուրիշ եղանակներուն մէջ կամ մէկը կամ մէկալը կը պակսին ինչպէս պիտի տեսնես։

բ ։ Հրամայական եղանակը՝ գործողութիւնը հրամայելով կամ արգիլելով կը ցցնէ, ինչպէս՝ կեր, մի ըմպեր, եւն ։

Այս եղանակը ժամանակէն ներկայն և ապառնին մինակ ունի, անցեալ ժամանակը չունի, ինչու որ անցեալ գործողութեան հրամայել չըլլար՝ թիւը ամբողջ ունի, իսկ դէմքէն առաջին դէմը չունի, մինակ երկրորդ և երրորդ դէմ ունի․ իսկ ապառնին յոգնականի մէջ առաջի դէմնալ ունի, եւն ։

գ ։ Ստորադասական եղանակը՝ գործելու համար պայման կընէ, ինչպէս, թուանիցիմ, անկանիցի, համբուրիցէ, եւն ։

Այս եղանակը ժամանակէն ապառնին և անցեալը ունի, դէմը և թիւը ամբողջ ունի, ներկայ չունի որովհետև ներկայն՝ որ պաշտայէը կը ցցնէ, ալ անոր վրայ պայման ընել չըլլար, պայմանը չի սկսուած բանին կը վայելէ ։

դ ։ Աներևոյթ եղանակը գործել կը ցցնէ, բայց անյայտ գործօղը, և առանց ժամանակի, առանց թուոյ կը վարուի. աներևոյթ՝ ըսել թէ առանց եր-

ձուլթի, ինչպէս, գործել, եւ. ամէն աներեւոյթը այս չըս վերջաւորութեան մէջ պիտի գտնուին, ել, ալ, ուլ, իլ:

## Գլուխ Դ.

## Ընդունելութիւն ×

Բայլին չորրորդ մասը՝ ող, եալ, ած և ուց, վերջաւորութեամբ բայէն ծագած առանց դիմի ժամանակ ցցնող ներգործութիւն մի է. որուն ընդունելութիւն կըսուի, իբր. թէ ընդունող, որովհետեւ երբեմն բայի պէս, երբեմն անունի պէս գործածուելով ինքը իրեն բան մը չունի: ×

### Ծանօթութիւն Ա.

Որ ընդունելութիւնը որ բայէն ծագերէնէ, այն բային սեռը պիտի ունենայ, թէ որ իր բայը՝ ուրկէ որ ծագեր է ինքը, ներգործական, կամ կրաւորական, և կամ չէզոքական ենէ, ինքն ալ ներգործական, կամ կրաւորական, կամ չէզոքական է:

Բ. Որ ընդունելութիւնը ող վերջաւորեալ ենէ ըստ ժամանակին ներկայ է, և որը որ եալ, վերջաւորեալ է, անցեալ է, ած և ուց վերջ ունեցողը ապառնի է:

Գ. Ող վերջաւորեալ ընդունելութիւնք հոլով առու ըլլանէ, երկրորդ օրինակին վրայ պիտի հոլովին, եալ վերջաւորեալքն՝ չորրորդ օրինակին վրայ. ած վերջաւորեալքն՝ երրորդ օրինակին վրայ. ուցը նախադրիւ օրինակին վրայ:

Դ. Այս ած վերջաւորեալ ընդունելութիք օլին տեղ շատ կը բանեցվին ընտիր շարադրութեանց մէջ, ինչպէս „առնելիք օրինացն արդարացելին" հաճ ո՛ առնողք:

## Գլուխ Ն.

### Նախադրութիւն

Նախադրութիւնը ոչ հոլովական և ոչ խոնարհական, այլ հոլովեալ բառ մը պահանջօղ մասն բանի մըն է, որ խօսքին մէջ ինքը իրեն մինակ չի գըրուցվիր, եթէ ոչ հոլոված բառ մը իրեն քովը ունենայ ։

Նախադրութիւնը երկու կերպ է. մէյ մը՝ Հոլովակերտ, մէյ մը՝ Հոլովառու ։

Հոլովակերտ նախադրութիւններն անոնք են, զ, 'ի, յ, 'ի յ, առ, առ 'ի, ց, ևն. զ՝ պարառական, հայցական, պատմական հոլովները կը շինէ՝ ինչպէս զարքայն, զտօն, զփեսայէ, ևն. միացեալները բացառական, տրական, ներգոյական հոլովները կը շինեն, իսկ, ց, մինակ տրական հոլովը, ինչպէս 'ի նմանէ, յաստուած, 'ի յաստուած, առ 'ի յաստուածոյ, ցայր, ևն ։

Հոլովառու նախադրութիւնները՝ որ իրի մը անունն ալ կը ցցնեն, հոլոված բառ մը կը պահանջեն, բայց գիտնալու է որ գրաբառին մէջ պահանջած բառը որուն խնդիր կըսվի, շատ նախդրին իրմէ ետքը կը-գրուի, այսպէս՝ վասն հայրի, ընդ նմա, ևն ։

Իսկ աշխարհաբառ և տաճկերէն լեզուին մէջ միշտ յետադաս կ'ըլլայ նախադրութիւնը, ինչպէս՝ ինծի համար, հայրին տեղը. [illegible] [illegible], [illegible] [illegible] ևն ։

Թէպէտ գրաբառին մէջ ալ կան նախադրութիւնք որք կը յետադասին իրենց խնդիրներէն, ինչպէս՝

մահուամբ չափ , աշակերտօքն հանդերձ , ևն :
Բայց հասարակօրէն նախադաս պիտի ըլլայ . և ահա՛ հոլովառու նախադրութիւնքն ասոնք են , որք թվանշանաւ կը դրվին ամէն կերպ խնդրառութեան համար :

## Յօդուած Ը.

### Հոլովառու նախադրութիւնք

ա : Ի վերայ , իւստիւնտէ . դէպ վերյ՝ անդր քան՝ ՙի վեր քան՝ ՙի վերոյ , եուգարը . ներքոյ ՙի ներքոյ ալթընտա . արտաքս՝ արտաքոյ , տըշարը . ՙի մէջ՝ ՙի միջի իչինտէ . ՙի միջոյ , իչինտէն . զառաջեաւ՝ զառաջին առաջի , էօնիւնտէ . առ ընթեր , եանընտա . հուպ՝ մօտ՝ մերձ , եագըն . դէպ՝ հանդէպ՝ յանդիման՝ դէմ յանդիման , գարշը . յետուստ , արգատան . շուրջ՝ շուրջանակի , էթրաֆընտա . կողմն՝ կոյս , թարաֆ . ՙի կուսէ , թարաֆընտան . յայս կոյս , պու թարաֆընտա . յայն կոյս , օ թարաֆընտա . յառաջ կոյս , էօն թարաֆընտա . ՙի վեր կոյս , եուգարը թարաֆընտա . յաջմէ՝ ընդ աջմէ , սաղընտա . յահեկէ՝ ՙի ձախմէ , սօլունտա . առ երի , եանընտա . մինչ , ջէ . ևն :

բ : Նախ քան՝ յառաջ քան , էվվէլ . յետոյ քան՝ ՙի վերջոյ քան , սօնրատան . զկնի՝ զհետ , արգատան . առաջի՝ զառաջեաւ՝ յառաջոյ , էօնիւնտէն . ՙի կարգի , եէրինէ . ևն :

գ : Յառաջ քան , իլէրի . յետ՝ յետոյ , սօնրա . նախքան , իլէրի . յետոյ քան , գէրի . ևն :

դ : Վասն՝ սակս՝ յաղագս՝ աղագաւ՝ պատճառ-

ու՝ 'ի պէտս՝ 'ի համար՝ առ , իչիւն , ուէղէղինէն :
ե : Զօրէն՝ համոյն՝ սակս՝ գունակ՝ իբրու՝ որպէս՝ իբր՝ իբրեւ՝ զեդ՝ զերթ , կիպի , նման , պէնզէր
զ : Դէմ՝ ընդ դէմ՝ հակառակ՝ ներհակ՝ ղըշ , եւն :
է : Զատ՝ որիշ՝ որոշ՝ մեկուսի՝ բայց՝ բաց՝ բացատ , ճուտէ . առանց՝ սըզ . եւն :
ը : Ընդ՝ հանդերձ , պիրապէր . կից՝ պիլէ . եւն :
թ : Ընդ՝ 'ի տեղի , եէրինէ . փոխանակ՝ փոխարէն փոխան՝ պէտէլ . եւն :
ժ : Թագուն՝ զանխուլ՝ ծածուկ՝ գաղտ՝ գաղտնի , կիզլի . եւն :
ժա : Անդր քան՝ առաւել քան՝ յաւէտ քան՝ գեր քան՝ աւելի քան՝ 'ի վեր քան , զիատէ . մէնտուն . գեր 'ի վերոյ , իւստիւն . եւն :
ժբ : Քան , զիատէ :
ժգ : 'Ի ձեռն , էլիյլէ :

## Ծանօթութիւն

Այս ամէն նախադրութիւններս այլ եւ այլ նշանակութիւն ունենալով այլ եւ այլ տեսակ են :
Առաջին թուականշանաւ գրեալ նախադրութիւններըն իրեն հոլոված բառ մը առածին պէս անոր մէջը եւ անոր տեղը կը ցցունեն , թէ պէտ բառ մը չառած ալ տեղ մը կը նշանակեն , բայց անյայտ .
Շատ տեղ նշանակող նախադրութիւնները կրնային տեղական . իբր թէ տեղ ցցնող , ինչպէս „ 'ի վերայ լերանց թռչունք երկնից բոյնս դիցեն , եւ 'ի միջոյ վիմաց տացեն զձայնս իւրեանց „ սաղմ :

Երկրորդ թուանշանաւ գրեալ նախադրութիւնները պահանջած բառին կարգը ցցնելուն համար կըսվին դասական. իբր թէ սրան նշանակօղ իրին, ինչպէս՝ „ Առաջի նոցա երթայ, և ոչխարհքն զհետ նորա " յովհ. :

Երրորդ թուանշանաւ գրեալ նախադրութիւնները իրեն խնդրին ժամանակը ցցնելու համար՝ կըսվին ժամանակական. իբր թէ ժամանակ նշանակօղ իր ինչպէս՝ „ Յառաջ քան զլինիլն Աբրահամու եմ ես " մատթ. :

Չորրորդ թուանշանաւ գրեալ նախադրութիւնները իրենց խնդրին պատճառը ցցնելով կըսվին պատճառական իբր թէ պատճառօղ. ինչպէս՝ „ վասն բազմանալոյ անօրէնութեան ցամաքեսցի սէր բազմաց " մատթ. :

Հինգերորդ թուանշանաւ գրեալ նախադրութիւնները իրենց խնդրին յարմարութիւն բանի մը, և կամ նմանութիւնը՝ ցցնելուն համար, կըսվին նըմանական. իբր թէ նմանցնօղ, ինչպէս՝ „ աներկիւղս առնէ զմարդիկ իբրև զանմարմին՝ զօրս հրեշտակաց " եղիշէ :

Վեցերորդ թուանշանաւ գրեալ նախադրութիւնները իր խնդիրին ընդդիմութիւնը կամ հակառակութիւնը ցցնելով դէպ իրեն կըսվին՝ ներհական իբր թէ ներհակ նշանակօղ. ինչպէս՝ „ ընդդէմ թշնամեաց բազում գործս կազմէր " յովհ. կաթ. :

Եօթներորդ թուանշանաւ գրեալ նախադրութիւն

ները իւրեն խնդրին ուրիշներէն զատ ցցնելուն համար կրավին՝ զատական, իբր զատօղ. ինչպէս՝ „ո՞վ է աստուած՝ բաց 'ի տեառնէ, կամ ո՞վ է աստուած բաց յաստուծոյ մերմէ“ Սաղմ:

Ութերորդ թուանշանաւ եղեալ նախադրութիւնները իւրեն խնդրին հետը 'ի միասին ցցնելուն համար կրավին կցորդական, իբր թէ հետը. ինչպէս՝ „սոքա ամենեքեան էին համապաղորդեալք միաբան յաղօթս հանդերձ կանամբք և մարեմաւ մաւրն յիսուսի և եղբարբք նորա“ Գործոց:

Իններորդ թուանշանաւ եղեալ նախադրութիւնները իւրեն փոխարէնը ցցնելով կրավին փոխարինական, իբր թէ փոխանակ իրին ինչպէս՝ „փոխանակ պղնձոյն բերից քեզ ոսկի, և փոխանակ երկաթոյն բերից քեզ արծաթ“ Եսայի:

Տասներորդ թուանշանաւ եղեալ նախադրութիւնները իւրեն խնդրէն ծածուկ գաղտնի ցցնելով կրավին ծածկական, իբր թէ ծածկօղ յիրէն. ինչպէս՝ „գաղտ 'ի մօրէն երթայր յեկեղեցի“ Հարանց վարք:

Մետասաներորդ թուանշանաւ եղեալ նախադրութիւնները իւրեն խնդրին ամենէն վեր ամենէն էվել ըլլալը ցցնելով կրավին գերադրական, իբր թէ ամենէն վեր առնօղ. ինչպէս՝ „որիւն հզօրին առաւծոյ բաշխեալ մատուցանի՝ յաւէտ քան զհաբէլ“ Նարեկ:

Երկոտասաներորդ թուանշանաւ եղեալ նախադրութիւնը իւրեն խնդրին հետ ուրիշը համեմատե-

րով և մէկը միւսէն աղէկ կամ գէշ ցցնելով կրա-վի բաղդատական, երբ թէ բաղդատօղ. ինչպէս՝ „ մեծ է հոգի քան զմարմին “. Եղիշ :

Երեքտասաներորդ նախադրութիւնք միջնորդու-թիւն մը իրեն խնդրովը ցցնելով կրավի միջնորդ-ական, երբ թէ միջնորդօղ. ինչպէս՝ „ տանջեաց զնոսա 'ի ձեռն՝ հրեշտակի չարի, և փրկեաց զնոսա 'ի ձեռն մովսեսի և ահարոնի “ սաղմ :

## Յօդուած Բ.

## Խնդրառութեան վրայ

Մինչև հիմայ գրվածներէն աղէկ հասկցար որ ա-ռանց հոլովական բառի մը նախադրութիւն չըլ-լար. Մնաց հիմայ որ զանազան հոլովով խնդիր կառ-նեն. անոր համար պէտք է գիտնալ որ նախադ-րութիւնք որ հոլովով խնդիր կը պահանջէ, ասոր ծանօթութիւնները կարգաւ գրեցինք :

ա : Սեռական հոլով խնդիր պահանջօղ նախադ-րութիւններս ասոնք են :

'ի վերայ, „ որ 'ի վերայ ամպոց որոտայր “ Եղիշէ :
'ի ներքոյ, „ 'ի ներքոյ արեգական “ Ժողով :
'ի միջի, „ ծովն 'ի միջի իմ ծածանէր “ Շնորհ :
առաջի, „ պիղծ է առաջի աստուծոյ “ Ղուկ :
յետ, „ և դու աղաւնեալ յետ այնչափ պա-տարագացն “ Ոսկ :
յանդիման, „ ցուցջի՛ք յանդիման ամենայն եկեղ-եցեաց “ Կորնթ :
զկնի, „ և առաքեցին զկնի նորա 'ի զարկս “ Թագ :

վասն , „ վասն առողջութեան զայլիկարն կար-
դայ “ Եւսեբ :
որպէս , „ որպէս կաւ համարեսցի “ Եւսեբ :
առանց , „ զորս առանց մեղաց էր հարկին “ Եղծ :
փոխանակ , „ փոխանակ մոխրոյն անթառամ ծաղիկ
փոխանակ քացախոյն անոյշ ուրախութի “ Ագաթ :

Կան այլ եւ շատ նախադրութիւնք սեռական խնդիր առնող, մեք այսչափ օրինակի համար դրինք:

բ : Գործիական հոլով խնդիր պահանջող նախադրութիւնքս սոքա են :

հանդերձ , „ հանդերձ մարեմաւ՝ մարբն իւրով “ Մա:
մեկուսի , „ մարմնով մեկուսի՝ եմ “ Մատ :
մերձ , „ սակայն հոգւով մերձ եմ “ Խորեն :
ընդ , „ ոչ գնեն ընդ դրուանաւ “ Մատ :

գ : Պարառական հոլով խնդիր պահանջող նախադրութիւննիս սոքա են :

շուրջ , „ որ շուրջ զինեւ կային ՚ի ճանա “ Ճշոր :
շուրջանակի , „ շուրջանակի զտաճարնօքնորա “ Մա :

դ : Բացառական հոլով խնդիր պահանջող նախադրութիւններդ սոքա են :

որպէս , „ այլ ոչ որպէս զհնդիկ մրջիւնն “ Ոսկէ :
իբրեւ , „ եւ իբրեւ զմրրիկ հոսեսցէ զխս “ Եւսեբ :
յառաջ քան , „ յառաջ քան զմարմինս զոգիս
ախտացուցաք “ Եղիշէ :
առաւել քան , „ ընկալարուք զխրատութիւն , առա-
ւել քան զոսկի “ Առակ :
քան , „ այլ չիցես սուր ականջօք քան զէշ “ Ոսկեբ :

ե ։ Բացառական հոլով խնդիր պահանջող նախադրութիւնները ասոնք են ։

բաց , „ բաց ՚ի զօրաց ազգաց հեռաւորաց “ Մաշ ։
հեռի , „ գնացին հեռի ՚ի քաղաքէ անտի “ Յոբ ։
ուրիշ , „ և այլ մարմնոյն ուրիշ յանձութէ “ Ընդհ ։
զանխուլ , „ ոչ է զանխուլ ՚ի լսօղաց բանիս “ Ոսկ ։

զ ։ Նախդրիւ տրական հոլով խնդիր պահանջող նախադրութիւնները ասոնք են ։

մինչև , „ մինչև ցթագաւորելն Վաղարշ “ Յովհ ։
մինչ , „ մինչ ՚ի յականջս հնչեալ ուժգին “ Ընդր ։
մերձ , „ կէսք ՚ի նոցանէ մերձ ՚ի լեառն գեր “ Յես ։

է ։ Սերջահոլով տրական խնդիր պահանջող նախադրութիւնները ասոնք են ։

հանդէպ , „ կացցէ արեգակն հանդէպ գաբաւօնի “ Յեսու ։
ընդդէմ , „ ի մարտ մտել ընդդէմ տկարին “ Ընդհ ։
հակառակ , „ սոքա միմեանց հակառակ են “ Գաղ ։
դէմ , „ այլ դէմ ձեզ եմ “ Նոյն ։
մերձ , „ այժմ մերձ է մեզ փրկութեան “ Հռոմ ։

## Ծանօթութիւն Ը.

Կան ոմանք նախադրութիւնք, որք կրկին հոլովով խնդիր կը պահանջեն ՚ի միում բանի , նախադրութիւնքս՝ մինչ , մինչև , բացառականը միանգամայն և տրականը կառնեն , ինչպէս՝ „ Թագաւորեաց մահ յադամայ մինչև ցմովսէս “ Հռոմ ։
„ ամենայն ազգք յաբրահամէ մինչ ՚ի դաւիթ , ազգ

չորեքտասանք " մատ :
,, 'ի պոնտոսէ մինչև ցոլորտս քաղաքին ալեքսնդրիոյ"
յով. ճառ :
Նախադրութիւնքս՝ յառաջ քան , յետոյ քան , 'ի վեր
քան , գործիական միանգամայն և հայցական կա-
նեն , ինչպէս՝ վեց աւուրբ յառաջ քան զզատիկ "յո
Նախադրութիւնքս՝ հետ , 'ի բացեայ , մեկուսի , գոր
ծիականը միանգամայն և բացառականը կառնեն
ինչպէս՝ ,, հետ յերուսաղէմէ հարիւր և վաթսուն
ասպարիսաւ " ղուկ :
Նաև ասոնցմէ կան նախադրութիւնք որոնց խնդ-
րութիւնը արտաքոյ կանոնաց են , իբր թէ սեռ-
ականի փոխանակ գործիական , կամ ուղղական հո-
լովով խնդիր առնել , որպիսի են նախադրութիւն-
քս՝ վասն , փոխանակ , ըստ , յետ , յաղագս , եւն :
ուղղական փոխանակ սեռականի . ինչպէս՝ ,, վասն
զմեզ կեցուցանել " շարակ :
գործիական փոխանակ սեռականի . ինչպէս՝ ,, յաղա-
գս անապական գոլով ծննդեան " ընդհ :

## Ծանօթութիւն Բ.

Մինչև հիմա զուրցածներէս նախադրութիւնները
և անոնց տեսակները հասկցար , մնաց հիմա քանի
մը նախադրութեան վրայ հարկաւոր դիտելիք :
ա : Նախադրութիւնս ընդ՝ զանազան խնդիր առ-
նելով զանազան տեսակի վերաբերի զանազան նշ-
անակութեամբ :]
մ ,, ընդ անմահին 'ի ճանապարհ մի երթար " ոսկբ :

„ոչ լուցանեն ճրագ , և դնեն ընդ գրուանաւ“ Մտ :
„ակն ընդ ական և ատամն ընդ ատաման“ Օրինաց :
„ընդ ամենայն դատարկ բանի համար տալոց էք“ Մ :

բ : Նախադրութիւնքս ընդ , առ , զանազան խնդիր առնելով զանազան տեսակի վերաբերելի զանազան նշանակութեամբ : որպ

„եղիցի ընդ բանի քում“ Ղուկ :
„կաց ընդ իս և ես ընդ քեզ“ Յովհ :
„առ աբիադարաւ քահանայապետիւ“ Մարկ :
„մայր տեառն՝ որ կայր մերձ առ խաչին“ Յովհ :

գ : Նախադրութիւնս՝ շուրջ , որուն խնդիրը պարառական , երբեմն տրական ալ կը լայ , ինչպէս՝ „երթեցեն շուրջ ՚ի շէնսն“ Մարկ :

Բայց գիտնալ պէտք է պարառականը երբեմն մինակ կը տրվի , ինչպէս՝ „պատի արեգակն զհիւսիսիւ“ Ժողով․ երբեմն նախադրութեամբս , ինչպէս՝ „իսկ շուրջ զմարդկութեամբն ծաղկոյց և հոտարանաց կազմութեան , որպէս շուրջ զբոլորն զայլ բոլորակութիւն ական“ Խորէն :

Այսու կիմանանք թէ ուր որ բոլոր շրջապատը նշանակել ուզենք , շուրջ պէտք է դրել , իսկ ուր որ միայն էթրաֆը և ոչ բոլոր շրջապատը նշանակել ուզենք , միայն պարառական պէտք է դրել․ այսպէս նախադրութեանը և պատմականին վրայ տարբերութիւններ կը գտնվին , որ իրենց տեղը կը խօսինք :

դ : Նախադրութիւնքս՝ վեր , վերայ ; ներքոյ , յետ ․

Հայցական հոլովէն զատ ուրիշ հոլով չեն՝ կրնար առնել, թէպէտ շատ քերականք հաստատեն թէ զանազան հոլովով խնդիր կառնեն, բայց իսկապէս նայելու ըլլանք ուրիշ հոլովով քովը եղած խնդիրները զօրութեամբ իմացուող բային խնդիր են, քան թէ նախադրութեան, զր.

„ելեալ օձի գթոյնս ՚ի բաց եդ" Յովհ. Կոր. · յն իբրև ՚ի բաց դնելն օձք գթոյնս :

„ելեալ խնամու իմն ընդ ոստուցեալ ռամկիւք" Յովհ. Կոր. · յն իբրև զեշն :

„արկանէր զնովաւ ծիրանիս ելեր զարքայիւ" Ոսկէ. յն իբր արկանիլ զարքայիւ :

„ աշխարհ առաւել հոգայ զմարմնոյ քան զհոգւոյ" յն քան զհոգալ զհոգւոյ :

„երեւեցան նոցա բաժանեալ լեզուք ելեալ ՚ի հրոյ" Փարպ. · իբրև՝ զբաժանեալս ՚ի հրոյ :

„փառօքն եւ խնայէցի ՚ի քեզ ելեալ ՚ի փառատկաւոր" Ագաթ. :

„դլորեալին ՚ի միջօրեի ելեալ ՚ի հասարակ գիշերի" Եզն.

„խաղացցես զու նովաւ ելեալ հաւուրս" Յովհ. :

Ահա յայտնի է օրինակներէս որ նախադրութիւնքս հայցականէն զատ խնդիր չեն կրնար առնել, կերեւայ թէ քերականք համբակները չի տաղտկացուցանելու համար խնդիր ըսեր անցեր են, բայց ես կը յուսամ որ աւանդ ործ ալով իրենց դժուարութիւն չըլլար. մանաւանդ մտաց սրութիւն :

Ասն եւ մասնաւոր գիտելիք նախադրութեան վրայ որ, անոնք համաձայնութեան մէջ :

## Գլուխ Ժ.

## Մակբայ

Մակբայը նախադրութեան պէս անհոլով մասն բանի մի է, բայց այն հոլովական բառ մը պահանջող. այս՝ ներգործութիւն ցցնող բառ մը պահանջող. որովհետև մակբայը ուրիշ բան չէ, միայն գործողութեան ժամանակը կամ տեղին ցցնող մասն բանի մի է. ինչպէս իւր անունն ալ կը յայտնէ, մակբայ՝ իբր թէ բայի մը վրայ:

Բայց այս ըսելովս մի իմանարթէ միայն բային վրայ կը դրուի մակբայը, ընդունելութիւնին և բայ անուններուն վրայ, և այն ամենուն վրայ որոնք որ բայի ույժ ունին, ինչպիսի են արմատք բայից:

Այն ամենայն բառք՝ որ բայի մը վրայօք ժամանակ կամ որակ կը ցցնեն, մակբայ է, կը լլան ուղղական անունէ, և կամ հոլոված և կամ մակբայակերտ մասնկամբքս՝. որպիսի են, տան, ըէն, էն, ին, է. նէ, ջէ, էմէ, էջա, 'էօ, էօ, ;ան, նօք, ածանցեալք են, և կամ բարդեալք, և կամ կրկնեալք. ահա առ ձեռն պատրաստութիւն համբակաց հոս փոքր 'ի շատէ կը գրեմք այս առաջին յօդուածին մէջ, և երկրորդ յօդուածին մէջնալ անոնց բաժանումները:

### Յօդուած Ա.

ա: Այժմ, այժմու, արդ, վաղվս՝, շիմտի. այժմէն, արդէն, շիմտիտէն. երբ, նէ զաման. յորժամ,

այնինչ, երբև, մինչդեռ, մինչ, նէզաման. այսօր, 'ի սերկեան, պու-կիւն. վաղև, եարըն. երեկ, յերեկն, տիւն. եռանդ, յեռանդն, էվվէլ կիւն. այգուն, այգուց, վաղ քաջ ընդ առաւօտն, սապահլայըն. զմիջաւորբն, էօյլէյին. ընդ երեկս, աքշամլայըն. գիշերի, կէճէլէյին. վաղու ևս, վաղ ուրեմն, էրքէնտէն. այսուհետև, յայսմ հետէ, պունտան սօնրա. յորմէ հետէ, այնուհետև, օնտան ղէրի. յարաժամ, հանապազ, միշտ, յար, ցանգ, յաւէժ, յաւէտ, տայիմ. յաւիտեան, էպէտէ. դեռ, դեռ ևս, հանուզ. չև, չև ևս, մինչչև, մինչդեռ, տէյինճէն. ևն:

բ: Այսչափ, այսքան, պու-գատար. այդչափ, այդքան, շու-գատար. այնչափ, այնքան, օ գատար. որչափ, որքան, նէ գատար. քանիցս անգամ, գաչ տէֆա. միանգամ, առ մի նուագ, պիր քէրէ. երկիցս, իքի քէրէ. երիցս, իւչ քէրէ. բիւրիցս, պին քէրէ. ոչ այսչափ միայն, եալըն պու-գատար տէյիլ:

գ: Աստ, աստանօր, պու-րատա. անդր, անդ, անդանօր, օրատա. այսր, պու-րայա. այդր, շու-րայա. աստուստ, այսրէն, պու-րատան. այտի, շու-րատան. անտի, անտուստ, օրատան. յայս կոյս, պու-թարաֆա. յայդ կոյս, շու-թարաֆա. յայն կոյս, օ թարաֆա. յառաջ կոյս, էօն թարաֆա. յետ կոյս, արտ թարաֆա. արտաքս, 'ի դուրս, տըշարը. հեռի, 'ի հեռուստ, 'ի բաց, 'ի բացեայ, 'ի բացուստ, ուզագտան. մօտ, մերձ, հուպ, եագըն. առ ըն-

թեր , [illegible] . սորև , վայր , 'ի վայր , [illegible] . 'ի վեր , [illegible] . 'ի վերուստ , [illegible] . 'ի ներքոյ , [illegible] . դէմ ընդդէմ , [illegible] . յետուստ , 'ի թիկանց , [illegible] . ուր , ուրեք , [illegible] . ամենայն ուստեք , [illegible] :

դ ։ Ընդ հանուր , առ հասարակ , համան՝ դամայն , համայն , համօրէն , [illegible] . ողջոյն , միահաղոյն , բոլորին , բովանդակ , սպառ սպուռ , խսպառ , ամենևին , [illegible] . գունդ գունդ , երամ երամ , դասադաս , վտառ վտառ , [illegible] . միահոյլ , միահամուռ , միաժողով միախառն , 'ի միասին , [illegible] . համագունդ , համերամ , [illegible] :

ե ։ Այսպէս , [illegible] . այդպէս , [illegible] . այնպէս [illegible] . սոյնպէս , դոյնպէս , նոյնպէս , սոյն գունակ դոյն գունակ , նոյն գունակ , [illegible] . [illegible] . ևն . զոր օրինակ , [illegible] . որպէս , [illegible] . ևն :

զ ։ Ո՞ր , զմէ՞ , առ 'ի մէ՞ , հի՞մ , զի՞ , [illegible] . ընդէ՞ր , վասն է՞ր , է՞ր սակս , ո՞յր աղագաւ , յո՞յր սակս , [illegible] . զի՞ մո՞րդ , ո՞րպէս , ի՞բր , [illegible] . ո՞չ , [illegible] . ո՞չ ապաքէն , [illegible] . քանի՞ օն , [illegible] . ի՞ւ իւիք , [illegible] . ե՞րբ , [illegible] . մինչև յե՞րբ , [illegible] . ուստի՞ , [illegible] . ևն :

է ։ Զարւոք , [illegible] . բարւոք , [illegible] . դիւր , դիւրարար , հեշտի , հեշտեաւ , [illegible] . բանի , բանաբար , [illegible] . 'ի հարկէ , յակամայս , [illegible] . կա-

մակար , կամակարուց , ճանը կէօնիւլտէն . հետի ,
հետիոտս , եայան . մերկանդամ , չըպլագ . ծառայ
արար , գուլ կիպի . քաջարար , քաջապէս , էյիճէ
մարդկօրէն , ադամճա . ինքնայօժար , քէնտիքէնտինէ . 'ի
նանիր , 'ի զուր , տարապարտ , տարապարհակ , տա
րապարտուց , սնոտի , ունայն , վայրապար , վարկ-
պարազի , նաֆիլէ . եւն :

ը : Ո՛չ , ոչ , ոչ բնաւ , բնաւին ոչ , եօգ . ամենե
ւին ոչ , ոչ երբեք , ոչինչ , ասլա եօգ . այլ ոչ եւս , մի
եւս , մի եւս երբեք , հիչ պիր տահա . մի բնաւ , մի
երբեք բնաւ , սագըն . մի եւ մի իւիք , ամենեւին մի ,
սագըն հա սագըն . օն անդր , փարդաստ , ուղուր օլ :

թ : Ա՛հա , աւասիկ , ահաւասիկ , իշտէ . ահա-
ւադիկ , աւանիկ , իշտէ պուրատա . իշտէ օրատա :

ժ : Գուցէ , գուցէ թէ , դուցէ երբեք , գուցէ
արդեօք , օլաքի . թերեւս , արդեօք , պէլքէմ . մի գու-
ցէ , մի արդեօք , օլմայա քի . իցէ արդեօք , արդեօք
աճապայ . եւն :

ժա : Ա՛յո , պէլի . արդարեւ , յիրաւի , ճշմարիտ ,
ճշմարտիւ , ճշմարտապէս , ստոյգ , ստուգապէս ,
ահէհ . խակ , կարի քաջ , եւ կարի խակ քաջ , չէք-
չէք . հաւատի , հաւատեաւ , իրաւացի , անշուշտ
հագիգէթ . զրէ թէ , գոգցես , գրեթ , սանքի . եւն :

ժբ : Մ՛իայն , միայն եւ եթ , սոսկ , լոկ , եալըզ . մի-
այն ընդ միայն , եալընըզ . մեկուսի , ուրիշ , ուրոյն ,
ուրայն ուրոյն , պաշգա . առանձին , առանձնակի ,
պաշխաճա . յօշ յօշ , անդամ անդամ , քաթըլ քաթ-

ըս . ինքն ինքեան , [illegible] . միայնիկ , [illegible] . եւն :

ժդ : Նշրագ , երագ երագ , փոյթ ընդ փոյթ , ձն-պով , ձեպ 'ի ձեպոյ , հապ ձեպ , շտապաւ , փաղ փաղ , [illegible] . յանկարծ , յեղակարծ , յանկարծա-կի , իսկ եւ իսկ , [illegible] . անդէն , անդէն եւ անդ , առ ժամայն , [illegible] . հետ ընդ հետ , նոյնհե-տայն , յանպատրաստից , [illegible] . իսկոյն , [illegible] . նոյն ժամայն , [illegible] . եւն :

ժե : Խիտ առ խիտ , հոծ ընդ հոծ , [illegible] . սաստիկ , [illegible] . յոյժ , [illegible] . կարի՛ կարի , [illegible] . յոլով անգամ , առաւել եւս , եւս քան զեւս , [illegible] . յանչափս , [illegible] . եւն :

ժզ : Խառն մի , դոյզն ինչ , սակաւիկ ինչ , սակաւ-իկ , [illegible] . հազիւ հաղ , հազիւ , [illegible] . յու-շիկ յուշիկ , [illegible] , առ սակաւ սակաւ , [illegible] . մեղմով , [illegible] . փոքր մի եւս , [illegible] . փոքր 'ի շատէ , [illegible] . եւն :

Ծանօթութիւն

Թէպէտ այլ եւ շատ մակբայք կան , մենք հոս մի-այն գլխաւորները գրեցինք , անոր համար հիմայ միայն գլխաւոր տեսակները պիտի նշանակենք , այսչափը աղէկ սորվելէն ետքը՝ դիւրաւ կրնայ համ-բակը բոլոր մակբայներուն ուժը իմանալ ու՝ զա-տել . որովհետեւ ամէննալ ասոնց կը վերաբերին : Առաջին թուանշանաւ եղեալ մակբայները՝ բայց

մը քով գտնուելու ըլլան , գործողութեան ատենը ցցնելուն համար կըսուին ժամանակական , երբ թէ ժամանակը ցցնող · զի ,, յորժամ անխն շրջանակի " Եզնկ ։

Երկրորդ թուանշանաւ եդեալ մակբայները գործողութեանց տեղը ցցնելուն համար կըսուին տեղական երբ թէ գործոյն ուր տեղ կատարուիլը նշանակող · զի ,, անդ հօտք արօտականք ծաղկաւէտք խայտացեալք , ատ խառնեալ և յոյժ պակասեալ " յոհ̃ն ոսկ̃ ։

Երրորդ թուանշանաւ եդեալ մակբայները գործողութեանց չափը ցցնելուն համար կըսուին քանակական , երբ թէ գործելուն ինչ չափ ըլլալը ցցնող · զի ,, վասն զի ծանուցաւ փոքր 'ի շատէ , որքան միանգամ յաստուածազգեացին տուաւ յաղագս երկնայնոցն կարգաւորութե̃ն " շնր̃հ ։

Չորրորդ թուանշանաւ եդեալ մակբայները գործողութեանց չափը՝ համեմատմամբն՝ շատ ցցնելուն համար կըսուին հաւաքական , երբ թէ շատերը մէկ գործի վրայ հաւաքուած ցցնող · զի ,, ժողովեալք գումարեալք համօրէն " ատ̃կէ ։

Հինգերորդ թուանշանաւ եդեալ մակբայները գործողութեանց իրարու յարմարութիւն ցցնելուն համար կըսուին նմանական , երբ թէ այս գործը ուրիշ մէկ գործողութեան նման ցցնող · զի ,, տանից բռնաւորի չկարէ ոք արդարութիւն առնել . . . նոյնպէս և տանից սատանայի չկարէ ոք մե-

ղը գործել" Յովհ։

Վեցերորդ Թուանշանաւ եղեալ մակբայները գործօղը, կամ անոր պատճառը փնտռելու պէս ցցնելուն համար կըսուին հարցական, իբր թէ գործոյն պարագայն հարցընող. Փ. „ընդէ՞ր դուք մովսէս և ահարոն խափանէք զժողովուրդս 'ի գործոց իւրեանց" Ելք։

Եօթներորդ Թուանշանաւ եղեալ մակբայները գործողութեանց եղանակը, կերպը, ինչպէսութիւնը ցցնելուն համար կըսուին որակական, իբր թէ գործելուն կերպը ցցնող. Փ. „բարւոք մարգարէացաւ 'ի վերայ ձեր եսայի" Մատթ։

Ութերորդ Թուանշանաւ եղեալ մակբայները գործը արգելելուն համար կըսուին բացասական, կամ արգելական, իբր թէ գործը արգելմամբ կամ բացասելով ցցնող. Փ. „մի եկեսցեն 'ի վերայ մեր ոտք ամբարտաւանից, և ձեռք մեղաւորաց մի՛ դողացուսցեն զմեզ" Սաղմ։

Իններորդ Թուանշանաւ եղեալ մակբայները գործողութեան վրայ կասկած ցցնելու համար կըսուին երկբայական, իբր թէ շփոթելը ցցնող. Փ. „միթէ՞ ես իցեմ տէր" Մատթ։

Տասներորդ Թուանշանաւ եղեալ մակբայները գործողութեան վրայ երդում ընելու պէս ստոյգ ըլլալը կամ չըլլալը հաստատելուն համար կըսուին ստորասական, իբր թէ գործը ստոյգ ըլլալը հաստատելու կերպով ցցնող. Փ. „ամէն ա-

մէն ասեմ ձեզ" յոհ :

Երկոտասաներորդ թուանշանաւ եղեալ մակբայները գործողութեան վրայ առանձնութիւն մը ցըցնելուն համար կըսուին զատական, երբ թէ գործը զատ եղած ցցնող . գի ,, և կայր փարիսեցին մեկուսի " ղուկ :

Երեքտասաներորդ թուանշանաւ եղեալ մակբայները գործողութեան շուտ կամ յանկարծ ըլլալը ցցնելուն համար կըսուին երագական, երբ թէ աճէլէյով մը գործօղը ցցնող . գի ,, բայց թէ վատակել զխտեմ ձեզ . . . փաղփաղակի և առ ժամայն մեծացուցանել, որպէս և կամիք " ղուկ . ժէ :

Չորեքտասաներորդ թուանշանաւ եղեալ մակբայները գործողութիւնը խիստ շատ առաւել ցցնելուն համար կըսուին առաւելական, երբ թէ գործօղին խիստ շատ գործի պարապելը ցցնող . գի ,, ոչ սակաւ արտասուս հեղուցու 'ի վերայ ազգին թշուառութեան " Եզեկ ,

Հնգետասաներորդ թուանշանաւ եղեալ մակբայները գործողութիւնը խիստ քիչցնելու համար կըսուին նուազական, երբ թէ գործոյն քիչ ըլլալը ցըցնող . գի ,, սակաւիկ միւս ևս և տեսանիցէք զիս " յոհ '

Վերջապէս աղէկ հասկցար որ բառ մը թէ որ գործողութեան վրայօք և կամ գործողութեան եղանակը ցցնելու պէս նշանակութեան վերաբերի, այն ատեն մակբայի ուժը ունենալով տեսակի մը տակ կիյնայ . անոր համար այն ամէն նախադրութիւն-

...ները բայի մը քով առանց խնդրի գրուիլին նէ՝ ա-
...որ կերպը կամ եղանակը ցուցնելով մակբայ կըլլան .
...նոյնպէս շատ ածականներ բայի մը վրայ կենալով
մակբայ կըլլան ։

Կան և ուրիշ հարկաւոր գիտնալիք ասոնց վրայ ,
որ համաձայնութեան մէջ կըսորվին ։

## Գլուխ է

## Շաղկապ

Շաղկապը ոչ նախադրութեան պէս խնդիր պա-
հանջող է , և ոչ մակբայի պէս բայի մը վրայ կենա
լով անոր պարագայն ցուցնող , այլ բառը բառին
հետ , բանը բանին հետ կապող մասն բանի մըն է ։

Ըսինք բառը բառին հետ , բանը բանին հետ , որ
ովհետև շաղկապը երկու կերպ կապակցութեան
վերաբերեալ է , կամ շաղկապք որ բառից շաղկապ
են , և կամ որ Իմաստից ։ Շաղկապները ասոնքն են ։

ա ։ Եւ , իսկ , այլ , կամ , ևս , ևս և , թէ ,
այլ ևս , նաև , նա ևս , դարձեալ , նա իսկ , ՎԷ .
ՀԷՃ . ՎԷ . ՀԷՃ . ևն ։

բ ։ Այլ , բայց , սակայն , իսկ , միայն , այլ սա-
կայն , բայց եթէ , բայց միայն , բայց սակայն , մի-
այն թէ , եթէ ոչ , և քան թէ , ԱՆՃԱՔ . ԼԱԿԻՆ .
ՖԱԳԱԹ . ևն ։

գ ։ Թէպէտ , թէպէտև , թէ և , թէ և ոչ , ոչ
եթէ , իբր ոչ եթէ , ոչ միայն , ՖԱՐՂԱ . ևն ։

դ ։ Վասնզի , վասն զի , փոխանակ զի , որպէս զի

իբրև զի , նա զի , այնու զի , որովհետև , չիւն . չիւնքի . եռ :

ե : Որեմն , ապա ուրեմն , ապաքէն՝ , ապա , նա ուրեմն . այսուհետև՝ ուստի , վասն այնր , վասն-որոյ , այսր աղագաւ , ամին իրի , նորին սակս , օ–նուն իչին . շու–նուն իչին . եռ :

զ : Այսէ , թէ , թէ է , այն ինկ է , որպէս , իբր զի ըստ որում , զի , օրինակ իմն , էօյլէ . մէօյլէյ . եռ :

է : Այդ , ինկ արդ , բայց արդ , իմդի . դէ իմդի . եռ :

ը : Մինչ՞ թէ , քան , մանաւանդ , մինչև , թող թէ , նէչիւնքի . եռ :

թ : Գոնէ , գոնեայ , պարի . եռ :

ժ : Եթէ , եթէ , զի եթէ , ապա եթէ , ինկ եթէ էյէր . եռ :

ժա : Կամ , կամ թէ , և կամ թէ , եահօտ . եռ :

ժբ : Եթէ , զի , եթէ , քի . եռ :

## Ծանօթութիւն

Որովհետև շաղկապքս զանազան նշանակութիւն ունենալով , զանազան տեսակ կը բաժանին ըստ բանին պահանջման , նախադրութեան և մակբայի պէս , ուստի .

Առաջին թուանշանաւ նշեալ շաղկապները հետ ըզ հետէ իրարու զէնծիրլամէ կապելու ուժ ունենալուն համար բաղհիւսական կըսվին , իբր թէ իր արուհետ զանազան իրերը՝ ի մի հիւսող . զի ,, զի ո՛չ բերէք հարթ ընթանայ երկվար առանց սանձակալի,

և ո՛չ նաւ համբառնայ հանդէպ առանց ուղղչի" Նար.։

Երկրորդ Թուանշանաւ եղեալ շաղկապները մէկ ըզ մէկու ներհակցնելով իրարու կապելուն համար կըսուին բացառողական, երբ թէ առաջի խօսածը ետքէն ներհակ խօսքովը բացառող. փք ,,Թէպէտ և ո՛չ խնդրեմք բաւական ասել զամենայն չարիսն՝ որ անցին անդէն՝ի կարաւանին ընդ գունդն հայոց, սակայն և ո՛չ լռել կամիմք ծածկելով զվիշտս նեղութեան" Եղիշէ ։

Երրորդ Թուանշանաւ եղեալ շաղկապները միշտ խօսքը կիսատ ձգելուն համար կըսուին անկատարական, զի՛ կատարող բացառողականը ներգործութեամբ կամ զօրութեամբ կը յաջորդէ խօսքը կատարելու համար. փք ,,Թէ և մեռանիլ հասանիցէ ընդ քեզ (սակայն) զքեզ ո՛չ ուրացայց" Մատ.։

Չորրորդ Թուանշանաւ եղեալ շաղկապները խօսքին պատճառը իմացնելուն համար կըսուին պատճառական, երբ թէ առջի խօսածին պատճառը ետևէ յարող. փք ,,սևացեալ ներկան մորթք մարմնոյ նոցա, վասն զի զցերեկ արևահէզք լինէին, և զամենայն գիշեր գետնաբեկք" Եղիշէ ։

Հինգերորդ Թուանշանաւ եղեալ շաղկապները առջի խօսածէն ետքինը հանած ըլլալուն համար կըսուին մակաբերական երբ թէ վրայ բերող, վասն զի երբեմն հետևութիւն մը կը կապէ առջինին հետ. փք ,,մրգուղք անյագք եղաք 'ի կերակուրս . . . վասն այն և ամենայն չարիք հասին յաւուրս մեր" Եղ. ։

Վեցերորդ թուանշանաւ եղեալ շաղկապները առջի խօսուած խօսքին մթութիւնը պարզելուն համար կըսուին մեկնական, իբր թէ անիմանալին իմացնող և խրթինը մեկնող. զբ ,, Հաւատոյ զինովն վառեցարուք, ո՛՝ աստուածպաշտութեամբ, արդարութեամբ, եւն ''. ընդհ ։

Եօթներորդ թուանշանաւ եղեալ շաղկապները հասարակօրէն խօսքերուն սկիզբը դրվելուն համար կըսուին սկզբնաւորական, իբր թէ նոր բան մը ըսկսող. զբ ,, և արդ՝ ուստի՞ հաւանեցուցից զձեզ ոչ գիտեմ '' ...ժ ։

Ութերորդ թուանշանաւ եղեալ շաղկապները երկու խօսքը իրարու բաղդատելուն համար կըսուին համեմատական, իբր թէ մէկը մէկալէն առաւել ընտրելի կամ հերքելի ցցնող. զբ ,, լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք '' Եղծ ։

Իններորդ թուանշանաւ եղեալ շաղկապները խօսքի մը մէջ ակամայութիւն մը և նաչարութիւն մը ցցնելուն համար կըսուին վարանական, իբր թէ աւելի աղեկը չի կրնալով ձեռք ձգել՝ քիչ աղէկին խայիլ կըլայ. զբ ,, գոնէ վասն գործոյն հաւատացէք '' յոհ ։

Տասներորդ թուանշանաւ եղեալ շաղկապները միկը մէկալէն կախուած ցցնելուն համար կըսուին թէական, իբր թէ թէութիւն մը ցցնող. զբ ,, եթէ ոչ կտաս կազմիցէք, և եթէ ոչ կակուղ անկողինս պատրաստիցէք, չկարէք երթալ '' ...։

Մետասաներորդ թուանշանաւ եղեալ շաղկապները մէկը մէկալէն զատելու համար կըսուին տրոհական, իբր թէ զատելու կերպով կապօղ. զի „ երկուց սաղմոսաց կամ երից կցեցէք " ըսենք:

Երկոտասաներորդ թուանշանաւ եղեալ շաղկապները մինակ զարդի համար դըրվելուն պատճառաւ կըսուին թարմատար, իբր թէ բանի չարժօղ, անպէտ. զի „ յայտ է թէ ՚ի սուգէ վասն մեզաց " ըսենք:

## Գլուխ Ը.

## Միջարկութիւն

Միջարկութիւնը մարդուս զանազան կիրքերը՝ զի ուրախութիւնը, կամ տրտմութիւնը, սրտին ցաւը կամ վախը, ցցնօղ մասն բանի մըն է. և շատը անանկ բառ կամ ձայն են որ ամէն ազգին բնական են, թէպէտ դոյզն ինչ այլայլեալ են հնչմամբ և կամ բառ կըլլին յարմարեալ, և ահա ասոնք են՝:

ա: Ուա՜ղ, աղէ՜տ, ափսո՜ս, եղո՜ւկ, էհ, ըհ, ո՞հ, բարէ՜, ծա՜ղր. ևն:

բ: Երանի, երանի թէ, ո՞վ, իցէ՜ թէ, իցի՜ւ, յանկա՜րծ, օ՞շ, օ՞շ թէ, ձեռէ՜. ևն:

գ: Ո՞վ, ո՞վ թէ, վա՜շ, ո՞, իւ, հէ՜յ. ևն:

դ: Վա՜շ վա՜շ, ո՜հ ո՜հ, ո՜հ, օ՜ֆ օ՜ֆ. ևն:

ե: Վա՜շ, ա՜յ, է՜, հը՜, ձէ՜ն. ևն:

զ: Ա՞ղէ, հա՞պա, օ՞ն, բե՛ր, ե՛կ, հա՛. հայ-դէ. ևն.

## Ծանօթութիւն

Միջարկութիւնքս զանազան կիրք յայտնելուն համար զանազան տեսակ կը բաժանին :

Առաջին թուանշանաւ եղեալ միջարկութիւնները սրտին ցաւը ու վախը յայտնելուն համար կըսուին աւաղական, իբր թէ ցաւիլ մէկու մը վրայ․ զի „ եղուկ դու Նինուէ “ Նաւում :

Երկրորդ թուանշանաւ եղեալ միջարկութիւնները հաւէսը ու սրտին փափաքը ցցնելուն համար կըսուին ըղձական, իբր թէ սրտին իղձը ցցնօղ․ զի „ իցէ թէ յաւելից հայիլ՝ի տաճար սբ քո “ Յովն :

Երրորդ թուանշանաւ եղեալ միջարկութիւնները թախիծ մը ցցնելուն համար կըսուին զարմացական, իբր թէ արմնալու ձայներ հանօղ․ զի „ ո՜վ մեծի տուր և առութեան շնորհի երկնայնոցն և երկրայնոցս “ Լամբ :

Չորրորդ թուանշանաւ եղեալ միջարկութիւնները սրտին ցնծութիւնը և ուրախութիւնը ցցնելուն համար կըսուին խնդական, իբր թէ խնդալու ձայներ հանօղ․ զի „ ո՜հ ո՜հ արդարն մոլորեցաւ “ Ոսկեբ :

Հինգերորդ թուանշանաւ եղեալ միջարկութիւնները զէֆքըլէնմիշ ըլլալու, կամ սիթէմ տալու և արհամարհութիւններ ցցնելուն համար կըսուին հեգնական, իբր թէ հեգնելու ձայներ հանօղ․ զի „ վա՜հ, որ քակէիր զտաճարդ “ Մատ :

Վեցերորդ թուանշանաւ եղեալ միջարկութիւն-

ները սիրտ տալու համար կըսուին յորդորական , իսկ թէ յորդորելու ձանիս հանօղ . զի „ Հաճայ ժիր ըերուք " ունէք :

Միջարկութիւնները՝ ինչպէս տեսար , մինակ ալ խնդրի հետ ալ կը դրուին , և մի և նոյն միջարկութիւնը երբեմն այս և երբեմն այն տեսակի կը վերաբերին , որ կիրքը որ յայտնեն :

Միջարկութեանց խնդրառութիւնը երեք հոլով-ով կըլլայ , վերջահոլով տրական , պարառական , նախադրութեամբ . զի վայ մարդոյ , վայ զինև , վայ 'ի վերայ անձին իմոյ :

Թէպէտ երբեմն հայցական հոլով ալ խնդիր կերևայ , բայց զօրութեամբ եղած բային նոյն հայցականը սեռի խնդիր ըսելու է . զի եղուկ զիս , իբր թէ եղուկ ասեմ զիս ես :

Ուրիշ միջարկութիւններ ալ կան . բայց այսքանովս անոնք ալ դիւրաւ կը ճանչցուին :

[illegible]



# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## [illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

### ԶՈՒԳԱԴՐՈՒԹԻՒՆ ՈՒԹԻՑ ՄԱՍԱՆՑ

### ԵՒ ԿԱՄ

### ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ ՆՈՑԻՆ ԸՍՏ ՄԻՄԵԱՆՑ

Համաձայնութիւնը ուրիշ բան չէ, միայն բառերուն իրարու հետ յարմարութիւնը, և անոնց իրարու համաձայն կապակցութիւնն է:

Այս յարմար կապակցութիւնը զանազան բառից միայն հոլովական մասունք բառերուն մէջ կը գտնուի, որք են անուն, դերանուն, բայ, և ընդունելութիւն:

Իսկ անհոլով մասունք բառերուն մէջ, որք են նախադրութիւն, մակբայ, շաղկապ, և միջարկութիւն. իրարու կապակցելու համաձայնութեան կանոն խիստ քիչ գտնուելուն համար, նախ և առաջ անոնց համար պէտք եղած ծանօթութիւնը տալով, յետոյ շարունակ հարկաւոր բացատրելու հոլովական մասունք բառերուն կանոնները աւանդելու վրայ պիտի ըլլանք, որոնք հինգ կերպ պաշտօն վարելով համաձայնութեան մէջ, հինգ կերպ իրարու համաձայն կը գտնուին:

Անոնք՝ անուանին, յատկացուցիչ և յատկացեալ.

բացայայտիչ և բացայայտեալ . գոյական և ածա-
կան ըլլալով . անունը՝ բային , տէր բայի և խըն-
դիր . բայը՝ անունին խնդրառու ըլլալով . սոր պէս
աներևոյթը և ընդունելութիւնը երբեմն խնդիր ,
և երբեմն խնդրառու կըլլայ :

Անունը՝ անունին , խնդիր և խնդրառու կըլլայ ,
երբոր բայէ ածանցեալ , բայի արմատ , կամ բայի
մը ուժ ունենայ . այսպիսեացը՝ բայ անուն գո-
յական կամ բայ անուն ածական կըսուի , ասոնց խնդ-
րառութեան վրայ սոսկ անուանց , բաղդատական
և միջական անուանց խնդրառութեան վրայ պի-
տի խօսուի , միջական անուններուն համաձայնու-
թեան հետ :

Հուսկ ուրեմն դերանուններն , յարաբերական և յա-
րաբերեալ անունին համաձայնութիւնը , և այլ
հարկաւոր ծանօթութիւնները , ասոնց վրայ այս
տեղըս կարգաւ խօսինք . և նախ՝ հոլովի տակ չին-
կող մասունք բանիներուն վրայ , ետքը հոլովի և
խոնարհման տակ ինկողներուն վրայ :

## Գլուխ Գ.

## Անհոլով մասունք բանի :

### Նախադրութեան համար

### Ծանօթութիւն Գ.

ա : Նախադրութիւնը՝ ինչպէս և իւր անունը կը
յայտնէ , իրեն խնդրէն առաջ պիտի դրուի . բայց
այս ամէն նախադրութեան համար՝ չէ . ինչու որ կան
նախադրութիւնք որ անհնար է իրենց խնդիրներէն

եա մնայ . և կան որ երբեմն նախադաս երբեմն յետ
ադաս կը լլան :

բ : Նախադրութիւնքս՝ զերթ , առանց , ընդ , ըստ ,
իբրև , քան , ևն . ամենևին յետադաս չեն ըլլար .
որպ „ առանց լման թողեալ շէնքին " ցէա—ա որբէ :
„ Ըստ նմանութեան մանրամաղ փոշոյն հիւզէի "
ագաթ :

գ : Նախադրութիւնքս՝ հետէ , չափ , կոյս , ևն .
ամենևին նախադաս չեն ըլլար . որպ „ յաղագմայ հե
տէ՝ բաղում ժամանակաւ , արգելեալ կային " նոր :

դ : Նախադրութիւնքս՝ զնի , 'ի վերայ , զհետ ,
վասն , հանդերձ , ևն . միօրինակ երբեմն նախադաս
երբեմն յետադաս կը լլան . նախադաս . որպ „ 'ի վե-
րայ թշնամոյն նշան յաղթութեան կանգնիլ " նա :
, քարշելին զզօրծին հանդերձ ձիամբքն " յոհ :
յետադաս . որպ „ խոսրովն զխոտաւ և աշխէն ախի-
նաւն հանդերձ " ագաթ :

ե : Այսպիսի նախադրութիւններս թէ որ նախ
դիր ունենան , յետադաս եղած ատենը՝ նախդիր-
նին իրենց խնդրին վրայ դնելու է , կամ խնդրին
վրայ և իրեն վրայ կրկնելու է նախդիրը . միշտ խնդ-
րին վրայ չըլլար . որպ „ ոչ կարեն կալ յառեջ մերայ "
ոսկբ : իբրև 'ի թշնամւոյ վերայ խստամնայր վը-
րէժ խնդրել " ագաթ : նախդիրին և խնդրոյն վրայ .
որպ „ զօտար հօրն զհետ ոչ երթայց " Ճէլ , էքբ :
„ զմիմեանց զնի կարգեալ տողեացին " ագաթ :

զ : Առաւել փայլուն կը լայ շարադրութիւնը ,

թէ որ այսպիսի նախադրութեանց և իրենց խնդ-րին մէջ բայ կամ ուրիշ բառ լինայ. փ. „Եթէ նա զիմ զատելոյ և զթշնամւոյ և զքաղաքականի այն-չափ գտեա ընթացաւ" ոսկէբ :

է : Երբեմն տարօրինակ ձանձրութիւն չի բերելու համար միանգամ կը յիշվի նախադրութիւնը ու՛ր որ հարկ կըլլայ յիշել, չի կրկնվիր, թէ որ նախդիր ունենէ ունեցած նախդիրը խնդիրներուն վրայ կը դրվի նշանակ իւր կրկնվելուն . իսկ թէ որ նախ-դիր չունենայ, Եւ շաղկապը զօրութեամբ կը կրկ-նէ անիկայ . փ. „ անտանիտս . . . առեալ զբաղ-մութիւն զօրացն դաշնաւորաբար յարձակի 'ի վերայ. ոչ միայն 'ի մերն արտաքայլայ, այլ և՝ յայլոց, և 'ի Թագաւորութեանց " յովհ կաթ : „ Յետ այնչափ ընդ ծով նաւարկելոյ, և բազում մրրկաց և խռ-թի, և յաջողին ալեաց զբեան զերծուցանելոյ " ոսկէբ :

Ծանօթութիւն Բ.

ա : 'Նախադրութիւնք՝ առ, ընդ, ըստ, ինչպէս առջի մասին մէջ խօսեցանք, զանազան հոլովով խնդիր առնելով զանազան նախադրութեանց տեղ շատ կը բանեցվին :

Առ . երբոր ուղղական հոլով խնդիր առնէ, վասն զի մ, 'ի կարգի նախադրութիւններուն պէս կը նշանակէ . փ. „ առ 'ի սրբութեանցն մեաս սովին հանդերձիլ " նարեկ : „ Բանակեցան առ աղբերն արեգայ " դատ : „ Զանձինս առ իմաստունս ու-

նէին յիմարեցան “ Հռով :

Սեռական առած ատենը՝ վասն , առաջի , նախ-
ադրութիւններուն պէս կը նշանակէ . զի ,, առ երկիւ-
ղի անկանելոյն զարհուրեալ թմբրեցի “ Ագաթ :
,, առ նաւահանգստին առաւ եւ գնաց հողմ ալեա
յարուցանել “ Ագաթ :

Գործիական առած ատենը՝ առ ընթեր , ՚ի ժամա-
նակի , մերձ , նախադրութիւններուն պէս կը նը-
շանակէ . զի ,, չէին առ գերեզմանօք մեռելոյն “
Եղիշ : ,, ուժգին եւ հանդարտ նոյն առ հեղեղու “
Նարեկ : ,, կայր առ ստորոտով լերինն “ Եփրեմ :

Բ : Ընդ . երբոր ուղղական հոլով խնդիր առնէ ,
կամ , ՚ի միջի , նախադրութեանց պէս կը նշանա-
կէ . զի ,, մարտ պատերազմի տայցուք ընդ քեզ՝ ե-
թէ ընդ ծով լցէ եւ ընդ ցամաք “ Տուէք : ,, սրփա-
եալ տարածեցաւ ընդ ոլորտս երկրի “ Յովհ Ճառ :

Սեռական առած ատենը՝ փոխանակ , վասն , նա-
խադրութեանց պէս կը նշանակէ . զի ,, տարած-
եալ ձեռք ընդ ձեռաց , ոտք ընդ ոտից ընթանա-
լեաց “ Շնորհ : ,, ընդ ամենայն դատարկ բանի հա-
մարս տայցեք “ Մատթ :

Գործիական առած ատենը՝ ՚ի ներքոյ , նախադր-
ութիւնին պէս կը նշանակէ . զի ,, ընդ հովան-
եաւ ամենապահական քարայրութեանց “ Թղ . Եբր :

Տրական առած ատենը՝ ՚ի միասին , ՚ի վերայ , նա-
խադրութեանց պէս կը նշանակէ . զի ,, յայնժամ
հրեշտակ էջ ընդ մանկունսն ՚ի հնոցն , եւ մէջ ընդ

այնտեղ՝ որ յաղթութեան հնոցին իջեն՝ իջ-ցուք " ոսկեբ ։ ընդ փայտ խաչին երեւեցին " ջա-րբէտ ։

գ ։ Նոյն . երբոր ուղղական հոլով խնդիր առնէ, արտաքոյ, նախադասութիւնն այսպէս կը նշանակէ . զի " մինչ անցեալ է քո քանդակութիւն, եւ փոխ-եալ քո բժշկութիւն " Նարէկ ։

Պատճառական առած ատենը՝ վասն, զի, նախադասութեանց այսպէս կը նշանակէ . զի " որք քո՛ նոր մանկ էին առ դրանդոս՝, եւ գրաւականս " Ճաշ ։ " որ քո օրէ բերէին եւ երբեւ գեշ ընկենուին ՚ի մեծ հրապարակին " Եղիշէ ։

Մերջահոլով տրական առած ատենը՝ վասն, այս, նախադասութեանց այսպէս կը նշանակէ . զի " քո խաւթեան քում, եւ քո անդեղջ սրտի՝ գանձես անձին քում բարկութիւն " Հռոմ ։ " մարդ քո պատկերի առատութեամբ արարար " Ագաթ ։

## Ծանօթութիւն Գ.

ա ։ Երկնեալ նոյնանշանակ նախադասութիւն մի եւ նոյն բանին խնդրառու կը լայ . զի " հաստատեցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ " Սաղմ ։

բ ։ Երբեմն ստորադասութեանց մի եւ նոյն նախադասութիւնը կը կրկնէ զօրէն հանգոյ . զի " շրջեցաք ընդ ամենայն անապատն ընդ մեծ, եւ ընդ ահագին " Օրինաց ։

գ ։ Այնինոյն նախադասութիւնը խօսքի մը մէջ կընայ կրկնուիլ, եւ կրնայ զօրութեանը գաշակիլ,

կենում ․ զի „ զի եռանդն վասն օգտից ասելոյ յու-
զանելոյ խօսել , և վասն զրաջան աշխատութեան
և վասն երկրագործական կրթութեան '' Ոսկէբ ։
զօրութեամբ գուշակում ․ զի „ և վասն անմա-
նութիւն , և որդւոյ՝ և տառապանաց իւրոց , ման-
կացեալ շաչնջէ տամանձիւն '' Նմառ ։

դ ․ Երբեմն նախադրութիւնը բնաւ չի դրուիր ․
հոլովակերս նախդիրն կիմացուի ․ զի „ ցարդ ես
պատմեցից զարդարութիւնս քո '' սաղ ․ յի մինչե
ցարդ ․ „ արդարահամ էր անձն եօթնամասն և հն-
գից '' ծննդոց ․ յի երկու անձնց ։

ե ․ Նախադրութիւնը երեն խնդիր առնելն եա-
ըր ինքը բայի մը կամ բայի ուժը ունեցող մաս-
ունք բանինքրուն , անդրեալթին , ընդունելութիւն
թն , բայանունին , երբոր այսպիսեացը խնդիր կըլ-
լայ ․ երբեմն անոնց նախդիրը կը վրայ առնելով
գուշակել կուտայ որին որ խնդիր պիտի ըլլայ ․
զի „ մատուցին զվասն մեղացն '' Ղևտաց ․ յի մատ
ուցին զպատարագն մատուցանելն վասն մեղաց ։
Երբեմն հոլովակերս նախդիրք այլ առ ՚ի դարձ կը
դրուին ․ զի „ անմահութիւն , յառ ՚ի զատուած սի-
րելոյն զբեղ փրկչացոյց '' Լուք ։

## Գլուխ Ի․

## Մասերու համար

### Դասաւորութիւն Ա․

ա ․ Մասերը՝ ինչպէս և իր անունը կը յայտնէ ․
մէկ բայի վրայ պիտի դրուի ․ գործողութեան , ու՛ր

տեղ , որ քա՞ն , որչափ՞ , ո՞ր ժամանակ , ընդու-նարանայինները որոշարար ծանուցմանը համար . Օր ,, Ընդէ՞ն փաղփաղուկն հասանեն 'ի վերայ մահ-ապարտացն " Յոբ :

Բայց երբեմն կը յետադասի բայէն . Օր ,, Նաւել յայս ծով այս հնարաւոր " Իմաստ . ԺԴ :

բ : Երբեմն մակբայը այնչափ կը հեռանայ իր բայէն մինչեւ շատ անգամ մէջը ուրիշ բայեր մտնալով , կը տարածի միտքը , որպէս ուշիմ աչք պէտք է . Օր ,, Մի , եւ վասն զի մանուկ հասակաւ եւ մեղ-սանէր անձամբ ազատաբերեմ շնորհաց սի հող-ւոյն , եւ հայրց մերոց կանոնական սահմանաց , որք առ իս բերին ըստ արժանի խնամ սասոսի , իմ աղաղաւ աստուածամերձ գամնիչիր " Լամբ :

գ : Երբեմն ոչ միայն կը հեռանայ , այլ եւ բնա-ջինջ կը լռէ . խօսակա՞ն միտքը զօրութեամբ գու-շակելու է , բայց այս ամէն մակբային համար չէ , գինարժանեայ մակբայները զօրութեամբ կը գու-շակուին . Օր ,, զոր օրինակ արար ինձ , (այնպէս) ա-րարից նմա . եւ (այնպէս) հատուցից նմա , որպէս գործեաց զիս " Դատաւ :

Լատինները տարրդ խնայելու շատ անգամ կըծ-ածկեալ կը գրենն 'նշանակ գինարժանեայն . Օր ,, որով 'ի սակաւուդ հաւատարիմ եղեր " . Ղուկ . որովհետեւ ըսելու տեղ :

դ : Իսկ ուրիշ երբեմն մակբայը ներգործութեամբ բայը զօրութեամբ . Օր ,, որպէս մարդիկ (պէտք)

ձիոյ, է խմծան լեշը . նոյնպէս (փայլել է) աղջի ան մոր " Տոսոլ ։

### Ծանօթութիւն Բ.

ա ։ Ինչպէս նոյնանշանակ նախադրութիւնները մի և նոյն բառի խնդրառու կըլլային , ասոր պէս համանշանակ մակբայները մի և նոյն բայի կըդրուին առաւել զօրդ ըլլալու և կամ սաստկութիւն մը տալու համար . զի ,, յանկարծակի յեղակարծում ժամանակի զէն վերացուցեալ զթագաւորն գլխաթաւալ յերկիր կործանէին " Ագաթ ։

բ ։ Մակբայը միայն բայի վրայ չի դրուիր . անեբայթին , ընդունելութիւնին և բայի ուժը ունեցող բայանուններուն վրայ շատ անգամ կը յարմարի . զի ,, մի շատ խօսիլ և փայլատակ , մի ծիծաղել անկարգաբար " Յիսուս Սիրաք . ,, յառաջագոյն տեսեալ զքեզ մարգարէն զաքարիա " Շար . ,, եր ընդ քեզ խնկաբար լոյսից և աստուածութեան խառնութիւն բովանդակապէս " Նարեկ ։

Շատ անգամ մակբայը բայ անուններուն մակբայ եղած ատենը անոնց նախդիրը ինքը կառնէ . զի ,, 'ի միասնագամ քո գալստեանն " Շար ։

գ ։ Երբեմն մակբայք ոմանք բոլորովին ածականի տեղ կը բանեցվին . զի ,, զաւետիս կենաց ունի զայժմս և զհանդերձեալն " Ագաթ . ,, որ գրեց սիրէ սիրեցեալ յիսկապէս բարւոյն " Նարեկ ։

դ ։ Ասոր հակառակը ածականները շատ հեղ մակբայի տեղ կը գործածվին . զի ,, զայդ արդար

տասցիր“ Յոբ։

Գիտելի է որ ածականները մակբայ կը լլան զանազան հոլովով, կամ բարդութեամբ. ուղղական. իբ „ գեղեցիկ զգխակաց յօրինեաց“ Սողէբ։ սեռական. „ կենդանւոյն մոլթեցին զաւրբան„ Ափամ։ հայցական. „ քան զպղպջակս անձրեւի՝ արագադոյնս պատառին“ Աբրհ։ Ներգոյական. „ ոմանք յանդէսս ընկալան զհրեշտակն“ Եբր։ և բարդ. „ մի առ միոջ զխաթաւալ կացուցանէին“ Ծաղ։

ե ։ Երբեմն գոյական անունները մակբայ կը լլան ածականի՝ պէս, մանաւանդ որ նոյն գոյականը կրկնըւած ըլլայ. իբ „ առէն առ կուրծս կան“ Աբրհ։ „ Հող՝ ի գլուխ կային“ Ծաղ։

զ ։ Երբեմն գերանունը մակբայի տեղ, երբեմն մակբայը գերանունի տեղ կը գործածուի. իբ „ զոր մեղէն խիկ լուաք“ Ղուկ։ „ հասեալ յապարխի անդ Ծաղ։

Ծանօթութիւն գ.

ա ։ Բացասական մակբայք՝ ոչ, մի, յետադաս եղած ատենը անուշութիւն կը բերէ խօսքի մը մէջ. իբ „ որ ոչն կամիցի գործել և կերիցէ մի“ Թես. „խորհեցան և ոչ ինե, դաշինս կռուցին և ոչ խմոփս կամաւ“ Ղաղփոր։

Տես որչափ անուշութի ունի շարադրութիւնը յետադաս բացասականաւն. քան թէ ըսէր. ոչ խորհեցան-ինե, և ոչ դաշինս կռուցին խմոփս կամաւ։

բ ։ Յարադրեալ մակբայներն՝ իսկ և իսկ , ոչ երբեք . մինչդեռ , ոչ բնաւ , ևն . Իրարմէ կը զատուին մէջերնին ուրիշ մասն բանի կենալով . որ „իսկ ըլնաւ և յիշեմ ոչ“ Շաղ. էջ ։

գ ։ Համեմատական մակբայքն՝ առաւել , քան , երբեմն ըստ օրինի դասաւորութեամբ մը կը վարուին . որ „առաւել զհոգւոյ աչս քան թէ զմարմնոյ յերկնիս ընծայեցին“ Լամբ ։

Երբեմն ասոնք իրենց դասաւորութիւնը կը փոխեն . որ „Առաւել քան ընդ ճարտարաբանութիւն , ընդ համարձակութիւն աներկիւղութեան զարմանային“ Եղիշ . իմ . առաւել զարմանային ընդ համարձակութիւն աներկիւղութեան , քան ընդ ճարտարաբանութիւն ։

դ ։ Էական բային սահմանական ներկային եզակի երրորդ դէմն ուրեք և երբեմն մակբային տեղ շատ կը բանեցուի . որ „մեծամեծք ըմբռնեալ տըկարանան . է՛ զի և կորանին“ . իմ . ուրեք և կորանին „է՛ զի հուրն յորոց նիւթոց լինի , 'ի նոցունց և շիջանի . է՛ զի յորմէ լինի , և 'ի նոցունց աճեալ բորբոքի“ Շաղ. էջ . իմ . երբեմն հուրն յորոց նիւթոց . երբեմն յորմէ լինի ։

ե ։ Երբեմն մակբայները անունի պէս դիմորոշական յօդ կառնեն . որ „որ՛ յայնժամն էին ցնորխք“ Ագաթ ։ „դուք՝ որ այժմդ 'ի նեղքօդ էք , լերուք կոչնականք“ Յոհ. Ման ։

## Գլուխ Գ.

## Շաղկապին համար

### Ծանօթութիւն Ա.

ա : Երկու տեսակ շաղկապ կայ, բառից և իմաստից :

Շաղկապ բառից ասոնք են . և, իսկ, նաև, կամ, կամ թէ, իբր թէ, որ, զի, ևն. որովհետև ասոնք բառը բառին հետ կը կապեն . զի „ անշփոթ մնացին բնութիւնքն, զի դդայութիւնքն " Ղպր :

Իսկ շաղկապ իմաստից ասոնք են՝ բայց, սակայն, թէպէտ, քանզի, ուրեմն, ևն. որովհետև բանը բանին հետ կը կապէն . զի „ և քանզի գարնանային էր ժամանակն, ծաղկալից դաշտքն դառնային 'ի յորդահոսանս արեանց բազմաց " Եղիշ :

բ : Գիտելի է . շաղկապ բառիցը երբեմն շաղկապ իմաստից կրնայ ըլլալ . զի „ Էլի, Էլի, լամա սաբաք թանի . զի աստուած աստուած իմ՝ ընդէր թողեր զիս " :

Իսկ շաղկապ իմաստից ամենևին շաղկապ բառից չի կրնար, նոյն օրինակներուն :

գ : Ընկատարական, պատճառական, թէական, շաղկապները խօսքին մէջ առաջ դրվելով, ետևէն կը պահանջէն բացառական, մակաբերական շաղկապները . զի „ Թէ և աղքատութիւն մնաց և բանի ոչ տայ թոյլ 'ի բարձրագոյնսն քան զմեզ համարձակիլ ձեռնարկութիւն . . . սակայն ինքնակալ թագաւորութեանդ հրաման . . . համարձակու-

թիւն տայ տկարութեանս մերում" Հռվմ :

Իսկ բաղում անդամ զօրութեամբ կիմացվին հետևողական շաղկապները. որպ ,, թէ և մեռանիլ հասանիցէ ընդ քեզ, (սակայն) զքեզ ոչ ուրացայց" Մատթ. ,, Ես թէպէտ եմ ես անարժան, (իսկ) ես ինձ հոգի 'ի սոյն ձեռնարկել" Հռոմ :

դ : Ընդ հակառակն՝ անկատարական, պատճառական, թէական շաղկապները զօրութեամբ կիմացվին. որպ ,, (թէպէտ) նոքա վեր 'ի վերոյ բանիւք խոնդացին մեր 'ի նոսա հասանել, բայց արդեամբ խորամանկեցին մերձենալ 'ի մեզ" Յովհ. ,, (Զի) մեռանի այն՝ որ շնչէ և շարժի և դնայ, ուտէ և ըմպէ" Եղիշ. ,, (եթէ) յանթլփատութենէ ոք կոչեցաւ, մի թլփատեսցի" Կորնթ :

ե : Երբեմն պահանջողք համեմատական շաղկապից միայնդամայն և համեմատականքն զօրու դուշակվին. որպ ,, դուք երկիրպագանէք որում ոչն գիտէք. մեք երկիրպագանեմք որում գիտեմքն" Յովհ:

Որ զօրութեամբ կիմացվին շաղկապքս՝ զի, սակայն. իբր թէ ասէր. զի դուք երկիրպագանէք որում ոչն գիտէք. սակայն մեք երկիրպագանեմք որում գիտեմքն :

### Ծանօթութիւն Գ.

ա : Թարմատար շաղկապներս՝ թէ, զի, որպէս զի, և այլն. սովորաբար զխմաւոր բայ կը պահանջեն. որպ ,, նստաւ հաղորդակաւն զի լուիցէ երկոցունց կողմանց" Եղիշ :

Այլ երբեմն փոխանակ դիմաւորի կը դնի աներևոյթ :

բ : Բաղձականին շաղկապն՝ և . երբոր շեշտեալ կրկնուի, կը նշանակէ, թէ, եթէ . օր ,, և՛ չար և բարի 'ի նմանէ լինի . Եղիշէ . այ եթէ չար և եթէ բարի :

Այսպէս է և անկատարական շաղկապս՝ թէպէտ. որ երբեմն շեշտեալ և երբեմն առանց շեշտանշանի կրկնուած ըլլայ, նշանակէ, թէ, եթէ :

գ : Իսկ բազում անգամ և շաղկապը առ՚ի զարդ կը դնի առանց շաղկապելոյ . օր ,, 'ի յընթանալս իմում, և կասիմ, յարդարանալս իմ և մեղանչեմ" Նարեկ :

Դ. երբեմն՝ ու, ւ, կը վարեն փոխանակ և 'ի տաղաչափները, և երբեմն արձակ շարադրողները . օր ,, Նոցա 'ի տուէ ամպ հովանին, ու 'ի գիշերի լոյսն արփենին" Շն―― ողբ . մանաւանդ գեղեցիկ իմ 'ի յաշտակ, սուր ւ 'ի ղընդան ձեր փոխանակ" Յովհ. Եր :

Գլուխ Դ.

Միջարկութեան համար

Ծանօթութիւն Ա.

ա : Միջարկութեան համար թէպէտ հոս գրելի ծանօթութիւններ չկան, ինչու որ առջի մասին մէջ եղածը կը բաւէ . բայց հիմայ հոս կարգէն դուրս չի մնալու համար մէկ ծանօթութիւն մը գրեցինք . անոր համար հարկ եղաւ որ այլ իմն բան խօսիլ առջի մասին մէջ եղածներէն դուրս սակաւ ինչ տեղեկութեան համար :]

բ ։ Միջարկութիւնը՝ սրտին ցաւը , ուրախութիւնը , զարմանալը , փափաքը , ևն . յայտնօղ մասն բանի մ'նէ . որն որ խօսելու ատենը խնդութենէ , կամ բարկութենէ , յառաջ բերեալ խօսք մ'նէ . որ ոչ կը հոլովի , և ոչ կը խոնարհի . և ոչ անունին կամ բային պարագայն կը յայտնէ . զի „ո՛հ ո՛հ արդարն մեռաւ“ ոսկէ :

գ ։ Երբեմն գոյական անունի պէս հոլովելով խնդիր բայի կ'ըլլայ . զի „Եւ ինքեանք դարձեալ անոի վայիւք . . . աշխարհէն գլթադաւորն“ ագաթ : Եղեր գալարելին լսել . . . զվայ և զաւաղ բարեկամացն“ եղիշէ :

Եւ երբեմն մէկ միջարկութիւն մ'նախադրութեան խնդիր ըլլալով , միւսը կը պահանջէ իրեն զանի խնդիր . զի „վա՛յ 'ի վերայ վայի անձին իմոյ“ ոսկէբ :

դ ։ Միջարկութիւնները իրենց խնդիր կը պահանջեն զանազան հոլով , ոմանք ուղղական . ոմանք սեռական . ոմանք պարառական . ոմանք հայցական . ոմանք վերջահոլով տրական . բայց շատ անգամ առանց խնդրի կը գտնեն զօրութեամբ ունենալով զխնդիրն . զի „ո՛հ ես մեղայ նման նմին“ ճ---- ոսկէ : Բայց հակառակ՝ երբեմն խնդիրը ներգործութեամբ , միջարկութիւնը զօրութ . զի „լի՛ ա մօթով պատուի“ ոսկէ . ի՞ ո՛վ լի ամօթով պատուի :

Բաւական է այսչափ անհոլով մասունք բանիններուն համար , հիմայ հոլովական մասունք բանիներուն համար խօսելու պարագլինք :

## Գլուխ Ա.

### Հոլովական մասունք բանիններուն համաձայնութիւն

Հոլովական մասունք բանինները՝ անուն, դերանուն, բայ, եւն. երբ համաձայն երբ անհամաձայն կը գտնուին, ամէնը կարգաւ պիտի գրենք. սկսեալ նախ՝ ի համաձայնութենէ անուան ընդ անուան որ երեք կերպով կը համաձայնին. իբրեւ յատկացուցիչ եւ յատկացեալ, բացայայտիչ եւ բացայայտեալ, գոյական եւ ածական :

## Յօդուած Ա.

### Համաձայնութիւն անուան ընդ անուան իբրեւ յատկացուցիչ եւ յատկացեալ

Այն ամէն բառը՝ որ ուրու ըլլալը յայտնի ընել պէտք է, հարկաւ կը պահանջէ իրեն քովը անանկ բառ մը որ յայտնէ ուրու ըլլալը. փ տունը, որուն ըլլալը իմացընել ուզես նէ կը պահանջէ քովը անանկ բառ մը որ զինքը որոշէ ասոր կամ անորու-քը ըլլալը. մարդոյ, բառս կը յայտնէ թէ մարդու աչքըն է. առիւծու, ճնճղկան, մկան, կամ ուրիշի աչք չէ :

Աղէկ հասկցար յատկացուցչին եւ յատկացեալին ինչ ըլլալը. յատկացուցիչը՝ յատկացեալին ուրուն ըլլալը ցցնօղն է :

փ „ Տուն իմ տուն աղօթից կոչեսցի, եւ դուք արարէք զդա այր աւազակաց “ Մատթ. :

Ահա տունը է յատկացեալ . իմն և աղօթիցը է յատկացուցիչ . որովհետև տունը որու ըլլալը յայտնել պէտք եղած է . իմը և աղօթիցը յայտնեցին եթէ թագաւորի , իշխանի կամ ուրիշի տուն չէ , հապա իմ այ՛ աստուծոյ և աղօթից տուն է . հիմայ միայն կը մնայ քեզի որ կանոնները միտքդ պահես ։

## Կանոն Ա.

ա ։ Յատկացուցիչը ՚ըստ բնական պահանջման պէտք է յատկացեալէն յառաջ դրուի , ինչու որ անոր յայտնողն է . զի „ցօղեամ զցօղ շնորհաց քոյին“ յիսուս որդի ։ „Օրհնութիւն աստուծոյ մնացէ ՚ի տունս ձեր“ ընդհ ։

Բայց բազում անգամ կը յառաջէ քան զյատկացեալ իւր . զի „Արեգական լոյս ծագէր“ յիս որդ . „քանզի հոգւոյն աչօք առաջնորդեալ“ ոսկեբ ։

բ ։ Յատկացեալը ինչ հոլով ըլլանէ ըլլայ , հոգչէ . բայց յատկացուցիչը սեռական հոլով պիտի ըլլայ . զի „Հաւատեալ կայր պատրաստութեամբ ՚ի մարտ պատերազմի“ խոր ։

Բայց կըլլայ երբեմն որ յատկացուցիչը յատկացեալին հոլովը կը մնայ իրրև համաձայն անոր , ասիկայ կըլլայ՝ երբոր յատկացեալը գործիական և բացառական հոլով ըլլայ . զի „օրհնութեամբ երգով բարեբանեցէք“ շար . զի օրհնութեան երգով ։ „ոչ մեղմութեամբ մեղմական վանդիւ նկրհմամբ ընկղմեցեր“ նարեկ ։ „՚ի պտղոյ յորովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա“ փիլոն . զի ՚ի պտղոյ որ-

ովայնի նորա ։ „ Եւ 'ի կողահերձ սայրասուր սլաքէ ուժգին բաղխմանէ " Նարեկ ։

գ ։ Ընդ հակառակն՝ երբեմն ամենևին յատկացեալին հոլովը չի նայիր , այլ միշտ ուղղական կը դրվի սեռականի մտօք ․ օր․ „ Նա զձայն իւր 'ի կարկուտ և 'ի կայծակունս հուր " Սաղմ․ ։ փ․ հրոյ ։ „ Թարգմանել 'ի յոյն լեզուէն 'ի հայ բարբառ " Ղազ․ Փարպ ։

դ ։ Երբեմն՝ յատկացուցիչը յատկացելոյն հոլովը, յատկացեալը յատկացուցչին հոլովը կը մտնայ ․ իբր թէ յատկացուցիչը իրեն սեպհականեալ հոլովը յատկացեալին տալով և անոր հոլովը իրը մնալով փոխ կ'գործէ շարադրութիւնը ․ օր․ „ զնեղութիւն հանդիսիցն անցաւոր արար " Յաճախ․ ։ փ․ զհանդէս նեղութիւն ։ „ Ժանդակեալ թևոյդ աղօթիւք " Նարեկ ։

## Կանոն Բ․

ա ։ Հարկ չէ յատկացուցիչը և յատկացեալը մէ մէկ բառ ըլլան , շատ անգամ կը պատահի խօսքի մէջ՝ որ յատկացեալը մէկ , յատկացուցիչը շատ ըլլայ ․ օր․ „ 'ի պտղոյ ցորենոյ՝ գինւոյ՝ ձիթոյ․ ․ ․ լցուցեր զմեզ ․ Սաղմ ։

Յատկացուցիչը մէկ՝ յատկացեալը շատ ․ օր․ „ Յիշել և զմտաւ ածել պարտ է զվիշտս և զնեղութիւնս , զբանտս և զկապանս սրբոյն Գրիգորի " Ղազ․ Փարպ ։

բ ։ Երբեմն մի և նոյն յատկացուցիչը ամէն յատ-

կացեալներուն վրայ կը կրկնուի . զի ,, Ճշմարտութիւն իմ և ողորմութիւն իմ ընդ նմա “ . ,, Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ և զծանօթըս իմ “ ասելով . որն որ կրնար և կը բաւէր ըսել . Ճշմարտութիւն և ողորմութիւն իմ , զբարեկամս և ըզծանօթս իմ , յատկացուցիչը անուն ըլլայ նէ՝ այս կրկնութիւնը պէտք չըլլայ :

գ : Երբեմն քանի մը բառ մէկ զմէկու յատկացուցիչ յատկացեալ կըլլան . իբր թէ այն որ յատկացուցիչ էր նախադաս բառին , յատկացեալ կըլլան յետադաս բառին . զի ,, Ընդ ժամանել ձայնի ողջունին մարիամու առ եղիսաբէթ խայտացեր ընդ առաջ որդւոյն աստուծոյ շար . ,, Սպասաւորութիւն անբարի բարուց բռնութեանն բելիարայ ՚ի կոր կործանեացի “ Նարեկ :

դ : Յատկացուցիչը երբեմն ածականի տեղ կը գրուի . զի ,, Հոտ անուշից բուրեցայք ՚ի քրիստոս “ շար :

## Կանոն Գ.

ա : Յատկացուցիչը՝ ինչպէս շատ անգամ ըսինք , սեռականի հոլով պիտի ըլլայ , իսկ յատկացեալը ամէն կերպ հոլովով կրնայ ըլլալ . ինչպէս վերի գրուած օրինակներուն մէջ՝ տեսար . Հիմայ՝ մնաց որ երբոր յատկացեալը նախդրիւ հոլովով ըլլայ , և յատկացուցչէն առաջ գրուած գտնուի , ունեցած նախդիրը իրեն վրայ կը մնայ . իսկ թէ որ յատկացուցիչը իրմէ առաջ գտնուած ըլլայ , նախդիրը ա-

նոր վրայ կանգնի ։

Յատկացեալը նախադաս . որ „Իւր պատմեցին նըմա զպատերազմն քաջութեան“ Յովք . „Զխորհրդ զմտաց իմ և զեզրօս պնդեցից , և հաստեցից զբան հարցն“ Խորեն։

Յատկացուցիչը նախադաս . որ „Զհրեից թշուառութիւնն իւրեանց փառաւորութիւն համարէին“ Յովք . „Իսկ թէ սուտ երդնուցու՝ ամենայն այն 'ի ցասմանն ընդունելի է . Յովք ։

բ ։ Երբեմն միայն նախադաս յատկացուցչին կանգնի նախդիրը , յատկացեալը , և անոր նախադաս ածականը և ուրիշ՝ անոնց պատշաճեալ բառերը աննախդիր կը մնան . որ „Ըստ ուղղափառ եկեղեցւոյ դաւանութեան“ Ընդհ . „Զինչ պարտ է համարիլ զծուլութեամբ կենաց և զարտաքոյ օրինաց օգուտս“ Ճառընտիր ։

գ ։ Առաւել վայելուչ կըլլայ , թէ որ նախդիրը երկուքին վրայ կրկնես . յատկացուցչին առեւ և յատկացեալին , նախադաս կամ յետադաս ըլլան . որ „Նա փրկեսցէ զքեզ յորոգայթէ որսողին և 'ի բանից 'ի խռովութենէ“ Սաղմ . „Զխաղաղութիւն զիմ տամ ձեզ , զխաղաղութիւն զիմ թողում ձեզ“ Յովհ ։

դ ։ Առաւել ևս վայելուչ կըլլայ ըստ պահանջման հարազատ հայկաբանութեան , թէ որ այսպիսի նախդրով կրկնված յատկացուցիչ և յատկացեալին մէջ բայ ձգվի . որ „Իւր զիմ լուա զոխ-

ն մեղաց , աղաչանօք սրբոյ գնդին , և զգնացս ուղ
ղեա՛լ զոտին խոնարհութեամբ ելեւք յերկին" ճռ .
„'ի ձեռն մեծի պալատանդ ծառայի՝ առ մերս հաս
եալ նուաստութիւն" ըՆտհ :

ե : Երբեմն ոչ միայն բայ մը , այլ բայք և բառք , եւ բազում անգամ ամբողջ խօսք կը մնայ 'ի մէջ յատկացելոյն և յատկացուցչին , որով խրթնանայ շարադրութիւնը . գ ,, Օխրոյ գալստեան և մարդանալոյն 'ի սուրբ յաստուածածին կուսէն , ծըրագրեալ յայտաբերէր մեզ զօրինակն 'ի սէր զը-նէ" յոհ . ճառ :

Այսպիսի հեռաւոր յատկացուցչին և յատկաց-եալին ունեցած անձականաց և այլոց վրայ երբեմն կրկնուի նախդիրը :

զ : Երբեմն կըլնայ ըլլալ որ նախդիրը սովորա-կան կանոնէն դուրս միայն յետադասին վրայ դըր-վի . եթէ յատկացուցիչ ըլլայ յետադասը , և ե-թէ յատկացեալ . ասիկայ սովորաբար հայցակա-նաց մէջ կըլլայ , թէպէտ երբեմն երբեմն ուրիշ հոլովին մէջ ալ կըլլայ . գ ,, Լուեալ էր Նիկա-նովրայ զօրացն դ.քաջութիւն" ճառ . ի զզօրացն քաջութիւն , կամ դ.քաջութիւն զօրաց : ,, Աս-տուծոյ յաչաց ելին" Ներ . ի յաստուծոյ աչաց , կամ յաչաց աստուծոյ :

## Կանոն Դ

ա : Ամէն յատկացուցիչը և յատկացեալը հարկ չէ որ ներգործութեամբ իրարու քով գտնուին . եր-

րեմն յատկացուցիչը , երբեմն յատկացեալը զօրութեամբ կըլլայ :

Բայց զօրութեամբ որը որ ըլլայ , հարկ է ներգործութեամբ գտնուողին զդիմորոշ յօդ մը դնել . առոր պէս յատկացեալը զօրութեամբ եղած ատենը ունեցած նախդիրը յատկացուցչին վրայ դնելու է :

Յատկացուցիչը զօրութեամբ . զի ,, Զորս միանգամ գտանիցէք , կոչեցէք 'ի հարսանիս " Մատթ :

Ո՛ւր զօրութեամբ է յատկացուցիչն , չէ , որոյ փոխանակ դրուած է զդիմորոշս՝ ․ ․ զի ,, Յամենայն գոյից ձերոց տո՛ւք ողորմութիւն կարօտելոց և աղքատաց , զի առնուցուք զփոխարէնն 'ի քրիստոսէ յաւուրն դատաստանի " Ընդհ . այ̃ զփոխարէն ողորմութեան ձերոյ :

Յատկացեալը զօրութեամբ . զի ,, Երթ յետս իմ սատանայ զի ոչ խորհիս դու զաստուծոյն , այլ զմարդկան " Մատթ . ու՛ր զօրութեամբ է յատկացեալն՝ կամքն . իբր թէ ասէր . ոչ խորհիս դու զկամս աստուծոյ , այլ զկամս մարդկան : ,, քանզի նոքա զխնդրեցին , և ոչ զիւրեանցն առին " Փլպ . այ̃ զխնդիրս իւրեանց :

Բ : Ոչ յատկացուցիչը և ոչ յատկացեալը զօրութեամբ կրնայ ըլլալ , եթէ միանգամ առաջուց չէ յիշված ըլլար . բայց եթէ միանգամ խօսքին մէջ յիշված ըլլայ , պէտքը չէ նորէն կրկնել , զօրութեամբ կը գուշակվին . բայց հարկ չէ զօրութեամբ գուշակելին ունեցած նախդիրը ներգործութեամբ

գտնվօղին վրայ դնել հանդերձ դիմորոշ յօդով ․ զօրութեամբ գուշակելի յատկացեալը կըլլայ բազում անգամ , անոր համար յատկացուցչին նախդիրը և դիմորոշ յօդը դնելի է ․ զփ ,, փարատեա զցաւս ․ ֆ ապաքինեա և 'ի բաց մերժեա , որպէս զզոքանչին պետրոսի , և զհարիւրապետի մանկանն , և զկնոջն տեառատեսի , և զբորոտիցն և զայլոցն ամենեցուն " Ճշն. ճաշ. ֆ որպէս զցաւս զոքանչին պետրոսի , և հարիւրապետի մանկանն , ևն ։ ,, Մեկնեցին զջուրն 'ի մկրտութեան խորհուրդ , և զարիւնն 'ի ճաշակման " ընդհ․ ֆ , մեկնեցին զջուրըն 'ի մկրտութիւն խորհուրդ , և զարիւնն 'ի ճաշակման խորհուրդ , կամ 'ի խորհուրդ ճաշակման ։

գ ։ Երբեմն ածականը յատկացուցչի ձևով կը դրուի ․ զփ ,, Որով զգեցաւ զմարմին մեղաց " ընդհ․ ֆ զմարմին մեղանչական ։

## Յօդուած Ի

### Համաձայնութիւն անուան ընդ անուան իբրև բացայայտիչ և բացայայտեալ ։

Այն ամէն բառը՝ որ յայտնի չէ ի՞նչ , ո՞վ , կամ ո՞ր բանը ըլլալը , հարկաւ կը պահանջէ քովը անանկ բառ մը որ զինքը ցնէ և յայտնէ ․ պարզապէս ըսել ․ առաջին մասին մէջ աղէկ սորվեցար գոյական անուանց բաժանման մէջ ․ եթէ կան գոյականք որ մեզի յայտնի են , բայց յայտնագոյն են ․ այսպիսի գոյականաց ծանօթ քանիք , և

գոյականք որ յայտնագոյն են , անոնց ծանօթագոյն ըսինք . ինչպէս՝ ծառը՝ լեառը՝ քաղաքը՝ թագաւորը ևն . ծանօթ են մեզի . բայց ծանօթագոյն չեն . ինչու որ չենք գիտեր ինչի ծառը, ո՞ր լեռը , ո՞ր քաղաքը , ո՞ր թագաւորը ըլլալը , Իսկ նշենի՝ մասիս՝ վառնա՝ խոսրով ևն . ծանօթագոյն են , ինչու որ գիտենք նշենին՝ մասիս՝ վառնա՝ ինչ ըլլալը . ահա ծանօթագոյն գոյականքըն բացայայտեալ , և ծանօթագոյնքն՝ բացայայտիչ . ինչպէս քաղաքն Դիոնէսիուպօլիս . արքայն տրդատ , ևն . գր ,, Մարգարէն յովնան առաքեցաւ 'ի քաղաքն նինուէ " ճառ. ընտիր .

Ահա մարգարէն բացայայտեալ , և յոնանը բացայայտիչ . որովհետև մարգարէն ինքիրեն բացորոշաբար ծանուցեալ չէ մեզի , չենք գիտեր որ մարգարէն ըլլալը , յովնանը որոշաբար կը ցցնէ , թէ չէ ամբակումը , միքիայն , ևն . անոր պէս նինուէն որոշաբար կը յայտնէ քաղաքը , եթէ չէ անտիոքը , մաժակը ևն ։

,, Աստուածածնին սուրբ կոյս անհարսնացեալ մարիամ ." շար . ,, Կոչէր առ ինքն թագաւորն վռամ զսուրէն պալհաւն զիւր զհազարապետն " շառ. փաւ ։ ,, Եկին ամենայն ժողովուրդ որդւոցն իսրայէլի յանապատն 'ի սին " ելից ։

Գիտելի է . բացայայտեալը և բացայայտիչը ըսինք ծանօթ և ծանօթագոյն գոյականքն են . բայց շատ անգամ ծանօթ գոյականք միմ-

...անց բացայայտիչ կը լլան . որ „ Մուաքեցեր գեր-
...կարըս քոյ՝ սուրբ զմարգարէսն “ շար . աՀա եր-
...կարն՝ բացայայտեալ , մարգարէն բացայայտիչ .
...Թէպէտ երկուքեան ծանօթագոյն են , եւ ծանօ-
...թագոյն չեն . „ Եւ ծուխ խնկոց՝ աղօթք սրբոյն “
...այք :

### Կանոն Գ.

... : Բացայայտիչը՝ պէտք է ըստ բնական պաՀ-
...անջման բանի , զկնի բացայայտելի անուան դրուիլ .
...որ „ Պաշտպան ամենայնի քրիստոս՝ աջ քո Հովա-
...նի , լեցի ՚ի վերայ իմ “ շնորՀ . Գինի վարեցաւ եղ-
...այր իւր զովա “ Ծննդոց :

... Նմա Համարձակ ազատութիւն է երբեմն բացայ-
...այտիչը նախադասել . որ „ Մարիամ կոյս անարատ
...րանապական փեսայդ աղաչեմ “ շար . „ Ու՛ր է
...արբա կին քո “ Ծննդոց :

... : Բացայայտիչը՝ բացայայտեալին մեկնիչն է ,
...պէտք է մեջերնին մեկնական շաղկապ մի ունենան ,
...զօրութեամբ կամ ներգործութեամբ :

Զօրութեամբ . որ „ ՚Ի ժամանակս . . . արքայ-
...ութեան սոցա երկոցունց՝ վասն եւ կոստանդեայ “
...տակոբ . Ուր զօրութեամբ ՚ի մէջ բացայայտիչին եւ
բացայայտեալին մեկնական շաղկապ մը պարուն-
ակված է . իբր թէ ասէր . ՚ի ժամանակս . . . ար-
քայութեան սոցա երկոցունց՝ որ վասն եւ կոստան-
դեայ : „ Երեք են՝ որք պարծ շրջին . . . ( որ ) կոր
իւն . . . աքաղաղ . . . եւ նոխազ “ առակ :

՝Ներգործութեամբ . ոպ ,, Երկրին կուր մնասակալ թռչնոց . այս է՝ այսոցն օդայնոց " Նաւբէլ . ,, Ընդ պատուհանսն՝ որ ընդ մարգարէիցն հոյլոն այսքան անտրժելի էր քո ձայնդ " Մեկն . Երգ :

## Կանոն Ի

ա : Զարկ չէ բացայայտիչը նախադաս՝ կամ յետադաս , իրեն բացայայտեալին քովը գտնուիլ , երբեմն իրարմէ՝ կը հեռանան . ոպ ,, Ի հին զէնն ընթացաւ՝ ի կինն " Յոբ . ,, Զմեծզաղանս հնազանդէ մեզ , զոր օրինակ զփիղս զուղտս , զառիւծս " Եղնիկ :

բ : Զարկ չէ բացայայտիչը և բացայայտեալը միմէկ բառ ըլլան , երբեմն բացայայտիչը՝ երբեմն բացայայտեալը , երբեմն երկուքնալ շատ կըլլան :

Բացայայտիչը շատ . ոպ ,, Զանձաւելիսն կամեցեալ պատմել սողովմնի՝ ի մարմնաւոր կրս աւակեաց . որ՝ ի փեսայ և՝ ի հարսն՝ , յեղբօր որդի և յօրիորդ , ՝ի զուստր և յաղաւնի , ՝ի սոխնս և՝ ի տաշխըն " Մեկն . Երգ :

Բացայայտեալն՝ շատ . ոպ ,, Իսկ անօթն ընտրութեան՝ և խորհրդածուն խորոցն աստուծոյ՝ և առաքելական աւանդիցն քարոզ մեծն վրթանէս ըսեալ զնէս կենաց փոխի յաշխարհէ " յաճ . կոն :

Երկոքեանն շատ . ոպ ,, Դրախտ աստուածային և արեւելք իմանալի , մարիամ հրաշագեղ ծնեալ ՝ի յաննայէ " շար :

գ : Երբեմն ամբողջ կատարեալ խօսք մը բացայ-

այտիչ կըլլայ միոյ բառի . վբ „ Այսօր լցաւ խոս
տումն աստուծոյ առ նահապետսն՝ 'ի զաւակէ նո-
ցին օրհնիլ ամենայն ազանց " Հռմ :
Նաև երբեմն կատարեալ խօսք մը բացայայտիչ միւ-
ոյ կատարեալ խօսքի . վբ „ զմեծն եւ աստուած
զփո՛քրն արգելու . զմարմինն ստեղծ , և զհոգին
եա . և որ ինչ պիտանացուք են հոգւոյն և մարմ-
նոյն՝ ո՛չ տացէ " ուղձ :

Կանոն գ.

ա : Բացայայտիչը իւրեն բացայայտեալին հետ
պէտք է միշտ համաձայն գտնուիլ թուով և հոլով-
ով . վբ „ Աւաքեցեր զծառայս քո՝ սուրբ զաւա-
կալսն " Հռմ . „ Եկին 'ի քաղաքն 'ի մովզուեմ , զե
անդ զոհս մատուսցեն " Տակէ :
բ : Իրարու թուով անհամաձայն կը գտնուին թէ
բացայայտիչը ըլլայ , և թէ բացայայտեալը , եր-
բոր անոնց մէկը աննդական է . վբ „ ազգի մարդ-
կան պարծանք՝ սուրբդ մատթէոս " Հռմ . „ յամե-
նայն արտաքոյ . . . 'ի մախանաց , եօ " Խորհրդ :
գ : Հաւաքականօրէն թուով անհամաձայն կը գտ-
նուին իրարու բացայայտիչը և բացայայտեալը , եր-
բոր մէկը մէկալէն շատ ըլլայ . վբ „ Ամենայն ար-
դարոցն առաջնոց՝ նոյի , աբրահամու , իսահակ-
այ , յակոբայ , յովբայ , մովսէսի , ահարոնի , և
յեսուայ " Ընդհ :
Թէպէտ երբեմն կը համաձայնին , բայց խիստ քիչ
անգամ . աւանիկ բացայայտեալը համաձայն բազմա-

նշանակ բացայայտիչին . որ ,, Նստաւ 'յաթոռ որ-
բոյ առաքելոյն բարդողիմէոսի և Թադէոսի " յայս.
նմն . այս սրբոյ՝ առաքելոյն ։

դ ։ Երբեմն խրատու թուով միանգամայն և հո-
լովով անհամաձայն կը գտնուի թէ բացայայտիչը և
թէ բացայայտեալը . որ ,, Սնգասիրացն անձինք՝
որ 'ի պատուական և 'ի հաստատուն նիւթոյս յայս-
ցանէ շինին զշինուածս խորանոյ , այլ 'յանարգաց
և 'ի դիւրավատնելեաց . այս՝ փայտ , խոտ , եղէգն"
ընդհ . ,, Ունէին իւրաքանչիւր զբուրվառ ոսկի լի
խընկով , որ է աղօթք սրբոյն" յայտ ։

## Կանոն Դ.

ա ։ Յատուկ անուններն այս համաձայնութեան
մէջ տարբերութիւն ունին , ինչու որ երբեմն հա-
մաձայն , երբեմն անհամաձայն վարելով , նախա-
դաս կամ յետադաս ըլլալով , անոնց տեղեկու-
թիւնը այս չորրորդ կանոնին մէջ կաւանդվին ։
Տեղւոյ յատուկ անունները . ինչպէս են գետոց ,
աշխարաց , լերանց , քաղաքաց , ծովու են , նախ-
ադաս եղած ատեններն առաւել անհամաձայնու-
թեամբ վարելով միշտ ուղղական կը դնին . որ ,,
Սուրբն Մեսրովբ փոխի 'ի կենաց աստի 'ի Վաղար-
շապատ քաղաքի" յայս. նմն . ,, Գնումարեաց ու
ինքն զհաստմութիւն զօրաց իւրոց՝ առ ափն ովկի-
անոս ահագին ծովու" ագաթ ։

բ ։ Իսկ մարդոյ յատուկ անունները՝ ընդ հակ-
առակն, տեղւոյ յատուկ անուանց՝ նախադաս ըլ-

լինին՝ վայելուչ կը համաձայնին · զի „ Առաքէ ըզ նիւսէս զորդին աթանագինեայ, որդւոյ յուսկանն " յոհն · խոր · „ Օքեղ երևեալ դուռն առ եղեկիե-լիւ մարգարէիւ " շար :

Բայց երբեմն անհամաձայն · զի „ Եւ հրաման յօ-գոստոս կայսերէ " ղուկ :

գ : Տեղւոյ և մարդոյ յատուկ անուններն եթէ յետադաս ըլլան, երբեմն համաձայնին, երբեմն ոչ․ համաձայն · զի „ Եւ եած զնոսա յանապատն ՚ի սուր " եկեղ · „ Թագաւորեցուցանել հայաստան եայց զխոսրով փոխանակ հօր իւրոյ տրդատայ " յոհն · խոր :

Անհամաձայն · զի „ Այս են ծնունդք եսաւայ հօ-րըն եդոմայեցւոց ՚ի լերինն սէիր " ծննդ · " Անդա-նէր ընդ մեծ գետն կուր անուն " յոհն · խոր :

Մարդոյ յատուկ անունը միայն անուն բառով ըծակցեալ ըլլայ նէ, անհամաձայն պիտի ըլլայ :

դ : Տեղւոյ յատուկ անունները յետադաս եղած ատենը անհամաձայն կը գտնըլին սեռական հոլո-վով դրվելով իբրև յատկացուցիչ բացայայտեալին · զի „ Շնորհաբաշխ աջոյն քրիստոսի պատուեցաւ լեառն սեպուհոյ " շար · ոչ լեառն սեպուհ : „ Պատուիրեաց տէր մովսէսի ՚ի լերինն սինայ " ղևտ · ոչ ՚ի սինայ լերին :

Կանոն Ն

ա : Բացայայտիչին և բացայայտեալին համաձայ-նութիւնը աղէկ միտքդ պահելու համար նախդիր

դնելու կանոնները լաւ սորվէ, գիտցիր որ սովորաբար նախդիրը նախադասին վրայ դնելու է. թէ բացայայտիչը և թէ բացայայտեալը ըլլայ նախադաս. օր. „զԹագաւորն Քրիստոս օրհնութեամբ երգով բարեբանեցէք" շար. „Զքրիստոս Թագաւորն քաղցրաձայն երգով օրհնեցէք" շար.:

բ. Ըլլայ երբեմն որ նախդիրը յետադասին վրայ կը կրկնեն. օր. „Առաքէին առ ինքեանս զիշխանն մոկաց զարտակ" ղազ. փար.: „Նա եկն 'ի լեառն աստուծոյ 'ի Քորեբ" Ելից:

գ. Իսկ երբեմն ոչ միայն նախադասին, և յետադասին վրայ կը դնեն նախդիրը, այլ ածականներուն և ուրիշ իրենց պաշտաձնեալ բառերուն. Իսկ ընտիր շարադրութեանց՝ մէջ ընդ դէմ վերոյ գրեալ կանոնաց նախդիրը յետադասին վրայ կը դնեն. օր. „Քաղցր ասկեզանիս 'ի վերայ դնէ՝ զլոյս Թողութեանն" առքէ:

Կանոն Ջ.

ա. Բացայայտիչը՝ շատ անգամ ընկերային կիմացվի. օր. „Զանապական բողբոջն (զբանն ած) յաստուածային դրախտէ յորովայն քո անկեալ եղինեցեր յարմատոյն յեսեայ ծաղիկ վայելուչ (կոյսըդ մարիամ)" շար. „Յարփւոյն լուսոյ ծագումն լոյս աշխարհի, որով գտեալ զպատկերն խուական (զմարդն) զոր վերստին նորոգեաց յառաջին կերպարան" շար.:

Այս ոճին ճարտասանք այլաբանութիւն կըսեն,

որովհետեւ վերոյ գրեալ օրինակաց՝ որոնց բացայայտիչը լռելեայն ըսինք, ամէն բառը այլ իմն բառի տեղ դրուած են :

բ . Առխանել սովորական խօսքերուն մէջ, մանաւանդ թէոր քանի մը անգամ կրկնուած ըլլայ բացայայտեալը՝ նէ՝ աւելորդ կըսեպուի բացայայտիչին հետ դոյդ խօսել, անոր համար շատ անգամ բացայայտիչը մինակ կըգրուի առանց բացայայտեալոյն . զի „ որ յեղխպատս միշտ ունիս զորդին գլարձ „ ՆԱՐԷԿ . ուր բացայայտեալն չէ գրուած, որ է բառդ քաղաքիս. վասն զի եղխպատս յայտնի է որ մէկ քաղաքն ՚նէ : „ որ զմովսէս ըսքանչելին ... սնուցեր ՚ի տան փարաւոնին „ ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ . զմարգարէն մովսէս . արքային փարաւոնի : Բայց ուր սովորական չէ, և կրկնուած չըլլայ նոյն անսովորն, անհնար է առանց բացայայտելի անուան գրել. վասն զի հարկէ հոն բացայայտելի անունը դնել . ինչպես ՅՈՎՀ . ԺԲ . կըդնէ „ և զորդին նորայ դչէր ՚ի վերայ բազնոյն ընփայտէ կախէր „ . եթէ դնէր միայն դչէրն, տարտամերժմտքն թէ վասն որոյ աւէ դչէրն . բայց թէպէտ բացայայտիչն ծանօթագոյն է, իսկ բացայայտելի անունն ստանկններուն քովը դնել հարկ է :

գ . Ամէն գոյական ուրիշ գոյականի համաձայն հոլովով կամ թուով դանելով բացայայտիչ չըսեա. կըլլայ որ կրպոր բացայայտող չէն, բայց ինդիր են :

## Յօդուած Բ

### Համաձայնութիւն անուան ընդ անուան իբրև ածական և գոյական

Ածականը՝ իրի մը ինչպէս ըլլալը, գոյականը՝ իրիմը ինչ ըլլալը ցուցընելուն համար, խօսքի մէջ միատեղ կը բանեցուին. թէպէտ երբեմն գոյականը, երբեմն ածականը մինակ կը վարուի. զօրութեամբ իմացնելով գոյականը իրեն ածականը, և ածականը՝ իրեն գոյականը. բայց երբոր իրեն գոյականին հետ վարուի, այն ատենը անոր հետ երբեմն պիտի համաձայնի, երբեմն ոչ. երբեմն իրարու մօտ պիտի ըլլան, երբեմն ոչ. անոր համար պէտք է հետադայ կանոնները լաւ միտքդ առնուս:

### Կանոն Ա.

ա. Ածականը՝ երբոր իր գոյականէն նախադաս գտնուի, սովորաբար չի համաձայնիր ոչ թուով և ոչ հոլովով. զօ „ Աստուածահաճոյ վարուք և բարեպաշտ հաւատով երջանիկ արքային Հռովմայ վախճանէր „ յովհ. կթղ: Հոս ածականքս՝ աստուածահաճոյ և բարեպաշտ, ամենևին համաձայն չեն իրենց գոյականաց, վարուք և հաւատովքին, նախադաս ըլլալուն համար. որպիսի են և օրինակքս: „ Եթէ վասն մահու անձնական ցաւոյ զոք պաշարեսցէ " Նարեկ: „ Երևել նշան տէրունական խաչին բոցանիշ փայլմամբ „ Շար:

բ. Իսկ եթէ յանգեալ ըլլան նախադաս ածականները այս վերջաւորութիւնով, կան, ային, աւոր, ին,

եղէն , նա՛ , վայելուչ կըհամաձայնին , մանաւանդ դիմորոշ յօդ մը դնես վրանին , զի ,, Ընդ որս և եկամուտ սատանչականացն ախտից գիւտք ,, Նարեկ : ,, 'Ի բաց տարեալ միանգամայն 'ի մարդկայնոցս դիտութեանց զայգ հաւատոյն ,, յոհ . կաթ : ,, Զանտանելին երկնից և հրեղինացն դասուց 'ի քո ընկալար մաքրական յորովայնի ,, Շնոր :

Բայց երբեմն անհամաձայն կը մնան ըստ վերոյ գրեալ կանոնաց . զի ,, Շրջաբերական թղթովք ժողովեալ զամենայն հերձուածողս " յոհ . կաթ : Նշզկամն կարգաց նորուն ուղղութեան երկնաւոր հրամանացն՝ ամենայն ուրեք առաջի դնելով " Ագ :

դ : Միավանկ և երկավանկ ածականները նախադաս ըլլաննէ , վայելուչ կը համաձայնին , զի ,, Տեղի տուեալ մեծաւ դողութեամբ " Նարեկ . ,, զենի շարադրեցից սակաւուք ինչ բանիւք " յոհ . կաթ :

Բայց երբեմն չեն համաձայնիր . զի ,, 'Ի չար խորհրդոց 'ի բանից և 'ի գործոց փրկեա զիս " Շնոր . ,, Ընդ միասն թաղծեալ և բաղում սատարուօք լցեալ " Ոսկեբ :

ե : Նոյնց համանման է այն՝ որ ներկայ և անցեալ ընդունելութիւնները նախադաս եղած ատենին կը համաձայնին . զի ,, Զխոցողացն զենուորութեանց դատախաղեցից " Նարեկ . Խոցուածս անյայտս 'իկործանեցելոցն դաշճաց ընկալայ " Նարեկ :

Բայց կըլլայ որ երբեմն չեն համաձայնիր . զի ,,

'Ի մէջ ընդոստուցեալ ալեացն՝ որք ընդ դէմ գառ-
նան մրրկածին օդովքս " Ագաթ :

ե ։ Նախադաս ածականները կը համաձայնին եր-
բոր գոյականէն կը հեռանան . զբ ,, Մարմնականաց
և անձնականաց ամենակիր բազմածուփ խորհրդոց
" Նալեէ ։

Բայց գիտելի է , որ նախադաս ածականներուն
համաձայնութիւնը՝ թէ որ յոգնական ըլլան նէ՝
վերջահոլովներուն մէջ կը լլայ , նախդրիւներուն
մէջ չըլլար . ինչու որ չըսուիր զմարդկայինս գործս,
'ի մարմնաւորս իրս , եւ . միայն թէ երբոր միջան-
կեալ բայ մը , կամ բառ մը ունենայ . զբ ,, Զա-
ատապարտեալ վերընկալեալ զփառս " Շնոր . ,, Ի-
հանդերձեալն ժամանեացուք հասանիլ 'ի կեանս "
Խորէն :

դ ։ Ածականաց համար աւանդեալ կանոնները
նախդրիւ և վերջահոլով գոյականաց համաձայնու-
թեան համար իմանալի է , երբոր երկու թիւն ալ
կրնան ունենալ . ոլովհետեւ գոյականը նախդրիւ
կամ վերջահոլով ըլլայ , նախադաս ածականը մի-
ջանկեալ բառով ազատ է համաձայնելու և չի հա-
մաձայնելու . իսկ եթէ յետադաս գոյականը անեզ-
ական ըլլայ , նախադաս ածականը հոլովով միայն
կը համաձայնի . զբ ,, Աստուածային կամքն հակ-
առակ լինիլ մարդկայնոցն կամաց " Շնորհ ։

Կանոն Գ.

ա ։ Նախադաս ածականները իրենց գոյականաց

չեն համաձայն ըլլան թէ ոչ, դոյականաց նախդիրը հարկաւ՝ իրենց պիտի՛ առնեն. օր. „Աշխատեցէք ըստ կխասհագագ և խեցրեկոր ըղուի նոցա" յոհ. չա. „Իւրեւ փղշտպեան յանհնարին մոլորութիւն զգաղանն վառեալ պատրաստէր" ճաչ. :

Թէ և մէջերնին բայ մնայ, հարկ է նախդիրը նախադաս ածականին վրայ դնել. օր. „Օ քաղցր և զանսովորն ռնկեաց 'ի նմա լոյսն ողջ" :

Երբեմն նախադաս ածականին և յետադաս գոյականին վրայ օրէն է նախդիրը կրկնել. օր. „Աշխերով յասուրբ զքառասունս յանձնա 'ի փառսն, և յանպատում 'ի կեանսն" շար.:

Յայլսեքս՝ թէ որ իրարմէ հեռանան, զեղչելի կը լլան. օր. „Օ յաւիտենական անձին աւպհական նաց զկենդանութիւն" ճաշ. :

բ : Խիստ քիչ անգամ միայն յետադաս գոյականին վրայ կը մնայ նախդիրը. օր. „Օ արդարեալ զեղապանձ վայելչութեամբ սուրբ եկեղեցի" շար. „Լուսաշաւիղ յերկինս ելին" շար. որ 'ի լուսաշաւիղ երկինս :

գ : Թէ որ նախադաս ածականները և շաղկապաւ կամ առանց շաղկապի են կարգեալք առ մի գոյական, անոր նախդիրը միայն առաջնոյն վրայ կը դրուի, կամ ամէնուն վրայ կը կրկնուի. օր. „Առաջնորդէր բազմութիւն զօրացն ընդ անջրդի՝ ապառաժ՝ մացառուտ՝ քարաժայռ՝ անպտղոտայ՝ ափափայ և անել առապարս" յոհէ. կա. :

„Տեսանելով զահաւոր, զահագին՝ և զհրաշալի ծնունդ“ ղուկ։

Երբեմն նախադաս ածականներուն վրայ դնելէն զատ՝ գոյականն ալ նախդրով կը մնայ. ինչ „Իրազունս և ՚ի զանազանս բաժանեն յանուանս և յիրս“ ընդհ. „Զլուսափիւռ՝ զպայծառապերճ և զճառագայթաւէտ զհաւասար առաքելաւանդս ծաղկեցուցաններ“ յաղձ. նար։

դ ։ Իսկ թէ որ յետադաս գոյականները մէկէն աւելի է նէ՝ այն ատենը պէտք է առջի գոյականին նախդիրը նախադաս ածականին վրայ անցընել. ինչ „Մեք իբրև ՚ի կամաւոր բանդէ և ՚ի կապանաց . . . արձակեաք“ ընդհ։

Բայց երբեմն ոչ միայն առջին գոյականը, այլ և երկրորդ գոյականը աննախդիր կը մնայ. ինչ „Յամենայն ազգաց և լեզուաց . . . կմի եկեղեցի շինեցաւ“ տօնակ։

Ընդ հակառակն երբեմն ոչ միայն նախադաս ածականին, այլ առջի և երկրորդ գոյականին վրայ նախդիրը կը դնի. ինչ „Ըստ զհովուեր զանարատ մեր և զվարդապետս տանից“ ղուկ. փառ։

Կանոն գ.

ա ։ Թէ որ ածականը յետադաս ըլլայ, պէտք է նախադաս գոյականին հոլովը և թիւը ունենայ. ինչ „Հացիւք երկնայնով ջամբեցեր“ նարեկ. ահա յետադաս ածականն՝ երկնային, թուով և հոլովով համաձայն է իւր գոյականին հետ, որ է բա-

ուըս՝ հացիւ : „Ապրեցո՛ զիս 'ի մարդոյ չարէ . յառնա անիրաւէ փրկեա՛ զիս" սաղմոս . „Հրաման հանէր ամենայն զօրաց իւրոց հետևաց" մակք :

բ : Յետադաս ածականը հարկ չէ որ մէկ կամ երկու ըլլայ որ համաձայնին . շատ ալ ըլլայ կը համաձայնի . զի „Իբրև արանց աւելի քան չորս հազարաց՝ սուսերամերկաց՝ վահանաւորաց՝ նիզակաւորաց՝ վաղակաւորաց" յոհ. կաթ. :

Բայց երբեմն հոլովով և թուով նախադասին ալ չէ բնաւ չի համաձայնիր . զի „Մխիթարեցան 'ի բանից անտի յուդայ, 'ի զօրեղ և 'ի գեղեցիկ" մակք : „Ձայնիւ մաղթէր աղօթական" ընծր :

գ : Ածականները՝ թէ որ , ուն , եայ , եան , ևն . վերջաւորին . յետադաս ըլլան ալ նէ չեն համաձայնիր . այլ ուղղական կը մնան . Ու գտեալ անդ գունդ բազում 'ի զօրացն արքունի" եղիշէ . „Քարինս արձակեցէք պարսիւս այսու փայտեայ" Նարէկ :

Բայց երբեմն կը համաձայնին . զի „Նախ քան ըզմեղ շապհոյ բագրատունւոյ" յոհ. կաթ. :

Այսպէս և անցեալ ընդունելութիւնը յետադաս ըլլալով երբեմն կը համաձայնի , և երբեմն չի համաձայնիր . զի „Ի վերայ ծովուն մկանանց ջուրցն ալեաց կուտակեալ" ագաթ . „Որ վճռեալն կնքելով յարեաւ , և գրոցն փակելովք ևմուտ առ աշակերտսն" շնոր . ուր առջի օրինակին ընդունելութիւնը չի համաձայնիր :

Երբեմն յետադաս ընդունելութիւնն կերևայ հօլովով համաձայնեալ միայն , և ոչ թուով . զի „Ընչնարին խռովութեանցն հասելոյ կալելոյ ըզմեզ“ յոհն . չար :

դ : Կոսն ուրեք յետադաս ածականները չեն համաձայնելէն զատ իրենց գոյականաց հոլովը կը մանան , և իրենց գոյականը կըլլայ սեռական իբրև իրենց յատկացուցիչ . զի „Ազգակցաւ մարմնոյդ ռելոյ 'ի մէնջ“ Նարեկ . ուր ազգակիցը ածական է գոյական անուան՝ մարմնոյդ . որն որ իբրև սեռական դրված է իր ածականին . փոխանակ ասելոյ ազգակից մարմնով : „Արդելական կուսանաց“ Շնորհ . յ՛ արդելական կուսանք :

ե : Երբեմն իր գոյականին հոլովին ամենևին չի նայելով , ինքը սեռական կը դրվի իբրև յատկացուցիչ իւր գոյականին . զի „Հոյլք հոգեղինաց . զինուորութիւնք վերնականաց . վառապանծօքն անմահից“ Նարեկ . յ՛ հոյլք հոգեղէնք . զինուորութիւնք վերնականք , ևն :

Յետադաս ընդունելութիւնը այս ոճին շատ հակամիտեալ է :

զ : Այսպիսի ոճերուն մէջ շատ անգամ ածականը վերացեալ փոխվելով սեռական հոլովով իբրև յատկացուցիչ կը դրվի իւր գոյականին . բայց չէ յատկացուցիչ , որովհետև ածականի մօտք դրված է . զի „Որ ընդ հօ . քում պաշտես ձայնիւ

քաղցրութեան “ Նաւէլ · յդ քաղցր ձայնիւ :
Երբեմն ոչ միայն վերացեալ գոյականի կը փոխէ այլ և բուն գոյականքն և նախադրութիւնք միանգամայն ածականի մօք գրած կըլլան · օր „ Առաջի աստուծոյ հոգւոյն աղուտականութիւնն պահանջի , և ոչ եթէ 'ի մարդկանէ գիտութիւնն “ Յաչէն · յդ մարդկային գիտութիւնն : „ Օգտուշաւոր և առանց խռովութեան կեցցուք “ Յաչէն · յդ զգուշաւոր և անխռով կենօք կեցցուք :

## Կանոն Դ·

ա : Ինչպէս նախադաս ածականին վրայ անցանելու բաներ նախդիրը · սոր պէս սովորական կանոնով նախադաս գոյականին վրայ մնալու է նախդիրը , յետադաս ածականը առանց նախդիրի ձգելով · օր „ Ամ արձակեալ համարձակեցոյց զնեգուս նիւթեղէնս կոչել հայր զաստուած , որ նրատի՛ 'ի կառս հրեղէնս “ Ճառք :

բ : Նախդիր դնելու կանոնը բոլորովին յառաջ-աւանդեալ կանոնաց պէս է · Ինչու որ նախդիրը երբեմն ոչ միայն նախադաս գոյականին վրայ մինակ կը դնի , այլ յետադաս ածականին վրայ ևս կը կրկնուի · օր „ Իւ զիւղն զանոյշ զեղոյր “ Յաչէն : Կայնելու կըլլայ թէ որ այսպիսեաց մէջ ուրիշ մասն բանի մտնայ · օր „ Ըստ զախտոն ունիցին զառաքելական „ Ընդհ · „ Իւ զայլու ձին ևս զոր քունին թեթևացոյց “ Եղիշէ :

Գ : Հայցական հոլովներուն մէջ ընդդէմ վերոյ գրեալ կանոնի , երբեմն նախդիրը յետադաս ածականին վրայ կանցնի . օր ,, Խնդրեսցես յապարանսն յուդայ , սօղօս անուն զտարսոնացի " Գործոց . թ զսօղօս անուն տարսոնացին :

Շատ անգամ յետադաս ածականը՝ անորոշ հայցականի , կամ աննախդիր տրականի պէս կը դնի . որ իրեն դիմականէն ճանչնալու է . օր ,, Կուրացուցանէ զաչս մտաց քաջատեսիկս " Ոսկեբ . թ ըզ-քաջատեսիկս :

Դ : Թէ որ յետադաս ածականները շատ ըլլան , երբեմն նախադաս ածականին վրայ միայն , երբեմն երկրորդ ածականին վրայ , երբեմն ամէնուն վրայ կը դնի նախդիրը . օր ,, Թագաւորեցուցանէ հայաստանեայց զվաղարշակ եղբայր իւր՝ զայր բարեխորհուրդ և խոհեմ և քաջ " Յոհն . Կթղ . ,, Իմաստունս յորդունս և ՚ի զանազանակս հաւատալ " Նարեկ . Զմեծ մասն զլեռն և զդաշտանին և զարդարանոյն աշխարհին հայոց ունել ՚ի բաժին՝ արքային պարսից " Ղազար . Փար :

Ե : Նախադաս դիմականը անեղական ըլլայնէ , յետադաս ածականը հոլովով միայն կը համաձայնի . օր ,, Երէական մեզ վտարանդի լինել անթողելոյն և անբժշկելոյն ,, Յոհն . Կթղ . ,, Առաջին կամք եղեն մարդոյն՝ արտաքոյ հրամանացն բարւոյ " Սարգիս :

Ընդ հակառակն՝ եզակի գոյականին յոգնակի ա-
ծական . զի „ Սաւուղ և յովնաթան՝ սիրելիք և
գեղեցիկք և վայելուչք “ Բ . Թագ :

Կանոն Ե

ա : Երբոր գոյականները նախադաս իրենց ածա-
կան առած են հաւաքական , թուական , և այլ
նշանակած բանը շատ ցուցընող ածական անուն-
ներ , այնպիսի եզակի գոյականաց՝ ուրիշ ածականը
յոգնակի կը դնի · զի „ Սատակեսցի ամենայն մարդ-
դիմակացք թագաւորի “ Յուդ . „ Եւ ընդ իւր եօ-
թըն հարիւր այր սուսերամերկս “ Յուդ :
Նոյնպէս և հաւաքական անուանց յարեալ ածա-
կանը . զի „ Ամենայն ժողովրդեան ելեալ յեգիպ-
տոսէ „ յես— :
Նոյնպէս է և բաղդատականը՝ երբոր ածական կըլլայ
գոյականի մը , առաւել անհամաձայնութեամբ կը
վարի եզակի գոյականին՝ յոգնակի , յոգնակի գո-
յականին՝ եզակի յարելով . զի „ Ոչ տայ թոյլ ի-
բարձրագոյնսն քան զմեզ համարձակիլ ձեռնար-
կութիւն “ Ընդհ :
բ : Իսկ թէ որ հանրական և թուական անուն-
ները ածական ըլլան , նախադաս կամ յետադաս .
երբեմն յոգնակի գոյականին՝ եզակի , եզակի գո-
յականին՝ յոգնակի կը դնին . և երբեմն համաձայն .
զի „ Պատճառ բարեաց ամենայնի “ Նարէկ . Ա-
ամբք վեց հազարաւ “ Յուդ . „ Բազմօք անգու-
գական հրաշակերտութեամբ “ Նարէկ . „ Զօրիւք

հազարօք հեծելազօր գնդաւ " ճանք :

Ու՛ր գոյականքն՝ բարեաց և արամբք յոգնակի . իսկ ածականքն՝ ամենայնի և մեց հազարաւ եզակի . ընդ հակառակն . գոյականքն՝ հրաշակերտուք և գնդաւ եզակի . իսկ ածականքն՝ բազմօք և չորիւք յոգնակի . և օրինակքս համաձայն . գր Ամենից կուսից խկուհի " Նարեկ . " Մ՛ին 'ի յերկոտասանից ընտրելոց " յովհ . ոսկ :

Երբեմն սակ ածականները վերոյ գրեալ անհամաձայնութեան մէջ կը գտնուին . եզակի գոյականին՝ յոգնակի . յոգնակի գոյականին՝ եզակի ըլլալով . գր " Արամբ կորովեօք յաղեղն և 'ի սուսեր " յովհ . ոսկ : " Ի յիշատակի քահանայապետացս ածայնոյ " շար : Ուր գոյականքն՝ արամբ և քահանայապետացս , մինն եզակի . առեալ է զյոգնակի ածականն՝ կորովեօք . և միւսն յոգնակի՝ առեալ է ածական եզակի՝ աստուածայնոյ : " Այր և կին միաբան խնդալեցք " շար . ճառ :

Կանոն ջ.

ա : Նախադաս կամ յետադաս ածականաց գոյականներին շատ անգամ զօրութեամբ ըլլալով վրանին դիմորոշ յօդ մը կառնեն , և իրենց գոյականաց թիւը և հոլովը փարելով բոլորովին անոնց տեղը կը բռնեցվին . գր " Զգեցաք զպատկեր հողեղէնին , զգեցցուք և զպատկեր երկնաւորին " կորնթ . " Զի բազում առատութիւն յերկրաւորըս ցուցանեմք " ճառք . Ու՛ր ածականացն՝ հող-

եղենին և երկրաւորին , զօրութեամբ ունենալով իրենց գոյականը , որք են մարդ և բարութիւն՝, անոնց պաշտօնը վարերին . իբր թէ ասէր . զգեցաք զպատկեր հողեղէն մարդոյն եւն . զի բազում առատութիւն յերկրաւոր բարութիւնս ցուցանեմք :

բ : Ածականը առանց գոյականի վարել մեծ ըզգուշութիւն պէտք է . ինչու որ ածականին գոյականը՝ եթէ միանգամ յիշուած չըլլայ , անհնար է միայնակ դնել . անոր համար միանգամ յիշուած գոյականին ածականը կրնաս միայնակ վարել երկրորդ անգամին . որ „ Առաջին մարդն յերկրէ՝ հողեղէն . նոյնպէս հողեղէնքս . և որպէս երկնաւորն՝ նոյնպէս և երկնաւորքն “ Կորնթ :

գ : Ընտիր շարադրութեան մէջ երբեմն գոյականը իբրև ածական կը վարի . և այս ոճը ընտիր է շարադրութեան մէջ . ինչպէս , մանկական ընկերաց ըսելու տեղ՝ մանուկ ընկերաց կըսէ . կուսական գերեզմանին՝ կոյս գերեզման , եւն . որ „ փառք զի մանուկ հասակս . . . սպասաւորեմ շնորհաց սուրբ հոգւոյն ,, Լամբ . որ մանկական հասակս :

# ԳԼՈՒԽ Ի.

## Անունը բային հետ համաձայնուիլը

Անունը բային հետ կը համաձայնի՝ երբոր տէր բայի և կամ խնդիր՝ բայի ըլլայ . նոյն է ըսել . բայը՝ անունին հետ , դերանունին , ընդունելութեան , աներևոյթին , և այլոց հետ կը համաձայնի՝, երբոր գործը կատարիչ և կամ ենթակայ գործողութեան ըլլան , որ ատոնց համար հիմայ այլ և այլ յօդուածով պիտի խօսինք կարգ ՚ի կարգոյ :

### Յօդուած Ա.

### Համաձայնութիւն անուան ընդ բայի երբև Տէր բայի

Ամէն բայ՝ որովհետև գործ մը կը նշանակէ , հարկաւ գործող մը կը պահանջէ . վասնորոյ անհնար է գործողութեան խիք ըլլալ առանց գործողի . ինչու որ քալեց գնաց չըսվիր , թէ որ քալող գնացող մը չըլլայ . զօ „ Յիսուս քրիստոս յիւր մարմնին փրկեաց զբոլոր աշխարհս “ Եղիշէ . Աս բայս փրկեաց փրկող մը կը պահանջէ , որուն քովը դրված է յիսուս քրիստոսը , որ նա փրկեաց զաշխարհ , այս է տէր բային :

Ամէն բայը գործողութիւն կը նշանակէ՝ ըսինք ,

բայց զանազան եղանակաւ . ոմանք ինքը իրեն առանց ուրիշի վրայ անցնելու գործ մը կը ցնեն . որպիսի են չէզոքականքն . ոմանք ուրիշէն գործը ընդունած են , որպիսի են կրաւորականքն . ոմանք գործողութիւնը ուրիշի վրայ կանցնեն , ինչպէս են ներգործականքն . անոր համար ներգործականին Տէր բային գործողն է . կրաւորականին՝ կրողն է . չէզոքին՝ ընողն է . միայն մնաց քեզի գիտնալ թէ ի՞նչպէս կը համաձայնի տէր բային ընդ բայի , հետագայ կանոնները լաւ միտքդ պահէ :

Կանոն Ը.

ա : Գլխաւոր բային ուրիշ հոլովով տէր բայի չըլլար , միայն ուղղական հոլովն կ՚ըլլայ . թիւը և դէմը բային պէս ըլլալու է . թէ որ բայը եզակի առաջի դէմ է , տէր բային նոյն թիւը և դէմը պէտք է ունենայ . թէ որ յոգնակի երրորդ դէմ, նոյն և տէր բային . եթէ տէր բայից դէմ չունինէ , դիմորոշ յօդ կը դնի վրան :

Նոյն եզակի և առաջին դէմ . Տէր բային համաձայն նմին . զի „Եթէ տէրս և վարդապետս . . . զոտս լուացի ՚ի հնոյ ոտից“ ըսուի . „Ես ննջեցի և ՚ի քուն եղէ , զարթեայ , և տէր ընդունելի իմ է“ ասէ :

Նոյն յոգնակի և առաջին դէմ . նոյնպէս և տէր բային՝ . զի „Ժողովեալքս ՚ի քէն հայցեմք“ ըսուի . „Օգնես քո ոչ պաշտեմք“ [illegible] :

Նոյն երկրորդ դէմ եզակի կամ յոգնակի . նոյնպէս և տէր բային . որ ,, Կարծեցեր անօրէնդ 'իմոի քում " սաղմ . ,, Կացէք մնացէք դուք 'ի մերում բարեկամութեան " մակ :

Նոյն երրորդ դէմ եզակի և յոգնակի . նոյնպէս տէր բային . որ ,, Եղբայրութիւն մայրց և բանի ոչ տայ թոյլ " ընդհ . ,, Թանձրամիտքն յիմարէին , և վատասիրտքն լքանէին . քաջքն խիզախէին . և նահատակքն դողէին " եղիշէ :

բ : Տէր բային միայն անուն չլլար , միջական անուն , դերանուն , աներևոյթը , ընդունելութիւնը եւ կը լլան . որ ,, Պիղծ են երկոքեան առաջի տեառն " ընդհ . ,, Զի ես արբից զուրախութիւն " յհաստ օրէն . ,, Ընդունայն լեցի աղաղակել և աղաչել զայր " յոբ . ,, Եւ եղեն անկեալքն 'ի սուր " մակ :

գ : Երբեմն տէր բայի ոչ միայն հոլովական մասունք բանիներին կը լլան , այլ անհոլով մասունք բանիները . որպիսի են նախադրութիւնը , մակբայը , շաղկապը , և միջարկութիւնը . որ ,, Երբեն ցուցանէ զնմանութիւն " ճառընտ . ,, Ո՜չ լիցէ այն փոքր միւս եան ,, յոբ . ,, եան այլ է . եւ եան այլ " միկ . ժամ : ,, Վայն երկրորդ էանց , և վայն երրորդ գալոց է " յայտ :

Նաց յայացանէ երբեմն բայը՝ բային տէր բայի կը լլայ . որ ,, Եղեն և բնակեացն՝ զերաց լինելն նշանակէ " ընդհ :

Կանոն Ը.

ա ։ Ըսինք թէ բային հետ թուով և հոլովով հա-մաձայն ըլլալու է տէր բային . սակայն շատ ան-գամ անհամաձայն կը գտնուին ոմանք թուով, ո-մանք հոլովով ։

Թուով անհամաձայն գտնուողները նախ անորա-կան անուններն են . որովհետև ազատ են յոգնա-կի բայի և եզական բային միանգամայն մի և նոյն ձայնիւ յարիլ . փր ,, Աչք հարսին եկեղեցւոյ . . . անպատռնալի հային ՚ի գլուխս երկնից ‘‘ Ճշն . Եբգ ։ Երեսք զփոփանս ձևացուցանէ, և արտասուքն զպատնութեան՝ սրտին ճշմարտէ ‘‘ Նարէկ ։

բ ։ Բազում անգամ անհամաձայն կը գտնուին թուով, հանրական, հաւաքական, թուական ա-նունները, մանաւանդ կրկնեալ բառերը . փր ,, Ա-մենայն այր առ այր և մարդ առ մարդ չարմաց-ունն յածախեաց ‘‘ Ադամ . ,, Ամենայն բազմու-թիւն ժողովրդեանն կային յաղօթըս ‘‘ Ղուկ . ,, Արածնեցէք որ ՚ի ձեզ հօտդ է ‘‘ Ղուկ . ,, Զօտ քը-րիստոսի . . . զօրացան ‘‘ Եփես . ,, Ընկանէր յայնմ աւուր երեք հազար հինգ հարիւր քառասուն և չորք արք ‘‘ Եփես . ,, Երեք հարիւր և քսան այր ՚ի-խորհուրդ մտանէին ‘‘ Մակբ ։

Սոսկ հաւաքական անունները երբեմն թուոյ անհա-մաձայնութիւն ունին . փր ,, Պատուիրապահու-թիւնն ՚ի ներքս մտին ‘‘ Յովբ . ,, Երկիր և ծով և ամենայն ինչ զերկրպագանս փոփոխեալ է ‘‘ Յովբ ,

դ ։ Հոլովով անհամաձայն դուն ուրեք կերեւան, որովհետեւ գլխաւորին սեռական հոլով տէր բայի կը տեսնանք եւ երբեմն հայցական . զի „Ներեծ տրեանց կղերիկոսաց եկեղեցւոյ տարապարտ հեղաւ" յովհ. կաթ. ։ „Զծագումն լուսոյ . . . տեսանիւր" յովհ. կաթ. ։ Ուր սեռականն՝ տրեանց, եւ հայցականն՝ զծագումն, են տէր բայի, բայց ընդդէմ է կանոնի, զիմա որ բայը ուղղականէն զատ ուրիշ հոլով տէր բայի առնելու չէ . միայն հրամայականն կոչական հոլով կը պահանջէ . զի „Ողբացէք եկեղեցիք հարսունք վերին աստղաստի" յովն. եփր. ։

Կանոն գ.

ա ։ Երբեմն բայը շատ, տէր բային մի . երբեմն տէր բային շատ, բայն մի . զի „Մեք եմք պատճառ մերոյ կորստեան, զի ոչ մերձենամք առնա, եւ ոչ պաղատիմք, եւ ոչ աղաչեմք" ոսկէբ. „Կեանք եւ մահ, բարի եւ չար, մեծութիւն եւ աղքատութիւն առաջի աստուծոյ հաւասար են" սիրաք ։

բ ։ Սովորաբար բայը իրեն տէր բային դէմը, եւ տէր բային իրեն բային դէմը կունենայ . զի „Ես փախեայ, ես օտարացայ" Նարեկ ։

Իսկ բայը մէկ, տէր բային՝ շատ ըլլայ զանազան դիմաւ, սովորաբար բայը նախապատիւ դէմին կը յարմարի . որ է գրոնվողներուն առաջին դէմն . զի „Ես եւ դու եւ ամենայն բազմութիւնն այնպէս աշակերտեսցուք աստուածային գրոց" Եղիշէ ։

Դուք և ահարոնն առնիցեք նոցա զհանդէս " Թւ. Ա :
Երբեմն բայը որու քով գտնուի իրեն մերձաւոր անուանը կը յարմարի . զի ,, Կեցցես դու և մեք " Ագ. Ի:
Այսպիսի ոճերուն մէջ բայը զօրութեամբ կը կրկնուի . ինչպէս վերոյ գրեալ օրինակը . կեաց դու , և մեք կեցցուք :

Դ : Տէր բային հոգ չէ նախադաս կամ յետադաս ըլլալը . իսկ թէ ոչ՝ յարաբերականը ըլլայ տէր բայի . ոչ երբեք լինի յետադաս . զի ,, և զայն՝ որ նետիւ խոցեաց , սպանանիցէ " Թւ. ԼԵ :

Այսպէս հոգ չէ բնաւին եթէ տէր բային իրեն բային մօտ ըլլայ կամ հեռի . երբեմն այնչափ կը հեռանայ իր բայէն . մինչև մէջը ուրիշ մէկ երկու միջանկեալ բայ ունենալով . զի ,, Այլ մեք ապրեալք զօրութեամբն աստուծոյ և հաստատեալքը" հաւատովն 'ի յոյսն քրիստոսի՝ որ եկն և էառ . . . մարմին . . . ընկալաւ զչարչարանս . . . խաչեցաւ և թաղեցաւ և յարուցեալ երևեցաւ բազմաց . և վերացաւ . . . և նստաւ ընդ աջմէ զօրութեանն , զնոյն հաւատամք աստուած ճշմարիտ " Եղիշէ . Այն մեքն է տէր բայի հաւատամքին . տեսն որչափ հեռացեալ են իրարմէ :

,, Հոգին սուրբ՝ որում բերանաբաց կալով 'ի փափագման դասք սերովբէից և քերովբէից՝ զորքանութիւն նորա ոչ կարացին նրկարել , յայսմ աւուր խնկապէս իջեալ յառնեցոյց զմարդիկ " Շար. Ուր հոգին սուրբ է տէր հեռաւոր բային՝ յառնեցոյց :

ա ։ Ինչպէս դիմաւոր բային տէր բային ուղղական ըլլալու է ասոր պէս անդէմ բային տէր բայի սեռական պէտք է ըլլալ ․ զբ ,, Շապհոյ պարսից արքային կալեալ և կապեալ զարքայն Հայոց Արշակ դնէ յԱնյուշն կոչեցեալ բերդի " յովհ․ կաթ․

բ ։ Գիտելի է որ անդէմ բայերը , աներևոյթը , ընդունելութիւնը և դրադէմը , տէր բային առհասարակ սեռական հոլով կը պահանջեն ․ զբ ,, Թագաւորացն ինքնին մեծարել զերևելի տաճարն " մաշթ ․ ,, Սահեալ սրբոցն լուսավառ " յիսուս․ որ ։ ,, 'Ի բաղում պատերազմունս մտեալ է իմ և ձեր ընդ իս " Եղիշէ ։

Այս կանոնը վճռեալ չէ անդէմ բայից , որ շատ անգամ ուղղական հոլով ալ կառնեն ․ զբ ,, Որոյ ջերմութիւն մտեալ յոգին՝ հանէ 'ի բաց զամենայն վհատութիւն " ոսկէբ ։

դ ։ Դրադէմ բայերուն սովորութիւն եղած է սեռական տէր բայի տալ , և կամ տէր բայի ըսել , բայց անպատեհ է դիմաւոր ըլլալնին համար տէր բայի ըսել , յատկացուցիչ է զօրութեամբ յատկացեալին , որն իսկ տէր բայի է դիմաւորին ․ զբ ,, 'Ի բաղում պատերազմունս մտեալ է իմ և ձեր " Եղիշէ ․ Ահա՛ 'ի բանիս իմ և ձերն տէր բայի չեն , յատկացուցիչ են զօրութեամբ յատկացեալ անձին ․ իբր թէ ասէր 'ի բաղում պատերազմունս մտեալ է անձն իմ և անձն ձեր ։

Ինչպէս շատ անգամ հանգերձ յատկացեալովը կը դրուի · օր „ Զանձրացեալ է անձն իմ 'ի դատերացս “ ծննդ․ „ Ծանրացուցեալ էր յունաց զլուծ ծառայութեան 'ի վերայ պարանոցին իսրայելացւոց “ մակբ․ ա՝ ազգն յունաց :

գ : Աներևոյթին տէր բային՝ թէ որ դերանուն է , և այն աներևոյթը ուղղական կամ նախդրիւ հոլով գանուի , հարկաւ դերանունը վերջահոլով տէր կը պահանջէ · օր „ Դիւրաւ մեզ հեռացելոցս եղիցի հարցանել զհայրն “ յոհ․ կթ․ : „ 'Ի համբառնալ իմում առ քեզ զաչս իմ “ սղմ․ :

Այսպիսի նախդրով եղած աներևութին տէր բային նախադաս ըլլայ նէ , նախդիրը անոր վրայ կը դրուի · օր „ Համարէի յուրում 'ի ձեր տուն մտանել “ տոբ․ :

Իսկ թէ որ աներևոյթը գործիական ըլլայ , անհնար է վերջահոլով առնել , միայն սեռական կառնէ · օր „ Սարսելով թագմայի “ սղմ․ · „ Հեռանելով իմ ընդ համառօտ հաւատարութեան առաջնոցն „ յոհ․ կթ․ :

ե : Անդէմ բայս՝ պէտք են , իրեն տէր բային վերջահոլով կուզէ · օր „ Սան այսորիկ ստէպ պէտք են հոգևոր ցօղոյն և խաղաղ օդոյ “ տօնէ : „ Սոցին պէտք են մաքրութեան “ ղևտ․ :

զ : Դիմաւոր և անդէմ բային տէրը շատ անգամ զօրութեամբ կը գուշակուի · օր „ Աստուագէտ իմացուածին խորհրդոց պատկանաւորեցին “

յովհ. կա. ։ Ո՛ւր զօրութեամբ կիմացվի տէր բային՝ նոքա . ո՞ դրասէր մարդիկ ։

Ընդ հակառակն՝ երբեմն բայը զօրութեամբ կիմացվի . որ ,, Ամենայն արարածք՝ վասն մարդոյ, և մարդ՝ վասն փառացն Աստուծոյ ” աւրբ · Ո՛ւր զօրութեամբ կիմացվի բայն եղեն և եղև . իբր թէ ասէր . ամենայն արարածք՝ վասն մարդոյն եղեն , և մարդ՝ վասն փառացն Աստուծոյ եղև ։ ,, Քանզի բանիւ և կերպարանօք ( են ) բարուք խոնարհք . իսկ արդեամբք և ճշմարտութեամբ (դոն) դուն ուրեք ,, աւրբին ։

Յօդուած Բ.

Համաձայնութիւն անուան ընդ բայի իբրև խնդիր ենթակայ գործողուն ։

Անունը՝ բային երկու կերպ խնդիր կըլլայ , բայը՝ իրեն խնդիր անունը երկու կերպ կառնէ , սեռի և բնութեան ։

Սեռի այն խնդիրին կըսվի որն որ չէզոք և էական և դիմացուցիկ բայերու խնդիր չի կրնար ըլլար , միայն այն սեռակ բային կըլլայ՝ որ ներգործական կամ կրաւորական է ։

Բնութեան այն խնդիրին կըսվի , որն որ բոլոր բայից իրենց բնութեան պահանջմանը յարմար խնդիր կըլլայ , աղէկ հասկնալու համար սեռի խնդրոյն և բնութեան խնդրոյն կանոնները այլ և այլ ծանօթութիւնով տեղեկացնենք ։

## Ծանօթութիւն Ը.

### Սեռի խնդիր բայից :

ա : Ներգործական բային սեռի խնդիրն հայցական պիտի ըլլայ , իսկ կրաւորականին՝ բացառական . անհնար է չէզոք և էական բայի սեռի խնդիր առնել : Ամէն գործողութիւնք կը պահանջէ իրեն գործելու ենթակայ մը և իր մը . օրինակի համար թափեց չըսվեր , մինչև որ թափած իր մը չըլլայ , վասն զի ներգործականին գործողութիւնը գործելի իր մը կը խնդրէ . ինչպէս ըսինք՝ եհեղ պետրոս զգինին . որով կիմանանք թէ թափածը գինին է . որ է սեռի խնդիր : այսպէս . „Ձեռք՝ որ զերկինս և զերկիր հաստատեցին , նոյնք և զտախտակս քարեղէնս փորագրեցին , և ետուն զգրութիւնս“ Եղիշէ . „Սոքա ( առաքեալք ) զանձինս փորձեցին . . . ընկալան զհուրն կենդանութեան . . . զոչեցին լըցին զաշխարհս“ Ագաթ :

բ : Ամէն կրաւորական գործողութիւնք հակառակն է ներգործական գործողութեան , որովհետև կրաւորական գործողութեան տէրն՝ ներգործական գործողութեան ենթակայն է . և սեռի խնդիրն՝ ներգործական գործողութեան տէր բային . ինչպէս ըսինք վերոյ գրեալ օրինակը . պետրոս եհեղ զգինին , կրաւորական գործողութիւնը ընդ հակառակն է . հեղաւ գինին 'ի պետրոսէ . որով կիմանանք թէ գինին պետրոսէն կը թափի . որ է սեռի խնդիր : այսպէս . Որ 'ի սպասաւորձ

ապստամբեցար . և 'ի զինուորէն գեղարդեամբն խոցեցար " շար . „ Որոտման մերժեցաւ յերկնից ծողովրդենէ " խորէն :

Նման այս ծանօթութեանց ներգործական և կրաւորական բայերուն սեռի խնդիրը հասկցար քիչ մը , հիմայ ներգործականին սեռի խնդրին վրայ խօսել հարկըլլալով հետևեալ կանոնները աւանդենք :

Կանոն Ը.

ա : Ներգործական բայը սեռի խնդիրը հայցական կառնէ . զփ „ Զտէգ նիզակին իւրոյ նստուցանէր հարուստ խորութեամբ յարձանի միում " յովհ . կաթ :

Բայց ամէն հայցականը ներգործականին սեռի խնդիր չէ , կրնայ որ բնութեան է , ուղղականի , գործիականի , կամ տրականի տեղ դրուելով . զփ „ Դու զո՞ առնես զքեզ „ յովհ . կաթ : յր ո՞ : „ Զի սէրն , զոր սիրեցեր զիս՝ 'ի նոսա լիցի " յովհ . յր որով : 'Ի տան զարս իւրեանց հարցանիցեն " կորնթ . յր ցարս :

Ներգործական բայից համանշանակը , արմատը , կամ յարաբերականը հայցական հոլով դրուելով կրնան խնդիր բնութեան . զփ „ Փրկելոց է զնա զփրկութիւն յաւիտենից " եսայի . „ Զամենայն աւուրս կենացքոց ողի մի միայն ապրեցուցանէիր 'ի մահուանէ „ ադրիկեա . „ Զոր . . . կերակրեին զիս " ընդհ :

բ ։ Երբեմն ներգործական բային սեռի խնդիրը առանց նախդրի անորոշ հայցական կը դնի . զի „ Կարգեալ կացուցանէ այնուհետեւ կողմնակալս , կուսակալս , նահապետս , և զօրագլուխս " յուդթ . ժաբ ։ Երբեմն ոչ միայն անորոշ հայցական , այլ բոլորովին ուղղական կը դնի . զի „ Եթէ ժանիք խածանողք ինձ ցուցանիցէ „ Նոյբէլ · յ՛ զժանիս խածանողս ։

գ ։ Սեռի խնդիրն երբեմն զօրութեամբ կիմացվի . զի „ Բայց ես , թէպէտ բիւրապատիկ բամբասիցես , սուրբ սրտիւ տամ քեզ ողջոյն " տոկէբ . յ՛ բամբասիցես զիս ։

Ներհակ այսմ՝ երբեմն սեռի խնդիրն շատ , բայց մէկ հատ . զի „ Որ հիւանդն է զբժիշկն խնդրէ . և որ խաւարեալ՝ զլոյս . մեռեալն՝ զկենդանութիւն . ծարաւին՝ զաղբիւրն . քաղցեալն՝ զկենացն հաց . աղքատն՝ զմեծութիւն . մերկն՝ զծածկոյթ . կապեալն՝ զարձակիչն . և գերին՝ զգերադարձն " տոքքէ . Այս մի միայն տէր բայի և հայցական սեռի խնդիր , բայն զօրութեամբ ամենուն մէջ կը կրկնուի մտօք ։

## Կանոն Ի

ա ։ Գործողութեան ենթակայ միայն գոյական անունը չըլլար , ածական անունները . միջական անունները , դերանունը , աներեւոյթը , ընդունելութիւնը , և այն ամէնը՝ որն որ տէր բայի կըլլան . սեռի խնդիր ալ կըլլան . զի „ Բաւականա-

պէս ողբայ պատմութիւնս զլուսն" Նարեկ . ,,Զայս անդուռն բերանով նախատեմ" Ղամբ . ,,Պատերազմ զմեղ շուրջ պաշարէ" Խորեն . ,,Նշլեւս դու անդ . . . զնստելն ընդ աջմէ հօր" Եղիշէ . ,,Զմատուցեալն ՚ի մահ բերկրութեամբ բարեաց արձակես" Նարեկ :

Երբեմն անհոլով մասունք բանինն՝ նախադրութիւն, մակբայ, շաղկապ, միջարկութիւն . թէպէտ ենթակայ գործողութեան չեն ըլլար, սակայն երբեմն հայցական հոլովով իբրեւ սեռի խնդիր կը ձեւանան ներգործական բայի մը . զի ,,Արտածնայց ՚ի մէջ զհանդոյնն" Ճառընտիր . ,,Ար զի եմեզ լիցի արհամարհիլ զատուխս ամենայն" Տօնէ : ,,Զխո՞րդ ( համարձակեցայց ասել ) զեան" Նարեկ : Ընկեր զալարէին ՚ի լսել զվա՛յ եւ զաւաղ բարեկամացն" Եղիշէ :

Բ : Սեռի՛ խնդրին նախդիրը ամէն իմիր իր վրան չի մնար, թէ նախադաս ածական, յատկացուցիչ, կամ ուրիշ բառ ունենան, անոնց վըրայ կանցնի նախդիրը . զի ,,Ոչ կարէ զհրաշալիս փայլեանս ստանալ" Տաթեւ . ,,Զանտանէ՞ք զմեր խեղ մանկանն" Տօնէ :

Եթէ սեռի խնդիրն բայանուն, աներեւոյթ, կամ ընդունելութիւն ըլլայ, նախդիրն՝ թէ որ նախադաս խնդիր ընութեան, կամ մակբայ ունենան, անոնց վրայ կանցնի . զի ,,Ընդունեցեր . . . զա ՚ի յօղից ցնդմանէ փտտակար բերմանս ախորժա-

ցնշա" Նարեկ. „Զբազում անգամ ատացեալն երկ բորբեմ" Լամբ. „Զատ ընդ երկրաւ ծածկեալ օգուտս ուսուցմանն" Շնոր. Թուղ.։

Կանոն Գ.

ա ։ Շատ բայք իրենց անորոշ հայցական խնդիր մը առնելով և անոր հետ իրրև մի բայ վարվելով, նորէն խնդիր սեռի. կառնեն ուրիշ հայցական հոլով. զի „Գուշակութիւնն առնէր զօրս բազումս" Խորէն. Ճ. գումարէր ։

բ ։ Նայքս՝ հարցանեմ, ուսուցանեմ, աղաչեմ եւ. հայցականը և սրածիմը անխտիր կառնեն. ինչու որ միօրինակ կըսվի. եհարց զնա. եհարց ցնա. ուսուցանէր զնոսա. ուսուցանէր ցնոսա. աղաչէցի զնոսա. աղաչեցի առ նոսա եւ. այսչափ բառական համարիմ ներգործական բայերուն սեռի խնդիր առնելուն համար ։

գ ։ Չէզոք բային հայցական հոլով խնդիր կը պատշաճի, երբոր արմատը, կամ համանըշանակը, յարաբերականը ըլլայ. զի „Փինեհես հայր մեր նախանձայուզ նախանձեցաւ զնախանձն արդարութեան" Խորէն. „Զյաւիտենական մահն ոչ մեռանին" Մէկ. Ճառ.։

Իսկ այն չէզոք բայերուն հայցական խնդիր՝ բնութեան կը պատշաճի, որոնք ժամանակ, տեղ կամ չափ կը նշանակեն. զի „Սառեցան կաղմեցան ըզգիշերն ամենայն" Եղիշէ. „Եթէ նորին ես աշակերտ, զնորին ճանապարհն պարտիս գնալ" Խոր.։

„Հնգետասան կանգուն բարձրացաւ ջուրն“ ծնն․ : Հուսկ ուրեմն գիտելի է, անհնար է որ չէզոքը այս բանձներէս զատ հայցական խնդիր առնէ․ և թէ առած կան, գիտցիր՝ որ բայը փոխանակ ներգործական բայի դրած է․ փ „Օթագաւորութիւնն՝ զոր խոստացաւ նմա հրեշտակն՝, նայեցաւ ճշմարիտ ՚ի նստիլ անդրանկին“ լամբ․ ճ․ եսես :

դ : Կրաւորական բայերուն համար ըսինք որ իրենց սեռի խնդիրը բացառական կառնեն․ բայց երբեմն հայցական առած կերևան․ փ „Շնորհք հոգւոյն սրբոյ . . . ՚ի զարմացումն զրոլոր կղերս եկեղեցւոյն ածեալ լինէր“ յոհն․ կաթ :

Բայց գիտելի է․ հայցական հոլով սեռի խնդիր չի կրնար առնել հիչ մէկ կրաւորականը․ ուստի հայցական հոլով սեռի խնդիր առած կրաւորականը ներգործականի տեղ դրված է․ ինչպէս վերի օրինակը, ածեալ լինէր, փոխանակ ասելոյ ածէր : „Պահեալ լինէին պահս աւուրս վաթսուն“ ագաթ․ ճ․ պահէին :

Երբեմն կրաւորականին բացառականը գործիականի կը դառնայ առանց փոփոխելոյ նշանակութիւնը․ փ „Որ ՚ի զօրաց հոգեղինաց օրհնաբանիս սրբուհի“ շար․ „Որ հոգեղէն զօրօք օրհնաբանիս սրբուհի“ շար :

## Ծանօթութիւն Ն.

## Բնութեան խնդիր բայից

Բնութեան խնդիրը՝ ամէն մէկ բային բնութեան պահանջմանը յարմար խնդիր մը նէ՝ ըսինք. որովհետեւ բային նշանակութեանը կապված խնդիր մը ըլլալուն համար՝ սեռը փոխելով խնդրոյն հոլովն ալ փոխել պէտք չըլլար. միշտ նոյն հոլովը կը մնայ. նշանակութիւններին իրարու մօտեցած բայերը մէկ տեսակ խնդիր պահանջելով այլ եւ այլ կարգ կը բաժնըվին բայերը. ոմանք ուղղական հոլով կուզեն, ոմանք գործիական, եւն:

Սեռի խնդիր անոր համար ըսինք՝ որ մի եւ նոյն հայցականը բոլոր ներգործականքը կրնան առնել. իսկ բնութեան խնդիրը՝ ամէն մէկ բային պահանջմանը յարմար ըլլալուն համար ո՞ր բայը ո՞ր հոլով խնդիր կը պահանջէնէ հոս պիտի գրենք իրենց կանոնովը:

### Կանոն Ա.

ա. Ուղղական հոլով խնդիր բնութեան պահանջող ներգործական բայերը ասոնք են. վարկանիմ, դաւանեմ, անուանեմ, ասեմ, ծանուցանեմ, եւն. եւ այս բայերս բան մը ընել, ըսել, կը ցցնեն. փ. „Եւ՝ այնպէս զնա սատակեալ. ինքն տիրէ հայրենատուր վիճակեալ աշխարհին իւրոյ, յիւր անուն զնա անուանելով հայք“ յովհ. կաթ.:

բ ։ Ուղղական հոլով խնդիր առած կան այլեւ շատ բայք . բայց անոնց շատը փոխանակ վերոյ յիշեալ բայից , կամ փոխանակ այլ հոլովոյ դըրած են . զի „ Ասան դիցն՝ զորս կոչես դու աստուած " Ափաշ . յի անուանես ։ „ Իշա զանձն փըրկանս " Մէմ . յի 'ի փրկանս ։

Կանոն Բ.

ա . Սեռական հոլով խնդիր՝ պահանջող ներգործական բայերը ասոնք են . սակ արկանել , վաճառել , ստանալ , վարձել , եւն . այս բայերս բան մը ծախել կամ ծախու առնել կը նշանակեն . զի „ Վաճառեցին զյովսէփ իսմայելացւոցն քսան դահեկանի " Ծննդ ։

բ ։ Սեռական հոլով խնդիր առած կան՝ եւ ուրիշ բայք , կամ ժամանակ նշանակող ըլլայ խնդիրը , կամ ուրիշ հոլովոյ փոխանակ դրած . զի „ Նաղում ժամանակաց պաշտպանեալ էին " Տոփ . „ Տուք զնա նմա կնութեան " Ծննդ . յի 'ի կնութիւն ։

Կանոն Գ.

ա ։ Գործիական հոլով խնդիր պահանջող ներգործական բայերը ասոնք են . զարդարել , լընուլ , գործել , ողողանել , սպառնանել , եւն . բայքս խիստ շատ են , եւ մէկ բանով մը գործել կը ցցնեն . զի „ Զարդարեցեր բանիւ , փայլեցուցեր փըջմամբ , մօրք ձեռացուցեր , խմաստիւք ածնացուցեր " Նարեկ ։

բ ։ Գործիական հոլովը թէպէտ ամէն բային կը

պատշաճի . բայց շատ անգամ բայը ուրիշ բայի տեղ , և կամ գործիականը ուրիշ հոլովի տեղ դը-րած է . օր ,, Արբոյց զիս դառնութեամբ " Երեմ . փ. լցոյց : ,, Հացիւդ երկնայնով ջամբեցեր , աստ-ուածային արեամբդ արբուցեր " Նարեկ . փ. յերկ-նային հացեդ ջամբեցեր . յաստուածային արենէդ :

գ : Գործիական հոլով խնդիր պահանջօղ բայ-երս . հարկանեմ , զարկանեմ , զարկուցանեմ , եր-բեմն նախդրիւ սեռական խնդիր կը պահանջեն . օր ,, Զի մի երբեք՝ հարցես զքարի զոտն քո " Սաղմ . փ. ՚ի քար , կամ ՚ի վերայ քարի :

## Կանոն Դ.

ա : Պարառական հոլով խնդիր պահանջօղ բայ-երը տասնը են . պարապատեմ , շրջապատեմ , պա-տեմ , փարեմ , ևն . բայերս իրի մը եթրաֆը պա-տել կը նշանակեն . օր ,, Ո՛չ պատեցին զինև մա-ռախուղք " Նարեկ :

բ : Երբոր իրին բոլոր եթրաֆը նշանակել կու-զես , հարկ է պարառականը շուրջ կամ շուրջանակի նախդիրներուն խնդիր տալ , և անանկ նախադրու-թեանը հետ բային բնութեան խնդիր ընել դը-նել , ինչու որ պարառականը մէկ կողմը բաց կը ցնէ , թէ որ ըսես , կային զնովաւ , չի նշանա-կէր շուրջանակի . եթէ ըսես կային շուրջ զնովաւ , կը նշանակէ բոլոր եթրաֆը . օր ,, Շուրջ զնոքօք պատեալ ծովանային " Շար . ճաշ :

գ · Պարառական հոլով խնդիր առնող ուրիշ բայք ալ կան . կամ բայերը այլոց բայի , կամ պարառականը այլ հոլովոյ փոխանակ դրած է ։ զի ,, Մերին այն՝ ողորմելին զմախիրն զգլխովն արկաներ ՚՚ ոսկեբ . փխ ՚ի գլուխն , կամ ՚ի վերայ գլխոյն ։

դ · Պարառական հոլով խնդիր կան և ուրիշ բայից դրված , երբոր խնդիրը յայտնէ ժամանակի ընթս . զի ,, Զայսու ժամանակաւ յայտնեալ էր ուխտս աշխարհագրացի ,, յոհն . կոչ ։

### Կանոն Ն

ա · Պատմական հոլով խնդիր պահանջող ներգործական բայերը ասոնք են . Ճառեմ , ամբաստանեմ , կարծեմ , խորհիմ , վկայեմ , ևն . բայերըս մէկ բանի մը համար կամ իրին վրայոք խօսել , կամ բան մը ընել կը ցցնեն . զի ,, Զարքայութենէ և զգեհենէ Ճառեմ ՚՚ ոսկեբ ։

բ · Պատմական առած կան և ուրիշ բայեր , բայց փոխանակ վերայ յիշեալ բայից , կամ փոխանակ ուրիշ հոլովոյ դրած են զի ,, Եւ անուն չար հանիցեն զնմանէ ՚՚ բ . օրինաց . փխ հաշակեցէ . ,, Զգացուցին քահանայապետքն . . . զպօղոսէ ՚՚ գործոց . փխ վասն պօղոսի ։

գ · Պատմական պահանջող և կամ ուրիշ պատմական առած բայերուն փոխանակ պատմականի վասն նախադրութիւնով խնդիր առնեն անգամ մը դրվեր . ինչու որ մեծ խտիր կայ ։

Պատմականը՝ ինչպէս բառս , զքէն , և նախադ-

ութիւնս վասն՝ ինչպէս բառքս՝ վասն քո, թէ-
պէտ երկոքեան իրին համար կը նշանակեն, բայց
պատմականը կարծեօք, նախադրութիւնը ճշգրիտ
պատմելով կը խօսի. զի ,, Օրումն առեն 'ի Հինան
մեր " խօսեն. ,, Վասն հայոց պատերազմին՝ զոր
հրամայեցեր, նշանագրեցի " ծըծն.

Նոյն պէս իմն 'ի վերոյ նախադրութեանս հա-
մար, թէպէտ երբեմն պատմականը՝ ըսինք թէ ըզ-
քէն, վասն քոյին կամ 'ի վերայ քոյին փոխանակ
դրած է. բայց մեծ զգուշութիւն պիտի.

Կանոն Թ.

ա. Բացառական հոլով խնդիր պահանջող ներ-
գործական բայերը առնք՝ են. ընտրեմ, մերժեմ,
ծնանիմ, սկսանիմ, հանեմ, ելեմ, եւն. բայերս՝
իրէ մը հեռանալ, սկիզբ՝ ելլալ կը նշանակեն. հի
,, Օոր երբեմն ելեալ տէր 'ի տանէս թողումայ
" յոխն. չոխ.

բ. Բացառական հոլով խնդիր՝ առած կան եւ ու-
րիշ բայեր, բայց փոխանակ վերոյ գրեալ բայից
կամ փոխանակ այլ հոլովոյ դրած են. զի ,, Ի-
մաստնոց խնայեցէք զինքըս " խմաց. ծ զըս-
պեցէք.

գ. Բացառականը երբեմն առանց նախդրի կը
դնի. զի՝ ,, Այս հարուստ կոչմանէ " խօսքն. ծ 'ի-
հարուստ.

Նանց տառերս՝ ա եւ հ, անհնախդիր բացառական
ձեւեր. մոյն երկրոր մի եւ նոյն բառը կրկնած

կ'ըլլայ . որ „ Տանէ ՚ի տուն զձեռանէ ( կալեալ ) շրջեցուցանել զբրիտոս “ առնէ . որ ՚ի տանէ ՚ի տուն : Երբեմն այսպէս ալ կ'ըլլայ . որ „ մի փոխիցիք ՚ի տանէ ՚ի տուն “ ղուկ :

Կանոն Ե:

ա : Տրական հոլով բայց տրականը երկու կերպ է նախդրիւ և վերջահոլով . նախդրիւ պահանջող ներգործական բայերը ասոնք են . տալ, փչել, ձգել, կրկնել, հարցանել, եւն . բայերս դէմ և դէպ իրեն բան խօսիլ կը նշանակեն . որ, „ Համապատ բոլ և հետի երթայն ՚ի տունս ալթից “ Եղիշէ :

բ : Նախդրիւ տրական առած կան և ուրիշ բայեր . բայց այն բայի տեղ, կամ խնդիրը ուրիշ հոլովի տեղ դրած են . որ „ Մատուսցես զսիրտ քո ՚ի հանճար “ առակ . որ կրթեցես : „ Զորդի աղախնոյն արարից յազգ մեծ “ ծննդ . որ ազգ մեծ :

գ : Վերջահոլով տրական պահանջող ներգործական բայերս ասոնք են . բաշխել, երգել, աւետարանել . շնորհել, եւն . որ „ Սէր պարգեւեաց աչաց նոցա լոյս “ Ներսէս :

դ : Վերջահոլով տրական առած կան և ուրիշ բայեր . բայց այն բայերը ուրիշ բայի փոխան, կամ խնդիրը ուրիշ հոլովոյ փոխան դրած են . որ „ Զի՞նչ վաղիւն ծնանիցի քեզ “ առակ . որ տեսանիցէ : „ Այլ խորհէին ինձ չար “ սաղմ . որ զինէն :

է ։ Նախդրիւ և վերջահօդով տրականները եր-բեմն իրարու տեղ անխտրաբար կը փոխեն . օրի-նակ կրակէ տաց քեզ , առ քեզ . տացի ձեզ , առ ձեզ ևն ։

## Կանոն Ը.

ա ։ Ներգործական հոլով խնդիր պահանջող ներգործական բայերը ասոնք են . գրել , ծածկել , ամփել , պահել , գնել , ևն . որ գործը իրեն մէ-ջը բռնող կը ցուցնեն . օր ․ « Այս է պատճէն հրովար-տակին նոցա , զոր գրեցին նոքա առ նոսա 'ի տախ-տակս պղնձիս » Մակք ։

բ ։ Ներգործական հոլով առած կան ուրիշ շատ բայեր . փոխանակ վերոյ յիշեալ բայից գործելով , կամ խնդիրնին ուրիշ հոլովոյ փոխան փոխելով . օր ․ « Զատուած 'ի լեզուի իւրում կրէ » Առակք . իբ ուխի ։ « Թագաւոր որ ․ ․ ․ գրեց ․ ․ ․ յոր-դեկիր տանէր » Առակք . յո՛ր դեկիր տանէր ։

## Կանոն Թ.

ա ։ Նախադրութեամբ խնդիր պահանջող ներ-գործական բայերը ասոնք են . գիտել , շարել , շաղկապել , լծել , զուգել , ևն . որ իրի մը վրայ կամ իրի մը հետ կը նշանակեն . օր ․ « Ըրկիւ-թիւնս բազումս սփռեալ տարածանէ ընդ ոլորտս երկրի մերում » Յոհ․ Կաթ․ ։

բ ։ Նախադրութեամբ խնդիր առած կան և ու-րիշ բայք , որ կամ բայը փոխանակ այլոյ բային ,

կամ խնդիրն այլոց հոլովոյ փոխանակ դրած է . Թ՝ „Ժողովեցան ՚ի վերայ Երուսաղեմի" ձաչք . յ՚ կուռեցան : „Խորհեցան ՚ի վերայ սրբոց քոց" Սաղ. յ՚ զսրբոց քոց :

## Ծանօթութիւն

ա : Մինչև հիմա ներգործական բայից սեպհականեալ խնդիրներուն համար գրեցինք . բայց գիտելի է որ մի և նոյն խնդիրը այլ և այլ բայից կը պատշաճի . նոյնպէս մի և նոյն բային զանազան հոլով կը պատշաճի . օրինակի համար՝ ներգործական բայս գնեմ , որն որ ներգործական կը պահանջէ . ուղղական , պարառական , և նախադրութեամբ ալ կը յարմարի՝ . քանզի կրնամ գնել գրք դաստառ . գնել գոլամնշօք , կամ ՚ի վերայ պանիչի , կամ հանդէպ պանիչի :

բ : Ներգործական բայերը՝ իրենց՝ սեպհականեալ ինչ խնդիր ունենէ , նոյնը կը պահանջեն անոնց կրաւորականները , անէրևոյթը , ընդունելութիւնը , և բայանունը . ինչու որ միօրինակ կրնամ . հիմնեալ ՚ի նմա , հիմնեցաւ ՚ի նմա , հիմնել , հիմնիլ ՚ի նմա . հիմնեալ , հիմնեցեալ ՚ի նմա :

գ : Չէզոքական բայից խնդրառութիւնը ներգործականներուն պէս է . քիչ մը՝ մասնաւոր տեղեկութիւններ ունենալով , զանոնք ալ ուրոյն ուրոյն կանոններով պիտի խօսինք համեմատ դիւրութեան համար . և ապա՝ էական բայից և այլոց խնդրառութեան վրայ ալ պիտի խօսինք :

## Կանոն Ը.

ա ։ Ուղղական հոլով խնդիր՝ պահանջող չէզոքական բայերը անոնք են․ որոնք որ էական բայի նշանակութեամբ կը վարուին․ կամ իբրև նախադրութիւնը լռելեայն կը պարունակեն․ ապա թէ ոչ չէզոք բայը ուղղական հոլով խնդիր չուզեր․ զի „Որ կանգնելոց է իշխան հեթանոսաց“ Եսայի․ ի լինելոց ։ „Եթէ կայցես մնայցես ցորեան․ ․ ․ ոչինչ կրեսցես վնաս“ Ոսկէբ․ ի իբրև ցորեան ։

բ ։ Ուղղական հոլովը չէզոք բային առաւելապէս մակբայ է քան թէ խնդիր , մանաւանդ որ խնդիրըն բառդ ըլլայ․ զի „Գիշերախառն հասեր ՚ի վերայ յանմնացուցիչ“ Ճաշ ։

գ ։ Ուղղական հոլովն չէզոք բայից երբեմն փոխանակ գործիականի դրած է․ զի „Երդումն երդուաւ թագաւորին“ Ճաշ․ ի երդմամբ երդուաւ թագաւորին ։

դ ։ Նոյնպէս չէզոքականք ուղղական հոլով խնդիր չեն առներ , անոր պէս և սեռական հոլովը․ միայն երբեմն , երբոր ժամանակի նշանակէ ըլլայ խնդիրը սեռական հոլով կը դրուի․ զի „Վախճանեցաւ Յովսէփ ամաց հարիւր և տասանց“ Ծննդ ։

Յայսպիսի տեղ կարելի է զօրութեամբ գուշակել էական բայ և նախադրութիւն մը․ իբր թէ եղեալ իբրև ամաց հարիւր և տասանց ։

Կանոն Բ.

ա ։ Գործիական հոլով խնդիր պահանջող չեզոքական բայերը սոնք են . աշխատիմ, զմայլիմ, զօրանամ, կայթիմ, ճեմեմ, եւ . բայերս իրով մը ըլլալ կը ցցնեն . օր. „Շքով, սաստիւ և սպասաւորաւ ճեմէր 'ի տան գանձին" Մակ ։

բ ։ Գործիական հոլով առած կան և ուրիշ բայեր, բայց փոխանակ այլոյ հոլովոյ դրած են . օր. „Խաղացես դու նովաւ" Յոբ . այ . ընդ նմա ։

Կանոն Գ.

ա ։ Պարառական հոլով խնդիր պահանջող չեզոք բայերը սոնք են . յածիմ, շրջագայիմ, փարիմ, անցանեմ, եւ . բայերս իրենց էթրաֆը կը նշանակեն . օր. „Ստունդանեցին և անցցեն զպատուիրանաւն նորա" Եզեկ ։

բ ։ Պարառական հոլով առած կան և ուրիշ բայեր . բայց բայերը փոխանակ այլոյ բայի, կամ հոլովը այլ հոլովոյ դրած են . օր. „Փառքն աստուծոյ զքև փակեցին" Եսայ . պատեցին ։
„Նա անարգեաց զնոսա, և ծիծաղէր զնոքօք" Մակ . այ 'ի վերայ նոցա ։

գ ։ Պարառական հոլովը՝ ժամանակ նշանակելու համար պարառական խնդիր կը դրուի չեզոք բայից, և շատ գեղեցիկ կընէ ոճը . օր. „Զայսու ժամանակաւ երջանիկ արքայն Հռովմայ Զենոն վախճանէր" Յովհ . կաթ ։

դ ։ Հայցական հոլովը չէզոքներուն չի պատշաճիր, երբեմն փոխանակ այլոյ հոլովոյ կը դնի. որ „Ո՞չ զնոյն պարտ էր չարչարել քրիստոսի“ Ղուկ. այ՝ նոյն չարչարանօք ։

Կանոն Դ.

ա ։ Պատճառական հոլով խնդիր պահանջօղ չէզոք բայերը ասոնք են. գոհանամ, տրտնջեմ, դատախազեմ, եւն. բայերս իրեն համար եւ իրեն վրայ կը ցցնեն. որ „Ի ձայն քաղցրութեան գոհանային զաստուածոյ“ Յոբ ։

բ ։ Պատճառական հոլով առած կան եւ ուրիշ բայք. որ կամ փոխանակ այլոյ բայի, կամ պատճառականը այլ հոլովոյ տեղ դրած են. որ „Ազգականին ըդնմանէ“ Փիլ. այ՝ դատախազէին ։ „Զգուշացարուք զչար գործոց ձերոց“ Ճառ. ընդ. այ՝ ի չար գործոց ձերոց ։

Կանոն Ե.

ա ։ Բացառական հոլով խնդիր պահանջօղ չէզոքական բայերը ասոնք են. ելանեմ, յառնեմ, ամաչեմ, լաեմ, զարթնում, եւն. բայերս իրեն մէ ըլալ կը ցցնեն. որ „Ելցեն հարսունք յառագաստաց, եւ փեսայք՝ ի սենեկաց“ Յովէլ ։

բ ։ Բացառական հոլով առած կան եւ ուրիշ բայք, որ փոխանակ այլոյ բայի, կամ այլոյ հոլովոյ դրած են. որ „Վասն բարերարութեանն որ ի նմանէն լինէր ի նոսա“ Առակ. այ՝ ծագէր ի նոսա ։ „Իսկ հաւատացեալքն ի քրիստոս՝ ոչ ի սատանա-

մանկաց ձմերայնոյն հովանային , և ոչ 'ի տապոյ խորշակին ջեռնուլին " Եղիշէ · յր ոչ սառնամանեօք ձմերայնոյն հովանային , և ոչ տապով խորշակին ջեռնուլին :

## Կանոն Դ.

ա : Տրական հոլով խնդիր պահանջող չէզոք բայերը անոնք են . որոնք գործը դէպ 'ի մէկ բան մը շեղած կը ցցնեն եթէ նախդրիւը և եթէ վերջահոլովը . Նախդրիւ տրական պահանջողները ասոնք են . գնամ , դիմեմ , դառնամ , մտանեմ , աղօթեմ , ևն . զի ,, Նա կառավար կալեալ զմիտս իւր՝ առ աստուած հայէր " յոհն . կոր :

բ : Վերջահոլով տրական պահանջող չէզոք բայերը ասոնք են . ցանկամ , հաւանիմ , ծառայեմ , իշխեմ , անսամ , ևն . զի ,, Նարիւն ձիպռանցն նմանեցին " Եղիշէ :

գ : Նախդրիւ տրականը երբեմն այլոյ հոլովոյ փոխանակ դրած է . զի ,, Եթէ յաստուած մեղանչէ , զո՞ աղաչեն ,, թագ . յր աստուծոյ :

դ : Վերջահոլով տրական առնող կան և ուրիշ բայեր , բայց կամ բայը փոխանակ ուրիշ բայի , կամ հոլովը փոխանակ այլ հոլովոյ դրած է . զի ,, Կարծէր բազմաց՝ օրհասք մահու " Եղիշէ . յր վասն բազմաց . կամ 'ի բազմաց :

,, Հայցեալ թագաւորեցուցանել հայաստանեայցս զխոսրով փոխանակ հօր իւրոյ տրդատայ " յոհն . կոր . յր 'ի վերայ հայաստանեայց :

Կանոն Ա:

ա ։ Ներգոյական հոլով խնդիր պահանջող չէզոքական բայերը ասոնք են . Նստիլ , շրջիլ , մտնել , ննջել , կալ , թագչիլ , եւն . բայերս իրենց մէջ գործը կատարիլ կը նշանակեն . զի ,, Կայցէ ինչ գանձ ՚ի գերեզմանս նախնեաց մերոց " եղեալ է ։

բ ։ Ներգոյական հոլովը երբեմն ՚ի վերայ նախադրութեանս ուժը ունի . զի ,, Թագաւոր քո գայ նստեալ յաւանակի նորոյ " ըստ . յի ՚ի վերայ աւանակի նորոյ ։

Կանոն Բ.

ա ։ Նախադրութեամբ խնդիր պահանջող չէզոք բայերը ասոնք են . մարտնչիլ , ապաշաւել , միաբանիլ , հաշտիլ , եւն . բայերս , իրի մը հետ , կամ , իրի մը համար գործիլ կը ցուցնեն . զի ,, Մարտ եդեալ կռուեցան ընդ մեզ կարեւորս " եղեն ։

բ ։ Նախադրութեամբ խնդիր կառնու եւ ուրիշ բայեր փոխանակ այլոց հոլովոց . զի ,, Ո՞րպէս աղետալի անցք անցանէին ընդ կեանս այլոց " ուզէ յի անցանէին զայլի կեանս ։

Ծանօթութիւն Գ.

Էական բայից խնդրառութիւնը

ա ։ Էական բայերը միայն խնդիր բնութեան կառնեն զանազան հոլով . ուղղական , սեռական , գոր

ծիական , պարառական , հայցական , պատմական , բացառական , նախդրիւ և վերջահոլով տրական , ներգոյական , և նախադրութեամբ ։ որ

„ Գրիգորիոս ասէ . Քրիստոս է որդի այ “ ագաթ ։

„ Իմ է մանուած , և իմ է գաղայաղ “ տաղ ։

„ Ընձեռնաու լեզին արծաթով , կամ ոսկւով ,
գինու , կամ նաւուք “ մովսէ ։

„ Եր գայնր ժամանակաւ էին առարինիք “ խորէն ։

„ Օձանեայն գիշերս՝ աշխատ եղաք “ ղուկ ։

„ Ընթէ գեղանց՝ ինչ փայթ է սատուծոյ “ համա ։

„ Եւ՝ չար և՝ բարի ՚ի նմանէ լինի “ եղնկ ։

„ Եւ եղև բան սեաան առ յոհան “ յոհան ։

„ Եղեբիր ինձ ժողովուրդ սեպհական “ եղնկ ։

„ Ընդգեա տակաւին էր նա ՚ի տարօն գաւառի
՚ի մատրանն յովհաննու մկրտչի “ յոհն . կող ։

„ Եղև ինդիր ՚ի մէջ աշակերտացն յովհաննու
և հրէից վասն սրբութեան “ յովհ ։

բ ։ Եղական բայր երբեմն գխմագուրկ բային պաշտոնը կը վարէ . որ „ Օ՞ն ինչ առնել էր այգւոյ իմում , և ես ոչ արարի “ եսայ . որ գ՞ն ինչ առնել պարտ էր ։

գ ։ Եղականը՝ գխմագուրկ բայից պաշտօնը՝ վարելն զատ շատ անգամ՝ միջական մասնական առւանց ուժը կունենայ . բայց առաջին և երկրորդ դէմք չէ , միայն սահմանական ներկայ և անցեալ անկատարին երրորդ դէմն . որ „ Եւ՝ որ հնազանդ

ւ հպատակ է հօրն . և է՝ որ չարագոյն քան զսա-
տանայ " Եփեզ . յի սմն հնազանդ է հօրն , և սմն
չարագոյն քան զսատանայ ․ ,, Էր՝ զոր բանիւք
սպառնալեօք , և էր՝ զոր կապանօք և տանջանօք .
և էր՝ զոր չարաչար մահուամբ փաղձանէր " Եփեզ .
ի զանանս բանիւք սպառնալեօք ․ զանանս չարա-
չար մահուամբ ։

։ Էական բայ մի կայ է+ , որուն փոխանակ կը
գործածուի բայս՝ գոյ ․ իսկ երբ շատ կը բանեցուի
երրորդ բացառական մնկրայս՝ ոչը ունենայ ․ զի ,,
Չիք ինչ որ այնպէս վնասէ աչաց և մարմնոյ և
ոգւոյ՝ որպէս զայն ցանկութիւն " Ոսկբ ։

Երբեմն կը կրկնուի չիք առաւել սաստկութիւն
տալու համար ․ զի ,, Չիք և չիք ինչ չարիք , որ
ոչ 'ի սոցանէ ծնանին ,, Ոսկեբ ․ զի չիք բնաւին ։

## Ծանօթութիւն Գ․

## Դիմաւորկ բայից խնդրառութիւնք

։ Դիմաւորկ բայերը բնութեամբ խնդիր կա-
ռնեն , և այն մի միայն միջահոլով տրականը ․ ու-
րիշ հոլով խնդիր բնաւ չեն առներ ․ և ուր բայի
մի միայն իրեն աներևոյթը կառնէ ․ և այն աներ-
ևոյթին ուր բայի իրեն խնդիրն կուտայ ․ զի ,,
Պարտ է ձեզ զգուշութեան մեծակեցուցանել առ-
անց յարգելոյ 'ի քահանայութիւն " Ոսկբ ։

Սոր դիմաւորկն պարտ է ․ առաջ է խնդիր ըզ-
միջահոլով տրականս ձեզ , և ուր բայի զանե-

բնոյթս՝ վիճակեցուցանել, որուն տէր բայն է վեր
ջահոլով տրական խնդիրն ձեզ․ „Պարտ և ար-
ժան է մեզ մերկանալ յամենայն ընչից" Տարքէ․
„Ընդ քրիստոսի լաւ է նոցա բնակել" Խորէն ։

բ ։ Դիմաղուրկ բային խնդիրը շատ անգամ զօ-
րութեամբ կիմացվի․ իբ „Զոր պարտ է համա
րել որպէս թէ լուսաւոր ինչ լար յերկնից" Լամբ․
Ուր զօրութեամբ կը դուշակվի խնդիրն, որպէս
թէ ասէր․ զոր պարտ է մեզ համարել ևն ։

գ ։ Ընդ հակառակն՝ երբեմն դիմաղուրկն զօր-
ութեամբ կը հասկըցվի․ իբ „Երջանկութիւն խոս-
տովանելի ամենայն երկրի" Նարեկ ։ Ուր զօրու-
թեամբ է դիմաղուրկ բային՝ պարտ է․ իբր թէ աս-
էր․ պարտ է երջանկութեանն խոստովանելի լի-
նել ամենայն երկրի ։

Այս ոճոյ կը վերաբերին ամենայն ընդունելու-
թիւնքն յանդեալքն լի, եղեալք առանց էական
բայի․ իբ „Զոր չէ աստ գրելի, և ոչ բանիւ խրա
տանալի" Նարեկ․ իմ զոր չէ աստ լինել պարտ
գրել ևն ։

դ ։ Երբեմն դիմաղուրկն և միանդամայն աներ-
ևոյթն զօրութեամբ․ իբ „Որում զհարկ՝ զհար-
կըն, որում զմաքս՝ զմաքսն, որում զերկիւղ՝ զեր
կիւղն, որում զպատիւ՝ զպատիւն" Հռոմ․ Ուր
զօրութեամբ է դիմաղուրկն՝ արժան իցէ․ և ան-
երևոյթն՝ հատուցանել․ իբր թէ ասէր․ որում
արժան իցէ հատուցանել զհարկն՝ հատուցէք

զհարկն , եւն ։

է ։ Դիմաւորք բայք՝ աներեւոյթ բային տեղ շատ անգամ դիմաւոր առած է . որպէս „Պարտ էր զի ընծայեսցէ զպատարագն“ ղեւտ̂ . այսինքն պարտ էր նմա ընծայել , եւն ։ „Հարկ է թէ եւ ամենայն մասունքն ընդ նմին ապականեսցին“ եղիշէ . այսինքն հարկ է ամենայն մասանցն ընդ նմին ապականիլ ։

Երբեմն դիմաւորքն առանց էական բայի կը գործածուին . որպէս „Զի՞նչ է ինձ զծառայիցն ՚ի համար բերել զնախատինս“ առակք . այսինքն զի՞նչ պիտոյ է ինձ , եւն ։

## Ծանօթութիւն Դ.

### Աներեւոյթ բայից խնդրառութիւնը

ա ։ Աներեւոյթը ներգործական նշանակող սեռի խնդիրը հայցական եւ սեռական հոլով կառնէ . որպէս „Ծովու զձկունսն ընկենլով յարտաքս“ յոհ̂ , խոր̂ ։ „Ծննդեանն եւ մկրտութեանն ՚ի միասին տօնելոյ՝ բազում ունիմք վկայութիւն“ ընդհ̂ ։

բ ։ Իսկ Աներեւոյթն կրաւորական նշանակող սեռի խնդիրը բացառական հոլով կառնէ . որպէս „Ան սերմնապէս ծնանելով յանապական կուսէ“ շար̂ ։

Բայց բնութեան խնդիրը զանազան հոլով կառնեն ներգործական , կրաւորական եւ չէզոքական նշանակող աներեւոյթքն . որպէս „Արդ՝ փոխանակ խըրախճանութեան ՚ի վերայ գերեզմանին յողբս առնել ողորմելի հառաչեմ“ խորէն .

„Յանձն առեր՝ 'ի յորդանան մկրտել 'ի յովհաննէ" ղուկ. „Ընձամբ եւ ոչ կարէր կանգնել եւ կալ յոտից վերայ" եզեկ :

## Կանոն Ը.

ա : Աներեւոյթը լոկ ուղղական հոլով կը նշանակէ երբեմն տրական, կամ առ 'ի եւ վասն նախադրութեանց պէս. զր. „Դիւր թուղթ աղաչանաց գալ առնա եւ բժշկել յախտէն„ յովհ. չորս : զր. 'ի գալ եւ 'ի բժշկել : „Դադարեցին զօրք թագաւորին խառնամուխ լինել յամենայն տեղիս անխաղութեամբ, եւ եւս առաւել ձեռնամուխ լինել եկեղեցեացն" եղիշէ. զր. առ 'ի խառնամուխ լինել . եւ եւս առ 'ի ձեռնամուխ լինել : „Բազում անգամ աղաչէր զաստուած զերծուցանել 'ի փորձութեանց" ոսկեբ. զր. վասն զերծուցանելոյ 'ի փորձութեանց :

բ : Շատ անգամ այն պատճառաւ վերոյ յիշեալ նախդիրը եւ նախադրութիւնը ներգործութեամբ ունի . զր. „Պիտոյ է զուարթունս լինել առ 'ի հանդուրժել հարկանել 'ի գլուխ գազանաբարոյ բանակին" ոսկեբ . „Վասն երթալոյ տակաւին 'ի նուաճումն թագաւորութեան" ղուկ . ժթ :

գ : Իսկ Աներեւոյթին ներգործական հոլովը մինչ եւ յորժամ մակբային պէս կը նշանակէ . զր. „Իվախճանել հերովդի՝ ահաւասիկ հրեշտակ տեառն երեւէր 'ի տեսլեան՝ յովսեփու" մատթ . զր. մինչ կամ յորժամ վախճանեցաւ հերովդէս :

## Կանոն Ր·

ա · Աներևոյթը առանց հոլովելոյ լինի բային հետ կրկնելինէ՝ գործիական հոլովոյ ուժ ունի · փր ,,Բուսանել բուսանին մարմինք նոցա" ափ-ն · յր բուսանելով բուսանին :

Ինչպէս և շատ անգամ գործիական կը դնի առաւել ուժ տալու՝ համար · փր ,,Այլ օրհնելով օրհնեցից , և բազմացուցանելով բազմացուցից" ծննդ · յր առատապէս օրհնեցից , և առատապէս բազմացուցից :

բ · Աներևոյթը դիմաւոր բային արդելիչ խնդիր կըլայ , անոր ընութեան և սեռի խնդիրը ինքը առնելով , և ինքն անոր ընութեան կամ սեռի խնդիր երթալով · փր ,,Ի կղզի մի հեռաւոր գնա հըրամայեաց արտասահմանել" յոհ · կ-ն : յր հրամայեաց առ արտասահմանել գնա 'ի կղզի մի հեռաւոր : ,,Կամի՞ս և զոտն ծնդեալս ընդ միմեանս տեսանել" ոսկեբ · յր կամի՞ս և զտեսանել զոտն ծնդեալս ընդ միմեանս :

գ · Աներևոյթն՝ որ արդելիչ խնդիր է , դիմաւոր մօտք դրված է · փր ,,Գո՞յր ինձ արդեօք հընար իշխանութեան իշխել , բան մի 'ի ձէնջ թաքուցանել" ափ-ն · յր գո՞յր ինձ արդեօք հնար՝ իշխանութիւն՝ զի իշխեցից և բան մի 'ի ձէնջ թաքուցից : Ինչպէս և շատ անգամ կը գրվի · փր ,,Սիրով և խոնարհութեամբ խօսէր · · · զի թերևս հաւանեսցին կերիցեն զմիս զոհեալ" եղիշէ · յր խօսէր · · · հաւանել ուտել զմիս զոհեալ :

Կանոն Գ.

ա ։ Աներեւոյթը երբեմն՝ ճառ․ , ըստ․ , ճոխանալ , յաղագս ․ նախադրութիւններուն խնդիր եղած ատենը , արտաքոյ սովորական կանոնի ուղղական և գործիական հոլով կը դնի ․ զի ,, Վասն զմեզ կեցուցանել '' ճառ․ ․ ի՛ վասն զմեզ կեցուցանելոյ ։ ,, Յաղագս անապական գոլով ծննդեան ,, ըստ․ ․ ի՛ յաղագս անապական գոլոյ ։

բ ։ Աներեւոյթը՝ թէ որ մի գլխի միոյ շատ՝ ըլլան միով նախդրով կը բաւականանան ․ զի ,, Ի գալ հանդիպել , ժամանել , հասանել զարուն երկրորդի '' յաճ․ ․ նար․ ։ ի՛ ՚ի գալ , ՚ի հանդիպել , ՚ի ժամանել եւն ։

Նոյնպէս և շատ անգամ կը գրվի ․ զի ,, Իւրեանց զարտասուամբն ցուցանեն զժամանակ վարուց կենաց մարդկան՝ ՚ի ձայն առնելն , ՚ի ճչելն , ՚ի ճռուողելն , ՚ի չլինել բանոյն '' ափոփ ։

գ ։ Աներեւոյթ՝ երբեմն փոխանակ բայցառականի և էական ընդունելութիւն կը բանեցվի ․ զի ,, Ոչ գա գալէին աւետարանել և ուսուցանել զխուսս քըր խօսս '' փոքթոց ․ ի՛ յաւետարանելոյ և յուսուցանելոյ ։ ,, Խոստացայք անցանել զօրինօք քովք ,, էշշ ․ ի՛ անցնող ։ ,, Ո՛չ յանցանել զպատուիրանս , յաւել ևս ՚ի սակ պանծին , այլ ևս երեք հարիւր քանքար '' ճաշ․ ․ այսինքն՝ զյանցեալ , որ է՝ աշըրմիշ ընելով ․ ևվեր բէհ քըշելով ։

## Ծանօթութիւն Ա.

### Ընդունելութիւնին խնդրառութիւնք

ա. Ներգործական նշանակօղ ընդունելութիւնք իր սեռի խնդիրը կառնէ հայցական և սեռական հոլով. զի „Ստեփաննն ափշեն լուեալ . . . զընումն և զլքումն զօրացն հայոց" յոհ. խոր. „Ասացի աստուծոյ ընդունօղ իմ ես" սաղմ.

բ. Կրաւորական նշանակօղ ընդունելութիւնք սեռի խնդիր կառնէ բացառական և սեռական հոլով. զի „Յանդիմանեալ արտաւ ազգայ յիւրայնոցն" յոհ. խոր. „Բժշկեալք անախտականից, լուսաւորեալք նորոգողից" Նարէկ. որ բժշկեալք յանախտականէդ, լուսաւորեալք 'ի նորոգողէդ.

գ. Ներգործական կրաւորական և չէզոքական նշանակօղ ընդունելութիւնքն 'ի զանազան հոլովս բնութեան խնդիր կառնեն. զի „Ի դիմի հարեալ միմեանց ահագին իմն դղրդմամբ" յոհ. խոր. „Ոչ դադարեալ 'ի տեղւոջն զօրն զայն" ղազ. փար.

### Կանոն Ը.

ա. Եալ վերջաւորեալ ընդունելութիւնն սովորաբար դիմաւոր բայէն նախադաս գտնվելու է. զի „Յարգանդէ առ նա անկեալ. յորովայնէ նա կարգացեալ . . . զծանրութիւն աւուրն, և զտօթ բարձեալ, և քան զմետրինան ես յետնեալ դատանիցեմք" նարէկ.

Այսպիսի ընդունելութիւնքն գործածականի մ՛ո-

քը ունին . իբր թէ ասէր , յարգանդէ առնա ան կանելով , յորովայնէ մնա կարդալով , զծանրութիւն աւուրն բառնալով ևն :

Բայց շատ անգամ յետադաս կըլլան . որ „ Մըրոյց զհոգի յիմարութեան , առ հասարակ իբրև զոչխար 'ի սպանդ զենուլ վարեալ " յոհն . չաթ :

Ընդունելութիւնքն՝ եթէ նախադաս և եթէ յետադաս , որովհետև ըսինք-գործիականի մօտք դըրւած են , փոխանակ շատ անգամ գործիական 'կը դնի . որ „ Ջնջեաց տէր 'ի բաց սպառ սպուռ մաքրելով զերեսս երկրի " յոհն . չաբ :

Կանոն Բ.

ա : Ընդունելութիւնքն եղեալք էալ և է , երբեմն ներգործականի պէս և երբեմն կրաւորականի պէս կը բանեցվին իբրև բայք հասարակք . որ „ Կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշակերտսն իւր " մատ . „ Ոչ եթէ որ լսելիք օրինացն են , արդարացեալ են առաջի աստուծոյ . այլ առնելիք օրինացն արդարասցին " հռով :

բ : Օղ վերջաւորեալ ընդունելութեանը տեղ դիմաւոր բայ դըրելով՝ խօսքին շարքը գեղեցիկ կըլլայ . որ „ Որ պարծին 'ի տէր պարծեսցի " ա . կորնթաց : ի պարծօղն : „ Որ անարգէ զհայր և զմայր , չիշցեն բիբք աչաց նորա " առակ . ի անարգօղն : „ Որ փառաւորէն զիս , փառաւորեսցի " եսայ . ի փառաւորօղն :

## Ծանօթութիւն Ը.

### Բայանուններուն խնդրառութիւնը

ա : Բայի հաղորդութիւն ունեցող դերական և ածական անունները՝ և բայի արմատ կամ բայէ ածանցեալները խնդիր կառնեն . ապա թէ ոչ սոսկ անունները խնդիր չեն առներ :

Ներգործական և կրաւորական բայի՛ ուժը ունեցող բայանունները սեռի խնդիրալ կառնեն բնութեան խնդիրալ . որ ,, Գաւազանահատ հերձմամբ գլեռնացեալ վիմատակումն ջուրց " : ,, Որ յանէից առեղծող դոյից " : ,, Հրաշափառ ծընունդ քո 'ի սուրբ կուսէն " Շնր : ,, Աստուածապէս յօրինուածով կարգեալ դրոշմեաց . . . և զհեղումն մարմնաւորական արեանն 'ի փաղարշապատ քաղաքի , յառողումն գալարութեան դոսացելոց " Շղ. Ըր :

Իսկ չէզոք բայի ուժ ունեցող բայանունները սեռի խնդիր չեն առներ , միայն բնութեան խնդիր կառնեն . որ ,, Զհամբերութիւն անազնութեանն այն չափ առն 'ի վերայալին " Շղ. Ըր :

### Կանոն Ւ:

ա : Ներգործական բայի ուժը ունեցող բայանունները կառնեն սեռի խնդիրը սեռական հոլով . որ ,, Որսկեր 'ի խնդիր մոլորեալ ոչխարի բնութեանս " Շնր . Ո՛վ բայանունս՝ 'ի խնդիր , առած է իրեն սեռի խնդիր զսեռական հոլովն բնութեան :

Նոյն պէս ներգործական բայի ուժ ունեցող բայածականները կառնեն սեռի խնդիրը 'ի սեռական հոլով․ զոր․ „Նա որ գիտակն էր անօրէն գործոյն" Եղիշէ․ Ու՛ր բայածականս՝ գիտակ, առած է իրեն սեռի խնդիր զսեռական հոլովն գործոյն ։

Բ ։ Թէ որ բայանունը կամ բայածականը բարդ միայն ըլլայ, և իրենց քովը ունենան սեռական հոլով․ սեռի խնդիր չըսեր անիկայ բարդ ածականին․ ինչու որ երբեմն իրեն սեռի խնդրին հետ բայանունները կը բարդըւին, և՛ ունին իրենց բարդութեան մէջ սեռի խնդիր, և քովի եղած սեռականը յատկացուցիչ պէտք է համրել բարդւածին․ զոր․ „Պատուիրանապահք էին սրբոց կտակարանացն աստուծոյ„ Եղիշէ․ Ու՛ր սեռական կտակարանացն՝ խնդիր չէ պատուիրանապահքին, այլ յատկացուցիչ պատուէրին․ իբր ասէր․ պահօղք էին զպատուէրս կտակարանացն աստուծոյ, կամ պահէին զպատուէրս կտակարանացն այլն ։

Իսկ թէ որ բարդ ածականները՝ իրենց բարդութեան մէջ չունենան սեռի խնդիր, այն ատենը քովի եղած սեռականը կը պահանջեն խնդիր սեռի․ զոր․ „Կենդանի և կենդանարար մեռելոց" Ընդ․ Ու՛ր բարդ ածականս կենդանարար՝ ուղղական խնդիր առնելով զբառս կենդանին, առած է սեռի խնդիր զսեռականս մեռելոց․ իբր թէ՛ ասէր․ կենդանի և կենդանի արարիչ մեռելոց, կամ զմեռեալս ։

## Կանոն Ի

ա ։ Ըսինք որ՝ ներգործականի ուժ ունեցող դըր-ականքը, սեռի խնդիրը սեռական կառնեն, բայց երբեմն հայցական ալ կառնեն. օր. „ Աստուիկ սը-րոյն կատարման՝ զսուրբսն " յոբ. կա. ։

Ասոր պէս ներգործականի ուժը ունեցող բայա-ծականները բաց 'ի սեռականէն, երբեմն հայցա-կան կառնեն. օր. „ Աղօթքն զատուած ընդ մարդ-կան հաշտեցուցին " ոսկեբ. ։

բ ։ Կրաւորականի ուժը ունեցող դերականքը՝ սեռի խնդիրը բացառական կառնեն. օր. „ 'Ի հրամա-նէն տառածոյ ցնդմանը աշխացն " յոբ. կա. ։ որ-պէս ներգործականին այսպէս, հրամանն ածական ցնդելով ըլլան ։

Ասոր պէս կրաւորականի ուժ ունեցող բայածա-կանքը սեռի խնդիրը բացառական կառնեն. օր. „ Եղէգն շարժուն 'ի հողմոյ " ղու. ։

Սակայն շատ անգամ փոխանակ բացառականի սե-ռական առած են. „ Եղև նախատ դրացեաց իւրոց " սաղմ. ։ ոչ նախատ կամ նախատեալ 'ի-դրացեաց իւրոց ։

գ ։ Գիտելի է. բայանուններուն քովը սեռա-կան դրուած հոլովները՝ երբեմն պաշտօն փոխելով դժուար է հասկնալ որոշել զսեռականն՝ եթէ տէր բայի լիցէ, եթէ սեռի խնդիր, եթէ յատկա-ցուցիչ. վասն պէտք է վրայ անունն բայաւորել մտօք, տեսանել եթէ զործօղն նշանակէ, կամ

թէ ենթակային գործողութիւն կամ թէ գործողութիւն որու ըլլա՛լը մի կը յայտնէ , ինչպէս . „Նախաստեղծիցն ճաշակմամբ պտղոյն" Ծնն . Որ սեռականքն նախաստեղծիցն և պտղոյն՝ իսկոյն կը ճանչվին , յորժամ ըսես . նախաստեղծիցն ճաշակելով պտղոյն , կամ նախաստեղծիցն ճաշակելով զպտուղն , և կամ նախաստեղծքն ճաշակելով զպտուղն ։

Կանոն գ.

ա ։ Ներգործական , կրաւորական , և չէզոքական բայի ուժ ունեցող գոյական և ածական անունները զանազան հոլով խնդիր բնութեան կառնեն ։

Ներգործական և կրաւորական բայի ուժ ունեցող գոյական և ածական անունները՝ որ բայէ ծագում ունին , նոյն պահանջած հոլովը կը խնդրեն խնդիր բնութեան ։

Ներգործական բայս՝ դաւանեմ , ինչպէս բայից խնդրառութեան մէջ տեսար . կը պահանջէ խնդիր ուղղական հոլով . նոյնպէս և նորին արմատն բայանունս՝ դաւանութիւն կառնէ խնդիր ուղղական . զի „Յերանաւորին դաւանութենէ պետրոսի՝ օծեալ միայն որդի աստուծոյ" Նարէկ . Որ օծեալ միայն որդի աստուծոյ է ուղղական խնդիր բնութեան բայանունիս՝ դաւանութեան ։ „Անուանեցելումն շահնշահ" յաճխ . կոր . Որ շահնշահ է խնդիր բնութեան կրաւորական նշանակող բայ ածականիս՝ անուանեցելումն ։

Գործիական . զի „Բանաւ մանկաւ մաքուր

ուղանցն յեռամամբ " Նարէկ : „Օծագումն 'ի Հօրէ անճառ ծննդեամբ " Շար. Ուր մանեկաւ է գործիական խնդիր ներգործական գոյականիս՝ յեռամամբ. և ծննդեամբ. կրաւորական գոյականիս, ծագումն :

Բացառական. որ „Որ յանէից առեղծող գոյից՝ Անճառ ծննդեանն ըստ եսայեայ՝ քո 'ի կուսէն " Շար. Ուր յանէից է բացառական խնդիր ներգործական ածականիս՝ առեղծողին. և 'ի կուսէն՝ կրաւորական գոյականիս՝ ծննդեանն :

Նախդրիւ տրական. որ „Խոստումն աստուծոյ առ նահապետսն " Շար : „Մածմամբ քո 'ի նմա, մածուցեր զմեզ " Նարէկ. Ուր առ նահապետսն է տրական խնդիր ներգործական գոյականիս՝ խոստումն. և 'ի նմա՝ կրաւորական գոյականիս՝ մածմամբ :

Վերջահոլով տրական. որ „Ամենից բաշխիչ բա-
հօրն պարգեւս " Նարէկ. „Առաջի աւանդողին ձեզ " Շնորհ. Ուր ամենից է տրական խնդիր ներգործական ածականիս՝ բաշխիչին. և ձեզ՝ ներգործական ածականիս՝ աւանդողին :

Ներգոյական. որ „Լսեմք խօսից նոցա 'ի լեզուս զմեծամեծս աստուծոյ " Փարպեց. „Օծանողական թագումն քո 'ի յերկրի նշանակեալ յաւէտեան " Շար. Ուր 'ի մեր լեզուս է ներգոյական խնդիր, ներգործական գոյականիս՝ խօսիցն. և 'ի յերկրի՝ կրաւորական գոյականիս՝ թագումնին :

Կանոն Դ.

ա ։ Չեզոքական բայի ուժ ունեցող գոյական և ածական անունները՝ ներգործական և կրաւորական բայի ուժ ունեցող գոյական և ածական անուանց պէս որ բայէ ծագումն ունին, նորին պահանջած հոլովը խնդիր բնութեան կը խնդրեն ։

Վերջահոլով տրական․ օր. „Ցանկութիւն ածանալոյն և զկերակրոյն տենչանս“ Ոսկեբ․ „Սատակեսցի ամենայն այր զիմակացք թագաւորի“ Ճոկք․ Ո՛ր ածանալոյն և կերակրոյն է վերջ՛ որ․ խնդիր չեզոքական գոյականացս՝ ցանկութիւնին և տենչանք․ նոյնպէս թագաւորի չեզոքական ածականիս զիմակացք ։

Նախդրիւ տրա"․ օր. „Չնախինդ հաստումն առ մտացդ երագումն „ Նարէկ․ „Խնդրահաւան առ բարութիւնս“ Ոսկեբ․ Ո՛ր առ մտացդ երագումն է՝ նախդ" տրա"․ խնդիր չեզոքական գոյականիս՝ հաստումն․ առ բարութիւնս չեզոքական ածականիս՝ խնդրահաւան ։

Գործիական․ օր. „Սլացմամբ ՚ի թեւս թեթեւս“ Նարէկ․ „Առողջքն անդամօք անկարօղք են ըմբըշխութեան “ Նարէկ․ Ո՛ր ՚ի թեւս թեթեւս փոխանակ գործիականի եղեալ է խնդիր չեզոքական գոյականիս՝ սլացմամբ․ և անդամօքըն՝ չեզոքական ածականիս՝ առողջք ։

Պատմական․ օր. „Յաւիտեան է մեր՝ փնման գոհութիւն“ Լամբ․ „Ծնին զարմն չարախօսս զզա-

նելէ" փող. Որ զնմանէ է պատմական խնդիր չէզոքական գոյականիս՝ դոհութիւն. և զգանելէ չէզոքական ածականիս՝ չարախօս:

Բացառական. գի „Հասանէ նմա կէս վճարմանն 'ի կենացս" յոհ. կաթ.: „Նա՛ թեթև յերկնային ցանկութեանց" շնոր. Որ 'ի կենացս է բացառական խնդիր չէզոքական գոյականիս՝ վճարման. և յերկնային ցանկութեանցն՝ չէզոքական ածականիս՝ թեթև:

Ներգոյական. գի „Ով փառն մեր անարժանութեան, 'ի հոգևորին պակասութեան, զօդտակալ հոգւոյ . . . արհամարհեցէք" ընդհ. „Խողովակ եր ողջի բազմահարուստ և լիահանճար յիրս և 'ի բանս" յոհ. կաթ.: Որ 'ի հոգևորին է ներգոյական խնդիր չէզոքական գոյականիս՝ պակասութեան. և յիրս և 'ի բանս չէզոքական ածականաց, բազմահարուստ և լիահանճար:

Նախադրութեամբ. գի „Մինչև ցթագաւորութեանն նինոսի 'ի վերայ տօրեստանի և նինուէի" խորէն. „Գտանես զանէլն քո 'ի վերայ քո գթ-ած" նար. Որ 'ի վերայ տօրեստանի է նախադրութեամբ խնդիր չէզոքական գոյականիս՝ թագաւորութիւն. և 'ի վերայ քո չէզոքական ածականիս՝ գթած:

### Կանոն Ե:

ա: Երբեմն լոկ ածական անուններն առանց բայի մի ուժ ունենալով խնդիր բնութեան կանեն զա-

նպան հոլով ։

Սեռական հոլով խնդիր պահանջող որակական և քանակական ածականները ասոնք են . յետին, քաջ, կրտսեր, առաջին, մեծ, եւն. իբր „Խառնիցի և զիմ ձայնս կրտսերս ամենեցուն“ Լամբ ։

Գործիական պահանջող ածականները ասոնք են . վեթխարի, փարթամ, պատուական, գեղեցիկ, բարի, չքնաղ, եւն . „Վեթխարի հասակաւ և ուժով“ Խորէն ։

Բացառական պահանջող ածականները ասոնք են . ազատ, բացում, նուազ, եւն . իբր „Սկսաւ յառաջ կոչել զկրտսերս յաւագաց, և զանարգս 'ի պատուականաց“ Եղիշէ ։

Նախդրիւ տրա՝ պահանջող ածականները ասոնք են . անպիտան, փոյթ, անգութ, եւն . իբր „Գրաւոր նոյն տարաժամ՝ անպիտան 'ի կերակուր, և յոչինչ պիտանացու“ Իմաստ ։

Մերձա՝ տրա՝ պահանջող ածականները ասոնք են . ուղեոր, հաւասար, հաւասարիմ, եւն . իբր „Ս՝որ գարէկին հեռաց ուղեոր„ Նարեկ ։

Ներգոյական պահանջող ածականները ասոնք են . երջանիկ, կարձ՝, հզօր, գլխաւոր, եւն . իբր „Այս որք քեզ յետոյ բանիցս պատուղ երջանիկդ 'ի կանայս“ Խորէն ։

Նախադրութեամբ պահանջող ածականները ասոնք են . լաւ, պայծառ, վատթար, եւն իբր „Պայծառք են քան զարեգակն, լուսաւորք՝ քան զաս-

տեղս . բարձր՝ քան զերկինս " սղ. ճէ :

բ : Մերոյ դրեալ ածականներուն պատշաճեալ խնդիրները տեսար , բայց գիտցած ըլլաս որ մի և նոյն ածականը զանազան հոլով խնդիր կառնէ . հարկ չէ որ միայն գործիական կամ տրական առնէ . օրինակի աղագաւ՝ ըսինք թէ ածականս մեծ՝ որ սեռական առած է . գործիական , բացառական , ներգոյական , և նախադրութեամբը վայելուչ ևս կառնէ . զի „Սաստիւք անճառ , խորհրդակցութեամբ մեծ" յոբ. էն . „Մեծ 'ի ծնունդս կանանց մարգարէ քան զՅովհաննէս ոչ ոք է , բայց փոքրիկն յարքայութեան աստուծոյ մեծ է քան զնա" ղուկ. է :

Ծանօթութիւն ա :

ա : Շատ ածականներ կան որ իրենց գոյականը խնդիր կառնեն բացառական հոլով , իրենք անոր տեղը և անոր պաշտօնը վարելով . ինչպէս բազում մարդիկ , ամէն նաւավարք , զանհնազանդկանայս ըսելու տեղ՝ բազումք 'ի մարդկանէ , որգէտք 'ի նաւավարաց , զանհնազանդս 'ի կանանց ըսելը վայելուչ կըլլայ . զի „Բազումք իսկ 'ի կախարդաց մանկունս փաղաւեն" գործ. ժթ :

բ : Կան հասարակ գոյականք՝ որ բայի մը ուժ չունին , խնդիր առած են . զի „Պարիսպ ամրութեան . . . ընդ դէմ թշնամեաց" յուդթ. կոբ :

Այսպիսի հասարակ գոյականաց խնդրառութեանց մէջ զօրութեամբ բայ մի և յարաբերական մի կը

գուշակմէ . օր. „Աստուած յԱստուծոյ . լոյս 'ի լուսոյ“ հանգստ . այ աստուած՝ որ է յաստուծոյ , լոյս որ է 'ի լուսոյ ։

գ ։ Սոսկ ածականաց մէջը բաղդատական անուններ , և մասնական , հանրական , հայցական և թուական միջական անունները զանազան կերպ խնդիր կառնեն . որոնց համար կարգաւ պիտի խօսինք հիմայ ։

Բաղդատական անուններուն
խնդրառութիւնը

ա ։ Բաղդատական անունները , և բաղդատականի ուժ ունեցող ածական անունները հինգ կերպ խընդիր կառնեն ։

Սեռական . օր. „Ամենեցուն քան՝ զնա նախադունիցն վեհագոյն ճանաչէր“ յոհն . կաթ. ։

Գործիական . օր. „Յոբեանն քան զյարգ մեծուք փոքրագոյն , բայց բնութ ազնուագոյն“ ռուէք ։

Բացառական . օր. „Պարտիմք մատակարարել . . . ակարադունիցն յառաքինութենէ „ ընդհ ։

Ներգոյական . օր. „Անձն 'ի ճշմարտութեան . . . քոյլ արքային սմբատայ“ յոհն . կաթ. ։

Նախադրութեամբ . օր. „Անկարգոյն քան զնա տեսանէք աիօք“ պատ . ֆար. ։

բ ։ Բայց թէ բաղդատականի ուժ ունեցող ածական անունները բաղդատականաց պէս խնդիր կառնեն , ինչպէս վերոյ գրեալ օրինակին մէջ ա-

տու ։ մեծն 'ի ճգնաւորս , փոխանակ մեծագոյն ընկլու ․ Այսպէս շատ տեղ կայ ․ զբ ,,Ո՞վ անպիտանըդ 'ի պիտանեաց , ո՞վ անարգդ 'ի փառաւորաց " Նաբէէլ ․ յո՞ ո՞վ անպիտանագոյնդ 'ի պիտանեաց , ո՞վ անարգագոյնդ 'ի փառաւորաց ։

## Մասնական , հանրական , հարցական և Թուական անուններուն խնդրառութը

ա ։ Այսոնք ածականի ուժ 'ունենալուն համար իրենց գոյականին 'յոգնականը իրենց խնդիր կառնեն 'ի հոլով բացառական . ինչու որ միօրինակ կրավի . ոմանք Թագաւորք , ոմանք 'ի Թագաւորաց . ո՛չ որք մարդ , ո՛չ 'ի մարդկանէ , ո՞ որք մահկանացու , ո՞ որք 'ի մահկանացուաց , զերկուս աշակերտս , զերկուս յաշակերտացն . զբ

,,Ոմանք 'ի Թշնամեացն յայնցանէ " յոհ․ կաղ ։

,,Ամենայնք 'ի ժամանակաց " խորեն ։

,,Քանի՞ք 'ի մարդկանէ ըղձան " ոսկեբ ։

,,Օկայնան չորրորդ 'ի նոյն գրեն " խորեն ։

բ ։ Երբեմն ներգոյական հոլով խնդիրս կառնեն . զբ

,,Զ ունի որք 'ի նոսա անուն չարութեան " շար ։

,,Ո՛չ որք յորդիս ազամայ զատ առանց մեղաց " բնիգն ։

,,Ո՞վ նմանիցի Տեառն յորդիս աստուծոյ " սաղմ ։

,,'Ի նահապետսն եօթներորդն " աւրգին ։

գ ։ Սակաւ ուրեք մասնական և Թուականները սեռական խնդիր կառնեն . զբ

„Խրատուց ո՞ւմ է բացասական“ Խորէն ։
„Ուր երրորդ նոցա՝ զօրութիւնք“ Ագաթ ։
Թուական անունները մի միայն Ըն բառը կառնեն խնդիր ՚ի հոլով գործիական . զբ
„Ընկան առաքեալքն առաքինիք ՚ի բով անդր՝ թուով երկոտասանք“ Ագաթ ։

## Միջական անուններուն համաձայնութիւնը ։

### Ամ

ա ։ Այս մասնականք երբեմն միայնակ իբրև գոյական կը վարի . զբ „Զմի և զնոյն սուսեր ոմանք բարուք ՚ի կեր արկանեն“ Ընդհ ։

Երբեմն գոյականի հետ նախադաս կամ յետադաս՝ և համաձայն . զբ „Նուայ յումեմնէ ոչ պարտաւորէ“ Նարեկ ։ „Պատուասիրաց ոմանց՝ գանձս առաջի դնէին“ յոհ . չոր ։

Թէպէտ սակաւ ուրեք անհամաձայն կը գտնուի . զբ „Յովասու ոմն մարգարէի“ Նարեկ . յի ուրումն մարգարէի ։

### Աք

ա ։ Այս մասնականը նման վերնոյն միայնակ իբրև գոյական կը վարի . զբ „Մինչև ուրուք ՚ի նա փեւալ , վասն ումն նորա յայտնի իմացաւ երկիւղածաց Աստուծոյ“ Եղիշէ ։

Երբեմն գոյականի հետ կից նախադաս կամ յետադաս անոր հոլովով և թուով համաձայն . զբ

„Ու յընդիմակցէ ումեքէ ողողեալ արտաքս ել-
անէ“ Նարէկ :

բ : Երբեմն թուով և երբեմն հոլովով անհամա-
ձայն կը գտնուին իրենց դոյականին . որ „Եթէ զոք
գտցէ զայնր ճանապարհի այս կամ կանայս“ Գործ .
փոխանակ զոմանս այս կամ կանայս ըսելու :
„Ու 'ի մէնջ կոչեցեալք , կամ յուրուք 'ի մարդ-
կանէ“ Նարէկ . փոխանակ յումեքէ 'ի մարդկանէ
ըսելու :

գ : Երբեմն ոմն և ոմըն՝ հայցական հոլովին մէջ
յետադաս եղած ըլլան ու նէ նախադաս եղածի
պէս նախդիրը իրենց վրան կառնեն . որ „Տեսանք
մարգարէ զոմն“ Ղուկ . փոխանակ զմարգարէ ոմն,
կամ զմարգարէ զոմն :

Իմն

ա : Այս մասնականը՝ մինակ չի վարիր , և մինակ
տեսնեսնէ , կամ ոմնին տեղը դրած է , կամ առ-
անց ինչ պիտոյից առ 'ի զարդ միայն . որ „Յու-
էա իմն խրոխտ խստութեամբ զպատասխանիս պատ-
գամացն դարձուցանէր“ յոհ̃ . կաթ̃ : Ո՛ յուէա իբր
ոխտ խստութեամբ . ու՛ր իմնը առանց ինչ պի-
տոյից դրած է :

բ : Եզակի դոյականին հետ երբեմն համաձայն ,
և երբեմն անհամաձայն . որ „Ու 'ի ժամանակի ի-
միք , այլ ժամանակք 'ինմանէ գոյացան“ Եղիշէ .
„Չանէ իբր թաթաւով իմն ջուր 'ի ծովէ“ Նարէկ .
փոխանակ թաթաւով իմիք ըսելու :

Բայց երբոր գոյականը յոգնակի է, թէպէտ հոլովով համաձայն, իսկ թուով անհամաձայն կըլլայ, ինչու որ յոգնակի չունի. ոք „Ու կայմնայ առանց իւիք կասկածանաց“ յոհն. կաՊ :

Արլայ որ երբեմն փոխադրութեամբ հոլովոյ կը վարի. ոք „Իբր պատկառ իմիք պատճառանաւ“ Նարեկ. փոխանակ իւիք ըսելու :

Ինչ

ա : Այս մասնականը՝ ոչ բնաւ միայնակ կը վարի այլ գոյականի հետ, և այն միշտ յետադաս անհամաձայն. ոք „Իբրու թէ անձին զօրութեամբ ինչ արարեալ իցէ“ Գործ :

Երբեմն սակաւ ուրեք նախադաս՝ կըլլայ, բայց մը կամ ուրիշ ածական մը առաջը ունենալով. ոք „Նոյնպէս և յերկրորդ արարչութեանս չունէր ինչ հարկ մարդ լինելոյ“ Ընդդ : „Որջէին ՚ի մէջ ծաղկաբեր ինչ լերանց“ Եղիշէ :

բ : Մասնականս (որուն համար միայնակ չի վարիր ըսինք), կը վարի երբեմն, երբոր իր պատկանաւոր բային ուէր բայի. կամ իր գոյականը իրեն խնդիր առած ըլլայ. ոք „Ձիք ինչ յայնցանէ՝ զոր տայ աստուած, անօգուտ ինչ“ Ծառ ընդ : „Տեսանել ինչ յիմաստից ամբարելոց ՚ի նմա“ Աստծոյ :

Արլայ որ շատ անգամ առ ՚ի զարդ կը դնի թէ միայնակ ըլլայ, և թէ գոյականի հետ. ոք „Ոչ ՚ի տանջանաց երկեայ ինչ ես“ Ագաթ : „Ի ժողովել պօղոսի խուխ ինչ բազում“ Գործոց :

## Միւս

ա ։ Մասնական՝ երբեմն միայնակ կը վարէ գործածութեամբ ունենալով զդոյականն, բայց շատ անգամ դոյականին հետ կը վարի համաձայն և անհամաձայն ընդ նմա, և երբ 'ի բաղումս նախադաս թէպէտ և երբեմն յետադաս ։ միայնակ. փ ,, Իսկ միւսն՝ զգերագանցն քան զբնութեան օրէնս " Նար ։ Նախադաս համաձայն դոյականին. փ ,, 'Ի միւսում աւուրն ածին զնա առաջի նորա " Ագաթ ։ Նախադաս անհամաձայն դոյականին. փ ,, 'Ի միւս կողմանէ գետոյն . . . բնակեցուցանէ " Խոր. ՚ 'ի միւսոյ ։ Յետադաս համաձայն դոյականին. փ ,, 'Ի գալ ամին միւսոյ " Ճաշ.

բ ։ Երբոր միջանկեալ բայ մը կամ բառ ունենայ, վայելուչ կը համաձայնի. փ ,, Միւսոյն ոչ է զանգազելի առել օրինադրութեամբ " Խորէն ։ Գիտելի է. զի մասնական՝ այլ, ամենևին միւս բառին նման է, և չունի ինչ տարբերութիւն 'ի համաձայնութեան. երբեմն միայնակ կը վարի, երբեմն դոյականին հետ, նախադաս կամ յետադաս՝ համաձայն և անհամաձայն ընդ նմա. փ ,, Նա այլն անկաւ յերկիր բարի և պտուղ տայր " Մատթ. ,, Զայլոց զհանդերձեալս խրաց թերևս մարթիցէ ոք ասել " Ոսկեբ ։ ,, Սաւուղ յայլ յայլ . . . անտառս խոկ գրեցաւ " Նարեկ ։

## Իւրաքանչիւր , երկաքանչիւր

ա : Մասնականքս՝ ամենևին միւս մասնական անուններին պէս են . անոր համար աւելորդ կը համարիմ և ասոր վրայ կանոն դնել . ներքոյ դրած օրինակներէն պէտք է հասկնալ ասոր ինչպէս համաձայնիլը իրեն գոյականին հետ . զբ

„Ընդ վզեալ իւրաքանչիւրոցն՝ վընջապաշտեակ շըրթամբք խօսէին տարուն" Ճառ ընդ. :

„Արածէին անվեհեր փութով զհաւատացեալն հօտ յիւրաքանչիւրում ժամանակի" Յոհ. կաթ. :

„Հակառակուն է իւրաքանչիւր կողմանց" Եղիշէ .

„Քաջութիւնս կատարեցին 'ի գարս իւրաքանչիւր" 'ի նոյն :

## Ամէն

ա : Հանրական՝ թէ եզականին և թէ յոգնականին միշտ անհամաձայն կը վարի , միայն յոգնականի սեռականին և բացառականին մէջ կը համաձայնի ընդ իւր գոյականին . զբ „Ամենայն բարիօք փայլըչացուցեալ" Ագթ. : „Յետ ըղձարրոցն ամենի նուէրին" Լամբ. : „Ամենից գոյոց արարիչ" Նարեկ : „Յամենից մարդոց կշտամբեալ" Ճառ ընդ. :

## Ամենայն

ա : Հանրական՝ նախադաս կըլլայ գոյականին և միշտ կը համաձայնի անոր հետ հոլովով , դուն ուրեք և թուով . զբ „Պատմեաց մեզ . . . վասն

ամենայնի անցիցն անցելոց" Ագաթ. : „Պէտ վերոյ ամենայնից լինել մարդկան" Խորէն :

Երբոր գոյականին յետադաս կը լլայ, եղական հոլովին մէջ կը համաձայնի, իսկ յոգնականի մէջ անհամաձայն կը լլայ թուով. որ „Սկիզբն այնր ամենայնի հաւատն եղև" Ոսկեբ. : „Պտուղ սկիզբն և պատճառ բարեաց ամենայնի" Նարէկ :

բ : Եթէ նախադաս և եթէ յետադաս նախդիր թէ որ ունի իր գոյականը, հարկաւ լինելով սեռի առնէ. որ „Զամենայն զկեղծ անուն ՚ի մէջ ՚ի բաց բարձուք" Եղիշէ : „Սմա յանձն արասջիք զմեր զամենայն" Ոսկեբ. :

Ամենեքեան, քին. բոլորեքեան, քին.

ա : Հանրականքս՝ խօսքի մէջ միայնակ վարելով երբև գոյական կը նշանակեն. բայց երբոր գոյականի հետ ըլլան, նախադաս և կամ յետադաս միշտ կը համաձայնին. իսկ գոյականը յոգնակի պիտի ըլլայ, քանզի այս ածականս յոգնակի է. որ „Զամենեսեան ինձ յանձն արարեալ ոչ կարացից" Նարէկ : „Սնոտարէնքն ամենեքումբ ծանօթս այդ" Ագաթ. :

բ : Եթէ նախադաս և եթէ յետադաս ըլլան, իրենք ալ պիտի նախդիր առնեն. որ „Քան զբոլորեսեան զդասս սրբոցն առաւել փառաւորեցի" Ոսկեբ. : „Արժանի արա զմեզ զամենեսեան սեանել գտել ՚ի փառսն քում երբև զարեգակն պայծառացեալ" Ոսկեբ. :

գ ։ Հանրականք՝ ո՛չ ոք, ո՛չ մէկ, և ոչինչ երբեմն գոյական, և երբեմն իբրև ածական կը վարին ․ և անընդունակ են ամենևին յօդի ․ Համաձայնութե-նին ոք և ինչ և մի բառերուն պէս է ։

## Ո, ո՞վ

ա ։ Հարցականքս՝ առանց գոյականի միշտ իբրև գոյական կը վարին ․ զ̃ „Ո՞ շարժեաց զայս խորհուրդ“ Լամբ ։

Իսկ երբեմն ոք մասնականիս հետ ընկերակցեալ իբրև մի բառ կը վարին ․ և իբրև մի բառ ածական կըլլան գոյականի մը՝ զ̃ „Ո՞ ոք ՚ի ձէնջ հայր խնդրեսցէ որդի իւր հաց“ Մատ ։

բ ։ Հարցականքս՝ ի՞նչ, զի՞նչ, ասոնց պէս է ամենևին ․ երբեմն միայնակ գոյականի պէս, երբեմն գոյականի հետ ածականի պէս կը վարի առանց համաձայնելու ․ զ̃ „Իսկ արդ զի՞նչ բարւոք գոյ առ այս“ Նարեկ ։ „Եւ զի՞նչ աղէտք տարակուսի են“ Եղիշէ ։

## Ո՞ր

ա ։ Հարցականս միայնակ խիստ քիչ կը վարի, այլ միշտ գոյականի մը հետ երբեմն համաձայն, և երբեմն անհամաձայն ընդ նմա ․ զ̃ „Ո՞րում կորստեան և գեհենի անկալութիւն ոչ է առաջի ձեր“ Ոսկ ։ „Յո՞ր մահուանէ փոխեցայք“ Ոսկ ։

բ ։ Հարցականքս՝ ո՞րքան, քանի՞, ո՞րչափ, նախադաս կըլլան և անհամաձայն ընդ գոյականին ․

օր. „Քանի՞ տազարէգ է 'ի բերանոյ մինչև ցունկն
" Լամբ ։

Իսկ ստացողը և ստացեալն երբեմն կը համաձայնին .
օր. „Ո՞րքանօք երկայնամտութեամբք համբերես "
Նարեկ ։ „Որպիսեացս իրաց պատրաստութիւն
հրաշակերտանաց " Խորէն ։

բ ։ Գիտելի է . ո՞ր՝ եթէ առանց հարցման նշա-
նի վարելու ըլլայ , կը նշանակէ ուրախ . օր. „Որ
ով դատաստանաւ դատէք " Մատ ։

Նոյն երբեմն որ մասնականին հետը ընկերակցեալ
կը վարի . օր. „Որ ոք ընթերցի զայս աղերս բանի
" Նարեկ ։ Միջանկեալ բայ կամ բառ մի ձգելով
ասոնք իրարմէ զատել , խիստ վայելուչ կ'ըլլայ .
օր. „Որ 'ի բռնութենէ ոք ակամայ կալեալ լիցի ըզ-
մողութիւնն " Եղիշէ ։

## Բացարձակ , դասական , զատական , կրկնական և անձնական թուականներուն վրայ

ա ։ Զատական թուականը գոյականէն միշտ նա-
խադաս , և միշտ անհամաձայն ընդ նմա հոլո-
վով և թուով ։

բ ։ Կրկնական թուականը նմանապէս գոյակա-
նէն նախադաս և միշտ անհամաձայն ընդ նմա ։

գ ։ Անձնական թուականը ընդ հակառակն ե-
թէ նախադաս և եթէ յետադաս միշտ համաձայն
գոյականին . օր. „Որ մատակարարէ զհատուցումն
երկոցունց կողմանցն " Եղիշէ ։ „ Խուժան տագ-
նապի էր կողմանցն երկոցունց " Նոյն ։

Դ ։ Բացարձակ Թուականը՝ երբոր նախադաս ըլ-լայ, չի համաձայնիր ընդ գոյականին ոչ թուով և ոչ հոլովով. զի „Յաղթէն պալատնեաց արին ար-տակ յիսուն և եօթն արամբք" Եղիշէ ։

Կ'ըլլայ որ երբեմն կը համաձայնի. զի „Յաղթէն գտանեաց մանուկն վահան երիւք արամբք" Եղիշէ ։

Գիտելի է. յետադաս գոյականը նախադաս բաց-արձակ թուականին չի նայիր թիւը անհամաձայն կը դնի. զի „Նկանէր 'ի նոյն աւուր երեք հա-զար հինգ հարիւր քառասուն և չորք այր" Եղիշէ ։

Ե ։ Բացարձակ թուականը յետադաս եղած ա-նունը առհասարակ պիտի համաձայնի. զի „Երևե-ցաւ աշակերտաց իւրոց երկոտասանից" Ընդհ ։

Իսկ դուն ուրեք չի համաձայնիր. զի „Մերձ է յերուսաղէմ իբրև ասպարիսօք հինգ" Յովհ ։

Բանք նախդրիւ հոլովներուն մէջ ուրիշ ածակա-նաց պէս միշտ անհամաձայն են, թէ և յետա-դաս ըլլան. զի „Թագաւորէ արտաշէս ամս եր-եսուն և երկու" Խորեն ։

Գոյականը նախադաս ըլլայ. և բացարձակ թուա-կանը յետադաս. գոյականը յոգնակի, թուա-կանը երբեմն եզակի երբեմն յոգնակի պիտի ըլ-լայ. զի „Պատրաստեցէք զօրականս երկերիւր" Գործք ։ „Դրունք երկոտասանք յանգնիւ մարգ-արտոյ" Յայտ ։

Զ ։ Դասական թուականը երբոր գոյականէն նա-խադաս գտնուի. ամենևին ազատ է համաձայնել

և ոչ . Իսկ յետադաս ըլլայ չունի ազատութիւն, միշտ համաձայն պիտի ըլլայ .

Նախադաս համաձայն . զի

„Օ՜ր տուակ եօթանասներորդի երկրորդի սաղմոսին ալդէ“ Նարէկ :

Նախադաս անհամաձայն . զի

„Յերկրորդ ամի ալկերան արքային պարսից . . . թագաւորեաց Խոսրով“ Խորէն :

Յետադաս համաձայն . զի

„Յամենայն մետասաներորդի . . . երևեցան գլուխք լերանց“ Ծննդ :

## ԳԼՈՒԽ Դ

### Դերանուններու համաձայնութիւնը

Դերանուններն տէր բայի , սեռի խնդիր , բացայայտիչ , յատկացուցիչ , և ուրիշ պաշտօն վարելը մինչև հիմայ տեսանք . Մնայ միայն անոր համաձայնութեան վրայ . որն որ անուններն հետ կը համաձայնի , անոր ածական ըլլալով . կամ անունը իրեն ածական առնելով , կամ ինքը իրեն հետ ինչպէս կը համաձայնի , անոնց վրայ մնայ խօսիլ մեզի: Բայց նախ դիմորոշական դերանուանց համար , որոնք սկզբունք են դերանուանց :

## Ծանօթութիւն Թ.

ա ։ Դիմորոշական յօդքս՝ ս, դ, ն, անդէմ բառերուն վերջը փակչելով կը դիմաւորցնեն զանոնք ։ Բայց գիտելի է . ամէն մասունք բանի վրայ չեն կրնար փակչիլ, ինչու որ ոմանք մասունք բանիները անընդունակ են յօդոյ . ինչպէս նախադրութիւնները, շաղկապները, և միջարկութիւնները, և միջակայ անուններէն . ամէն, ով, ինչ, ո՞վ, ո՞, ի՞նչ, և յարաբերականը՝ որ ։
Իսկ Մնացեալ մասունք բանիները ամէնն ալ յօդ կառնեն . բայց երբեմն առած յօդերնին հարկը պահանջելուն է, երբեմն առ ՚ի զարդ է . զք „Տեղս անապատ է, և օրս տարաժամեալ . արձակեա զժողովուրդդ“ Մատթ ։ „Աստ այսօրիկ բազում անկարգութիւնս մտածանէ յեկեղեցին ընդհ ։
Տեղին և օրին վրայ եղած դիմորոշները հարկը պահանջելուն է դրած, ինչու որ բացորոշեն զայս տեղի կամ զայն . Իսկ անկարգութիւնին վրայ եղած դիմորոշը առաւելորդ է և առ ՚ի զարդ, որովհետև հարկը չի պահանջեր որոշել այս կամ այն անկարգութիւնը, այլ ընդհանրապէս կը նշանակէ, և չէ մասնաւոր ։

## Ծանօթութիւն Ի.

ա ։ Զարդի համար յօդ կը դնի դերանուններուն, և մակբայներուն հասարակօրէն . թէպէտ և երբեմն բայերուն ալ կը դնի . զք

„Զեմ իբրև զձեզ անաղօրոյն“ Եղիշէ ։
„Օծեալդ այժմդ տեսանել,“ յովհ. կաթ ։
„Նա՛ եմ՝ որ խօսիմս ընդ քեզ“ Եսայի ։

ր ։ Ի հարկին գիմորոշ յօդ պահանջօղ անուանք
տանք են, որոնք զօրութեամբ ունին բառ մի,
և գիմորոշումն նշանակել կուտան անխիայ. որ „
Մէջ ձեռինդ, ձգեմամբ հպատորութեամբ“ Նարեկ ։
Մեր զօրութեամբ է քո. և անոր փոխանակ գրը-
ած է գիմորոշն՝ դ ։ Նմանիններուն համար այս
տեղեկութիւնները տանք ։

Գիմորոշը նախ դնի յատկացուցչին վրայ, երբոր
զօրութեամբ է յատկացեալն. որ „Կերպարանիմ
զգաւթին, և գործ զաստուածային կատարեմ“
փոխանակ զնմանութիւն գաւթի ըսելու ։

Ընդ հակառակն՝ յատկացուցիչը զօրութեամբ ե-
ղած ատենը՝ յատկացեալին վրայ կը դնի գիմոր-
ոշը նշանակ յատկացուցչին. որ „Օտարեցաւ լոյսդ
արտաքեցաւ փրկութիւնդ“ Նարեկ. այս լոյս քո, փրր-
կութիւն քո ։

Բայերուն կը դնի, երբոր տէր բայերին զօրուե
կըլլայ ։ որ „Մինչեւ աղօթեմս փոխմի“ Նարեկ.
այս աղօթեմ ես ։

Գիտելի է, երբոր բայի մը յոդը յարմար չէ դի-
մաւ նոյն բային, գիմորոշին նշանակեալն բային
խնդիր նէ կամ հնաւորին տէրն է. որ „Որ խօ-
սիդ ընդ քեզ, նա է“ յովհ. կաթ ։ այս որ խօսի դայդ
ընդ քեզ, նա է ։ „Ո՞վ է որ առնդ ցքեզ“

թ. Մ՛էլ է դա՝ որ առէ ցբեղ ։

Անուններուն կը դնի յօդ, երբոր զօրութեամբ է անուանց դերանունն . գթ „Ի վեր ամբարձայ մոխ-րըս մերժելի" Նարէկ . թ. Ես մոխիրս մերժելի ։

Նախադասաններուն վրայ դնի յօդ . եթէ ածականն իցէ, և եթէ գոյականն . գթ „Անճառելեաց ձրից" Նարէկ ։ որ՝ ձրից անճառելեաց՝ ալ կ՚ըլլայ . բայց ձրիւ անճառելեաց չըլլար ։

Ածականներուն վրայ կը դնի յօդ, երբոր գոյականնին զօրութեամբ է . գթ „Զպղատոնականն համարձակագոյնս այժմ բարբառիմ" Խորէն ։

## Ծանօթութիւն գ.

ա ։ Անձական դերանունը՝ ես, երեք յօդն ալ կառնէ . և վայելուչ կըսուի, եսս, եսդ, եսն . Իսկ յոգնականին առաջինը և երրորդը միայն կառնէ . ինչպէս՝ մերս, մերն ։

Դու՝ առաջին դէմը չառնէր, միայն երկրորդը, և երրորդը . ինչպէս՝ դուդ, դուն . դուքդ, դուքն ։

Իսկ յոգնակի սեռականը՝ առաջին դէմը կընայ ունենալ . ինչպէս՝ առ ձեզս ։

Ինքը՝ երեք յօդն ալ կառնէ . ինչպէս՝ ինքս, ինքնըդ, ինքն . ատոր վայելչութեան համար նախնիքն ատոր մէկ դի ձգեն, և այնպէս յօդը կըդնեն ։

. . . Սա, դա, նա . ցուցական դերանունները և ստացականն՝ քս, դիմորոշ առած տեղերնին յ տառ մի կը պահանջեն . ինչու որ դիմորոշականը

միայն վայելուչ չըլլար, առանց յ գրոյ դնելով սաս, դադ, նան, ևն. Իսկ յ ով վայելուչ կըլլայ, ինչ պէս՝ սայս, դայդ, նայն, քոյդ:

գ: Իմ, Մեր, Ձեր, ստացական դերանուններն նախադաս ըլլան նէ, յօդ կառնեն. ինչու որ վայելուչ կըսուի. իմոցս խնդրուածոց, մերովս լուսաւորչաւ, ձերովքն բանիւք:

Իսկ յետադաս ըլլան նէ՝ չեն առներ, ինչու որ չըսուիր. խնդրուածոց իմոցս. լուսաւորչաւ մերովս ևն. այլ նախադաս դոյականին վրայ դնելն է յօդը. և վայելուչ կըսուի խնդրուածոցս իմոց. լուսաւորչաւս մերով, բանիւքն ձերովք:

դ: Անձնական դերանունը՝ Իւր, առաջին և երկրորդ դիմորոշը չառներ, միայն երրորդ դէմն. ինչու որ չըսուիր, իւրս, իւրդ. այլ, իւրն, իւրոյն, ևն:

Նոյնպէս՝ այս, այդ, այն. ցուցականները յօդ չեն առներ. իսկ սոյն, դոյն, նոյն. ցուցականները միայնակ եղած ատեններին յօդ կառնեն. ինչու որ վայելուչ կըսուի. սոյնս, դոյնդ, նոյնն. իսկ դոյականին հետ եղած ատենը չըսուիր. զնոյնս փուրշէն, զդոյնդ ձայր. այլ զսոյն փուրշէս, զդոյն ձայրդ, ևն:

ե: Ընդունելութիւնը երբոր անձական է. նախադաս, կամ յետադաս ընդունակ է յօդոյ, ինչու որ վայելուչ կըսուի. գնելոցս մեզ. մեզ գնելոցս, ևն:

## Յօդուած Ը.

### Համաձայնութիւն դերանուանց ընդ անուանս և ընդ դերանուանս

ա : Անձնական դերանուններս՝ Ես , Դու . միշտ գոյականապէս կը վարին . և կառնեն ածական անուններէն , և ընդունելութիններէն , և համաձայնին ընդ նոսա հոլովով և թուով . եթէ նախադաս և եթէ յետադաս ըլլան . զի „ Ողորմեա՛ քոյ արարածոց և ինձ բազմամեղիս “ Շնորհ : „ Իսկ զօտարացեալքս զմեզ ընտանեցոյց իւրում ածութեան “ Սարգիս :

բ : Անձնական դերանունն՝ Ինքն , թէ որ միայնակ վարի . միշտ յոգնական է . իսկ թէ գոյական անուան մը յարելով ըլլայ , ածական է :

Իսկ սոյն , դոյն , նոյն . ցուցական դերանուններուն հետը միանայ , և այնպէս միայնակ վարին , գոյական է . իսկ թէ որ գոյականի մը , կամ գոյականապէս նշանակող դերանուններուն մէկուն յարելով ըլլայ ածական են . զի „ ՚Ի հանդերձեալսն ժամանակացս հասանել ՚ի կեանսն , ՚ի նոյն ինքն ՚ի տէր մեր “ Խորէն : „ Զայն ինքն զայս խորամանկութեամբ ասէն “ [illegible] : „ Զայս խրատեմ ; և ես ինքն անխորշ եմ “ Նարեկ :

գ : Ցուցական դերանուններս՝ սոյն , դոյն , նոյն , ածական են . և միշտ նախադաս , համաձայն ընդ գոյականի հոլովով և թուով . բայց շատ անգամ կըլլայ որ համաձայն բառ հոլովոյ , անհամաձայն

ըստ թուոյ. ընդ հակառակն՝ երբեմն անհամաձայն ըստ հոլովոյ, համաձայն ըստ թուոյ:

Համաձայն հոլովով և թուով. „Ի նմին յամաւութեան կան" Եզնկ: Համաձայն ըստ հոլովոյ և ոչ ըստ թուոյ. որ „Զամենեսեան հաղորդապար նմին չարչարանաց" Եղիշ: Անհամաձայն ըստ հոլովոյ, անհամաձայն ըստ թուոյ. որ „Զորբորդ՝ զերկպառակութիւն ոմանց բաժանելոց 'ի նմին ուխտէ" Եղիշ:

դ: Իսկ ցուցականքս՝ սա, դա, նա. միշտ դոյական են. առանց յարաբերական դերանուանի ուժ ունենալով, միշտ յարաբերելի անուանի մը տեղ կը գործածուի. որ „Քանզի 'ի սմա բարձրացաւ ած, և 'ի սմա եհեղ զպատուական զարիւնն" Շնոր:

## Յօդուած Բ.

ա: Ցուցական դերանուանքս՝ այս, այդ, այն, ածական են. երբեմն միայնակ, երբեմն գոյականի հետ 'ի միասին կը վարին: Միայնակ. որ
„Եւ լուեալ զայս՝ զղջացան 'ի սիրտս իւրեանց" Գործ: Ընդ գոյականի. որ „Այդու ձևով որսացի 'ի ձէնջ փրկութիւն" Խորէն:

## Կանոն Ա.

ա: Երբոր գոյականի հետ վարին, եթէ նախադաս, և եթէ յետադաս ըլլան, թուով և հոլովով պիտի համաձայնին. որ „Մինչ հանապազորդ յայսմ խորանի բնակեալ" Ոսկեբ:

„Եւ լուեալ անանիա զբանս զայսոսիկ, անկաւ և եհան զոգի“ Գործոց ։ Ա՛ր նախադաս ցուցականըս՝ յայսմ համաձայն է իրեն գոյականին՝ խորանին․ և յետադաս ցուցականս՝ զայսոսիկ զբանսն ։ Իսկ յետադասին՝ նախադասին համաձայնութե՟ այս է տարբերութիւնը․ երբոր ցուցականքս յետադաս ըլլան՝․ նախդիր մը ալ իրենք կառնեն․ և դիմորոշ յօդ՝ մի կը դնի նախադաս գոյականին վրայ․ զօ „՚Ի կապելոց որք ամնօրեայ ժամանակ կացեալ է ՚ի տանդ յայդմիկ“ Եղծէ ։ Թէպէտ և երբեմն բայց քիչ տեղ, առանց յօդի կրնայ դրուիլ․ զօ „Եթէ որք ուտիցէ ՚ի հացէ յայսմանէ“ յոհ․ չափ ։ Գիտնալը է․ — նախդիրը, ազատ է կրկնուիլ, կամ ոչ․ զօ „Յակառակօքն վարեցուք առ կռապաշտութիւնս առ այսոսիկ“ սողոմ ։ „Զի առ բարեգործն այն․ ․ ․ չարահատոյց քան առ ամենեսեանն“ յոհ․ չափ ։

Այս խոտորումն շատ կը պատահի․ և երբեմն առ նախդիրին տեղ զ կը դնի․ զօ „Զանազանեալ է ուրաքանչիւրոցն տնկոց սերից առ իմաստութեան յայնոսիկ“ ընդհ ։

բ ։ Երբոր ցուցականը նախադաս, միջանկեալ բառ մի, կամ բայ մի ունենայ, վայելչապէս կը համաձայնի ընդ իւր գոյականին․ զօ „Զմեզ՝ ո՞ այնմ արժանացուսցէ առագաստի“ ըսմէ ։

Երբեմն ընդ դէմ վերոյ գրեալ կանոնաց՝ նախադաս կամ յետադաս ըլլայ ցուցականը, բնաւ ա-

մնևին չի համաձայնիր ընդ իւր՝ գոյականի . զի „Յայն տանն՝ փառք և մեծութիւն է պատրաստեալ“ Լամբ : „Սուրբ հարսանեացն այն՝ հայցեցէք“ Շար :

դ : Ցուցականքս՝ սոյն դոյն, նոյն ցուցականաց պէս, երբեմն հոլովով, երբեմն թուով անհամաձայն կը վարին :

Համաձայն ըստ հոլովոյ, անհամաձայն ըստ թուոյ . զի „Սանդղոցն այնմիկ սանմ, զոր երանելին եանես յակոբ նահապետն“ Ճառընտ :

Անհամաձայն ըստ հոլովոյ, համաձայն ըստ թուոյ . զի „Այամ խորհրդով սաէր մարգարէն“ Ճառ :

դ : Եթէ նախադաս ըլլան ցուցականքս, և միջանկեալ բառ մի ունենան, նախդիրը՝ երբեմն յետադաս գոյականին, երբեմն երկոքին վրայ կը դընի . զի „Յայամ եօթն գլուխս կարգադրեալ“ : „Ման զայս կատարեցէք վաղվաղակի, զոր ասեմքս“ : „Ահա նշանադրեցի յայամ եօթն յեղանակիս“ Եղիշէ :

Երբեմն ցուցականս՝ այն, նախադաս եղած ատենը, կամ իրեն գոյականին հետը, կամ միայնակ կրկնելով ուժ մը կուտայ խօսքին . զի „Զոր ընկալաշարն նաբուգոդոնոսոր տապալեաց, այն՝ որ երբեմն ՚ի վաղ ժամանակս յաւար էառ զօրս սըր բութիւնն“ Լամբ : Թէ որ ցուցականը յետադաս ըլլայ նէ՝ նախադաս գոյականին յօդ դնելու է ընկերք, բայց երբեմն յօդին տեղը կը դնեն մակբայքս

ութէ , այթէ , ունթէ , աւթ , անթ · զի „ Ամբերա-րութ յաղգէ սուտի խոստովանելոյ յայտնանի “ Գործ ։

### Յօդուած Գ.

ա ։ Ստացական դերանուններս՝ իմ , քո , մեր , ձեր , իւր · ածական են · երբեմն միայնակ , երբեմն դը-րականի հետ կը վարին ։ միայնակ · զի „ Ճանաչեմ զիմսն , և ճանաչիմ յիմոցն “ Յովհ · ես ճանաչեմ զոչխարս իմ , և ճանաչիմ յոչխարաց իմոց ։

Ընդ դըրականի · զի „ Չէ լուեալ քո վասն հան-դերձեալ գալստեան տեառն մերոյ “ Եղիշէ ·

### Կանոն Ա:

ա ։ Ստացականքը դըրականի հետ երբ վարին , ե-թէ նախադաս և եթէ յետադաս ըլլան , թուով և հոլովով պիտի համաձայնին · զի „ Եթէ որ յիւ-րոց ծառայիցն զազդս եղէտ ինչ ՚ի նոցանէ “ Եղիշէ · „ Անհամբեր կալ ՚ի ծառայութեան մերում “ Խորէն ։

Յոգնակի ուղղականի և նախդրիւ հոլովներուն մէջ յետադաս ստացականը չի համաձայնիր · այլ միշտ կը դնի եզակի ուղղական · այնպէս իբրև յատկա-ցուցիչ նմին · զի „ ՚Ի նա ապաստան առնէիր ըզ-կեանս քո “ Առաքէլ ։

բ ։ Ընդդէմ վերոյ գրեալ կանոնաց՝ ստացական-քը երբեմն չեն համաձայնիր նախադաս կամ յետ-ադաս · և այս համաձայնութիւնը իրենց բազմա-կերպ է ուրիշ դերանուանց պէս ։

Համաձայն ըստ հոլովոյ , և ոչ ըստ թուոյ · զի

„Չէ՛ լսեալ քո փառս մերոյ հրաշակերտ շինուա-ծոյն" Եղիշէ . յր փառս մերոյ . . . շինուածոյն :

Համաձայն ըստ թուոյ , և ոչ ըստ հոլովոյ . զի „Իմոյ իմաստութեան անուամբ" Ժամագ . փոխանակ իմով իմաստութեամբ : Համաձայն ոչ ըստ թուո-յ և ոչ ըստ հոլովոյ . զի „Իմոյս ձեռօք կերտեալ կորուստ" Նարեկ . յր իմովքս ձեռօք :

դ : Ածանցեալ ստացականները՝ իմայէն , մերայէն . ընդ որս սորա , դորա , նորա . միշտ նախադաս կը-լան և համաձայն ընդ գոյականին . զի „Իւրային-ովքն տանջեաց կտրիւք" Նարեկ :

Իսկ ստացականքս՝ ձերայէն , մերայէն , եւրայէն . թէ-պէտ են նախադաս , այլ միշտ անհամաձայն ըստ պահանջման մեր լեզուին , այսպէս՝ մերոյին հա-մանեաւ , ձերոյին ընութեան , ևն . ասոր համար-ալ ասոնք չեն հոլովեր նախդրիւ միայն կը փոխին :

դ : Պէր բայից մը քով եղած ստացականը ածա-կան կամ յատկացուցիչ չի կրծեր . այլ ուղղա-կան , սեռական , վերջահոլով տրական ալ բայի է . այսպէս . լսել իմ , լսելոյ իմոյ , 'ի լսել իմում , ևն . զի „'Ի կարդալ իմում լսար իմձ ան" ատոմ :

Յօդուած Ե :

Յարաբերական դերանուանին համար

ա : Յարաբերական դերանուանն՝ որ , և ո , գոյա-կան է . առ որ և իցէ միայն նախընթաց բառին ակը կը դրուի նորէն նոյն բառը չի կրկնելու հա-

մար . բայց ինչպէս նախընթաց բառին տեղը կը դրնի , և ինչպէս անոր հետ կը համաձայնի , յետագայ՝ կանոնները քեզի կը սորվընեն :

## Կանոն Ը.

ա : Յարաբերականը ըստ որում նախասացեալ բառի մը տեղ , և անոր չէ կրկնվելուն համար կը դրնի , և կամ յարաբերէ ք̃ կիմացնէ զանիկայ , որ ուն յարաբերեալ կըսվի , այս յարաբերեալը նախադաս պիտի ըլլայ , և ինքն՝ յարաբերականը յետադաս . փ̃ ,, Սովաւ յիշէին սուրբ քահանայքն՝ որք խողխողեցան յօտարութեանս " Եղիշէ :

բ : Մինչ պէտքը չէ որ յարաբերականին քովը գտնվի յարաբերեալը , կըլլայ որ շատ անգամ ամենևին հեռի , կամ ոչ բնաւ դրած է :

Հեռի . փ̃ ,, Թողում աւել զխառնիճն և զջորեակն զզօրն զօրաւոր՝ ընդ Թունաւորն Թրթուր , և ընդ անկենդանական երևիլն . հանդերձ ջրակարծ կարկտին , և ապականաւործ եղեմամբն որ առ աչաց տեսիլ ապաղէնք և նուաստագոյնք , բայց 'ի յակնարկելն աստուծոյ՝ յա[illegible]դառոզաբար ուժգնութեամբ հալին . . . ընպարտն ամբարհաւաճութեան փարաւոնի " Նարեկ :

Զօրութ . փ̃ ,, Որ կամաւոր կուրութիւն յինքն բերէ , ոչ երբեք եկեսցէ յառողջութի " յոհ̃ . կաթ̃ :
Որ զօրութ կիմացվի յարաբերելին , իբր թէ ասէր . մարդն այն՝ որ կամաւոր կուրութիւն բերէ յինքն , ոչ երբեք եկեսցէ յառողջութիւն :

Ընդ հակառակն երբեմն քիչ անգ կըլլայ որ յարա-
բերեալը ներգործուք է, իսկ յարաբերականը գործու-
թեամբ. զի „Այժմ փառաւորեա զիս հայր առ
'ի քեզն փառօքն" յովհ. ժէ. թ. փառօքն որ առ 'ի քեզն :

գ : Յարաբերականը՝ միշտ իր յարաբերեալէն յե-
տադաս ըլլալու է. բայց երբեմն կ'ըլլայ որ յարա-
բերականը նախադաս, իսկ յարաբերեալը յետա-
դաս եղած է. զի „Կորոյս՝ զոր ունէր, զփառս ան-
մահութեանն" Եղիշէ. փոխանակ ըսելու. կորոյս
զփառս անմահութեանն՝ զոր ունէր :

դ : Յարաբերեալը գործութեամբ ըլլայնէ, յար-
աբերականը իր հոլովովը չի դրուիր, այլ յարաբեր-
եալին հոլովովը. զի „Դու՝ ոչ մտանես, և զորս
մտանեն, ընդ դէմ կացեալ՝ արգելուս" ղուկ :
Ուր յարաբերականն՝ զորս, յարաբերեալէն հոլո-
վով դրած է. և ոչ թէ իրեն հոլովովը. իբր թէ
ասէր. զայնոսիկ որք մտանեն՝ ընդ դէմ կացեալ
արգելուս : Ընդ դէմ այսմ կանոնի՝ երբեմն յա-
րաբերականը ուրիշ հայեցեալ 'ի հոլով յարաբերե-
լոյն, իր հոլովովը կը դնի. զի „Ո՞չ այլ քան
զայս յիմարութիւն . . . որք զգայութիւնն հեշ-
տացուցանեն ընտրել" Եզն. Ուր յարաբերականն՝
որք, գործութեամբ ունի զյարաբերեալս՝ զայնոսիկ,
ըստ վերոյ դրեալ կանոնին կը պահանջէր զորս դը-
նել յարաբերեալին հոլովը, բայց չէ դրված. իր
դրուելու հոլովն է :

ե : Կըպատահի երբեմն որ յարաբերեալը յարա-

բերականին , և յարաբերականը՝ յարաբերեալին հոլովը կը դնի · օր. „Նա՝ որոյ 'ի հարսանիս երթիցեն քահանայք՝ զայս խրատ պատուիրանի առան դեմք " Ընդհ · Ուր յարաբերականս՝ որոյ , դնելի էր ուղղական . և յարաբերեալս քահանայք տրական . այլ հոլովներն փոխելով , յարաբերականը՝ տրական , և յարաբերեալը՝ ուղղական դրած է ։ Այս դրութիւն փոփոխութեան հոլովոյ առաւել և վայելչագէս այն ատենը կը լլայ , երբոր յարաբերականը բ զյարաբերեալն յառաջադաս կը դնի ։

Կանոն Ն։

ա ։ Սովորական կանոն մընէ , որ յարաբերականը իրեն բային ուզածին պէս դրվի , ամենևին չնայելով յարաբերեալին հոլովը · օր. „Նա՝ 'ի խառնակել մարտին՝ պատահէ կամաւորականն սպանդ արատ՝ խմբի մեծի , յորում էր քաջն Շերդիր " Խորէն ։ Ուր յարաբերեալը՝ խմբի մեծի , է վերջ՛ տրա՛ և յարաբերականը՝ յորում , ներգոյական · ըստ պահանջման իւրեանց բային ։

բ ։ Բայց երբեմն յարաբերականը՝ յարաբերեալին , և յարաբերեալը՝ յարաբերականին հոլովին կը յարմարի · օր. „Սորբեցոյց զնոսա 'ի ճանապարհս , յորս ոչ գնացին " Առակ. ։ „Ամենայն մեղք՝ որք միանգամ 'ի մարդիկ գործին , ակիզըն և կատարած սատանայ է " Եզն. . Ուր առաջին օրինակին մէջ յարաբերականը՝ յարաբերեալին հոլովին համաձայնելով ներգոյական դրած է . որն որ հայցական

պիտի ըլլար այսպէս . մոլորեցայց զնոսա 'ի ճանապարհն՝ զորս ոչ գիտէին : Նոյնպէս երկրորդ օրինակին մէջ յարաբերեալը՝ յարաբերականին հոլովին նայելով ուղղական գրված է . որն որ սեռական պիտի ըլլար այսպէս . ամ մեղայ՝ որք միանգամ 'ի մարդիկ գործին, սկիզբն և կատարած սատանայ է :

գ : Յայսպիսի ոճս գերանուն մը կը դնի երբեմն, որով եթէ յարաբերականին և եթէ յարաբերեալին հոլովը պարզապէս կը յայտնուին . ինչ „ Եւ նախարարքն՝ որք կան 'ի կապանս, 'ի ձեռս ձեր է իշխանութեան արձակել զնոսա " Եղիշէ . Որ գերանունս՝ զնոսա . կիմացուի որ յարաբերեալ՝ հայցական պիտի ըլլար, որուն փոխանակ ինքն հայցական դրած է :

## Կանոն Գ.

ա : Յարաբերականին իրեն յարաբերեալին հետ հոլովով համաձայնիլը և կամ չի համաձայնիլը գիտալէն ետքը պէտք է անոր թուով համաձայնիլը կամ չի համաձայնիլն ալ գիտնալ :

Սովորաբար յարաբերականը՝ իր յարաբերեալին թիւը հարկաւ պահելու պարտք ունենալով կը համաձայնի . ինչ „ Եւ 'ի դուրս ասաչէին 'ի մէջոյ նախարարացն 'քաջք զօրաւորք որպէս փայլատակացն ճառագայթք, յորոց 'ի տեսանելն միայն զանգիտեալ պարսկականին գունդ " Եղիշէ :

բ : Երբեմն և իրր 'ի բազում յարաբերականը իր յարաբերեալին թիւը չունենար . ինչ „ Ի ծածուկ

կոչէր 'ի գիշերի զնախարարսն , որ 'ի նմին 'ի քաղաքի էին 'ի կապանս " Եղիշ. : Աւր յարաբերականն՝ եզակի . և յարաբերեալն՝ յոգնակի է՝ :

Յարաբերականին այս թուոյ անհամաձայնութիւն կրնայ մէյ մը՝ երբոր յարաբերեալը՝ անեզական ըլլայ , երկրորդ՝ եզական բազմանշանակ . անեզական յարաբերեալին՝ եզակի յարաբերական . բազմանշանակ եզականին՝ յոգնակի յարաբերական . զի „Ի-կարծեաց կասկածանաց՝ յորմէ երկնչիմք" Նարէկ : „Յաղթել մարթասցուք ամենայնի՝ որք մարտնչին ընդ մեզ" Ոսկէբ :

## Տեղեկութիւն

ա : Տեղական մակբայները երբեմն փոխանակ յարաբերականի կը դնեն . զի „Գնաց յերկիրն՝ ուստի էր" Ճառընտ . Աւր մակբայս՝ ուստի , յարաբերականին տեղը դրած է . և անոր ուժը կը բերէ . իբր թէ ասէր . գնաց յերկիրն՝ յորմէ էր :

բ : Յարաբերականը անդ է յարաբերական , ուր բառ մի նախընթաց և կամ հետևորդ յառաջ կը բերէ և ուր որ չունի յառաջաբերութիւն ինչ , անդ չէ յարաբերական . այլ ածական , կամ շաղկապ և կամ յումպէտս առ 'ի զարդ թարմատարաբար . զի „Յորում սահմանի փայլի . . . առաջի իմ տարածանեն" Նարէկ : „Որով 'ի սակաւուց հաւատարիմ եղեր . 'ի վերայ բազմաց կացուցից զքեզ" Ղուկ : „Որ 'ի ծագել անստուեր նշուլից ողորմութեան քո փառաց հալին մեղք" Նարէկ . Աւր յառաջին

օրինակն՝ յուշ—ն , է ածական խուռն դոյականին՝ վայրի . և յերկրորդ օրինակն՝ որով , շաղկապ պատճառական փոխանակ որովհետև ին եդեալ . և յերրորդ օրինակն՝ —, Թարգմանը . ինչու որ առանց անոր ալ կըլլայ , 'ի ծածկել անստուեր նշուլից ողորմութեան քո փառաց :

Դ : Նշանեան Թարգմանը իբրև առանց ինչ յառաջաբերութեան Թէպէտ և չէն գտնիր , բայց և այնպէս չէն խակական յարաբերական . այլ կամ բացայայտիչ և բացայայտեալ . և կամ կրկնումն ընդ այլոյ գերանուան . որ ,,Օ՜որս և ինքն տէրն զգանաւան փորձութեանց կերպարանս՝ իբրև յոյ և ածային առաջի եդ խորոց աշակերտաց'' —: ,,Որոց ձեռք՝ իւրեանց յանօրէնութե են'' —:

Նոյնպէս ծանօթութիւնք , ուղղակութիւնք , կանոնք ալ բառականացուն քեզ ուղղախօսութեան և ուղղագրութե համար , Թէպէտ և կը գտնըլին արտաքոյ այս կանոնաց ինչ ինչ մասնաւոր գիտելիք , սակայն հմուտ աշակերտը ինքնիրեն կրնայ և անոնք ալ ճանչել . հիմայ մնայ միայն յարմարագրութե , շարագրութե , և լուծմունքի վրայ համառօտ գիտելիքներ : Թէպէտ և քաջի հայկաբանութե մեթոտին վրայօք քիչ մը խօսելու միտք ունէինք , սակայն համբակաց գիրքուն հմր անիկա զատ տպել ուզեցինք* ]:

*1 Յուշ—ն [illegible] 'ի [illegible] , 'ի [illegible] , և 'ի [illegible] . [illegible] [illegible] Թարգմանը [illegible] :

# ԳԼՈՒԽ Դ.

## Յարմարագրութիւն

Յարմարագրութիւնը ուրիշ բան չէ, միայն իւր
աքանչիւր բառին յատուկ տառերովը գրելն է.
որովհետեւ կան այնպիսի բառք՝ որք թէ իրենց
յատուկ տառերովը չի գրուին, նշանակութիւննին
կը փոխեն. ինչպէս՝ անօթ, գաւաթ. անօթ, հա-
ւըը. եւն. կամ բոլորովին աննշան կը մնան. ինչպէս՝
թանձր, գոյն. թէ որ թանձր գրես, բան մի չի
նշանակեր. սակայն ընթերցողներուն համար ըն-
ծներէս աղէկ հասկցար, եւ վարժապետ քեզի բա-
ռարանը ըլլալուն համար բաւական համարիմ այս
չափ: Հիմա նշանագրութեան եւ կէտադրութեան
վրայ պիտի խօսիմ, որոնք գլխաւոր մասն են յար-
մարագրութեան այժմեան դարուս:

Ըսինք այժմեան դարուս, որովհետեւ հիները չու-
նէին այս նշանագրութիւնները եւ կէտադրութիւնները.
Ինչպէս յայտնի է՝ հին գրչագրերէն. այլ շարու-
նակ գրէին այսպէս. „Հրամայեացմովսէսիմկեսյ-
ութիւննոցա“ որ մէյ մը կը կարդացուի. Հրամայ-
եաց մովսէս վկայելուն անոնց. Մէյմին՝ Հրամայ-
եաց մովսէսի վկայելը անոնց. ասոնց այսպէս եր-

կու միտք հասկցվելուն համար նախ այս նշանագրութիւնները հնարեցին զՄակակէտն ( ՚ ), զԲութն ( ՝ ). ինչու որ առանց մակակէտի և բութի որոշաբար աղէկ բանի՛ մը իմաստը չիմացվիր , ինչպէս վերի օրինակը . իսկ բութով և մակակէտով ըն-լյնէ ամենևին երկմտութիւն չի մնար . ինչպէս՝ „Հրամայեաց մովսէս՝ 'ի վկայութիւն նոցա" :

Այս երկուսակ նշանագրութեան զկնի՝ յետոյ ուրիշ կէտագրութիւններ՝ հնարեցին , խօսքին ամեն մէկ անդամներուն իրարմէ որոշվելուն համար . և են երեք հատ : Ստորակէտ ( , ). Միջակէտ ( . ) Վերջակէտ ( : ) : Գիտնալու է . ըման մէկ խօսքին՝ տուն՛ կոսվի . մէկ տունը երեք պարբերութի պէտք ունենայ . ու երեք անդամ . թէպէտ միօրինակ չէ , էվել կամ պակաս պարբերութիւն կրնայ ունենալ :

Ստորակէտը՝ մէկ տունին մէկ մասին . ու ըման խօսքի մը մէկ կտորին մէջ տեղ կը դնի :

Միջակէտը՝ մէկ տունին կիսուն . ու խօսքի մը կիսուն կը դնի :

Վերջակէտը մէկ տունին վերջը . ու խօսքի մը վերջը : օր „ Պօղոս՝ զոր բայլին կորստեանն , ոչ միայն կարողութիւն է փախել զնա . այլ ըստ մարդկան սահմանի՝ ահա անցեալ է հնար " Եղէգէ :

Ինչպէս նշանագրութեան զկնի կէտագրութիւնք , այսպէս կէտագրութեան զկնի հնարվեցան նշանք՝ Շեշտ ( ՛ ). Պարոյկ ( ՞ ). Երկար ( ՜ ). Պատիւ ( ՟ ). և այլ ըստ պէս պէս նշանք որոնց շատերը այժմ խա-

փանվեցան ։ Շեշտը՝ հրամայականին, և հրամայ ական ապառնիին վրայ կը դնի . սահմանական ապառնիէն զատելու համար . կոչականին վրայ՝ ուղղականէն զատելու համար . ինչպէս՝ գործեսջի՛ք արքայ, եւն . Թէպէտ և անուանց, դերանուանց, մակբայից, և այլոց շեշտ կը դնի, բայց առ՚ի զարդ սաստկութեան մը տալու համար միայն . ինչպէս՝ մեծ, նա՛, ահա՛, եւն ։ Պարոյկը՝ իրեն յատուկ տեղը, և կամ բառ մի չունի, որուն վրայ դրվի, միայն հարցական անուններէն և հարցական մակբայներէն զատ . այլ բանը ուր կը պահանջէ, անուն ըլլայ, կամ դերանուն, կամ բայ, կամ ուրիշ մասն բանի, հոն կը դնի ։ որ ,, Մ՞ով անձն, թերևս բանադատեցա՞ր յումմէ . ո՞չ լուար ՚ի կամս ապստամբեալ զեու-ութիւն“ Յոբ ։ ,, Ո՞չինչ, խափա՞ն մնացաք ՚ի նոյն և մինչև ցյաւիտեան անա՞ս եղեաք ՚ի տեառնէ, և գնա ես ո՞ւս պահէ մեզ բարձրեալն“ ՚ի Նոյն ։ Երկարը՝ նման ոլորակին չունի յատուկ ինչ տեղի կամ բառ ուր դնի, միայն զարմացական միջարկութէն զատ . հասարակօրէն անանկ տեղ կը դնի, ուր ցաւելու կամ արմանալու կիրքերովը խօսվածները պիտի յայտնվին . որ ,, Հանա՜մ, երբ ո՞չ այրիմ“ Նարեկ ։ Սովորութիւն է ոմանց լեզուներուն գըրեանց մէջ այսպիսի տեղերը երեք միջակէտ դնել . որ այժմ մեր գրեանց մէջ նաև կը գործածվին կոր ։ Պատիւը՝ ձայնաւոր գրերուն տեղ դնելով երկան բառերը կարճացնելու համար հնարեցաւ . բայց

եարէն ընդաձայն գրերուն տեղն ալ շատ գործածուելով բառերուն շատերը սովորական եղան այնպէս գրելու, ինչպէս՝ ած, եղմ, եւն. բայց հասարակօրէն առանց պատուոյ գրելը աղէկ է ։

## ԳԼՈՒԽ Ն

### Շարագրութիւն եւ Լուծմունք

Շարագրութիւնը ամէն մէկ լեզուին յատուկը պահանջման համեմատ քերականութեան կանոններովը գրութիւն մի է. եւ է երեք կերպ. Պարզ. Միջակ. Խրթին ։

Պարզ կըլլայ շարագրութիւնը, երբոր սովորական բառերով եւ սովորական կանոններով առանց մանուածոյ ձեւոյ գրուի ։

Միջակ կըլլայ շարագրութիւնը, երբոր ընտիր բառերով եւ փոքր ինչ քան զհասարակօրէնն այլայլեալ կանոններով գրուի ։

Խրթին կըլլայ շարագրութիւնը, երբոր խրթին բառերով եւ արտաքոյ քան զսովորականն կանոններով հանդերձ մանուածոյ եւ շրջուն ձեւով գրուի ։

Եթէ պարզ, եթէ միջակ, եւ եթէ խրթին շարագրութեան հեղինակ ըլլան քեզի մատենանքս՝ Ոսկեբերան. Շնորհալի. Եղիշէ. Եզնիկ. Խորենացի.

Սարգիս․ Լամբրոնացի․ Նարեկացի․ Յովհաննէս կաթողիկոս․ Ագաթանգեղոս․ Իգնատիոս․ Յովհան իմաստասէր․ եւն ։

Լուծմունքը ուրիշ բան չէ, միայն՝ իւրաքանչիւր բառերուն զանազան պաշտօնը ճանչնալ եւ որոշել է․ վասն զի ամէն մէկ բառը մէջ մէկ պաշտօն վարելով իրար կապւեր են․ ասոնց իրարու կապւելուն տեղեկութիւնը լուծմունքը տալուն համար՝ պարզ միջակ շարադրութե օրինակը Եղիշէ պատմագիրէն, եւ խրթին շարադրութե օրինակը Յովհան իմաստասիրէն պիտի բերեմ, լուծմունքներին յետակրնին գրելով ։

## Օրինակ պարզ շարադրութե

„Ասեն մոգքն․ արքայ քաջ․ ածքն ետուն քեզ զտէրութի եւ զյաղթութի, եւ ոչինչ կարօտին նոքա մարդկաւոր մեծութե, բայց եթէ ՚ի մի օրէնս դարձուցանես զամ ազգս եւ ազինս, որք են ՚ի տէրութեան քում“ ։

## Լուծմունք

Ասեն՝ բայ ներգործական, սահմանական, ներկայ, յոգնակի, երրորդ դէմ․ մոգքն՝ անուն գոյական, յոգնակի, ուղղական, տէր բային ասենին․ արքայ՝ անուն գոյական, եզակի կոչական․ քաջ՝ անուն ածական արքային․ ածքն՝ անուն գոյական, յոգնակի, ուղղական, տէր բային ետունին․ ետուն՝ բայ ներգործական, սահմանական ներկայ, յոգնակի, երրորդ դէմ․ քեզ՝ դերանուն էական, եզակի, վերջահո-

րով տրական, խնդիր բնուն Եփրատին. ընդէր—ք և ըն-
յաղէմ—ք՝ անուն գոյական, եզակի հայցական, սե-
ռի խնդիր Եփրատին. և՝ շաղկապ բաղհիւսական.
ընդ՝ մակբայ բացառական կորօտէնին. կորօտէն՝
բայ չէզոքական, սահմանական, ներկայ, յոգնա-
կի, երրորդ դէմ. Նոքա՝ դերանուն ցուցական, յոգ-
նակի երրորդ դէմ, տէր բայի կորօտէնին. Նաւըն-
—ռը՝ անուն, ածական Ջեթոյէնին. Ջեթոյէ՝ անուն գոյ
ական, եզակի, վերջա՛ տրական, խնդիր բնուն, կոր
օտէնին. Ըստյ ԷՐԷ՝ շաղկապ բացառ՛. Նի՝ անուն մի
ջական, թուական բացարձակ, ածական օրէնքին.
օրէնք՝ անուն գոյական, աներական, նախդրիւ տրա,
որոյ նախդիրն իւր ածականին վրայ, բնուն խնդիր՝
տարօրացանքին. տարօրացանք՝ բայ ներգոր՛, սահ-
մանական ներկայ, եզակի երկրորդ դէմ, որոյ տէր
բային զօրութեամբ՝ դու, ըն արքայդ քաջ. Ըստ՝ ա-
նուն միջական, հանրական, եզակի, ածական աղէ-
րին և աղէնքին. աղէն և աղէնք՝ անուն գոյական, յոգ-
նակի հայցական, որոյ նախդիրն իրենց ածականին
վրայ, սեռի խնդիր տարօրացանքին. որք՝ դերան-
ուն յարաբերական աղէք և աղէնքին, յոգնակի ուղ
ղական, տէր բայի էնին. էն՝ բայ էական, սահմա
նական, ներկայ, յոգնակի երրորդ դէմ. Ի տէրութ՝
անուն գոյական, եզակի ներգոյական, խնդիր բըն
ութեան էնին. քու՝ դերանուն ստացական, եզա
կի, ներգոյական, ածական Ի տէրութեանին. Ենր
գոյականի նախդիրը նախադաս գոյականին վրայ։

## Օրինակ միջակ շարագրուն

«Աշխարհի երկրին՝ ընդ որ նայն անցանիցէ, և տեղւոյն՝ ուր նայն վաղճանեսցի. ոչ միայն զարքունեօք ձերովք անցանէ պատուականութ., այլ և զերկնից լուսաւորօքդ՝ որում դուքդ երկրպագանէք»:

## Լուծմունք

Աշխարհ՝ միջը՛ րդա՛. Երկրին՝ ան՛, դ՛յ, եղ՛, վերջա ոտա՛, խնդիր երանելին. ընդ՝ նախդ՛ հոլով, տեղ-անշանակ. որ՝ դեր՛ յար՛ տեղւոյնին, եղ՛ ուղղա, խնդիր ընդին, երկոքեան խմիասին նախադրութ. խն դիր անցանիցէին. նայն՝ դեր՛, ցու՛, եղ՛, ուղղա, տէր բայի անցանիցէին. անցանիցէ՝ բայ չէզ՛, ստոր, ապ՛. և՝ շաղ՛, բղհ՛. տեղւոյն՝ ան՛, դ՛յ, եղ՛, վեր ոտ՛, խնդիր զօրութ երանելին. ուր՝ մակ՛ տեղ՛, եղ-եալ փոխանակ յորում յարաբերականին, խնդիր վաղճանեսցին. նայն՝ դեր՛, ցու՛, եղ՛, ուղ՛, տէր բայ ի վաղճանեսցին. վաղճանեսցէ՝ բայ չէզ՛, ստոր՛, ապ, եղ՛, երրորդ դէմ. ո՛չ միայն՝ մակ՛ զատ՛ անցանէին. զարքունեօք՝ ան՛, յդ՛, պար՛, ած՛ պատուականութին. ձերովք՝ դեր՛, ստց՛, յոգ՛, պա՛, ած՛ պատուականու-թեին. անցանէ՝ բայ չզ՛, ստոր՛, ներ՛, եղ՛, երրորդ դէմ. պատուականութ՝ ան՛, դ՛յ, եղ՛, պար՛, խնդիր րնու՛ անցանէին. որոյ նախդիրն իր ածականին վե-րայ է. այլ և՝ շաղ՛, բաղ՛, զերկնից՝ ան՛, դ՛յ, յոգ՛, սեռ՛, յանգ՛ զօրութ սաստկօքին. լուսաւորօք՝ ան՛, ած՛ զօրութ սաստկօքին, պար՛ խնդ՛ անցանէին. որում՝ դեր՛, յար՛ լուսաւորօքին, վերջ՛ ոտ՛, խնդ-

իր երկրորդականէ+ին . ... ՝ գեր" եակ" , յոդ" ուղղ" ,
ակր բայի երկրորդականէ+ին . երկրորդականէ+՝ բայ ընդ
մէջ" , ոհմ" , ներ" , եպ" , երկրորդ դէմ :

## Օրինակ խրթին շարադրութեան

„Ըստ որ մերձեցեալ ապականութեն ; փախուցանէ 'ի նմանէ նախկին՝ հրաման տուեալ այլայլութե , ըզ բնականն որ 'ի նմա որակութիւ . և փոխանակ այնոցիկ զկայսերականդոյնս 'ի ներքս անէ զորպիսութիւ . և ոչ առ թոյլ մնալ նմա յայլայլութեն յայնմիկ . այլ 'ի վայր քարշեալ անցնելոցն մատուցանէ զնա յոբոց բաղկացեալ տարերաց . զոր ապա կարողութին է միայն ամենազօր ձեռին միւսանգամ զքայքայեալն նիւթ՝ առ նոյն հաւաքելով , հաստատել տեսակ“ :

## Լուծմունք

Ըստ ... ՝ գեր" յար" տունկին , որ առաջ գրված է . նխդ
տր" խնդ՝ ...ին . ...՝ ընդ" , չէպ" , փոխա
նակ գործ" , ուղղ" խնդիր ...ին . ...
...՝ ան" , դոյ" , սեռ" , ակր բայի ...ին .
...՝ բայ ներ" . 'ի ...՝ գեր" , ցուց" , բաց ,
խնդ՝ ...ին . ...՝ մակ՝ ժամ" ...
ին . ...՝ անորշ" հայց" սեռի խնդիր ...ին .
...՝ ընդ" ներդ" , փոխանակ գործ" , ուղղ" խըն-
դիր ...ին . ակր բայի զօրութ նորա ր̃ ապա
կանութեն . ...՝ ան" դոյ" , փերջ" տր" , խնդիր
... ...ին . ...՝ ած՝ ...ին . ...՝
գեր" յարա" ...ին , ակր բայի զօրութ էին .
'ի ...՝ գեր" ցուց" , նենդ" խնդիր զօրութ էին . ...

[illegible] սեռի խնդ՛ [illegible] . Ն՝ շաղ՛ բաղ . [illegible] նալ՝ նախ՛ . [illegible] խնդիր նխդ՛ իմիասին խնդիր ա- ծելին . [illegible]՝ ած՛ [illegible] . [illegible]՝ մակ՛ [illegible] . [illegible]՝ բայ ներ՛ . [illegible]՝ սեռի խնդ [illegible] . [illegible]՝ բայ ներգ՛ . [illegible]՝ ուղղ՛ խնդիր [illegible] . [illegible]՝ արդ՛ խնդիր [illegible] , եղեալ տեղը դիմաւոր բայիս՝ զի [illegible] . [illegible]՝ տէր բայի [illegible] . [illegible]՝ խնդիր [illegible] . [illegible]՝ ածա՛ [illegible] . [illegible]՝ շաղ՛ բայ՛ . [illegible]՝ մակ՛ տեղ՛ [illegible] . [illegible]՝ ընդ՛ ներգ՛ ուղղ՛ խնդիր [illegible] . [illegible]՝ ած՛ [illegible] . [illegible]՝ բայ ներգ՛ տէր բայի զօրութ ապականութ . [illegible]՝ սեռի խն՛ [illegible] . [illegible]՝ դեր՛ յար՛ [illegible] , բայ՛ սեռի խնդ [illegible] . [illegible]՝ բայ կրա՛ տէր բային դի- մորոշն՝ ն ը՛ նա , որէ տուանկն . [illegible]՝ տր՛ խնդիր [illegible] . [illegible]՝ դեր՛ յար՛ [illegible] , սեռի խնդիր [illegible] . [illegible]՝ մակ ժա՛ էին . [illegible]՝ տէր բայի էին . Է՝ բայ էա՛ . [illegible]՝ մակ՛ զատ՛ էին . [illegible]՝ ած՛ [illegible] . [illegible]՝ տէր բայի [illegible] . [illegible]՝ մակ՛ կրկ՛ [illegible] . [illegible]՝ ընդ՛ կր՛ ած՛ [illegible] . [illegible]՝ սեռի խնդիր [illegible] . [illegible]՝ տր՛ խնդիր [illegible] . [illegible] աներ՛ գոր՛ խնդ՛ [illegible] . [illegible]՝ անե՛ ներ խնդ՛ էին . [illegible]՝ ուղղ՛ խնդիր [illegible] ։

## ՎԵՐՋԱՆ



# ՑԱՆԿ

## Քաղուածոյին


| | |
|---|---|
| Հոլովմունք հասարակ անուանց | 5 |
| Հոլովմունք յաւելուածոյ անուանց | 16 |
| Հոլովմունք նախդրիւ անուանց | 17 |
| Հոլովմունք առանձնական անուանց | 18 |
| Հոլովմունք միջական անուանց | 22 |
| Հոլովմունք դեր անուանց | 29 |
| Խոնարհմունք էական բայից | 35 |
| Խոնարհմունք կանոնաւոր բայից | 38 |
| Խոնարհմունք անկանոն բայից | 62 |
| Խոնարհմունք դիմազուրկ բայից | 74 |
| **Բ: Մասին** | |
| Տեղեկութիւն երեսուն և ութ գրոց | 79 |
| Վանկ. Բառ. Բան | 96 97 99 |
| Անուն և բաժանումն նորա | 100 |
| Պարագայք նորա | 104 |
| Միջական անուն և բաժանումն նորա | 119 |
| Դերանուն և բաժանումն նորա | 122 |
| Բայ և պարագայք նորա | 124 |
| Ընդունելութիւն | 131 |
| Նախադրութիւն և տեսակ նորա | 132 |
| Մակբայ և տեսակք նորա | 143 |
| Շաղկապ և տեսակք նորա | 151 |
| Միջարկութիւն և տեսակք նորա | 155 |

Բ. Մասն


| | |
|---|---|
| Համաձայնութիւն նախադրութեան | 162 |
| Համաձայնութիւն մակբայի | 167 |
| Համաձայնութիւն շաղկապի | 172 |
| Համաձայնութիւն միջարկութեան | 174 |
| Յատկացուցիչ և յատկացեալ | 176 |
| Բացայայտիչ և բացայայտեալ | 183 |
| Ածական և գոյական | 192 |
| Տէր բայի | 204 |
| Սեռի խնդիր | 213 |
| Բնութեան խնդիր | 219 |
| Էական բայից խնդրառութիւնը | 231 |
| Դիմազուրկ բայից խնդրառութիւնը | 233 |
| Աներևոյթ բայից խնդրառութիւնը | 235 |
| Ընդունելութիւն խնդրառութիւնը | 239 |
| Բայանուններուն խնդրառութիւնը | 241 |
| Բաղդատական անուններուն խնդրառութիւնը | 250 |
| Միջական անուանց խնդրառութիւնը | 251 |
| Միջական անուանց համաձայնութիւնը | 252 |
| Դերանուններին համաձայնութիւնը | 261 |
| Յարաբերականներին համաձայնութիւնը | 271 |
| Յարմարադրութիւն | 278 |
| Շարադրութիւն և ընծայմունք | 281 |

[illegible]

[illegible]

[illegible]

Ի 118 [illegible]

[illegible]

15 [illegible] 1861

[illegible]

[illegible]

[illegible]

Ի Աստապատ

Դ.

Ի 1861. յունուարի